

ԱՐԴԻՇՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1897

Մ Ա Յ Ի Ս

1897 № 5

Ի Ն Խ Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Բ

երես

1 ԲԱԲԿԵՆՑ, Գ.	559	Նորեկ (վէպ, շարտանակ, և վերջ).
2 ՇԱՆԹ	576	Արձանը (բանաստ.)
3 "	577	*** (բանաստ.).
4 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.	579	Մերկ Դերւիշը.
5 ԼՈՆԴՖԵԼԾՕՒՑ Յ. Տ.-ԳԵՈՐԳԵԱՆ	583	Սորկի երազը (բանաստ.).
6 ԲԵՕՐԵՆՍՈՆ, Բ.	585	Հաւատարմովիչն (սպատմածք):
7 ՄԱՆՈՒԿԵԱՆՑ, ԼԵՒՈՆ.	589	Խորտակւած կեանք (վէպ շար.).
8 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ	620	Քեղ ինչ սրատահեց... (բանաստ.).
9 ԵՐԿԱՑՆԱԲ.-ԱՐԴՈՒԹԵԱՆ, Ա.	621	Հաւատն ինձ կը փրկի (կան, ինդիր),
10 ՄԱՐԴԿԱՆԵԱՆՑ, Ֆ.	636	Առետր. գիտաւթ, անդրամեշտութ.
11 ՅՈՎՀԱՆՆԵԼԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԵԼ .	646	Լոլիցիալի զաղափարը (շար.).
12 ԿՈՒԽԻԿԵԱՆ, Վ.	661	Բանաստ. քաղաքացի Ռ. Պատկան..
13 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	675	«Դարօի լուսանիքը»:
14 " "	679	«Ժլատ ակրուջը»...
15 ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ, Ա.	981	Ժամանակ, տեսութ.—Գաւառական ինքնավարութեան ինդիրը Կով- կասում:
16 ԼՈՒՍԻՆԻ.	683	Թիֆ. քաղաք. ընարութիւնները.
17 ՊԵՏՐՈՎԵԱՆ, ՄԱԴԱԹ	705	Գաւառակ. նամակներ. Կոթի գիւղը.
18 ՍԵՒԵԱՆ, Հ.	714	Թաարոնի շուրջը, XIV.
19 Յ. Տ.-ՄԻՒՐԱՔԵԱՆ	719	Լեզւական զրոյներ.
20 Հ	721	Յոյնտաճկական պատերազմը:
21 ԽՄԲ.	730	Զանազան լուրեր.


Տեղեկատու եւ Յայտարարութիւններ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Դ. ՌՈՏԻՆԱՆՆԻ

Տիպոգրաֆія М. Д. Ротиніанна, Гол. пр., д. № 41.

1897



ՄԱՀՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 5 1897

ՄԱՅԻՍ

1897 № 5

ԿԵՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-ՕՏԻՆԵԱՆՑԻ

Տիոգրաֆիя М. Д. Ротиниана, Гол. пр. լ. № 41.

1897

Дозволено цензурою. Тифлисъ, 2-го Мая 1897 г.

# Ն Ո Ր Ե Կ

Վ Հ Պ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Գ. ԲԱԲԿԵՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Գլ. Է.

Ալօն վաղուց էր ինչ վերադարձել էր Խնութ, և, քանի որ Ովանէս աղենց տանը ոչոք չկար, իր ամբողջ ընտանիքով տեղափոխւել էր նրա բնակարանն ու կառավարում էր նրա անտեսութիւնը։ Նոցա հետ էր և Սլօ զաշաղի կինը, որ միայնակ և անտէր մնալով, վերցրել էր իր ամբողջ կարողութիւնը և տեղափոխւել միակ զաւակի մօտ։ Որովհետեւ ոչխարածնութեան ժամանակն էր, ուստի Սլօի ամբողջ ընտանիքը գնացել էր զիւղից դուրս ծնավայրերը և տանը միայն Գուլէն էր մնացել, որ Ալէքսանդրի աղաղակը լսելով, վազեց նրան օգնութեան։ Բայց Ալէքսանդրը ինքնամոռացութիւնից այնքան էր ուժեղացել, որ զսպել անկարելի էր։ Գուլէն ինչքան աշխատեց նրա թեկերը, ձեռքերի թաթերն ու մատները բռնել՝ չկարողացաւ, իր անձն առող տղամարդը արագ ազատում էր նրանից և շարունակում էր հարւածել իր գլխին, աչքե-

<sup>1)</sup>Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8, 9, 10—11, 12 և 1897 թ. № 1, 2—3, 4.

րին, ծնկներին ու դուրս տալ մազերը։ Գուլէն անճարացած չգիտէր ինչ անէր։ Նա բոլորովին թուլացել էր։ Յանկարծ մտածեց աղաչել Ալէքսանդրին. ընկաւ գետին, զրկեց նրա ոտներն ու սկսեց համբուրել։ Ալէքսանդրը ուղեց իր ոտները նրանից ազատել, բայց իսկոյն մտաբերեց, որ թոյլ արարածի հետ գործ ունի. Նրա ուժգին շարժւածքները թուլացան։ Գուլէն, օգտւելով այս հանգամանքից, սկսեց համբուրել նրա ոտները, թրջել նրանց իր արտասուքով և աղաչել նրան, որ հանգստանաց։ Նրա քոֆին ծռւել և ընկել էր գագաթի վրայ ու սե սաթի նման մազերը, գղղղւած շրջանակել էին քրտնաշերմ կարմիր այտերը։ Նրա յոդնած աչքերը, լայն բացւած նայում էին Ալէքսանդրի երեսին և զինաթափ անում նրան։ Երբ մի վայրկեան Ալէքսանդրը կանգ առաւ, Գուլէն բարձրացաւ գետնից, իր ձեռքերի մէջ առաւ նրա թաթերը և համբուրներով, արտասուքով ու պաղատանքի խօսքերով ծածկեց։ Վերջը զրկեց Ալէքսանդրին և սկսեց կամաց կամաց դէալի սենեակը քաշել։ Սկզբում անցուշ երիտասարդը, երբ սանդուղքների վրայով բարձրանումէր, զգաց, որ քրոնածէ և նկատեց, որ Գուլէյի ձեռքերը, որոնք իր ձեռքերի հետ էին հիւտած չոր ու սառն էին։ յետոյ սկսեց մոտածել այդ սառնութեան մասին և կարծես նրա վրաց կենդանութիւն եկաւ։ Իսկոյն մի ինչ որ ։ թուլութիւն զգաց և ուժասպառ վայր ընկապատշզամբում դրած բազկաթուի վրայ։ Գուլէն նրա գլուխը յենեց բազկաթուի կռնակին ու սկսեց համբուրել նրա աչքերը, յօնքերը, ճակատը և մազերը, մինչեւ որ նախկին աղմուկը լսած դրացիները սկսեցին պատերից և դռներից ներս թափել Ովանէս աղենց բակը։ բայց Ալէքսանդրը արդէն հանգստացել էր և եկողներին ընդունում էր տիսուր և ուժասպառ։ հայեացքով։ Եկան Մէլիք Շէգօն, լուսկի Գէւօն, Աւետիսը, Խաչօն, զզիր Գասպարը և համոզելով Ալէքսանդրին տարան սենեակը։

Մթնած սենեակը լուսաւորւեց կանթեղի աղոտ լոյսով, որը խաղաղ ընկաւ հինաւուրց թախթերի, գորգերի և բարձերի վրայ։ Վաղուց ծանօթ սենեակի մէջ այժմ այլևս չէր նկատում Ովանէս աղի մոցրած փոքրիկ անկարգութիւնը։ Գուլէյի ձեռքը խնամքով մաքրել էր և ամեն բան իր տեղը դրել։ Սենեակի ամբողջ տեսքը մոայլ էր։ Նստարանները ցից կանգնած էին ինչպէս ատենատնե-

բում աստիճանաւորները, Նիկողայոս առաջինը կ'ասես հրամայում  
էր, որ նրա առաջ ծունկ չոգեն, Ներսէս Աշտարակեցին հեռւից  
իսկական արծուի էր նման, Բէհրութեանը կարծես ուզում էր ասել.  
Ասուուծոյ օգնութեամբ, մասածած կ'անեմ: Երեք պատկերներն էլ  
արտայայտում էին եռանդ, բուռն ոյժ և վճռականութիւն:

—Աղա ջան, ինչո՞ւ ես քեզ սպանում, սկսեց լուսկի Գէւօն.  
որիս ծնողներն են մնացել: Նրանք իրենց օրը արել, պրծել էին.  
դու քեզ համար մասածի, որ լաւ օր ունենաս՝ պատկւիս, որդիներ  
ունենաս, այս օջաղը շէն ու պայծառ պահես:

—Ես իմ՝ բախտի և ուրախութեան մասին բոլորովին չեմ մտա-  
ծում. ես այնքան անբախտ եմ և այնքան թշւառութիւններով  
շրջապատած, որ այլևս երջանկանալ անկարող եմ:

—Սխալ ես, պատասխանեց գլուխիլ երեցնելով Մէլիք Շէգօն:  
Անբախտութիւնից ազատւելու համար Աստւած մարդուն տւել է  
միակ դեղը՝ կին և երեխաներ ունենալը, որոնք տառապանաց ժա-  
մանակ մարդու միակ միտիթարիչն են լինում. և ես Աստծուց մի-  
թարւելու փոխարէն ցանկանում եմ, որ շուտով կարգւես:

—Դուք, սիրելի Մէլիք, և իմ սիրելի բարեկամներ, չգիտէք  
ես ինչով եմ անբախտ: Իմ ցաւս ոչ թէ ծնողներիս կորուսն է,  
ոչ. այլ այն անբախտութիւնն է, որ ես ձեզ բոլորիդ պատճառեցիր  
Խողովածիք հանդարտ ու խաղաղ ապրում էին իրենց դրացիների  
հետ. ես իմ քարոզներով ձեզ ոտքի հանեցի, գէպի ձեզ թուրքերի  
թշնամութիւնը գրգռելու պատճառ դառաջ, պատճառ դառաջ քանի  
մահի և տաֆանակիր աշխատանքի, ձեր տների մէջ լաց ու արտա-  
սուք մացրի: Ես մեղաց եմ գալիս ձեր առաջ, ես մեղաւոր եմ. և  
ոչ թէ թողութիւն, այլ պատիժ եմ ինդրում:

—Ներողութիւն, աղա ջան, պատասխանեց Գէւօն, սխալ ես.  
այդ բոլորը Աստծու արածներն են, գու ի՞նչ անես. գրւածը կը  
կատարւի:

—Հալբաթ մեր հայ ազգի ճակատագիրն այսպէս է, գլուխիլ  
երեցնելով ու «ախ»-ով ասեց Մէլիքը:

—Իմ կարծիքով այս բանը պէտք է լինէր, միջամտեց Աւետիսը:  
Աղա, մենք առաջ թուրքերի մօտ կնիկ էինք, բայց վերջին ժամա-  
նակները կարծես մի ինչ որ քամի փակց, ժողովուրդը հոգու եկաւ

և շնորհիւ ոռւսաց կառավարութեան, մենք մեր մէջ ոյժ զգացինք. հետեւապէս մի ընդհարում՝ պէտք է ունենացինք և այդ ընդհարումի ժամանակ անպատճառ պէտք է մենք յաղթւէինք: Ինչպէս որ լիք կաթսան, երբ եռայ՝ ջուրը կը թափւի, նոյնպէս էլ այս դէպքում, մեր ամանը լցւել էր, պէտք է թափւէր:

— Բայց Աւտւած աղի բանն աջողի, միջամտեց Խաչօն. թէ-պէտ այս անդամ թուրքերը մեզ յաղթեցին, բայց սրանից յետոյ հայը կը զոռի, որովհետեւ նոր շինած ուսումնարանում երեխաներն այնպիսի երգեր են սովորում, որ լսող մեռելը յարութիւն կ'առնի. գեղի տղերքն էլ, ողորմած հոգի աղի շնորհիւ, լաւ հրացան գցողներ են. սրանից յետոյ թուրքն էլ մեզնից կը քաշւի:

— Սիրելի որդի, Ալէքսանդր, գլուխը բարձրացրած իրատական ոճով սկսեց Մէլիքը, քո կրածները քանի տարի կրեց իմ հայր Մէլիք-Մկրտիչը, ինչքան տանջւեց, ինչքը շարաւ, բայց վերջը պարտեց, որովհետեւ մեր երկրում հայը քիչ է և ժամանակն էլ վատ: Սխալում է Խաչօն, մենք ոչինչ չենք կարող անել, մինչև որ ժամանակը չփոխի, մենք չբազմանանք. իսկ մինչև այն ժամանակը, հայը պէտք է միան աշխատի խաղաղ ապրել և շատ որդիներ ունենալ: Մենք ֆալաքի շարխը դարձնել չենք կարող:

Ալէքսանդրին քաղաք ճանապարհ զցելիս ժողովւեց ամբողջ գիւղը, որ գումարւեց մեզ ծանօթ թթենու տակի Լուսկի Գէւօն դարձեալ կատակներ էր անումն Ներկաց էր և Մատոցի բոլոր ընտանիքը: Մնասբարեի ժամանակ Ալէքսանդրը բոլոր գիւղին յայտնեց, որ իր բոլոր ունեցածը նւիրում է Մատոցի ընտանիքին և խնդրեց, որ նրան ժառանգ համարեն նոյն իսկ իր մահից յետոյ էլ ու ինչքան կարելի է սրանից յետոյ յարգանքով վերաբերւեն դէպի նրանց օջաղը սպահող քրդական ընտանիքը:

Յետոյ նա գնաց հացատուն մնաս բարե անելու Գուլէին: Մի քանի ամիս սրանից առաջ գեղեցիկ կինը այսօր թառամել էր և չորացել: Նա ստացել էր ինչ որ շշմածի տեսք. դէմքի վրայ երեւում էր: միան խորին թախիծ: Յուսութեան վերջին րոպէին նա հազիւ կարողացաւ արտասանել. «ինձ մտահան մի արա», վայր ընկաւ մօտակայ ծալքի վրայ և դառն հեկեկանքը խեղդեց նրա ձայնը: Ալէքսանդրը ոչ մի խօսք արտասանել չկարողացաւ: Նա զգաց մի ինչ որ

մարում։—նրա աչքերը խրւեցին, ծնկներն ու թևերը թուլացան և նա ընկաւ Գէւօյի կուրծքի վրայ, որ նրան գրկած դուրս տարաւ։ Այստեղ նա իսկոյն ուշքի եկաւ ու հեծաւ ձին։

Ճանապարհորդութեան ժամանակ յաճախ նա մոռանում էր իր վշտերը։ կամ Մէլիքի վերջին խօսքերն էր մոտեբերում՝ «մենք ֆալաքի չարձնել չենք կարող», կամ Գուլէյի վրայ մտածում։ Նա անզգայաբար յաճախ կրկնում էր. մնաս բարով, Գուլէ, մնաք բարով կեանք ու բախտ, դուք այլևս ինձ համար գոյութիւն չունէք, ես մեռած եմ։

Ալէքսանդրի գնալուց յետոյ Գուլէն երկար ժամանակ լաց էր լինում, մինչև որ վճռեց սրանից յետոյ ուրախութիւնից բոլորովին ձեռք քաշել, Հովիտներն ու Անաստածի ձորը չփնալ, Ալօյին կնութիւն չանել և միայն այս տան մէջ ապրել, մինչև որ կամ կը մեռնի կամ նորից Ալէքսանդրի տեսութեան կ'արժանանայ։

### ԳԼ. Հ.

Առաջին անգամ կեանքի մէջ Ալէքսանդրը իրեն միայնակ զգաց։ Նա կորցրել էր ծնողներին, թողել հայրենական տունը, գիւղը և ապրում էր քաղաքում, որի հետ ոչ մի կապ չունէր։ Նա կորցրել էր այն դաղափարները, որոնց քանի տարիներ անկեղծ փայփայումէր ու գգւում։ Նա ակնյայտ տեսաւ, որ ժողովրդին ծառայել անկարող է, անկարող է ողարձնել Փալաքի չարխը։ Այժմ ուր գնար, ի՞նչ անէր։ Գրականութեամբ պարապէր։ բայց սա այժմ միայն ցուցամոլ շատախօնների գործ է. փաստաբանութիւն անէր։ այդ նոյն է թէ համաձայնէր կամաց-կամաց փոքրիկ խարեբայ դառնալ, ծառայութեամն մտնէր—այսինքն՝ լուս ստրուկի զեր խաղար։ այս բոլորը միայն փոր կշտացնելու համար, իսկ այդ բաներից ի՞նչ մի նշանակելի շահ ունէր ժողովուրդը։ Ոչ մի։ Ի՞նչ անէր ուրեմն, ուր գնար։ Նրան շրջապատում էին թուրքն ու թուրքի բնաւորութիւն ստացած հայը։ Գնար ուսուցչութեամն. բայց ի՞նչ դաս տար։ Միթէ դասական առարկաներ, որոնք այժմ նրա աչքում ապարդիւն գիտութիւններ էին երեսում։ Նա կը քաղաքակրթէր երեխաներին. բայց ի՞նչ է քաղաքակրթութիւնը—եսականութիւն զարգացնող մի բան։ Միթէ քաղաքակրթւած չէին խաբւած նահան-

գապետը, խորհրդատուն, դասախազը, դատաւորները և այլն... Երկար մտածում էր շրջապատող հանգամանքների մասին և համոզում թէ հանգամանքներն այնպէս են դասաւորւել, որ անկարող է որ և է բան անել, որ ճնա ֆալաքի չարխը ծուելու ուժ չունի: Ինչ գիւղից վերադարձել էր, աւելի հանգիստ էր: Այլ ևս առաջւայ նման չէր գրդուում, տաքանում, այլ հանգարտ մտածում էր իր շրջապատի մասին: Նա իր ցաւը ներսն էր քաշել և աշխատում էր արտաքինով երևալ հանգիստ ու անտարբեր: Մինչդեռ օրէցօր նրա վէրքերը խորանում էին և ցաւերը սաստկանում: Նա ժամերով խորհում էր մարդկութեան պատմութեան մասին և այնտեղ միայն սեսսե դէպքեր էր տեսնում: Յաճախ մտածում էր այն պատերազմների, մահերի և թշւառութիւնների մասին, որոնք հետեւանք եղան Քրիստոսի ամենամարդասէր կրօնի տարածման, այն գագանական վարմունքի մասին, որ թոյլ տւին իրենց քաղաքակիրթ Գերմանացիք դրացի քաղաքակիրթ Ֆրանսիացիների վերաբերմամբ. այն անխիղճ վերաբերութեան մասին, որ Եւրոպան ցոյց էր տալիս դէպի Տաճկաստանում տանջւող ազգութիւնները: Այս փաստերը առաջ էին բերում ներկայ քաղաքակրթութեան խիստ քննադատութիւն: Ստէպ-ստէպ, երբ մտարերում էր այն աղէտալի դէպքերը, որ կատարել էին և կատարում էին եւրոպացիք անկիրթ ասիացիների և ամերիկացիների վերաբերմամբ, քաղաքակրթութեան քննադատութիւնը նրա մէջ փոխւում էր ատելութեան և գիտութիւնները՝ զգւանք էին առաջ բերում: Նա յաճախ լուռ ու մունջ տեսնում էր թէ ինչպէս Գէորգը քրտնաջան աշխատում է համալսարան մտնելու համար, որ այնտեղ գիտութիւն սովորի. և Գէորգի վարմունքը նրան թւում էր շատ փոքր ու խղճալի: Պատահում էր նոյն իսկ, որ սկսում էր ատել անընդհատ չարչարւող Գէորգին: Խղճում էր նաև օրիորդ Մարիամին. երևակայում էր նրա ապագան. օրիորդը ամուսնացած է. երեխաներին ուզում է դարձնել ինժիներ, բժիշկ: Փաստաբան, որոնք աւելի քողարկւած կերպով ու բարձր նախադասութիւններով համեմած աւազակութիւն են անելու և ճոխ ու խորամանկ աւարով լաւ յագեցնելու իրենց տռիանքի առարկաներին—կանանց: Ալեքսանդրը արտաքինով անգամ փոխւել էր. հագնում էր մաքուր ու պատշաճաւոր և փողոցներով անցնելիս այլ

ևս ցեխերի ու աղբերի մէջ չէր ընկնում։ Վարմոնքն էլ աւելի քաղաքավարի էր, քան ուսանող ժամանակ, մինչև անգամ Գէորգին ու Մարիամին պարտական չմնալու համար, մէկին տւաւ նրա մօտ ապրելու վարձը, իսկ միւսին՝ իր փոքրիկ զրադարանը, որ կազմել էր տարիների ընթացքում մեծ խնամքով։ Թուրքանիսում նրան արգէն պարկեշտ մարդ էին համարում, թէպէտ նկատողներ եղել էին, որ փողոցում յանկարծ կանգ էր առնում և երկար նայում որ է անծանօթի երեսի։

Բայց ոչ ոք չէր նկատում, որ այս պարկեշտացած արտաքինի տակ հոգին աւելի խոր էր խոցոտւած։ Աերջերս նա սկսել էր ատել ամեն մի անհատի։ Նատ անգամ երբ նկատում էր վռազ-վռազ անց ու դարձ անողներ, դառնում էր նրանց կողմը և ինքն իրեն հարցնում։ Ուր ես գնում, պարոն, ինչ ես անելու, ինչու համար, ամօթ չէ ուտելու ու հագնելու համար այդպէս փրփուրը բերնին վռազելը։ և նրանում առաջանում էր զգւանք դէպի այդ մարդը և դէպի մարդիկ առհասարակ։

Նատ անգամ մուածում էր, որ պատմութեան ստեղծած բարյական պատմիրանքները մարդկութեան չվերաբերող, իրականութեան հետ կապ չունեցող, բնագանցական դատողութիւններ են, որոնք միայն թղթի վերաց են, և նրանց մարդիկ ծառայացնում են իրար աւելի լաւ խաբելու համար։ Քանի դար է, ինչ արդարութեան, մարդասիրութեան, պարտաճանաչութեան և այլն օրէնքները կան, բոլորն էլ գիտեն։ բայց ոչ ոք իրականութեան մէջ նոցա չի գործադրում։ հետեւապէս այս գաղափարները, որպէս անպէտք առարկաներ, պէտք է դէն շպրտել և նոցա տեղ նորը ստեղծել։ Բայց որը կը լինի նորը, եսականութիւնը, իրար ուտելը, էպիկուրեան կենցաղը։ Այն, պիտի որ սոքա լինեն, որովհետեւ մարդկութիւնը իրականապէս սրանցով է զեկավարւում։ Ուրեմն նա որին հետեւի։ Վերջիններին։ Եւ նա իրեն երեակայում էր փորը լցւած, դէմքը գերուկ ու հարժ, պսպղուն, զթազուրկ դէպի ամեն մի կենդանի, ու խորին զգւանք զգում դէպի իր երեակայած աշարածը։ Առաջիններին։ Եւ նա իրեն երեակայում էր որպէս մի Դոն-Քիշոտ, որ քամու ջրաղացների հետ է կռւում և ցանցառի նման արտասանում յիմար ու անմիտ բաւեր։ ու նա խոր ատելութիւն էր զգում դէպի իր երեակայութեան զաւակը։

Ի՞նչ անէր նա. ստեղծէր նոր գաղափարներ, ուր չլինէին ոչ  
չարը, ոչ բարին, ոչ եսականութիւնը, ոչ այլասիրութիւնը, ոչ  
պատերազմը, ոչ խաղաղութիւնը։ Այս մտածելիս նրա առաջ պատ-  
կերանում էր մարդկութեան ամբողջ պատմութիւնը, որ կարծես  
բազմաթիւ վաշտերով գալիս ճնշում էր նրա հոգին, թուլա-  
ցնում եռանդը, սղմում ուղեղը ու նա զգում էր, որ թոյլ է և ան-  
կարող մարդկութեան կեանքը յեղաշրջելու՝ քալաքի չարխը ծռելու։  
Նրա առաջ կանգնում էր Մէլիք-Շէքօն, որ ծերացած, խեղճացած  
նայում էր ֆալաքի չարխին և թողնում, որ ժամանակի հոսանքը  
նրան տանի՝ ուր ցանկանում է։

ԴԼ. Թ.

Ալէքսանդրը վերջին ժամանակները շատ ջղային էր դառել։  
Օրը երեք ժամից աւել անկարող էր քնել. այդ երեք ժամն էլ լիքն  
էր լինում զանազան երազներով, որոնք անընդհատ հետևում էին  
իրար և նրա ուղեղն աշխատեցնում։ Պատահում էր, որ մի գիշեր-  
ւայ մէջ տեսնում էր Աւանի որդուն, հօրը, Սլո զաշաղին, Պետեր-  
բուրգը, մէկի հետ ծեծկրտում էր և այնու Յաճախ քնից զարթ-  
նելիս աւելի յոզնած էր լինում, քան քուն մտնելիս։  
ու ոչ մի բոպէ հոգեկան հանգստութիւն չէր վայելում։ Վեր-  
ջերս այնքան դիւրագրգիռ էր դառել, որ ամեն մի բան նրան սար-  
սափելի բարկացնում էր։ Մի անգամ մի գիշացի ձու բերեց ծա-  
խելու Գէորգի մօտ ու շատ ժանգ գնահատեց։ Այս բանը Ալէք-  
սանդրին այնքան կատաղեցրեց, որ չկարողանալով իրեն զսպել յար-  
ձակւեց նրա վրայ ու մի լաւ ծեծեց։ Գէորգը մեծ զժւարութեամբ  
կարողացաւ շւարած զիւղացուն խլել Ալէքսանդրի ձեռքից, որը  
գոռում էր. «Հարկաւոր է ծեծել, սպանել այդ զզւելի արարածին,  
այդ սորուկին»։ Ծեծելուց յետոց Ալէքսանդրը խորին ապաշաւանք  
զգաց, այնպէս որ ուզում էր լաց լինել, բայց նոյն իսկ մի կաթիլ արտա-  
սուք դուրս չեկաւ նրա չորացած աչքերից։ Ա՛խ, ինչքան նա կ'ուզէր  
մի քիչ էլ է արտասւել։ բայց նրա գլուխն ու ուղեղը կմախ-  
քացել էին, մարմնի մէջ կենդանութիւնը սպառել ու կեանքի զար-  
կերակը սառել էր։ Նրա մէջ այժմ մի շարժում, մի կիրք կար-  
ամեն ինչ և բոլորին ատել։ Ամեն բան նրան դրգոռում էր և չու-

սահատեցնում; ամենուրէք նա տեսնում էր իր յիմարութիւններն ու սխալները. վերջին երեք օրը համարեա չէր քնել; Ցերեկներն անդամ տեսնում էր հօր ու բւականը, որ նրա վրայ բարկանում էր. մի անգամ էլ բարկացած շւաքն սկսեց փայտով սպառնալ նրան: Սարսափահար երիտասարդը տեղից վեր ցատկեց, սկսեց սենեակում արագ.արագ շրջել ու ճակատը շփել: Մի քիչ շրջելուց յետոյ նա խորին յոզնածութիւն զբաց, կարօտեց գլուխը դնել մի կնոջ ծընկան վրայ ու քնել, և վայր ընկաւ բազկաթուի վրայ: Նա ձգւեց՝ մէջքի վրայ և գլուխը դրեց թաթերի մէջ: Գէորդը տանը չէր. ամբողջ բնակարանի դասարկ անկիւններից զանազան ձայներ լցրին նրա ականջները: Խնչքան էլ աշխատեց աչքերը խփել, ոչինչ դուրս չեկաւ. վերկացաւ մեղից, մօտեցաւ լուսամուտին, բայց չնկատեց գարնանային գեղեցիկ օրը ու յենւելով պատուհանին աչքերը խփեց: Առաջը պատկերացաւ իր մարմինը, անասելի մեծացած: Բթամատերից ամեն մէկը դառել էր մի գերանի չափ. իսկ քթածակերում կրակ էր վառւում: Սարսափից բացաւ աչքերն ու մտահեց, որ այս տանջանքներից ազատուելու համար հարկաւոր է տանից դուրս գալ: Գդակը ծածկեց ու առանց վերաբէի և փողպատի դուրս վազեց տանից:

Օրը պարզ էր և գեղեցիկ: Գարնան կարմիր արեւը գրկել էր ամբողջ բնութիւնը, բայց Ալեքսանդրը ոչ մի բան չէր նշմարում: Առանց ուշադրութիւն դարձնելու անցորդների վրայ, նա արագ անցաւ քաղաքային այգին, ուր հինաւուրց ուռիները, բարդիներն ու ընկուղիներն իրանց լայն տերևները տարածել էին օդում և պաղ շւաք պատրաստել անց ու դարձ անողների համար: Այգում ոչ ոք չկար. գարնանային սառը քամին նրան սթափեցրեց ջղային զառանցումներից. նա նայեց չորս կողմը, գդակը վերցրեց զլիսից, շփեց զովացած ճակատն ու սկսեց խորհել: Ի՞նչ է նա—մի մեքենայ, որի մասերից մէկն ու մէկի մէջ բաւական է որ մի փոքրիկ դանակ մտնի, և մեքենան արդէն ընդմիշտ խանգարւած է: Կայ արդեօք այդ մեքենայի մէջ մի լաւ բան—ոչինչ: Լաւ չի լինի արդեօք, միանգամից այդ մեքենային վերջ դնել—ամենալաւն այդ է: Եւ սկսեց իրեն համոզել, որ հէնց հիմա ինքն արդէն մեռած է, որովհետեւ ոչ մի բան այլ ևս չի կապում նրան բնութեան հետ:

Այլ ևս չկայ մէկը, որ իրան սիրէր, ինչպէս որ չունի մէկը, որին ինքը սիրէր. վերջապէս ի՞նչ է սէրը—այնպիսի մի ցիմար բան, որպէս և բնութեան բոլոր բաները, որոնք արժանի չեն ուշադրութեան; Գուլէն կարող է Ալօյով բախտաւորւել. իսկ առանց նրան ամբողջ բնութիւնը Ալէքսանդրի համար ատելի էր: Ատելի էին մարդիկ, նրանց փմած ու հնարովի գաղափարները, նրանց գաղանութիւնն ու անխղճութիւնը: Այլ ևս ոչ մի բանի վրայ չոյս դնել չէր կարող, ոչ մի բան նրան չէր յափշտակում ու գրաւում, ոչ մի տեղ աղոստ բնութիւնը նրանից սուրբ գործ չէր սպասում:

Քաղաքային այգու ծառերը խիս էին. Ճիւղերն իրար հետ խառնւելով կտրել էին արևի ծառագայթների առաջը և ցուրտ զով էին տարածել իրենց ներքեւը: Ալէքսանդրը զգաց զովի սառութիւնն ու մրսեց: Այս երեսոյթն առաջ բերեց նոր խորհրդածութիւններ: Ինչու պէտք է նա մրսէր, ինչու պէտք է բնութեան մէջ այս բանը լինէր, ինչու պէտք է լինէր նոյն իսկ ցուրտը, ինչու է ատեղծւած մարդ ասած թոյլ արարածը. աւելի լաւ չէ նա չլինի, որ չենթարկւի ոչ ցրտի և ոչ տաքի: Ի հարկէ, լաւ է միանդամից կեանքին վերջ տալ ու ոչ զգալ, ոչ էլ տեսնել տանջանք կամ ունայն ու ցիմար ուրախութիւն: Այս, լաւ է մեռնել. և նա մի վայրկեան վճռեց վերջ տալ իր կեանքին: Բայց ի՞նչպէս: Այստեղ՝ այգում չարժէ, իսկոյն կը ժողովւի ամբոխը և վկայ կը լինի նրա մահւան. բնակարանում,—բայց անյարմար դրութեան մէջ կընկնի Գէորգը: Մի բոպէ երեակայեց, թէ ինքը վիրաւորւած արիւնքամ է լինում: Ամենքը գալիս, այս բանը տեսնում են իրենց աչքով ու ամեն մէկը մի բան է ասում: Նա պատկած է սենեակի տախոր վրայ, որ ծածկւած է նրա արիւնով: Այս պատկերը նրան դուր չեկաւ: Նա մտածեց գնալ գետն ընկնել: Այս միտքը նրան շատ դուր եկաւ. նա քայլերն ուղղեց դէպի քաղաքի մօտ հոսող Մայրակ գետը: Արեւ այրում էր, և նա մի քանի րոպէից յետոյ շոգ զգաց: Սառը ջրի մէջ մտնելու ցանկութիւն եկաւ վրան: Իսկոյն երեակայեց, որ ընկնում է գետի մէջ ու մինչեւ խեղդւելլ բաւականութիւն զգում: Ցետոյ նրան պատկերացաւ իր դիակը, որ ընկած է գետի յասակում և որից ձկները մի-մի կտոր պըծեցնելով, բաւականութեամբ ջրի մէջ այս ու այն կողմ լողալով կուլ են տալիս: Այս պատկերը նրան

աւելի ու աւելի հրապուրում էր. ինքնամուացութեան մէջ ընկած, գլուխը կոր, համարեա վազում էր դէսի գետափը:

## ԳԼ. Ժ.

Սախարարի քարայրը մի փոքրիկ քառանկիւնի տեղ է, որ գտնւում է Մայրակի ափում մի ժայռի վրայ: Մեր նախարարները, երբ քրիստոնէութեան տեղ Հայաստանում տիրում էր Զէնդաւետայի ուսմունքը, երբ մարդիկ ազօթում էին ոչ թէ կիսամռայլ, հոգին դէսի վերացականութիւնը տանող եկեղեցիներում, այլ բաց օդում և զով սօսեայ անտառներում, երբ մարդիկ զօրութիւն խնդրում էին ոչ թէ երկնքից, հրեշտակների դասից, այլ ու հողից ու բարձրաբերձ քարաժայուրից, երբ մարդիկ գեղեցիկը տեսնում էին ոչ թէ Յիսուսի և սրբերի տանջանքների նկարագրութեանց մէջ, այլ պարզ ու հրաշալի բնութեան ծոցում, այն ժամանակ, ասում է աւանդութիւնը, լեռ քարի մէջ փորել էին այս վայելչափայրը՝ մի փոքրիկ սենեակ, ուր հազիւ տասնեակ մարդ կարող էր տեղաւորւել: Նրա երեք պատը ժայռից էր, իսկ մի կողմը բաց և նայում էր ցածում եղած գեղատեսիլ բնութեանը, ծառազարդ ձորակին և արագահոս Մայրակին: Այսուղ, ասում է ժողովրդական աւանդութիւնը, Արտաշիր նախարարը ճաշակում էր կեանքի բարիքները՝ Հայաստանի անուշահամ դինին և համեղ խորտիկները, անց էր կացնում սիրոյ և տուփանաց ժամերը փափկասուն նազելիների հետ և ընկնում կեանքի այն հանգիստ ու մշտատե անտարբերութեան մէջ, որ մարդուն ընդունակ է գարձնում ամեն րոսկէ կեանքին ցտեսութիւն անելու և ամենաբարձր քաջութեան է հասցնում: Քրիստոնէութեան ժամանակ, շարունակում է աւանդութիւնը, մի վարդապետ, որին Արտաշիրի թոռը անւանել էր ազէտ ու գռեհիկ, իսկ նրա քարոզած վարդապետութիւնը վնասակար մտամոլութիւն, անիծեց այս հրճւանքի վայրը և երկրաշարժը ծածկեց նրան հողակոյտերով: Արտաշիրի սիրած տեղը այդպէս ծածկւած մնաց մինչև վերջին տարիները, երբ այդտեղի այգու տէրը, փորելով գետինը, գտաւ այդտեղը և նրա պատի վրայ կարդացին Արտաշիր քաջազնի վեհ անունը:

Մեր այգեստանը կամաց-կամաց սիրահարեց այս տեղին և պա-

տեց նրան վարդենիներով ու խաղողի վազերով, որոնք անցնելով ժայռի պատերից, փաթաթւում էին իրար և կազմում նրա այժմեան բուսածածք կտուրը:

Այս մեկուսի ընկած տեղը Ալէքսանդրը սիրում էր դեռ աշակերտ ժամանակ. վերջին տարին նա դարձեալ սկսել էր յաճախել իր տիրութեան քարանձաւը:

Քաղաքային այգուց դուրս գալուն ալէս նա քայլերն ուղղեց դէպի նախարարի քարայրը: Նա գնում էր աշխատելով դուրս քշել ուղեղից զօռով այնուեղ մոնող Աւանին, Սլո զաշաղին, Մէլիք Սէթին ու տիրացու Վարդանին, որոնց ուրւականները կանգնում էին նրա առաջ զանազան ձևով ու դիրքով: Ոչոքի վրայ չէր նայում ու գնում էր շուտափոյթ առանց նկատելու օրւայ փոքրիկ շոգն ու երբեմն վչող զով քամին: Նախարարի այգում ոչոք չկար. նա աննկատ մտաւ խորհրդաւոր քարանձաւը: Մայիսն էր. քարափի վրայ բուսած վարդենիները ծաղկել էին, կռացել ու վարդերը կախ գցել քարայրի ներսը: Վարդենիների հետ գրկած վազերը հաւաքւել էին քարանձաւի զլիսին ու մի դեղնականաչ վրան կազմել: Վերևից հոսող ու ջրէժմ կազմող առուն փրփուր կաթիլները թափում էր թփերի վրայ, որոնք ծանրութեան տակ կռանում էին ու ջրի կաթիլներից ցրում քարանձաւի յատակի վրայ: Մայիսին արեւը թփերի միջից նայում էր քարայրի ներսը և ջերմացնում նրա յատակը: Քարայրը մտնելուն պէս Ալէքսանդրը զգաց մարմնի մէջ տաքութիւն և շուրջը քնարեր զով: Նա նկատեց, որ սիրալ արագ է քարախում և յոդնած է. վճռեց մի քիչ հանգստանալ. բայց նախքան այդ՝ նայեց ժայռից ցած, ուր հոսում էր գետը և ուր կարող էր մի ակնթարթում շպրտել իրեն: Պառկեց քարանձաւում, աչքերը խփեց ու սկսեց ականջ զնել տատրակների, ծտերի, սարեակների ու սոխակների երգերին. նրա ականջին էր հասնում գետի գըռգոռոցը և տերեների ու թփերի մեջմ սոսափիւնը: Նա զգաց վարդերի ու սուսամբարների անուշ հոալ, ուոցերի քնարեր բուրմունքը: Ականջին հասաւ մի թփի սոսափիւն, կաթիլների ծնծնոց, մի հեռու կաչաղակի ձայն ու... անուշ քունը գրկեց նրան:

Քամու շւոցը, ջրերի խշուշոցը, թռչունների ձայնը աղատել էին նրան կեանքիսապանիչ մտածողութիւններից, նրա ամիսներով գըրգու-

ւած, տանջւած ու յոգնած ուղեղը առել էին իրենց թարմացնող գիրկը.  
յոգնած, մաշւած, կմաղքացած մարմինը կեանքի էր գալիս արևի  
ճամանչներից, ուժեղանում կազզուրիչ զովից և կերակրում յատակ,  
թարմ օդով: Մարդկային պատմութեան և պատիր գաղափարների  
ստեղծած կեանքով կիսասպան կենդանին վերականգնում, թարմա-  
նում, կաղդուրում էր մայր բնութեան մէջ, որի վրայ է միայն  
դրւած մարդկութեան յոյսը, որի դիտելու մէջ նա գտնում է իր  
հաւատը, որի ծոցում միայն նո զգում է իրական երջանկութիւն:  
Ալէքսանդրը քաղցր քնել էր: Արել իր օրական շրջանը արաւ ու  
մայր մոտաւ. ասողերը ցոլացին երկնակամարի վրայ, լուսինը սողաց  
մութ ամպերի տակից, բայց նա գարձեալ քնած էր ու քնած քաղցր  
ու խոր քնով: Գիշերը մի անգամ միայն իրեն կիսարթուն զգաց,  
բայց կողքին նշմարելով մօրը, շուռ եկաւ միւս կողքի վրայ, գրկեց  
նրան և շարունակեց քնել քաղցր քնով, ոգելից երազում, մինչև  
որ միւս օրը նորից ծագեց արել և իր շողով ծածկեց նրա աշ-  
քերը: Կիսարթուն նա լսեց ալզեսպանի երեխաների երգը: Մի բա-  
րակ ձայն կանչեց.

**Ծիտ եմ, ծիտ եմ**

**Ճըլւլլիկ եմ,**  
**Հօր մորթած եմ,**  
**Մօր կերած եմ,**  
**Անուշ քրոջ թռցրած եմ:**

Այս երգը կրկնեցին երեխայական մի քանի այլ ձայներ, որոնց  
մասին կիսաբռւն Ալէքսանդրը անկարող էր իրեն հաշիւ տալ: Այս  
երգին հետևեցին ուրիշ երգեր:

**Մէկը սկսեց.**

**Սղջիկ, աղջիկ,**  
**Ոսկէ շղջիկ,**  
**Առ քո տիկին**  
**Գնա, խաղա,**  
**Ալիւր մաղեմ**  
**Գամ քեզ պահեմ:**

**Միւսը շարունակեց.**

**Տղայ, տղայ,**

Ասկէ ջղայ,  
Առ քո ճաներ  
Գնա, լսաղա,  
Ալիւր մաղեմ;  
Գամ քեզ պահեմ:  
Մի ուրիշ ձայն սկսեց երգել.  
Սղջիկ, աղջիկ,  
Քարէ շղջիկ,  
Մկան պոչիկ,  
Նան պլոճիկ,  
Առ քո տիկին և այլն  
Որան պատասխանեց մի ուրիշը.  
Տղայ, տղայ,  
Փայտէ ջղայ,  
Առ քո ճաներ և այլն.

Ապա՝ գրգռւած ձայներ, կռիւ և յետոյ մի փոքրիկ աղջկայ աղաղակ, որ Ալէքսանդրին լիովին սթափեցրեց քնից: Նա իսկոն տեղից վեր ցատկեց և առանց իրեն հաշիւ տալու, բնազդումից դրդւած, վագեց մանկան օգնելու:

Քարայրի վերը գտնւած այլում խաղում էին մի քանի երեխայ, տասներկսից մինչև վեց տարեկան. Նրանցից մի տաս տարեկան տղայ բռնել էր իր հասակակից մի աղջկայ մաղերից և փոքրիկ բռունցքով խփում էր նրա զլիին, մինչդեռ աղջիկը կատաղած վագրի նման, թաթիկներով չանկուում էր նրա քիթ ու բերանը: Կռիւն ու աղմուկը և երկու կողմի լացը օդը բռնել էր: Ալէքսանդրը հազիւ կարողացաւ երեխաներին հեռացնել միմեանցից. գրկեց երկու կռւաղներին էլ ու սկսեց համբուրելով խոստանալ, որ նրանց համար անուշեղէններ կը բերի: Մանուկները նոր ուզում էին, որ ձայները կտրնն, երբ մօտեցաւ նրանց մայրը՝ այգետիրոջ կինն ու բարկանալով երեխաների վրայ, իր շնորհակալութիւնը յայտնեց անծանօթ պարոնին: Այդ ժամանակ միւս կողմից լսւեց այգեպանի զոռգոռոցը:

—Այ կնիկ, Բնչ ես այդ կոտորւածով զբաղւել, արի, է, տուններս քանզւեց, հացից կտրւեցինք:

Երիտասարդ կինը էլ չսպասեց. վազեց մարդու մօտ Հետաքրքրւած Ալէքսանդրը հետեւց նրան. հարիւր քայլ իրանից հեռու տեսաւ, որ վերից հոսող առևի թումբը պատառել է և գարնան հեղեղաջուրը ընթացքը ծռել է դէպի նախարարի այդին: Գլուխը կորցրած այգեպանը, բոլոր ոյժերը լարած, բահով ցեխի բլիթները իրար ետեւից թափում էր ջրի առաջ, բայց հեղեղը իսկոյն տանում էր զցածը և աւելի ու աւելի լայնացնում պատռւածքը: Հեղեղը դեղին տիղմը քշում ածում էր գեղեցիկ մշակած մարդերը, ուր ինամոն ձեռքերն արդէն հասցրել էին ամեն կանաչեղէն: Այգեպանը նայում էր իր աշխատանքի կորուստին և յուսահատած՝ ձեռքերը ծնկերին խփում: Երբ տեսաւ Ալէքսանդրին, դարձաւ նրան պաղատանքով.

—Աղա ջան, աղաջում եմ քեզ, ի՞նչ կը լինի մի րոպէ այգուց դուրս գաս ու ինձ համար մի բանւոր վարձես, որ գայ ինձ օդնի, ինչ գնով որ կուզի, թէ չէ—երեխաներս այս տարի սովից կը կոտորւին:

Ալէքսանդրը նկատեց այգեպանի խղճալի դրութիւնն ու իսկոյն մտաբերեց, որ աշակերտ ժամանակ ամառներն ինքն էլ է այսպէս աշխատել: Յանկարծ նրա աչքն ընկաւ մի բահի, ձեռքն առաւ և առանց երկար մտածելու ոտները հանեց ու մտաւ ջրի մէջ: Նա իրեն խկոյն մոռացաւ և, ամրողջովին եռանդ կտրած, սկսեց մեծ մեծ ցեխարձիթներ ածել հեղեղի առաջ: Այգեպանը ուրախութիւնից սկսեց զոռգոռալ ու զւարճանալ. նրան հետեւց Ալէքսանդրը, և երկուսն էլ կեցցէ հակեցէս ասելով, զցում էին մեծ մեծ հողակոյտերը իրար վրայ, և մինչ դեռ ջուրը չէր կարողացել մէկի զցածը շարժել, միւսը արդէն նեցուկն էր հասցնում: Գործն առաջ դնաց, մանաւանդ՝ երբ այգեպանի կինը մի խուրձ խոտ բերաւ ու դցեց բանդը, իսկ բանւորները ցեխ թափեցին խոտի վրայ: Ուրախացած այգեպանը մի յետ նայեց, տեսաւ ջրի սակաւանալն ու մարգերի անվնաս մնալը և, փառք տալով Աստծուն, շարունակեց իր գործը: Զարմանքին և շնորհակալութեան չափ չկար, երբ գործից յետոյ խեղճ այգեպանն իմացաւ, որ իր կոպիտ աշխատանքին օգնողը մի համալսարանաւարտ երիտասարդ էր: Այլևս անկարող էր նրան ձեռքից բաց թողնել ու թոյլ տալ իր բարերարին, որ այսօր

իր հետ չճաշի: Զիջելով նրա թախանձանքին Ալէքսանդրը նրա հետ քաղաք գնաց: Այգեպանի, կնոջ ու երեխաների ուրախ պատմութիւնները այս օրւաց դէպքերի մասին նրան թոյլ չին տալիս մատքերել իր դրութիւնը. նա կամաց կամաց սկսել էր ընկերանալ նրանց երջանկութեանը: Ճաշը, որ պատրաստել էր տանը մնացած պառաւ մայրը, շատ համեզ էր, այդ բանին նպաստում էր մանաւանդ անկեղծիք գինին: Երջանիկ այգեպանը և ինքն էր խմում և խմացնում Ալէքսանդրին, որը միայն երեկոյեան գուրս եկաւ նրա տնից և գնաց Գէորգի թնակարանը: Գէորգը նկատելով Ալէքսանդրի երկար բացակայութիւնը գիմել էր օր. Մարիամին, որն այժմ նրա մօտ էր և երկոսով նստած հեշտաեռի մօտ, դատում էին՝ ի՞նչ անեն իրենց բարեկամի համար: Նրանք վերջին ժամանակներն աւելի մտերմացել էին և աւելի ընտանեբար էին վարւում իրար հետ: Ալէքսանդրի գալը նրանց շատ ուրախ ացրեց. երեք բարեկամներն սկսեցին դատել սիրոց, առաջադիմութեան, գիտութիւնների և արհեստների մասին, մինչեւ որ գիշերը բաւականին անցաւ, և երիտասարդները, օրիորդին ճանապարհ գցելուց յետոց վերադարձան տուն ու Մորփէոսի գիրկն ընկան:

Օրւաց բացօղեաց աշխատանքից յոգնած Ալէքսանդրը քնել էր հանգիստ, խորը քնով և զարթնեց միայն այն ժամանակ, երբ Գէորգը արդէն դպրոց էր գնում: Նա իրեն առոյդ ու զւարթ էր զգում և անցեալ օրերի վճիռը միայն այն ժամանակ մտաբերեց, երբ արդէն պատրաստ էր դուրս գալու: Դուրս եկաւ պատշգամբը, որը պատած էր թթենիներով, որոնց խիտ տերեններից պատշգամբի վրաց տարածւել էր ոչ խոնաւ զով: Օդը պարզ էր ու մաքուր: Ալէքսանդրը սկսեց ծծել այդ կենդանարար ջերմ օդը. սկսեց դատել իր վճռի մասին և զգաց, որ ուղեղն այսօր աւելի կանոնաւոր է դատում:

—Ինձ հարկաւոր է մեռնել, մոտածում էր նա. այսինքն չինել. շատ լաւ: Դիցուք թէ այժմ ես չկամ, դրանից ոչ մի բան դուրս չի գալ, բացի այն, որ ես բաւականութիւն տւած կը լինեմ իմ եսականութեան, այսինքն ինձ ազատած կը լինեմ տանջանքներից: Բայց աւելի լաւ չմ' լինի, որ ես ապրեմ և առնջւեմ, կամ զուցէ և չտանջւեմ: Ի՞նչ կարիք կայ մեռնելու, իրեն ոչնչա-

ցնելու, երբ կարելի է և կենդանի մեռեալ լինել. կամ, վերջապէս ինձ  
համար միւնոյն չէ ապրել թէ մեռնել...

Նա վճռեց ապրել:

Դրանից յետոյ Ալէքսանդրը շատ շուտավ թողեց կովկասը և  
անցաւ Տաճկահայաստան...

Վ Ե Ր Զ:

## Ա Ր Ա Ա Ն Ը

ԾԱՆԹԻ

ՄԵՂԿ ու գրգռիչ զիբքով մը հանդարտ,  
Քարէ մազերուն գանգուրներուն տակ,  
Կանգնած է կինը անշարժ ու հպարտ  
Իր մերկութեան մէջ անբիծ-սպիտակ.

Ու բիւրեղառատ լոյսէն կայծկլտուն  
Ողորկ թեերը առաջ է պարզած。  
Հմայիչ, քաշող ժալտով մը անհուն  
Բացած է զիբկը հայեացքիս զիմաց.

Ե՛ս, այդ կանացի հպարտութեան քով,  
Մինչ սէր կը խաղաց իր քօքէթ դէմքին,  
Յանկարծ կը ցանկամ փարիմ տենչանքով  
Իր խրոխտ, առոյգ մարմարէ կրծքին:

1894 Գետրւար Լայքիկ.

\*  
\*\*

ԾԱՆԹԻ

Սեղմէ՛ ձեռքս, իմ անզին,  
Սեղմէ ուժգին ջերմ սիրով.  
Գուցէ պահ մալ իմ կեանքին  
Աւելցընէ քու գորով:

Զնւր. կը մեռնիմ դեռ չապրած,  
Մինչ գործ տեսնել լոկ կուզեմ,  
Մինչ մտքերս հրահրած  
Կեանքի գիրկը կը վազեն:

Ո'չ. չի կարծես կը վախնամ  
Կեանքի վերջին այս խաղէն.  
Այդ մեր ելքն է—ինչ վախնամ—  
Չըդոյութեան դռներէն.

Սակայն դառն է. գիտես դուն  
Թէ ինչ մտքեր մշջս կան,  
Ի՞նչ ներշնչանք, ինչ ձգտում,  
Ի՞նչ երազներ մոգական:

Եւ արդ՝ կեանքիս դեռ սեմին  
Թողնեմ անուրջս այդ ամէն,  
Եւ դեռ ոչինչ՝ ոչնչին  
Երթամ փարիմ աշխարհէն.

Ո՛հ, դեռ շնւտ է, շուա, հոգիս,  
Թարմ արիւնս բոց է դեռ,  
Ու դեռ ծանօթ չէ սրտիս  
Անկարելին, վախն ու հեռ.

Դեռ հեռուէն ապագան  
Կը նկարւի վառ ու պերճ,  
Դեռ ուժերս ալ եռ կու գան...  
Բայց շունչ մըն ալ՝ ու ալ վերջ.

Ու ալ կորած են անհետ  
Ուժ, յոյս, տենչանքս ու մտքեր.  
Բայց ոչ. տըւէք շունչս ետ  
Ես ընելիք ունիմ դեռ...

...Եւ երազէս արթընցած  
Բացւող լոյսին կը յառիմ.  
Անուշ արցունք կիյնայ ցած.  
Ո՛հ, ես կ'ապրիմ, դեռ կ'ապրիմ!

1891 նոյեմբեր, Պոլիս.

## ՄԵՐԿ ԴԵՐԻՒՇԸ

(Տուրիստի յիշողութիւնից)

Վ. ՓԱՓԱՉԵԱՆԻ

Ինչպէս շները, նոյնպէս և մուրացիկները Թէհրանում, ունին իրենց քաղաքամասը, որից այն կողմ անցնելու և մուրալու իրաւունք չունին մի առ ժամանակ։ Այդ բաժանումը մի քանի ամսից, ըստ երեսոյթին, փոփոխութեան է ենթարկում։ Մի քաղաքամասի մուրացիկը, որ մի քանի ամիսներից ի վեր անդադար անցորդներին ձանձրացնում էր, յանկարծ մի օր էլ չկար և մի քանի օրից յետոյ պատահմամբ հանդիպում էի նրան բոլորովին ուրիշ թաղում։

Բայց ինչ որ շատ երկար էր նստում այդտեղ այն մերկ դէրւիշը, որին միշտ տեսնում էի Լալազարի փողոցի ծացրին, ձիաքարշի վերջանալու կէտի մօտ պազգած։

Նստել է պատի տակ, աւստրիական դեսպանատան կողքին՝ եթէ փողոցը քիչ չոր է։ Եթէ շատ ցեխ է լինում, բարձրանում է Լալազարի այգու պատից դուրս ցցւած մի պատւանդանի վրայ և նրա երկու ոտնաչափ լացնութիւնում կուչ է գալիս—մնում։

Փաթաթւած է մի վերարկուի մէջ Ուրիշ հագուստ չունի։ Առանց չափազանցութեան, այդ վերարկուն բաղկացած է հարիւր տեսակ ամեն ձևի, ամեն գոյնի և ամեն մեծութեան կարկտաններից, որոնք միմեանց են կցած հաստ թելերով։ Դէրւիշական վերարկու է և իրենք դէրւիշներն են շինում։ «Հզարմիյի» են կոչում նրանք։

Երբեմն, երբ տեղաւորւելու համար՝ բաց է անում վերար-

կուն, երեսում է նրա բոլորովին մերկ անդամները սևացած ու կապտած ցրտից ու կեղտից:

Գլխին ունի թասաձև, սևացած թաղեայ գլխարկ, որի տակից դէպի նեղ ճակատն ու քունքերն են իջնում ալեխառն ու միմեանց կպած մազեր:

Դէմքը փոքր է ու կարճ, աչքերը խոր և երազող. կարծես նայում է, բայց չէ տեսնում. Խիսու տժգոյն է, ձեռքերն ու ոտները նիհարացել՝ ոսկոռ են կտրել, մումիացի նման եղել. իսկ մօրուքն ու բեխերը միմեանց խառնւել՝ անհետացրել են շրթունքները իրենց մէջ:

Միշտ պպղած է, տեղիցը չէ շարժւում: Եւ որովհետեւ ցուրտ է, ունի ծնկների վրայ, երկու ձեռքով բռնած՝ հողէ մի փոքրիկ կրակարան, որի մէջ, մօտակայ հացթուխից առած մի բուռ կրակը նա աշխատում է միշտ վառ պահել, տաքութիւն ունենալու համար:

Երբ մի օր էլ անցնում էի կողքից, կանգ առի քիչ և ուզեցի տեսնել թէ Բնչ էր անում այդ այլանդակ դէրւիշը:

Զէր աղօթում. ոչ էլ երգում էր. անցորդներ շատ կային, բայց սղորմութիւն իսկ չէր հայցում: Զգւած ու խամրած հայեացքով դիտում էր և չէր տեսնում: Եւ անցորդներն անցնելիս յաճախ նրան էին նետում մի սև փող: Դրամը ընկնում էր կողքին կամ գոզը: Զէր շարժւում: Թողնում էր որ հաւաքւի:

Երբ մօտեցայ, զգաց հայեացքս. ծանրութեամբ զլուխը բարձրացրեց: Հազիւ նշմարւող հեգնականի նման մի ժպիտ սահեց դէմքի վրայ, աչքերի անկիւններում:

—Դու դերւիշ ես, հարցրի:

Գլխովը բացասական նշան արաւ և վերարկուն լայն բաց արաւ: Լիովին մերկ էր. կրակարանը աշխատեց դնել ոտների արանքում. կկղել էր: Յաջողւեց վերջապէս, տեղաւորւեց, ծածկեց ներսում կրակարանը քղանցքներով և կիսախուփ աչքերը նորից ինձ վրայ բենուեց:

—Աֆիօն ես ծխում կարծեմ. հարցրի ես:

Գլխովը այս անգամ դրական նշան արաւ: Եւ զննում էր ինձ. ոչինչ չէր խնդրում:

Մի քանի բոպէ լուռ նայելուց յետով, յանկարծ ասաց մի խուլ,  
անդնդաշին ձայնով.

—Ձեր երկրումն էլ աֆիօն ծխումը են:

—Ոչ... դա թոյն է. մեզնում մարդիկ չեն սիրում իրենք  
իրենց թիւնաւորել:

Ժայռեց և ասաց.

—Ուրեմն ձեր երկրում մարդիկ ցաւեր չունին:

—Ի՞նչու չէ. բայց մի՞թէ հարկաւոր է աֆիօն ծխել, երբ  
մարդ ցաւեր ունի:

—Դու սկի ծխել ես աֆիօն.

—0', ոչ...

—Ուրեմն չես կարող հասկանալ: Բայց գուցէ լսել ես, որ ծխողը  
փոխադրում է մի երազի երջանիկ աշխարհ, ուր ցնդում են նրա  
բոլոր վշտերն, ուր նա ազատ է թշւառութիւնից, տանջանքից...  
Այդ չգիտե՞ս դու...

—Այդպիսն ուրեմն դուք ձեզ միսիթարում էք:

—Ո՛չթէ միսիթարում ենք, այլ աշխատում ենք մոռանալ...  
Մոռանալ... քիչ բան կայ մոռանալու...

Այդ միջոցին մի աղմուկ բարձրացաւ փողոցում: Հեռուից նախ  
երևացին դէպի մեզ արշաւող վեց պարսիկ ձիաւորներ երկու կարգ  
շարւած, իսկ նրանց ետուից սլանում էր չորս ձի լծւած մի բաց  
կառք, որի մէջ փքւած բազմել էր մի պարսիկ ազնւական, հագած  
թիրմայի թանգագին շալից շքեղ մուշտակ:

Մի խումբ աղքատներ ցնցոտիներով — կանայք կիսամերկ, մա-  
նուկներ՝ ցեխաթաթախ, սրթսրթալով, ատամները կարկափելով —  
վազում էին կառքի երկու կողմից՝ ձեռքերը պարզած, աղաշաւոր  
ձայներով.

—Աղա ջան, մի դրամ...

—Տէր իշխան, մի սև փող...

Ժողովուրդը ճանապարհ էր տւել. կառքը սրանում էր. ցըն-  
ցոտիներով տասնաւոր մուրացկանները ճղփացնելով ցեխն ու ջուրը՝  
վազում էին և ազնւականը փքւած՝ դիտում էր անհոգութեամբ  
այդ բոլորը:

Մերկ դէրւիշը ինձ նայեց, յետով ազնւականին և ասաց.

— Հարկ չէ մոռանալ այդ... կարելի՞ է առանց աֆիօնի...

Մի քիչ լռեց. յետոյ յանկարծ աչքերը փայլեցին.

— Մեր նահանգապետն է, շարունակեց նա—երկիրը հարիւր հազարով գնել է, որ երկու հարիւր հազար շահի... և ահա թէ որպէս է շահում... Հարկաւոր չէ ծխել: Ինձ երբեմն թւում է, որ այս բոլորը երազ է և որ երբ աֆիօն եմ ծխում, այն ժամանակ միայն մտնում եմ իրական կեանքի մէջ, այն ժամանակ միայն զարթում եմ քնից... Ո՛խ, ծխիր աֆիօն, տէր, և պիտի տեսնես թէ որպէս կը մոռանաս այդ բոլորը. այդ ցաւերն ու անիրաւութիւնը... Փողոցի մէջ, պատերի տակ, ցեխի անկողնի վրայ է որ պառկում են այդ ամէնքը, իսկ նրանցով հարստացողը՝ թիրմայի շալի մուշտակով է զբօննում.

Յետոյ մի դանդաղ ակնարկ էլ ձգեց քիչ-քիչ ետ մնացող մուրացիկների վրայ, սլացող անցնող կառքին, և, երբ կծկում էր վերարկուով, ասաց.

— Կեանքը, երջանկութիւնը միմիայն քնելու մէջն է. իսկ այս բոլորը երազ է, վատ կոշըմար... Անցիր, տէր, մի խանգարիր քնելու...

Ու ամփոփւած, գլուխը խոնարհած՝ անշարժացաւ:

Երբ վերադառնում էի, դէրւիշը միշտ նոյն տեղն էր. միշտ անշարժ, գլուխը կրծքի վրայ, ինքնամոռացութեան մէջ...

# ՍՏՐԿԻ ԵՐԱԶԸ

Հ. Վ. ԼՈՆԳՓԼԼՕՇ—Անգլ. թարգմ. Յակ. Տէր-Գէորգեանի

## The slaves dream

H. W. Longfellow

Նա դեռ չը հնձած՝ բրնձենու մօտին  
Յոզնած թեք ընկաւ, մանդաղը ձեռքին.  
Այրւած կուրծքը բաց, իսկ կոպիտ մազերն  
Խոր թաղւած էին աւազի միջին.  
Եւ ազօտ կերպով, որպէս մի տեսիլ,  
Տեսնում է նա իւր հայրենի երկիր:

Տեսնում է ինպէս շուրջը գաշտերում,  
Հպարտ, երկնագոյն նիգէրն է հոսում.  
Կարգերով շարւած արմաների տակ,  
Որպէս թագաւոր շրջում էր ս'զատ.  
Եւ սարից իշնող կարաւանների  
Թոյլ դողան իւնը ականջին հասաւ:

Տեսաւ սեաչեալ նա իւր թագուհուն,  
Իւր զաւակների մէջ տեղը կանգնած.  
Փարւում են իրան, գրկում, համբուրում,  
Փոքրիկ թաթիկներ դէպի նա պարզած.  
Եւ տաք արցունքներ, քնածի աչքերից,  
Թրջում են աւազն ուրախութիւնից:

1) Ծանօթ. Լոնգֆելլո—Հիւս.-Ամերիկալի հոչակաւոր բանաստեղծն է (Ծն. 1807, † 1882). Այս ոտանաւորում խօսքը Աֆրիկալի Լիբերիա երկրից Ամերիկա տարած նեգրների մասին է, որոնք ստրուկներ էին Հիւս. Ամերիկալի հարաւային նահանգներում, և որոնց ազատութեան համար եղաւ Հիւս. Ամերիկալի ներքին ահեղ պատերազմը 1861—64 թթ., որ վերջացաւ լոգուտ ազատականներին.—Նիգերը մեծ գետ է Աֆրիկալում, ստրուկների նախկին հակրենիքում:

Այնժամ մոլեգնած հեծնում է իւր ձին  
Եւ սլանում է նիգերի ափով—  
Սանձ, երախակալ—ողջ ոսկի էին.  
Եւ խրոխտ ճայթիւնով պատերազմական  
Ամեն մի բուդէ նժոյգի կողքին  
Ուժգին զարկւում էր պողպատէ պատեանն:

Ապա արնագոյն դրօշակի նման  
Նորա առաջին մի թռչուն թռաւ.  
Եւ ամբողջ օրը վնտրում էր նորան  
Այն դաշտում—որտեղ ծաղկում է արմաւ,  
Մինչև որ տեսաւ Կաֆրերի հիւղերն,  
Մինչև վարդագոյն ովկեանը տեսաւ:

Գիշերն առիւծի լսեց մոնչիւնն  
Եւ բորենիի վայրի աղաղակ.  
Իսկ եղեգները գետաձին ջարդում  
Եւ պղտորում էր լուռ սահուն հոսանք.  
Եւ նա երազում, հպարտ, փառաւոր,  
Անցնում էր որպէս յաղթական զինւոր:

Խաւար անտառը բիւր լեզուներով  
Ազատութիւն էր կանչում բարձրաձայն.  
Եւ անապատում վայրենի ձայնով  
Խորշակն էր գոչում դազանի նման:  
Եւ փոթորկալից այդ եղանակին,  
Ուրախ, անցնում էր իւր քնի միջին:

Բայց նա չէր զգում ոչ տապլ օրւան,  
Եւ ոչ էլ անգութ իւր տիրոջ մտրակ—  
Նա իր քնի մէջ հանդիպեց մահւան,  
Եւ գետին փուեց իւր անշունչ դիակ:  
Իւր կապանքները հոգին խորտակեց  
Եւ մի կողմ նետեց:

## ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Բ. ԲԷՕՐՆՍՈՂՆԻ.—Թարգմ. օր. Հ. Նաբաթեանի

Դաշտավայրի վրայ, հեռւում՝ իմ հայրենիքում մի ընտանիք  
էր ապրում, ուր կային մի տղամարդ, մի կին ու վեց տղայ։  
Նրանք եռանդով աշխատում էին մշակել այն հողը, որ անմշակ էր  
թողած, մինչև որ մի դժբախտ դիպւած վերջ դրաւ ամուսնու  
կեանքին ու կինը մնաց մենակ, ծանրաբեռնած դառն աշխատան-  
քով ու վեց որդիներով. նա չկորցրեց իր արիութիւնը, այլ մօտեց-  
նելով ամուսնու դագաղին իր երկու մեծ որդկերանց, ստիպեց  
նրանց երդւելու հօր զիակով, որ միշտ կը հոգան իրանց կրտսեր  
եղբայրների մասին և ուժերը պատաժին չափ միշտ կ'օգնեն նրանց։  
Նրանք խոստացան և խօսքները հաստատ պահեցին մինչև ամենից  
կրտսերի մեծանալը։ Միայն այդ ժամանակ նրանք իրանց երդման  
տակից զուրս եկած համարեցին, և մեծն ամուսնացաւ մի այրի  
գեղջկուհու հետ, որ սեփականատէր գիւղացու կին էր. իսկ քիչ  
յետոց էլ, երկրորդը պսակւեց իր ունեոր քենու հետ։

Մինչև այդ ժամանակ բոլորը հպատակւում էին մեծ եղբայր-  
ներին, բայց այժմ պէտք է չորս եղբայրները կառավարէին տնային  
գործերը։ Նրանք եռանդով էին վերաբերւում դէպի  
գործը։ Մանկութիւնից սովորել էին չբաժանել միմեանցից, լինել  
զոյզ-զոյզ, կամ չորսը միասին և այդպէս էլ շարունակում էին  
նրանք մինչև այժմ, նամանաւանդ՝ որ կարիք էին զգում փոխա-  
դարձ օգնութեան։ Նրանցից ոչ մէկը իր կարծիքը բարձրաձայն չէր  
յայտնում, մինչև հաստատ չիմանար միւս եղբայրների կարծիքը. և  
իսկապէս նրանք որոշ կարծիք չունէին էլ, մինչև որ միմեանց երեսի

չկարդային։ Առանց հարց բարձրացնելու և երկար խօսելու նրանք լուր համաձայնւեցան չբաժանեել իրարից քանի կենդանի կը լինի մայրը։ Իսկ մայրն ինքը բոլորովին ուրիշ մտադրութիւն ունէր։ Նա իր կողմը քաշեց՝ համաձայնեցրեց իր երկու ամուսնացած որդիներին էլ։ Վարելահողը այդ ժամանակ շատ մեծացաւ ու շատ լաւացաւ։ մշակելու համար աւելի շատ մարդ էր հարկաւոր։ Այդ պատճառով էլ մայրն առաջարկեց երկու մեծ որդիերանց առանձնանալ և նրանց բաժին տալուց յետոյ մնացած հողը բաժանեց միւս չորսի վերաց, այնպէս որ եղբայրներից երկուսը՝ միասին ստացան մնացածի մի կէսը, միւս երկուսը՝ միւս կէսը։ Հին տան մօտ մտադիր էին շինել նորը։ Եղբայրներից մի զոյգը կը տեղափոխւեր նոր տունը, իսկ միւսը՝ հին տան մէջ, մօր հետ կապրէր։ Բայց նոր տան մէջ բնակւող եղբայրներից մէկը պէտք է ամուսնանար, որովհետեւ նրանց օգնական էր հարկաւոր թէ դաշտային գործերի և թէ ապրանքին նայելու համար։ Եւ մայրն ասաց այն աղջաց անունը, որին ցանկանում էր իր հարսը դարձնել։

Այդ բանի դէմ ասելու ոչինչ չունէին նրանք։ Հարկաւոր էր միայն առաջ վճռել այն հարցը թէ որ զոյգը պիտի գուրս գնար հին տնից և յետոյ՝ այդ երկուսից որը պիտի ամուսնանար։ Ամենամեծն ասաւ, որ տեղափոխւել համաձայն է, բայց ամուսնութիւնից բոլորովին հրաժարում է։ Նոյնը կրկնեցին և մնացած երեքը։

Վերջապէս նրանք համաձայնեցին մօր հետ, որ աւելի լաւ կը լինի հարցնեն աղջկան ու տեսնեն, թէ ումն է նա ընտրում եւ ահա մի երեկոյ մայրը վերը—պանրի ամառնալին գործարանում հարցրեց աղջկան թէ արդեօք նա չէր ցանկանալ տեղափոխւել ներքև՝ դաշտը իր որդիերանցից մէկի կինը լինելու համար։ Օրիորդը ուրախութեամբ ընդունեց այդ առաջարկը։ Բայց ջահիլներից որին էր ցանկանում, այս էր բանը, որովհետեւ նա ինքը պիտի ընտրութիւն անէր։ Նա ոչ մի կերպ չի կարող այդ ասել։ Դեռ ևս գորամասին չէր էլ մտածել։

Բայց թող մտածէ այժմ, որովհեաւ այդ հարցը յետաձել չէ կարելի։ Գուցէ ցանկանում է ամսդրանիկ որդուն, բայց այդ չի կարելի, որովհետեւ նա ուղղակի հրաժարւել է ամուսնանալուց։ Այն ժամանակ օրիորդն ամենից փոքրիկին ընտրեց։ Բայց մայրն ասաւ, որ

կրտսերի ամուսնանալը շառ տարօրինակ բան կը լինէր. չը որ նա ամենափոքրն է եղբայրների մէջ:

—Դէհ լաւ, ուրեմն թող նրանից մեծը լինի:

—Բայց ինչու մեծից յետոց երկրորդը չլինի:

—Ախր ինչու նա չլինի, պատասխանեց օրիորդը:

Բանն այն էր, որ հէնց ինքն էլ նրա վրայ էր մտածում անդադար: Մայրը, հէնց որ մեծ որդին մերժեց ամուսնանալ, իսկոյն գլխի ընկաւ, որ երկրորդ որդին և աղջիկը իրար դուր են եկել: Այդպիսով էր որ երկրորդը ամուսնացաւ աղջկայ հետ, իսկ մեծը նրա հետ տեղափոխւեց: Կողմնակի ոչ մի մարդ իսկի չէր կարող իմանալ թէ ինչպէս են նոքա բաժանել կայքը, որովհետեւ առաջւայ պէս գործում էին միասին ու բերքերը տանում մերթ մէկի, մերթ միւսի շտեմարանը:

Քիչ ժամանակից յետոյ մայրը զգաց, որ վատառողջ է. նա հանգստանալու կարիք ունիւր: Դրա պատճառով էլ որդիները վըճռեցին վարձել այն աղջկան, որ շուտոշուտ գալիս էր նրանց մօտաշխատելու: Վճռի գործարրելը յանձնեցին կրտսերին, որովհետեւնա ամենից լաւ էր ճանաչում աղջկան: Միւս օրը՝ երբ նրանք միասին տերեւ հաւաքելու լինին՝ կրտսերը պիտի խօսէր նրա հետ այդ բանի մասին: Բայց ինչպէս երեռում էր, կրտսերը վաղուց գաղտնապէս սիրում էր նրան. որովհետեւ երբ սկսեց աղջկան հարցնել, այնպէս օտարօտի կերպով հարցրաւ, որ օրիորդը կարծելով թէ իր ձեռքն է խնդրում, իսկոյն յայտնեց իր համաձայնութիւնը: Երիտասարդը վախեցաւ. իսկոյն գնաց մեծ եղբայրների մօտ և պատմեց իր անշնորհք վարմունքը. բոլորն էլ մտածմունքի մէջ ընկան և ոչ մէկն էլ է չէր վստահանում բերան բանալ: Իսկ երկրորդ եղբայրը կրտսերի դէմքի արտայալութիւնից նկատեց, որ նա սիրում էր այդ աղջկան և հէնց դրա համար էր, որ վախեցել էր. նա զգում էր թէ ինչ վիճակ էր սպասում իրան—վիճակ՝ հասակն առած ամուրիի, որովհետեւ ամուսնանալ կարող էր միայն երկու եղբայրներից մէկը: Հեշտ չէր հաշտւել այդ մոքի հետ, որովհետեւ նա ինքն էլ ունիր մի սրտի մօտ արարած: բայց ինչ անէր այդ դէպքում: Եւ ահա, առաջ բերանը նա բաց արաւ: «Աւելի լաւ կը լինի, որ աղջիկը մեր տանը հարս լինի» ասաւ նա, որովհետեւ այն ժամանակ նրա վրայ աւելի կարելի է

յոյս դնելու Հենց որ նա արտասանեց այդ խօսքերը, եղբայրները համաձայնեցին նրա հետ և վճռեցին գնալ իրանց մօր մօտ ու նրա համաձայնութիւնն ստանալ. բայց երբ տուն եկան, տեսան որ մայրը սաստիկ հիւանդ է: Մնում էր սպասել, մինչև մայրը կ'առողջանար: Բայց որովհետեւ նրա առողջանալը չէր երևում, ուստի եղբայրներն էլի հաւաքւեցին ընդհանուր խորհրդի: Այսուղ կը բասերն ասաւ. քանի գեռ մայրը հիւանդ, անկողնի մէջ պառկած է, տան մէջ ոչ մի փոփոխութիւն չպիտի մոցնւի, որովհետև աղջիկն առանց այդ էլ հիւանդի մօտ շատ գործ կ'ունենայ:

Տանուվեց տարի պառկած մնաց հիւանդ մայրը: Տասնուվեց տարի հարսնացուն լուս ու համբերութեամբ հոգ էր տանում հիւանդ մօր վրայ: Տասնուվեց տարի շարունակ ամեն երեկոյ բոլոր որդիները ժողովում էին իրանց մօր անկողնի շուրջն աղօթելու, իսկ կիւրակի օրերը նրանոյ ընկերանում էին և երկու մեծ եղբայրները: Մայրը ինքը ուներում էր այդ ժամերին չմոռանալ այն աղջկան, որ այնքան ժամանակ հոգացել էր իր վրայ: Նրանք հասկացան մօր միտքը և խոստացան կատարել նորա խնդիրքը: Այդ տասնուվեց տարւայ ընթացքում նա օրհնում էր իր հիւանդութիւնը, որովհետև հիւանդութիւնը նրան առիթ տւաւ լիովին վայելելու մայր լինելու քաղցրութիւնը: Ամեն անգամ որդիներին տեսնելիս նա յախտնում էր իր շնորհակալութիւնը. նոյնը արաւ և վերջին անգամ:

Երբ վաղձանւեց, վեց որդիներն ուսերի վրայ տարան մօր դագաղը դէպի հանգստարան: Տեղական սովորութեան համեմատ որդիներն էլ էին յուղարկաւորում հանգուցեալներին. բայց այս անգամ պառաւին յուղարկաւորում էր ամբողջ գիւղը՝ կանաչք, մարդիկ, բոլորը ովքեր կարող էին տանից դուրս գալ, մինչև իսկ մանուկներ: Առջեկից գնում էր ժամկոչը իրը երդիչ. յետոյ վեց որդիները դագաղն ուսերին, իսկ նոցա ետեկից բոլոր գիւղացիք: Ամենքը երգում էին, և նրանց երգը ցրում էր հեռո՛ւ, օդի մէջ: Եւ երբ գիւակը հողին յանձնեցին ու որդիները լցրին գերեզմանը, թափորն ուղղեց գէպի եկեղեցին, որովհետև այդ օրը կրտսեր եղբայրը պէտք է ամուսնանար իր սիրած աղջկայ հետ: Եղբայրները ացդպէս կամեցան, որովհետև մէկը միւսի հետ սերտ կապ ունէր: Եկեղեցում քահանան—իմ հանգուցեալ հայրը—խօսեց հաւատարմութեան մասին և ինձ, որ պատահաբար այդ գէպին ներկայ էի, երբ դուրս եկայ եկեղեցուց, թւում էր, որ սար, ձոր և շրջապատող բնութեան ամբողջ վեհութիւնը, բոլորն էլ ձուլւում էին այս խօսքի հետ—հաւատարմութիւն:

# ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ. Ե.Պ

ՀԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

(Շարունակութիւն 1)

ՄԱՍՆ ԱԹԱՁԻՆ

ՅՈՅՍԵԲ ԵՒ ԵՐԱԶՆԵԲ

VIII

Ամառայ սկիզբն էր:

Զառիկեանին յանձնւած ուսումնարանում քննութիւնները  
արդէն վերջացած էին: Գարեգինը և քոյրը դպրոցական աշխա-  
տանքից բոլորովին ազատ էին և հանգստանում էին:

Զրաբարտիչը արձակւեց, և նորան չկարողացան պաշտպանել ոչ  
«Փամանակի» մի շարք փաստաբանութիւնները, ոչ հոգաբարձունե-  
րից մէկի յամառութիւնը: Հետևեալ տարւայ համար ուսուցչական  
խումբը պիտի մնար անփոփոխ: Հարկաւոր էր միայն հրաւիրել մի  
ուրիշին՝ հրաժարեցրածի փոխարէն:

Միակ հոգսը, որ զբաղեցնում էր այժմ Զառիկեաններին,  
ամարանոցի խնդիրն էր: Այդ հարցն էլ շուտով իւր լուծումը ստա-

<sup>1)</sup>Տես «Մուրճ» 1897 թ. № 1, 2—3, 4.

ցաւ՝ շնորհիւ օր. Աշխէնի, որը առհասարակ չէր սիրում յոգնեցնել իւր ուղեղը անվճռական, երերուն դրութեան մէջ:

Տարեդարձի երեկոյից յետոյ, օր. Զառիկեանի և օր. Վարթումեանի մէջ եղած բարեկամութիւնը աւելի ջերմութիւն ստացաւ: Գարեգինի քոյրը սիրեց իւր ընկերուհուն: Կարծես նորա սիրու վկայում էր, որ նա մի ժամանակ ուրախութիւն պիտի բերէ Զառիկեանների ընտանիքին: Նա յաճախ երթևեկում էր Վարթումեանների մօտ: Օր. Մարիամի համար շարունակ ընթերցանութեան գրքեր էր տանում կարգալու: Այդպիսի ծառալութեան համար պատրաստ էր տնային համեստ գրադարանը—քրոջ և եղբօր վասակի արդիւնքը:

Մի օր էլ նա գնաց իւր ընկերուհու մօտ՝ յատկապէս մի նպատակով՝ խորհրդակցելու այն մասին, թէ որ ամարանոցը գնան, որպէս զի միասին անցկացնեն ամառը:

Նախասենեկում նորա առաջ դուրս եկաւ Սերեօժան, Մարիամի եղբայրը, և Սուսաննան, նորա քոյրը, չորս հինգ տարեկան մի աղջիկ, որը կուկայի պէս զուգւած էր և կուկայի պէս սանրւած: Սերեօժան տասը տարեկան կը լինէր: Գիմնազիստի շորով էր: Գրաւիչ երես ունէր, որ աւելի գրաւիչ էին դարձնում երկու սև խալ՝ մէկը՝ վերի շրթունքին, միւսը՝ այտի վրայ: Արագաշարժ թարթիչներից և վազվազող պասլղուն բիբերից երեսում էր, որ դա մի ժիր տղայ էր:

—Մարիամը տանն է՞ հարցրեց Աշխէնը բարեկով թէ մէկին և թէ միւսին:

—Մարուսեան տանը չէ,—պատասխանեց գիմնազիստը ոռւսերէն և բաց արեց դահլիճի դուռը:

—Իսկ մայրիկդ?

—Մայրիկը տանն է: Ես իսկոյն...

Եւ խօսքը չաւարտած՝ նա վազեց մօրը կանչելու: Սուսաննան էլ ուզեց վազել եղբօր ետելոց, բայց Աշխէնը պահեց նորան: Գնալով դահլիճ, նատեց, իւր մօտ քաշեց երեխային և սկսեց փայտակ նորան, շոյել գլուխը և ուսերին թափւած ապրեշումեաց մազերը: Նա խօսեցնում էր երեխային և զւարճանում:

Եկաւ տիկին Վարթումեանը՝ գլուխը կապած տեղական տա-

րազով և հագած միապաղաղ սև զգեստ. նա սգաւոր էր. ամուսինը վախճանել էր 7—8 ամիս առաջ:

Օր. Վարժումեանի հայրը հարուստ գաւառացի էր. պսակւել էր Թիֆլիսում և վերջնականապէս հաստատւել այնտեղ. Նորա կենդանութեան օրով՝ այդ ընտանիքում տիրապետում էր բուրժուազիան ոգէ էգորիզմը նորա բնորոշ գիծն էր: Եքեղ զարդարել տունը տեղը, տարազին հետևել, լաւ ուտել, լաւ խմել, մի խօսքով, լաւ ապրել—այդ էր ահա ընտանիքի իդէալը: Մերձաւ որների և մօտ ծանօթների շրջանը նոյն նեղ և սահմանափակ հասկացողութիւններով էր մնաած, մեծացած: Ընդհանուր բարօրութեան, հասարակական շահերի մասին ոչոք երբէք չէր խօսում այնտեղ: Հնդիանուր բարօրութիւն ասած խօսքը ժպիտ կը յարուցանէր այդ շրջանում, որ գիտէր ապրել միայն իւր վայելչութեան համար և ոչ մի առնչութիւն չունէր այն քաղաքակիրթ, իսկական լուսաւորութիւնը իւրացրած ընտիր դասակարգի հետ, որը, տիտանի նման, իւր ուսին դրած տանում է առաջդիմութեան ծանր, բացց ազնիւ և վսիմ գործը: Մարիանը զեռ ևս իսպառ ձուլած չէր իւր միշավացրի հետ: Զէ կարելի ասել, որ նորա հոգու լաւագոյն ձրդտումները իւեղտած լինէին, ոչ. բացց այդ շրջանը, ինչպէս պատւար, ձգւած էր նոցա շուրջը և կաշկանդում, իսպանում էր նոցա ազատ ելքն ու թռիչքը: Նօր մահը կործանեց պատնէշը, և նա իրան աւելի ազատ զգաց իւր տան մէջ: Մայրը հասկացող կին էր և չէր կարող չգնահատել իւր աղջկայ իւելքը և առողջ դատողութիւնը: Նա չկամեցաւ արգելք լինել Մարիամի առաջ, որը ձգտում էր այժմ դէպի մի ուրիշ, նոր շրջան, թէև այդ այնքան էլ հաճելի չէր ինքնազոհ և հպարտ ազգականներին:

Մինչեւ որ տիկինը և օրիորդը երկու բերան կը խօսէին իրար հետ, Մարիամն էլ եկաւ: Իւր ընկերուհուն նկատեց թէ չէ, շտապով նոտանները ձգեց դաշնամուրի վրայ և բացականչելով.

—Օ, Աշխենը այստեղ է? վազեց նորա մօտ և երկու ձեռքի մէջ առնելով նորա մատները՝ նստեց կողքին: Այս քանի օր է չես երևում? շարունակեց նաև Որտեղ էիր? Ինչու չէիր գալիս?

Եւ ընկերուհիները ուրախ ժպիտով նայում էին իրար երեսի:

— Քննութիւններով էի զբաղւած, — պատասխանեց օր. Զառ-  
ոիկեանը:

— Քննութիւններով? Երբ կը վերջանան ձեր քննութիւնները?

— Արդէն վերջացել են: Այժմ մենք ազատ ենք և ամարանոց  
գնալու մասին ենք մտածում:

— Որ ամարանոցը պիտի գնաք?

— Հէսց բանն էլ այդ է — որ ամարանոցը? Իսկն ասած, մենք  
էլ չգիտենք, որը լնտրենք: Դուք որտեղ պիտի լինիք ամառը?

Օր. Մարիամը ասաց, որ ամառը սովորաբար անց էին կաց-  
նում կոջորում: Օր. Աշխենը նկատեց, թէ այդ տեղը իրան շատ  
էլ դուր չէ գալիս: Յետոյ սկսեցին զանազան ամարանոցների անուն-  
ներ յիշել: Բէլլյա Կլիւչ, Մանգլիս, Բորժոմ, Աբասթուման և այլն.  
ցոյց էին տալիս մէկի յարմարութիւնները, միւսի պակասութիւն-  
ները: Տիկին Վարթումեանը հեռացաւ: Օր. Աշխենը իրան աւելի  
ազատ զգաց և, առանց խօսակցութիւնը երկարացնելու, դիմեց ուղ-  
ղակի իւր գալու նպատակին:

— Գիտես ինչ կայ, Մարիամ? Լաւ չէր լինիլ, եթէ մենք  
ամառը միասին անց կացնէինք?

Օր. Վարթումեանը յայտնեց, որ այդ մասին ինքն էլ մտա-  
ծել է և որքան ուրախ կը լինի, եթէ այդ յաջողւի: Ընկերուհի-  
ները կանգ առան ամարանոցներից մէկի վրայ և վճռեցին անպատ-  
ճառ միասին լինել այնտեղ ամառը:

Երբ օր. Զառուիկեանը կամենում էր մեկնել, Մարիամը ասաց.

— Փո բերած գիրքը շատ լաւն է: Հաւանեցի: Միայն մի քանի  
դժւար բառեր կան, ևս չհասկացայ:

Պատուհանի վրայից վերցրեց Շնորհականի աքաղաղը, բաց արեց  
գիրքը, միջից հանեց մի թղթի կտոր, որտեղ նշանակւած էին  
չհասկացւած բառերը: Օր. Աշխենը իւրաքանչիւր բառի դիմաց  
դրեց ոռւսերէն թարգմանութիւնը. միայն մի հատ բառ իրան էլ  
անծանօթ էր, այն էլ խօստացաւ եղօրից հարցնել:

Օր. Վարթումեանը շնորհակալութիւն առաւ ընկերուհուց  
կրած նեղութեան համար, յետոյ ճանապարհեց նորան մինչև սան-  
դուխների գլուխը, և, երբ նա իջաւ և, բաց անելով դուռը, ու-  
զում էր դուրս գալ փողոց, ընկերուհին գոչեց վերևից.

— Բարեկիր մայրիկիդ և պարոն Գալրեգինին:

— Աչքիս վրան, — պատասխանեց մեկնողը ժալտալով և, դուրս դալով փողոց, դուռը շրխկացրեց ետևից:

Այդ տեղից նա շտապեց դէպի տուն:

Գարեգինը, օգուտ քաղելով քրոջ և մօր բացակացութիւնից, գնացել էր Աշխէնի սենեակը, վերցրել էր գուսեղանի վլայից օր. Վարթումեանի լուսանկարը և աչքը դէմ արած նորա պատկերին՝ նայում էր և հիանում: Նորա սրտում յանկարծ մի ցանկութիւն յզացաւ — համբուրել այն սիրուն դէմքը: Բայց կարծես ինքն իրանից ամաչեց, և ետ տարաւ լուսանկարը: Սակայն իւր փափագին դիմադրելու ոյժ չունեցաւ: Մի երկու քայլ արեց դէպի լուսամուտը, նացեց չորս կողմը, ականջ զրեց — ոչ մի ձայն, ոչ մի շշուկ: Եւ տպա ետ գալով, սենեկի խորքում մօտեցրեց շրթունքին անփենդան պատկերը և նւազեց երկարաւու համբոյրի մէջ...

Այդ բովէին մէկը արագ-արագ սկսեց բարձրանալ աստիճաններով: Գարեգինը ճանաչեց քրոջ ոտածայնը: Նփոթւած յանցաւրի պէէս՝ նա տեղը դրեց լուսանկարը և շտապով դուրս ելաւ սենեկից:

Դահլիճումը հանդիպեց Աշխէնին, որի հայեացքը նորան խիստ կասկածելի թւաց: Միթէ քոյլը տեսած կը լինէր նորա գաղտագողի համբոյը, որ նա զրոշմեց շրջանակի սառ ապակու վրայ?...

— Ուրախացիր, Գարեգին, — խօսեց քոյլը, — Վարթումեանների հետ միասին պիտի անց կացնենք այս ամառը:

— Ի՞նչ ես ասում, Աշխէն? բացականչեց եղբայրը՝ չկարողանալով զսպել իւր ներքին գոհութիւնը:

Քոյլը հաւատացրեց եղբօրը, որ իւր ասածը ճիշտ է, ու քայլեց դէպի իւր սենեակը: Բայց զրան մօտ յանկարծ նա կանգնեց, կարծես մի բան յիշեց, և, երեսը ետ դարձնելով եղբօր կողմը ասաց.

— Հա, մոռացաց ասել. Մարիամը քեզ բարենում է:

Ու մոռաւ իւր սենեակը:

Գարեգինը դուրս եկաւ պատշգամբ և, անց ու դարձ անելով, սկսեց պատկերացնել երեակացութեան մէջ այն բոլոր զբօսանքները, քէֆերը և վայելչութիւնները, որ սոլասում են իրան մօտ ապացայում: Բայց մաքերի թելը կարւեց իսկոյն, երբ երևաց Սևում-

ևանը։ Նորա քայլւածքը ոլորմոլոր և ծոցը էր այդ բռպէին։ Ինչ օտարոտի բան։ Նորա աչքերում յոզնածութիւն, իսկ ճակատի ակօսների մէջ այնպիսի թախիծ էր նշմարւում, որ Գարեգինը միանդաման զարմացաւ և ինքն իրան հարց տւեց։ «Ինչ է պատահել այս մարդուն? կարծես մի բանից դժգոհ էր, կարծես, ինչ անում էր, ակամաց էր, ինչ խօսում էր, ակամաց էր»։

— Հը, ինչ է պատահել? Շատ տիտուր ես երևում, — հարցրեց Զառիկեանը և, առանց սպասելու պատասխանի՝ դնաց դահլիճ և, դուրս բերելով այնտեղից երկու աթոռ, առաջարկեց նորան նստել, ինքն էլ նստեց։

— Չդիտեմ; ճշմարիտ, — խօսեց Սեռումեանը՝ մէջքը դէմ տալով աժոռոհ թիկունքին և անթարթ հայացքը նետելով դէպի ծառերի կատարները։ Ապա երկար շունչ քաշեց և բռպէական լռութիւնից յետոյ՝ շարունակեց։

— Մի տեսակ ապաթիա է եկել վրաս. չեմ հասկանում ինչ բան է։

— Հօ տկար չես?

— Ո՞չ, բայց թոյլ եմ, թոյլ. շատ թոյլ եմ։

— Ուրեմն այս շոզերիցն է. խեղտիչ է օդը!

— Այո, սարսափելի տօթ է անում։

— Մենք շուտով կ'ազատենք այս տապ ու կրակից։

— Երբ էք գնում ամարանոց?

— Օրը դեռ որոշւած չէ։ Բայց շատ շուտով։

— Գնացէք, գնացէք, քէփ արէք, զւարճացէք!... Իսկ ես կը մնամ այստեղ և թոքերս փոշիով կը լցնեմ...։

— Հա, մի բան էի ուզում իմանալ: «Ճառագայթի» խմբագիրը երբ է գնում արտասահման?

— Կարծեմ, միւս շաբաթ։

— Երկար պիտի մնայ այնտեղ?

— Կարծեմ; եթէք ամիս:

— Իսկ խմբագրութիւնը ում է յանձնելու?

— Այդ չգիտեմ։

— Ինձ թւում է — քեզ կը յանձնէ։

— Տեսնենք... բայց Ազատեանը?

—Ա—զա—տեանը?

—Այո՛ Այդ զարմանալի է թւում?

—Միթէ այդքան պատասխանատու մի գործ նա կարող է յանձնել Ազատեանին?

—Ինչու չէ՞ Վերջին ժամանակներս նա շատ էր սիրում Ազատեանին: Իսկ Ազատեանը լաւ ուսումնասիրել է հաճոյանալու, մարդու սիրտ մտնելու բոլոր հնարները: Խմբագրի թոյլ տամարը նա գտել է և օգտուում է նորա թուլութիւնից: Նա իրան այնքան էլ լաւ չէ պահում...

—Ինչպէս թէ?... հարցրեց Զառիկեանը, աչքերը չռելով զարմանքից:

Բայց իգնուր, աւելին իմանալ նորան չյաջողւեց: Սեռումեանը չուզեց իւր միտքը պարզել: Կարծես սրտումը շատ բան կար զիզւած, բայց առայժմ թագուն էր պահում: Մերթ ակնարկներով էր նա խօսում, մերթ աչքերի բիբերը բարկութեամբ ոլորում յատակին, մերթ շրթունքը և այտերն էր ուսցնում և, ամեն ինչ ապագային թողնելով, կրկնում էր.

—Տեսնենք, տեսնենք:

Գարեգինը երկմոտութեան և տարակուսանքի մէջ էր: Նորան թւաց, որ Սեռումեանի և «Ճառագայթի» խմբագրութեան միջև մի բան անցել է, բայց ինչ բան, այդ չկարողացաւ հասկանալ: Ուզեց հարց ու փորձ անել նորան իւր կասկածների մասին. բայց քոյրը այդ միջոցին եկաւ, և խօսակցութեան առարկան փոխւեց: Հիւրին բարեելուց յետոց՝ նա ասաց.

—Գիտէք, պարոն Սեռումեան, մենք այս քանի օրս պիտի մեխնենք ամարանոց:

—Ինչ կայ որ. շատ լաւ էք անում,—պատասխանեց Սեռումեանը, աշխատելով իրան ուրախ ձեւացնել, որպէս զի աչքի չզարնէր իւր վշարի և օրիորդի ուրախութեան հակագրութիւնը:

—Իսկ դուք պիտի մնաք այստեղ? հարցրեց օրիորդը:

—Այո, կը մնամ:

—Ո՛չ, ինչեր պիտի անեմ այնտեղ, եթէ իմանաք!...

—Ո՛՛, ինչ ասել է հարկաւոր,—կատակեց եղբայրը: Սարեր պիտի շարժես տեղիցը!... Ընթերցանութեան համար տասնեակ

հաստ ու բարակ հատորներ է վերցնում հետը, և միամնաբար կարծում է, թէ պիտի կարողանաց կարդալ: Եթէ ծրագրիդ մի երրորդ մասն էլ իրազործես, Աշխէն, ես քեզ այն ժամանակ բրաւօ կ'ասեմ:

—Այս, կը տեսնենք: Դու կարծում ես, քեզ նման ծոցը եմ: Ոչ, նորեցէք, ես քեզ պէս չեմ: Ես մի բան որ սկսեցի, պէտք է վերջացնեմ: Կիսատ թողնելը ինձ համար մահ է: Գիտէք, պարոն Սևումեան, ժողովրդական ընթերցանութեան համար սա մի բան է սկսել, վեպ է, հեքեաթ է, ինչ է, զիտեմ: և ահա մի տարի է...

—Այդ ինձ յայտնի է, ժպտալով պատասխանեց Սևումեանը:

—Մի ամբողջ տարի է, —շարունակեց օրիորդը աւելի տաքացած, —շարչարում է վրան, շաբաթներով ձգում, և այսպիսով մինչ օրս դեռ չէ աւարտել: Կարծում էք, ժամանակ չունի՞ Այդ ծիծաղելի կը լինէր: Ոչ, ծուլութիւնից է, ծուլութիւնից!

—Ինչ կաց շտափելու? Փլեփմատիկաբար ասաց եղբայրը: —Աշխարհին պիտի զարմացնեմ իմ գրւածքով, ինչ է?

—Օրիորդ Աշխէնը շատ իրաւացի է, —խօսեց Սևումեանը: Եթէ ամարանոցացին կեանքի ամենանպաստոր ոպայմանների մէջ, բնութեան գեղեցիկ տեսարանների առաջ չկարողանա՞ վերջացնել քո երկասիրութիւնը, աւելի լաւ է ուրեմն գրիչդ վայր դնես և ոչինչ չգրես այլ ևս!

—Աչքիս վրան, —պատասխանեց Գարեգինը կատակով:

—Նայիր, Գարեգին, —շարունակեց Սևումեանը, —երբ դուք ամարանոցից վերադառնաք, ես պիտի գամ քո հեղինակութիւնդ լսելու: Մի լաւ կոթոց էլ պիտի գրեմ «Ճառագայթի» մէջ:

—Խօսք եմ տալիս, —նորից կատակեց Զառիկեանը, զլիսի խոնարհ շարժումնվ:

«Ճառագայթի» անունը յիշեցրեց օրիորդին մի յօդւած, որ նա կարգացել էր վերջնթեր համարում: Յօդւածի հեղինակը Ազատեանն էր և կրում էր հետեւեալ վերնագիրը. «Կինը Եւրոպայում և կինը Ասիայում»: Դորա առիթով օրիորդը յայտնեց իւր հիացքը: Սևումեանի դէմքին հեգնական ժալիա երևաց:

—Այդ յօդւածը, —ասաց նա, —ինքնուրոյն չէ, այլ քաղւածք է մի օտար ամսագրից:

—Միթէ? Ես կարծեցի Ազատեանի սեփական մոքերն են: Բայց

հարկաւոր էր մատնանիշ անել այն հեղինակի վրայ, ումնից օգուզ-  
ւել է:

—Ի հարկէ, —նկատեց եղբայրը: Դա մի տեսակ օյխնբազու-  
թիւն է, որ մեր մամուլի մէջ յաճախ կրկնւում է: Դա վառ բան  
է և ցոյց է տալիս ոչ միայն մարդու անբարեխզնութիւնը՝ և շի-  
տակութեան բացակայութիւնը, այլ և նորա ողորմելի մնափառու-  
թիւնը: Դա մի ծաղր է հրապարակախօսութեան վրայ!...

Այդ նիւթի վրայ զեռ էլի երկար խօսեցին: Սկսումեանի թա-  
խիծը ցրւեց, և նա հեռացաւ Զառիկեանների մօտից թեթևացած  
սրտով:

Երեկոյեան նոցա մօտ եկաւ Ռսկերչեանը: Բոլորեքեան սեղա-  
նատանը նստած՝ խորհուրդ էին անում իրանց անելիքի մասին՝  
երբ ճանապարհ ընկնեն, ինչ իրեղիններ վերցնեն հետները ամա-  
րանց տանելու համար, ինչ չվերցնեն, քանի կառք վարձեն և  
այլն և այլն:

—Կը ներէք ինձ տարաժամ այցելութեանս համար, —ասաց  
Արտաշէսը և ձեռք տւեց իւրաքանչիւրին՝ սկսած տիկին Զառիկեա-  
նից մինչև փոքրիկ Երւանդը: Ես եկել եմ ձեզ տեսնելու, որովհե-  
տեւ վազը ես գնում եմ:

—Այդ ուրի հարցրին քոյց ու եղբայր համարեա միաբերան:

—Իմ ծննդավայրը:

—Այդ ինչ անսպասելի և շուտափոյթ վճիռ է! նկատեց օրի-  
որդը ծիծաղելով:

—Հօրիցս երէկ նամակ ստացայ, —պատասխանեց Ռսկերչեանը,  
նայելով օրիորդի երեսին և ձեռքով շոյելով Երւանդի գլուխը:  
Դրում է, որ անպատճառ գնամ: Դէ, ի հարկէ, ծեր մարդ է. քանի  
տարի է չէ տեսած որդուն. բնական է, որ կարօտած լինի ինձ:

—Բայց նայիր, —ասաց օրիորդը կատակելով և մատը թափ-  
տալով Արտաշէսի վրայ. չմոռանաս մեզ համար չոր միրդ բերել  
հետդ! Դու գիտես, որ քո հայրենիքի չոր միրգը ես շատ սի-  
րում եմ:

—Օ, անպատճառ, անպատճառ! Այն էլ մեր այգու ամենալին-  
տիր պատուղներից:

—Ի հարկէ, մեզ նամակ կը գրես? հարցրեց Գարեգինը:

— Իսկ ձեր հասցէն?

— Դեռ չեմ կարող ասել: Բայց տեղ հասնենք թէ չէ, ամարանոցից մի բաց նամակ կ'ուղարկեմ անմիջապէս և հասցէս կը հաղորդեմ:

— Նաև լաւ... Բայց գիտէք, ես այնքան ուրախ եմ, որ պիտի գնամ! Երբ մարդ տարիներով իւր ծննդավայրը չէ տեսնում, կարօտում է: Իսկն ասած, հօրս էլ սաստիկ ուզում եմ տեսնել: Օ, նա հիմա ով գիտէ, ինչքան ծերացած կը լինի! Հա. մէկ կամ երկու ներկայացում էլ կը տամ այնտեղ, ոյժերս կը փորձեմ...

— Գիտես, Արտաշէս, Վարթումեաններն էլ մեզ հետ միւնցն ամարանոցն են գնալու:

— Ինչ ես ասում, Աշխէն? հիացմունքով բացականչեց Ոսկերչեանը: Երանի ձեղի լաւ ժամանակ կ'անցկացնէք այնտեղ. ես երեւակայում եմ...

— Օհօ, այս ինչ բաներ է գնել Արտաշէսը? գոչեց օր. Աշխէնը, բաց անելով թղթի մէջ փաթթած մի պարիկ և մի մօրուք:

Վմենքը ծիծաղեցին: Իսկ երբ Ոսկերչեանը յարմարեցրեց իւր գլխին կեղծամլ և ծնօտին՝ մօրուքը և կերպարանափոխւած սենեկի մէջտեղը կանգնեց, ընդհանուր քրքիչ բարձրացաւ: Երւանդը սըրտանց քչքչում էր:

Արտաշէսը բացատրեց, թէ ինչի համար, որտեղ և քանիսով է գնել այդ գերասանական պարագաները: Մի ուրիշ փաթթոցի մէջ էլ քթախոտ էր, որ նա առել էր հօր համար տանելու իւր հետ: Կէս ժամից աւելի Ոսկերչեանը մնաց Զառիկեանների մօտ: Յետոյ վեր կացաւ, որպէս զի հրաժեշտ տայ:

— Ընթրիքը շուտով պատրաստ կը լինի, որդիս,—ասաց տիկին Զառիկեանը, տեղից բարձրանալով: Միասին ընթրիք կ'անենք, յետոյ կը գնաս:

— Ես ուրախութեամբ կը սպասէի: Բայց, գիտէք, իրեղէններս պիտի դարսեմ, չեմոդանս կարգի բերեմ...

— Ինչ մեծ բան է՞ Կէս ժամւայ գործ է! ասաց օրիորդը:

— Նստիր,—բարեկամաբար հրամայեց Գարեգինը: Դատարկ բաներ ես խօսում:

Երւանդն էլ այդ բոպէին Արտաշէսի ծնկներից կուած՝ թախանձում էր, որ մնայ:

Ոսկերչեանը զլիսարկը շպրտեց պատուհանի վրայ, նստեց տեղը  
և արտասանեց.

—Դրողը տանի չեմոդանն էլ, իրեղէններն էլ! Ես մնացի: Դէ  
բերէք, բերէք ընթրիքը, մի լաւ քէֆ սարքենք! Դինին չմուանաք!  
Ձեզ էլ, ինձ էլ բարի ճանապարհ պիտի մաղթենք!...

Այդ երեկոյ նորա միասին ուրախ ժամանակ անցկացրին: Ոս-  
կերչեանը գլուխը տաքացրեց, շաղակրատեց օրիորդի հետ, որովհե-  
տեւ երկուսն էլ շատախօսներ էին. յետոյ վեր կացաւ, հրաժեշտ  
տւեց և մեկնեց:

Գարեգինը և քոյրը խոստացան հետեւեալ օրը գնալ նորան  
ճանապարհ դնել, և կատարեցին իրանց խոստումը:

Նուտով Զսուիկեաններն էլ պատրաստւեցին և ճանապարհ ընկան  
դէպի ամարանոց:

## IX

Ամարանոցում Գարեգին Զսուիկեանը մի նամակ ստացաւ. Ոս-  
կերչեանից:

Ահաւասիկ այդ նամակը բառ առ բառ:

«Սիրելի Գարեգին! Սրդէն մի ամիս է ես ալսուեղ եմ: Հայրս  
առողջ է, բայց բաւական ծերացել է: Ժամանակս ընդհան-  
րապէս վատ չէ անցնում: Բայց աւելի լաւ է բոլորը հանգամանօ-  
րէն պատմեմ: Դու էլ, ինդրեմ, համբերութիւն ունեցիր իմ եր-  
կար ու ձիգ գրութիւնը մինչև վերջ կարգալու:

Այ՞, հայրս շատ ծերացել է: Իւր հասակից աւելի մեծ է  
երեւում: Մազերը ճերմակել են, մարմինը նիհարել, մէջքը փոքր  
ինչ կուցել է: Երբ կառքիցը իջայ մեր տան լարպասի առջև և  
հօրս տեսայ այնքան փոխւած, սիրոս այնպէս վատացաւ, որ նկա-  
րազրել չեմ կարող: Ինչպիսի բուռն կարօտով նա ինձ իւր գիրկն  
առաւ, կրծքին սեղմեց, համբուրեց և, առանց մի բառ արտասա-  
նելու, սկսեց մզկտալ!... Ես ինձ չկարողացաց զսպել, ես էլ ար-  
տասեցի: Դա առաջին անգամն էր, որ իմ հօր աչքին արտասուք  
էի նշմարում: Նա ցաւ չէր տեսել և լաց լինելու սովոր չէր: Ու-  
րեմն որքան խորը պիտի լինէին վերջին տարիներում կրած վըշ-  
տերը, որ օտարութիւնից վերապարձած որդուն զիմաւորելիս՝ նա

բոլոր էու թեամբ սուդ ու ողբ գառնարի Անհուն ցնծութիւնը միացած էր աչդ րոպէին ամենազառը կակիծի հետ։ Միայն երեկոյեան, ընթրիքի ժամանակ, երբ հայրս սկսեց մի առ մի պատմել այն ամենը, ինչ որ կատարւել է մեր տանը իմ բացակայութեան միջոցին, ինձ այլ ևս հանելուկ չթւաց այն հանգամանքը, որ նա մտատանջութեան, վշտերի և զրկանքների պատճառով այնքան արագ ծերացել և ընկել էր։ Նախ՝ մօրս մահը հիմնովին ցնցել և թուլացրել է նորա մարմնի ամբողջ շինւածքը. յետոյ՝ մենակութիւնը, սրտամաշուկ, անսփոփ մենակութիւնը, և, վերջապէս, այն բոլոր նեղութիւնները, որոնք կապւած են աղքատութեան և մենակութեան հետ։ Քիչ չէ տանջել նորան և այն միտքը, որ նա այլ ևս ոչ մի հնար չէ գտնում միջոց տալու իւր որդուն, որպէս զի կարողանաց իւր ուսումը աւարտել։

Դու չես կարող երևակայել, սիրելի Գարեգին, թէ մինչ որ աստիճան խոցեց իմ սիրտը հօրս պատմած իրողութիւնը։ Հայրս բոլորովին աղքատոցել է։ Քիչ է մնում խելագարւեմ, երբ մոածում եմ, որ այդ թշւառութեան պատճառը մասամբ ես եմ։ Այս, ես ինքս Քաղաքում նստած՝ ուրախ, անհոգ ապրում էի ինձ համար, երգում էի, պարում էի, ետ չէի մնում ընկերական քէֆերից, թատրոնից և այլ զւարձութիւններից, և, թեթևամոռութեանս նացիր, գլխովս անգամ չէր անցնում, որ նոյն այդ ժամանակ իմ խեղճ հայրը իւր դողդոջուն ձեռքը պարզում է մի վաշխառուի առաջ, պարտք է վերցնում ահագին, տոկոսներով, որպէս զի փող ուղարկի Թիֆլիս իմ վայելքների համար։ Քեզ էլ յայտնի է, բարեկամն, որ շւայլ ստահակներից չեմ Բայց այժմ, ծերունու դրութիւնը տեսնելուց յետոյ՝ ես անիծում եմ այն բոլոր զւարձութիւնները, որ ես ինձ թոյլ եմ՝ տւել վայելել իմ հօր զառն հոգսերի և զրկանքի հաշւով!

Իւր վաստակածը հայրս համարեա բոլորը ինձ վրայ է ծախսել։ Բայց այս դեռ բաւական չէ։ Մենք ունեինք մի այգի, որ, իրաւ, արժէր տեսնել։ Նորանից ստացած եկամուտը բաւական էր լինում մեր ընտանիքի տարեկան ապրուստի համար։ Բայց ահա մի տարի է, որ այն այգին այլ ևս մերը չէ։ Հիմա նորա մէջ՝ առօք փառօք շրջում է մի ուռած տրգած սարդ, մի այնպիսի սարդ, որ սատա-

նայի ցասց է հիւսել գիւղի շատ տների և այգիների վրայ և այդ ցանցի մէջ անկուշա ծծում է խեղճ գիւղացիների արիւնը, քըրտինքը և արտասուքը։ Երբ ես հօրս զարմանք յայտնեցի, թէ ինչու նա ինձ ոչինչ չէր գրել այդ մասին, նա պատասխանեց։

— Որդի ջան, ես քեզ չուղեցի վշտացնել։ Պիտի մտածէիր, ուսումդ մուանացիր։ Իմ ցաւը ինձ հերիք էր։

Վերջապէս, ինչ զլուխսդ ցաւացնեմ, սիրելի Գարեգին, մենք այժմ ետին չքաւորութեան մէջ ենք։

Դէ արի՝ այսուհեաւ ուսումդ շարունակիր։ Հեշտ է ասել. ուսումդ շարունակիր։ Բայց ինչ հողը տայ գլխին այն խեղճ կարօտեալը, որը չգիտէ թէ ինչ փողով և որտեղ պիտի ճաշէ վաղը? Իմ ուսման խնդիրը, բարեկամ, ընդ միշտ փակւած է, և այժմ աւելի, քան երբ և իցէ, ես ինձ բարոյապէս պարտաւոր եմ զգում հօրս առաջ նորան շուտափոյթ օդնութեան հասնելու և սիրու շահնելու։ Անհրաժեշտ է, որ ես մի գործի կայտմէ։ Իսկ այդ գործը, ի հարկէ, ինչպէս քեզ էլ յայտնի է, թատրոնն է։ Ես սիրում եմ թատրոնը այնքան, որքան մարդ ընդունակ է սիրել մի ամենաթանկագին բան աշխարհիս երեսին։ Ես սիրում եմ թատրոնը աւելի, քան թէ կարող էի սիրել մի...։ հէնց թէկուղ օրիորդի։ Մի յաջող ներկացացումից ստացած էսթեափիկական գւարձութիւնը ինձ համար աւելի բարձր գին ունի, քան թէ պատանեկան բոլոր վայելքները, երազները, անուրջները։ Դա այն ասպարէդն է, որի վրայ ես իմ կեանքս, հոգիս պիտի դնեմ։ Ես ինձ կոչւած եմ զգում դէսի այդ ասպարէզը։ Ես իմ մէջ զգում եմ... ոյժ, կարողութիւն։ Ես գեռ աւելին կ'ասեմ։ Բայց խնդրում եմ, յանուն մեր բարեկամութեան, ոչոքի ոչինչ չես ասիլ այս մասին։ Իմ արտիստական ընդունակութեանց մասին ես մեծ կարծիք ունիմ, և չեմ կամենում, մարդիկ այդ իմանան։ Աւելի լաւ է, որ ինքները տեսնեն։ Թող չասեն թէ ես անհամեստ եմ։ Անհամեստ եմ թէ ոչ, այդ յետոց երեւաց։ Ես իմ մէջ տեսնում եմ հանճարաւոր արտիստի բոլոր նշանները։ Ինձ թւում է, թէ ինձ փայլուն ասպարայ է սպասում, և ես պիտի հռչակւեմ մի ժամանակ, իբր հանճարեղ դերասան։ Ես այս էի միայն ցանկանում յայտնել։ Բայց նորից կրկնում եմ, այդ մասին ոչոքի ոչ մի խօսք!

Ես որքան կուզէի նիւթապէս ապահովւած լինել! Դա շատ կարևոր պայման է տաղանդի կանոնաւոր զարգացման համար: Բայց ինչ կարող եմ անել? կամայ-ակամայ ես պիտի կրեմ վզիս մետաղի ծանր լուծը:

Միւս շարաթ ես մի ներկայացում պիտի տամ այստեղ: Տես-նենք որքան արդիւնք կը լինի: Բայց սորանից, ի սէր Սատծոց, դռ չեղրակացնես, որ փողի հաշիւն է դրզել ինձ այս ներկայացումը կազմակերպելու: Ի հարկէ, այդ էլ կայ: Բայց առանց գորան էլ ներ-կայացումը պիտի կայանար: Ես կամենում եմ իմ ոյժերս առաջ այստեղ փորձել:

Ընտրել ենք «Ոճրագործի ընտանիքը»: Կոսո.ադոն, ինչ ասել կ'ուզէ, ես կը լինեմ: Ներկայացման մասնակցում են տեղիս ծխա-կան դպրոցի ուսուցիչները, մի վարժուհի և ուրիշները:

Օգուտ եմ քաղում հանգամանքից, որպէս զի մի քանի տե-ղեկութիւններ հաղորդեմ տեղիս երկսեռ դպրոցի ուսուցչական խմբի մասին:

Աւագ ուսուցիչը մի համակրելի անձնաւորութիւն է. ազնիւ, եռանդու, բայց քի: թեթև մտածող: Ուշիու շով հետեւում է լրա-գրութեանը և հասարակական միենքում պատահող անցքերին: Այս-տեղից նա միշտ լուրեր և զանազան թղթակցութիւններ է մատա-կարարում «Ճառագայթ» լրագրին. նկարագրում է զիս զական հա-մացնքը, կենցաղը, նիստ ու կացը, զայրոյթ է յայտնում անհաւա-սար ամուսնութեան դէպքերի առիթով, շանթեր է արձակում վաշխառուների վրայ, ողբում է ժողովրդի տգիտութիւնը, մորա-կում է նորա պակասութիւնները, նախապաշարմունքը և հրաւի-րում է համալսարանականներին դէսի զաւանները, աւելացնելով, թէ «Հունածը շատ է, հնաձորները—սակաւ»:

Վարժուհին մի գրաւիչ օրիորդ է: Նա լաւ ճանաչում է Աշ-խէնին: Եթէ նորան չիշեցնես օր. Շուշանիկ Մակարեանի անունը, անշուշտ նա կը մոտաբերէ իւր նախկին ընկերուհուն:

Աւագ ուսուցիչը, կարծեմ, սիրահարւած է նորա վրայ: Այդ երեսում է այն մեծ ու շաղրութիւննց, որով նա հետամուտ է լինում օրիորդի ամեն մի խօսքին և շարժւածքին, նորա յանկարծական գունաթափութիւնից, որ իսկոյն արտայացում է երեսին նոցա

անակնկալ հանդիպումներից, ձայնի եղանակից, որով նա խօսում է նորա հետ, քնքոյց հայեացքներից, որ նա ձգում է օրիորդի վրայ՝ հետը զրոյց անելիս:

Բայց ինձ թւում է, երիտասարդ պարոնը կասկածներից շատ է տանջւում: Կարծես նա ինքը հաւաստի չէ օրիորդի փոխադարձ սիրոյ մասին: Մի օր նորան կը տեսնես սաստիկ ուրախ, մի ուրիշ անգամ՝ խիստ տիսուր: Երբէմն խօսք չի կարողանում գտնել նորան ըստ արժանոյն գնահատելու համար, մի այլ անգամ վշտացած յայտնում է թէ:

—Այդ օրիորդը մի հանելուկ է. նորա բնաւորութիւնից ես ոչինչ չեմ հասկանում!

Ինձ համար, սակայն, գրեթէ միանդամայն պարզ է խեղճ սիրահարի մտատանջութեան իսկական ուատմառը: Բանը այն է, որ օրիորդը՝ ինչպէս ես նկատում եմ, վերին աստիճանի փոփոխամիտ է սիրոյ մէջ: Նա մի զարմանալի յատկութիւն ունի հրապուրել ամենքին, ամենքին հաւասար յոյսեր տալ, բայց վերջնական յոյս և վերջնական սէր—ոչոքի: Այսօր նա մօտ է մէկի հետ, վաղը մի ուրիշի հետ: Այժմ նա ինձ հետ կամենում է խաղալ նոյն խաղը, ինչ որ միւսների հետ: Բայց ես միշտ ինձ այնպէս եմ պահում, որ նա շատ հեռու չգնայ, որովհետեւ իմ սրտի մէջ նստած է արդէն մի աննման էակ, և կրծքիս տակ ազատ անկիւն չկայ ուրիշի համար, թէկուզ այդ ուրիշը լինէր մի նոր Հեղինէ: Մի խօսքով, այդ աղջիկը կամ սիրելու բնաւ ընդունակ չէ, կամ, ընդհակառակը, սիրելու սաստիկ մեծ պահանջ է զգում, բայց իւր սիրոյ արժանի առարկայ չէ կարողանում գտնել: Երկուսից մէկը: Ես կարծում եմ, երկրորդ ենթադրութիւնը աւելի ճիշտ է: Անկարելի բան է, որ մի մատղաշ աղջիկ՝ վառվուն հասակի մէջ, մի օրիորդ, որի անունը այնքան սիրով ին արտասանում աշակերտուհիները, որը միշտ շրջա պատւած է զգւող մանուկներով, անկարելի բան է, ասում եմ, որ մի այդպիսի հարուստ սիրելու, յափշտակւելու ընդունակ չինի: Ես համոզւած եմ, որ եթէ նա կամենայ թողնել տեղիս դպրոցը և հեռանալ, սանուհիները լացով կը ճանապարհեն նորան, իսկ մայրերը՝ ափսոսանքով:

Ահա այս օրիորդը պիտի կատարէ Ռոզալիայի գերը: Իսկ բժիշկ

Պալմիերին կը լինի աւագ ուսուցիչը: Կարծեմ, չեն փշացնիլ դերերը: Ինչ վերաբերում է իմ զերակատարութեան, ամենքը հիացած են. մանաւանդ օրիորդը և իւր երկրագուն: Նոքա ինձ հաւատացնում են, որ իւրաքանչիւր փորձ միւնյոնն է թէ մի ներկայացում: Ներկայացումը չկայացած՝ գլուխս արդէն պառյու է գալիս ծափահարութիւններից: Գովասանք է, որ լսում եմ: Այդ բոլորը, իհարկ է, շոյում է իմ ինքնասիրութիւնը, բայց ես գիշեր ցերեկ աշխատում եմ, որպէս զի սպասածից էլ լաւ. դուրս գայ խաղա: Փորձերին միշտ ներկայ են լինում նաև կողմնակի անձինք: Ամենքը գոհ են մնում, ամենքից հիացման բացականչութիւններ եմ լսում:

Ներկայացումը պիտի լինի գալրոցի դահլիճում: Բեմը արդէն պատրաստ է: Դեկորացիաների համար շատ գլուխ չպիտի ցաւացնենք: Վաժմունական թւականներից մնացել են մի քանիսը՝ մի «Արքայական պալատ», մի «Մասիս» և մի «Դժոխք»: Արքայական պալատը բաւական է մեզ համար: Շատ շատ մի քանի ծառեր կը նկարենք. այդ էլ կը լինի մեր «պարտէզը»:

Բայց եթէ կ'ուզես, Գարեգին, մի քանի դիտողութիւններ հաղորդեմ քեզ բեմական պարագաների առիթով: Երբ ես խնդրեցի աւագ ուսուցչին, որ ցոյց տայ ինձ այն տեղը, ուր պահում են դեկորացիաները, նա ինձ տարաւ մի ցածր և մութ սենեակ, որտեղ անխնամ կերպով թափիթփւած էին միմեանց վրայ զանագան պատմական զգեստներ, սաղաւարուներ, փայտեայ նիզակներ, վահաններ, փայտեայ սրեր և այլն: Ժամանակը մաշել էր այդ բոլոր պարագաները. ծիրանիների զառերը պոկուած, սաղաւարուների փայլը՝ կորած, սրերի լաժւարով՝ գնացած, նիզակների գլուխները՝ կոտրտած... մի ողբալի տեսարան: Ես այնպէս տիրեցի, կարծես մի հոյակապ քաղաքի աւերակների մօտ էի կանգնած: Երբ ես զարմացած հարցրի, թէ ինչու այսքան ողորմելի դրութեան մէջ են այս առարկաները, աւագ ուսուցիչը պատասխանեց.

— Եհ, բան չունիք, հիմա ով է այդ տեսակ բաների վրայ ուշադրութիւն դարձնում? Պատմական ողբերգութիւնների ժամանակը անցել է, այժմ էլ չեն ներկայացնում: Իսկ ժամանակակից կեանքին վերաբերեալ պիեսների համար հարկաւոր չեն ոչ սաղաւարուներ, ոչ նիզակներ, ոչ վահաններ:

—Այդ սխալ միտք է, —նկատեցի ես, —գեղարւետը չէ հասել՝ այդպիսի սահմանափակութեան: Նա ունի իւր որոշ և խիստ պահանջները, բայց այդ պահանջների մէջ ինձ յայտնի չէ այն, ինչ որ դուք եք ասում: Ինչու պէտք է անցած լինի պատմական ողբերգութիւնների ժամանակը, քանի որ նոցա մէջ էլ կարող են լինել գաղափարներ, տիպեր, իրէալներ, հոգեբանական վերլուծութիւն և այն? Եթէ դուք չընդհանրացնէիք ձեր խօսքը առհասարակ պատմական սիւժէտների մասին, էլի ձեզ հետ կարելի էր համաձայնել ձիշտ է, մեր պատմական ողբերգութիւնները շատ անարւեստ, թոյլ բաներ են:

Յետոյ ես երկար մտածեցի այն մասին, թէ ինչ է եղել պատճառը, որ բեմի պարագաները այնքան ողորմելի կերպարանք են սոսացել և տարիների ընթացքում մատնւած են եղել անուշադրութեան և արհամարանքի? Ուսուցչական խմբեր են փոխւել, ներկայացումներ են տրւել, բայց այն պարագաները չեն փոխւել, չեն նորոգւել, այլ կոտրաւել, պատառուտել, փնացել են: Շատերը այն երիտասարդներից, որոնց ձեռքերը աշխատել են այն ծիրանիների և փայտեայ զէնքերի վրաց, այժմ չկան: Նոցա կենդանի ներկայացուցիչը գիւղում այժմ, կարծեմ, միակ քահանան է. նորա մի ոտն էլ արդէն զերեզմանումն է: Նոքա հին սերնդին էին պատկանում: Խոկ մենք նոր սերնդի մարդիկ ենք: Նոքա ամեն բանով ետ պիտի լինէին մեղանից: Ոչ մեր ուսումն ունէին, ոչ մեր հասկացողութիւնները: Զնայած դորան, ինչպիսի եռանդով և սիրով, ինչպիսի մի ոգևորութեամբ կպած են եղել թատրոնի գործին և ինչ զարմանալի հմտութեամբ այն բոլորը կարել, կպցրել, տաշել, ցղիկ են! Այն ինչպէս է պատահել, որ նոցանից յետոյ մեծ թւով նորանոր մարդիկ են եկել գնացել, բայց ոչոքի մաքովը չէ անցել գոնէ մարդափարի պահպանել նոցա ողեւորութեան և հաւաքական աշխատանքի արդիւնքը? Եւ ահա այժմ, 25—30 տարի անցած, մենք, նոր երիտասարդներս, ստիպւած են բաւականանալ այս հնամաշցնյոտիներով ու կարկատաններով: Զէ որ նոքա էլի՛ երբեմն հարկաւոր են գալիս?

Սրգեօթ այս անփոյթ վերաբերմունքը դէպի բեմը մի ապացոյց չէ, որ գեղարւեստի սէրը աւելի վառ էր վաթսունական թւական-

ների երիտասարդութեան մէջ, քան թէ այժմ մեր մէջ, որ նաւ աւելի նախանձախնդիր էր գեղարւեստի ծաղկման, քան թէ մենք? Սրգեօք այս հանգամանքից մենք իրաւունք չունինք եղբափակելու, որ մեր ներկայ յառաջադէմ երիտասարդութիւնը պաղել և անտարբեր է դարձել դէպի գեղարւեստը?

Ես կ'ուզէի այդ մասին քո կարծիքը լսել, Գարեգին: Դա ինձ շատ հետաքրքրում է:

Էլ ինչ գրեմ, սիրելիս? Կարծեմ այսքանն էլ բաւական է: Երևի ես առիթ կ'ունենամ մի անգամ էլ գրելու: Իսկ եթէ ոչ, անձամբ կը պատմեմ շատ ուրիշ բաներ, երբ աշնանը, Աստծով, մենք իրար նորից կը տեսնենք:

Բարեիր իմ կողմից մայրիկին և քոյր Աշխենին:

Սպասում եմ նամակիս սկատախանին: Հա, չմոռանամ: Աշխենին ասա, որ խոստացածս չոր մրգերը անպատճառ կը բերեմ հետո, չնայած, որ մենք այլ ևս սեփական այգի չունինք:

Մնամ քեզ միշտ սիրող և յարգող

քո բարեկամ Արտաշէս Ոսկերչեան:

## X

Այն ամարանոցը, ուր կենում էին Զառիկեանները, գտնւում էր Թիֆլիսից մօտ վաթսուն վերստ հեռաւորութեան վրայ. զիրքը բարձր, շրջապատւած չորս կողմից անտառներով, որոնք ծածկեր էին տափաստանը, հովիտները, բլուր ու բլրակները և հեռու ընկած լեռնաշղթաները:

Զառիկեանների կացարանը բաղկացած էր երեք փոքրիկ, բաց մաքուր սենեակներից. մէկը ընդունաբանի տեղ էր ծառայում, միւս երկուսը ննջարաններ էին: Ճաշում և թէյ էին խմում համարեա միշտ դուրսը, պատշգամբում, որի առջև կար մի պարտէզ: Մեծ բան չհասկանաք այդ պարտէզը: Դա մի երկու—երեք քառակուսի սաժենանոց տարածութիւն էր, շրջապատւած նիզակաձև փայտերի կանաչագոյն ցանկապատով. գետինը միշտ դալար ու թարմ: Մասեր շատ սակաւ կային այնտեղ. մի քանի կարճահասակ և սուերով աղքատ սալորենիներ, մի երկու բալի ծառեր, որոնց ծիւղերը ներս էին մտել պատշգամբը վերևի կողմից: Միակ զարդը

վարդենին էր, բայց այնքան ճոխ ու փարթամ; որ, եթէ երեկոյն քաղէիր վրայից բոլոր ծաղիկները, հետևեալ առաւօտ կը տեսնէիր գարձեալ վարդերով կարմրատակած: Ամեն երեկոյ տիկին Զառուիկեանը լցնում էր մատուցարանը վարդի թերթիկներով, որպէս զի, բաւականաչափ հաւաքերուց յետոյ, քաջցրաւենի պատրաստէր. իսկ օր. Աշխէնը փնջեր էր շինում և դնում բաժակների մէջ:

Փամանակը անցնում էր խաղաղ և ուրախ: Գարեգինը երբեմն գրում և կարդում էր. Աշխէնը՝ նոյնպէս: Բայց ամենից շատ սիրում էին զբոնել սոճիների անտառում, որը նոցա տան ետև բանջարանոցին կտած էր: Յաճախ գնում էին պուրակը, ուր խոնւած ճեմում էր ամարանոցի հասարակութիւնը, լսում էին այնտեղ զինուրական երաժշտութիւնը, պատահում էին ծանօթներին, խօսում, ծիծաղում, զւարձանում էին: Երեկոները, երբ դադարում էին զորքի զինսավարժութիւնները, նոքա դուրս էին գալիս երբեմն պլացը և սիզապատ լայնատարած հարթութեան վրայ երկար զրօնում: Շատ անգամ գիշերը վրայ էր հասնում, բայց ոչոքի սիրտը չէր տալիս տուն վերադառնալ. այնքան դուրեկան, մաքուր էր այնտեղ օդը. այնքան սիրուն էր բնութիւնը ասողալից երկնքի տակ! Հրապարակի այս ու այն ծայրից լսում էին երգի ձայներ, բայց հէնց որ սկսում էր Գարեգինը, ամեն ինչ լուսում էր, ամեն ինչ լսողութիւն էր դառնում...

Վարթումեանների ընտանիքը նոյն ամարանոցումն էր ասլրում: Նոցա բնակարանը Զառուիկեանների տան կից մի շինութիւն էր, նոյնանման մի բան. համարեա նոյն ցանկապատ պարտէզը, նոյն տնակը իւր պատշգամբով, նոյն բանջարանոցը տան ետև և նոյն անտառը՝ բանջարանոցին կտած:

Նորհիւ այդպիսի հարեւանութեան, այդ երկու ընտանիքները աւելի և աւելի մօտեցան իրար: Օր չէր անցնիլ, որ օրիորդները միմեանց թե առած՝ չթափառէին անտառում և կուշո չծիծաղէին զանազան պատմութիւններ ու կատակներ անելով: Երիկնադէմին թէլի ժամանակ յաճախ հաւաքւում էին մէկի կամ միւսի տունը և ամեն անգամ առարկայ էին գտնում խօսելու և վիճելու: Բարեկամական շրջանին կինդանութիւն էին տալիս մանաւանդ Գարե-

զինը իւր սրտառուչ երգերով և Աշխէնը իւր աշխուժութեամբ և զւարճախօսութիւններով:

Գարեգինը և օր. Վարթումեանը որքան էլ կամենացին խնամքով թագցնել իրանց զգացմունքները, այսուամենացնիւ նոցա նայւացքների խորհուրդը, նոցա խօսքերի և ակնարկների այլաբանութիւնը չէին կարող վրիպել ոչ օր. Աշխէնի սրտառս աչքերից, ոչ մայրերի սրտագիտութիւնից:

Այժմ, Զառիկեանը և օր. Մարիամը միմեանց սիրում էին, և այդ գիտէին թէ մէկ և թէ միւս ընտանիքի մէջ. գիտէին, բայց միամիտ էին ձևանում, իբր թէ իրանց ոչինչ յայտնի չէ երիտասարդների փոխադարձ համակրութեան մասին:

Ամենաբուռն սիրոյ զգացմունքից անդամ յաճախ անբաժան է լինում կասկածը: Եւ սակաւ չէր պատահում, որ երկու սիրահարները տանջւէին կասկածներից: «Արդեօք նա խկապէս սիրում է ինձ, թէ միայն իմ երևակայութեանս մէջն է այդ սէրը?»—Ահա այն հարցը, որ շատ անդամ տալիս էր ինքն իրան Գարեգինը կամ օրիորդը: Երբեմն, մի կողմնակի պատճառով, Զառիկեանը տխուր էր լինում, չէր խօսում և, երբ օրիորդը խնդրում էր երգել, ներողութիւն էր խնդրում, որ չէ կարող, տրամադիր չէ: Այդ մերժումը բաւական էր, որ նորա ժպիտը հեռանար, գլուխը խոնարհէր, և ինքը ընկնէր մտատանջութեան մէջ: Պատահում էր և հակառակը: Այդ դէպքում Դարեգինն էր մուալլում. ոիրուը լցւում էր դառնութեամբ, և կուրծքը ծանրանում էր՝ զարւած հառաջներից:

«Գուցէ նա սառել է, անտարբեր է դարձել. գուցէ նա հիասթափւել է. դուցէ նորան հրապուրել է մի ուրիշ անձնաւորութիւն. գուցէ նորան տհաճութիւն պատճառեց իմ այս ինչ արարքը, իմ անտեղի ծիծաղը, իմ յիմար սրախօսութիւնը...» Այսպիսի մուքեր էին պաշարում սիրահարներին կասկածի ըոպէներում: Դա մի տանջանք էր, որ բանաստեղծական լեզով սիրոյ թոյն են անւանում, բայց մի թոյն, որ, գուցէ, աւելի քաղցր, աւելի գրաւիչ է դարձնում սէրը և սիրոյ առարկան:

Սակայն այդ թերահաւատութեան և վարանման սառը աճիւնի տակ՝ նոցա սրտի խորքումը սիրոյ հուրը իւր գործը տեսնում էր և երբէք չէր մարում: Թէ մէկը և թէ միւսը աշխարհի առաջ կա-

րող էին երդւել և ասել. «Ես սորա հետ կարող եմ՝ ապրել և երջանիկ լինել»:

Բայց փոխարէնը, երբ նոցա սրտերը ազատ էին լինում կասկածներից, ինչպիսի անյագ և խորին բերկրութեամբ նւիրւում էին նոքա սիրոյ երազներին! Ինչ զարմանալի թեթևութիւն էր գալիս նոցա հոգու վրայ, որքան պարզում էին նոցա մտքերը!...

Փարեգինը մտնում էր անտառի խորքը, շրջում էր այնտեղ մենակ՝ անձնատուր եղած իւր ցնորքներին: Առճիների շնչառութեան մէջ զուած օդը կենդանացնում էր նորան, և նա իրան կրկնակի բախտաւոր էր զգում: Քանի քանի տեղ ծառերի կեղևի վրայ քանդել է նա իւր գրչահատով Մարիամ Վարժումեանի անաւան սկզբնատառերը! Քանի անգամ խոտի վրայ նա գուշակութիւններ էր արել իւր բախտի նկատմամբ, առանց սակայն, հաւատալու այդ սնապաշտութեան! Նա անում էր այն բոլոր ցիմարութիւնները, որ միայն սիրահարւածի գլուխը կարող են գտն: Ծառերի թաւուտից կամ հեռաւոր թփի միջից լսում էր թռչունների դաշլայլիկը, որի պատասխանը հնչում էր անտառի մի ուրիշ անկիւնից. սիրոյ և երանութեան այդ երգերի մէջ նա իւր սրտի արձագանքն էր լսում: Նա իրան ձուլած էր տեսնում բնութեան հետ իւր հոգով և մարմնով:

Իսկ այն գիշերները միթէ նա կարող է մոռանալ երբ և իցէ? Օրիորդը մէջտեղ՝ գլուխը քնքշաբար կրթնած Աշխէնի գլխին և նորա իրանը բռնած; քոյրը՝ համարեա գիրկն առած ընկերուհուն, ինքը՝ փոքր ինչ առաջ ընկած, քայլում էին փողոցի երկարութեամբ, քայլում էին անխօս, բայց երջանիկ՝ այն լոռութեան մէջ: Օդը անշարժ, բայց զուրեկան: Երկինքը միանդամայն յատակ: Պայծառ լրւսնի շուրջը, ահազին տարածութեան վրայ, ոչ մի աստղ չէ համարձակւում իւր գէմքը երևցնել: Կաթնեղէն մեղմ լրւսաւորութեան մէջ նիրհում են արահետը, երկշար խրճիթները՝ թագնւած ծառերի ետև, անտառները, որոնք կամ իջնում կորչում են խորունկ ձորերի մէջ կամ կրկին բարձրանալով՝ սկին են տալիս հեռու-հեռու ընկած լեռների գագաթներին...

Անմոռանալի, կախարդական գիշերներ!...

Իսկ այնուհետև, երբ, միմեանց բարի գիշեր ասելով, բաժան-

ւում էին իրարից, Գարեգինը զեռ երկար ժամանակ մնում էր նստած փողոցում ցանկապատի մօտ դրած նստարանի վրայ. կամացուկ մրմնջում էր օրիորդի սիրած երգերը, և նա լսում էր՝ կտնքնած պատշտամբումը, գլուխը գէմ տւած սեանը, լսում էր, և սիրտը չէր տալիս ներս գնալ. միայն երբ մայրը կանչում էր նորան ընթրիքի, նա հոռանում էր՝ մի կերպ հրաժեշտի նշան տալով երիտասարդին:

Եւ Գարեգինը խսկոյն մեկնում էր. պատշտամբի դրան ճռընչիւնը վերջին ձայնն էր, որ կարող էր խանգարել գիշերւայ անդորրութիւնը: Դորանից յետոյ ամեն ինչ հանդարտուում, խաղաղում էր:

Առաւօտները Զառիկեանը վեր էր կենում շատ կանուխ: Ամենքը զեռ ևս քնած էին լինում, բացի տանտէրերից, որոնցից մէկը կողին էր կթում, միւսը սայլն էր կարգի բերում, երրորդը ձիաներն էր տանում ջրելու: Երեսսրիչը ուսին ձգած՝ նա գնում էր մօտակայ աղբիւրը, լւացւում սառը ջրով, սանրւում: յետոյ անցնում էր անտուը, շրջում, զովանում էր աջնտեղ և ապա բանջարանոցի միջով վերադառնում էր տուն:

Ծառան, իւր պարոնի ոտաձայնը լսելուն պէս, արդէն ոտքի է. ինքնաեռը գւգւում է և շուտով կ'եռայ:

Գարեգինը զգուշաբար բաց է անում պատշտամբի դուռը. աչքերը մեքենաբար գարձնում է դէպի աջ, դէպի այն կողմը, ուր Վարթումեանների բնակարանն է. յետոյ մուհաջարների վրայից կուանալով՝ ձեռքը տանում է դէպի վարդենին, ընտրում է վարդերից ամենաճոխը, կարում, հոտ քաշում, ամրացնում է կրծքին և սկսում՝ անց ու դարձ անել պատշտամբի երկարութեամբ: Եւ երթեւեկում է նա այնքան, մինչև տանեցիք զարթնում են, պատրաստում են, և սեղանի շուրջը հաւաքւելով, նստում են թէցի:

Թէցից յետոյ ամեն մէկը զբաղւում էր իւր գործով:

Վերջին ժամանակները օր. Վարթումեանը մի առանձին սիրով էր սկսել պարապել հայերէնով և հայերէն ընթերցանութեամբ: Գրականական լեզւի նրբութիւններին նա զեռ բոլորովին անսեղեակ էր: Նա սովորում էր մեծ եւանդով, և նորան քիչ չէր օգնում օր. Աշխէնը: Պատիանեան, Ռաֆֆի և ուրիշները նորա համար այլև

անյացտ անուններ չէին։ Նոցա ընտիր երկասիրութիւններին նա կամ արդէն ծանօթացել էր կամ նոր նոր սկսում էր ծանօթանալ։ Նա կարգում էր նաև լրագիրներ՝ «Ճառագայթը», «Ժամանակը», «Մանկական թերթը»։ Նորա համար գնալով աւելի և աւելի պարզում էր եղած կուսակցութիւններից իւրաքանչիւրի գոյնը։ Նա զիտէր, թէ ովքեր են նոցա ներկայացուցիչները։ Նա յայտնում էր իւր համակրութիւնը և հակակրութիւնը այս կամ այն գործիչի վերաբերմամբ։ Նա յափշտակութեամբ կարգում էր «Ճառագայթի» առաջնորդողները և Փէլիէտոնները, խիստ քննադատութեան էր ենթարկում «Ժամանակի» մէջ յայտնած մտքերը։ «Մանկական թերթի» մէջ երբեմն երեսում էին օր. Աշխէնի թարգմանած պատմածքները, և նա մեծ փափագ էր յայտնում թարգմանութիւններ անելու, բայց ափսոսում էր, որ դորա համար բաւականաշափ վարժ չէ մայրենի լեզւին։ Մի խօսքով, օր Վարթումեանը ամեն կերպ աշխատում էր համակերպուել նոր շրջանի հայեացքներին ու ձգումներին, և այդ ձուլման գործը, շնորհիւ օրիորդի ընդունակութեան և բնական ինելքին, առաջ էր գնում չափազանց արագ։ Ես ասացի, օր օր. Աշխէնը օգնում էր իւր ընկերուհուն հայերէնի ուսման մէջ։ Նա աւելին էր անում։ պարապում էր հետը, ինչպէս վարժուհին աշակերտուհու հետ՝ թելադրում էր, ուղղում էր գրածը, բացատրում էր ուղղագրութեան կանոնները, մեկնութիւն էր տալիս չհասկացւած բառերին, պարզաբանում էր դժւար ըմբռնելի տեղերը, երբեմն հարկ էր լինում Գարեգինին դիմելու, որը բաւականութեամբ յանձն էր առնում կատարելու նոցա խնդիրքը։

Տիկիններ՝ Զառիկեան և Վարթումեանը, որդոց օրինակին հետեւելով, նոյնպէս մտերմացել էին իրար հետ նոքա յաճախ պատմում էին միմեանց իրանց անցեալից. այնպէս որ այդ երկու ընտանիքների պատմութիւնը քաջ յայտնի էր թէ մէկին և թէ միւսին։ Տիկին Վարթումեանը խելօք և ծանրաբարոյ կին էր, քիչ թէ շատ ուսում ունէր. տիկին Զառիկեանը, երեւի, զգում էր նորա այդ առաւելութիւնները, ուստի և խորին յարգանք էր մատուցանում նորան առհասարակ։ Խսկ տիկին Վարթումեանին շատ դուր էր գալիս Գարեգինի մօր պարզութիւնը և բարի, մաքուր սիրտը։

Մի օր իրինագեմին Զառիկեանները և Վարթումեանները

գնացել էին մօտակայ անտառը՝ միասին թէյ խմելու։ Բարձրահասակ և սուշերաշատ սոճու տակ խոտի վրայ փոււած էր մեծ կապերու։ Մի ծացրին նստած էին մացրերը և հանդարտ զրոյց անելով զբաղւած էին ձեռագործով։ Նոցա հանդէպ ծառի բնի մօտ Աշխէնը և Մարիամը խորասուղւած էին ընթերցանութեան մէջ։ Կարդում էր օր. Զառիկեանը, և ուշալրութեամբ լսում էր ընկերուհին։ Ռաֆֆու նոր լոյս տեսած վէպերից մէկն էր։ Ընթերցումը ընդհատում էր ժամանակ առ ժամանակ երբ այս կամ այն բառը կամ նախադասութիւնը հարկաւոր էր լինում բացատրել օր. Վարթումեանին։

Երեխանները վազվզում, խաղում էին նոցա մօտ։ Երբ նոքա իրանց մանկական զիլ ճիշերով և անհոդ քրքիջով խանգարում էին ընթերցումը, օրիորդներից մէկը՝ կամ միւսը երեսը դարձնում էր և յանդիմանութեամբ գոչում։

—Երւանդ, մի խանդարի!»

—Сережа! Сусанна! не мѣшайте намъ!

—Գնացէք հեռու և այնուեղ խաղացէք!...

Կայուուն մանուկները հեռանում էին, և հեռւից կրկին լսելի էին լինում նոցա առողջ, սուր ձայները, նոցա կենդանի ծիծաղը։

Գարեգինը գնացել էր պոսոատուն։ Ահա նա վերսպառնում է։ Զեռքին մի ինչ որ լրագիր կայ։ Դա «Ճառագայթն» է։ Ճանապարհից չէ խոտորւում։ բայց քայլում է դանդաղ և մտամոլոր։ Կարդում է, երբեմն աչքերը հեռացնում թերթից, կանգ առնում, մօրուքը շփում, հայեացքը մի կէտի վրայ յառում—և էլի քայլերը փոխում առաջ դէպի իւրացինների կողմը։

Օր. Վարթումեանը նորան նկատեց և ասաց ընկերուհուն։

—Պարոն Գարեգինը գալլս է։

Օր. Աշխէնը իսկոյն ծալեց գրքի կարդացած երեսի անկիւնը, վայր դրեց գիրքը և վազեց եղբօր ընդ առաջ։

—Նամակ? հարցրեց քոյրլ։

—Զկայ, — պատասխանեց եղբայրը։

—Դու, երեխ, արդէն վերջացրել ես «Ճառագայթը»։ տեր այժմ մենք կարդանք։

—Մի հետաքրքրական բան կայ այսօրւայ համարում...

—Ապա մի տեսնեմ, —այդ ասելով քոյրը փալեց եղբօր ձեռքից լրագիրը և սկսեց աչքիրը արագ վազեցնել թերթի վրայ, կարծես ցանկանում էր շուտ գտնել այն հետաքրքրական բանը, և շուտով գոհացում տալ իւր կանացի հարցասիրութեանը:

—Կարդացէք ահա այս թղթակցութիւնը, ասաց Դարեգինը, երբ քըոջ հետ մօտեցան օր. Վարթումեանին. Թղթակցութիւնը գրւած էր Ոսկերչեանի ծննդավայրից, և նորա հեղինակն էր այն աւագ ուսուցիչը, որի մասին զրել էր Արտաշէսը Զառիկեանին: Նամակը կազմւած էր ոգևորութեամբ, որից կարելի էր եզրափակել, թէ սկսնակ արտիստը որքան մեծ տպաւորութիւն էր գործել հայրենակիցների վրայ իւր բեմական ձիրքով: «Հասարակութիւնը հիացած էր,—ասւած էր թղթակցութեան մէջ. «Հանդիսականներից շատերը լաց եղան կոռուադօչի ինքնասպանութեան տեսարանի ժամանակ. այնքան ազդու և սիրո շարժող էր երիտասարդ դերասանի խաղը... Ծափահարութիւններից մի քանի րոպէ շարունակ թնդում էր դահլիճը... Ժողովուրդը առաջին անգամ զգաց թատրոնական ներկայացման հմացիչ ազդեցութիւնը... Տաղանդաւոր արտիստին մեծ և փայլուն տպագայ է սպասում բեմական ասպարիգում... Դահլիճում այնքան շատ բազմութիւն էր հաւաքւել, որ ասեղ ձգելու տեղ չկար... Տեղ չլինելու պատճառով շատերը զուրկ մնացին այն էսթետիկական զւարծութիւնից, որի համար բոլոր հանդիսատեսները շնորհակալութեամբ պարտական են պ. Արտաշէս Ոսկերչեանին և այլն, և այլն:

Ահաւասիկ ինչպիսի գովասանական բառեր էին շռայլւած մի յայտնի լրագրում երիտասարդ սկսնակի հասցէին, բառեր, որոնք գործ են ածւում սովորաբար ամենքից տաղանդ ճանաչւած համբաւաւոր անձանց մասին, բառեր եմ ասում, որոնք ընդունակ են ոչ միայն Ոսկերչեանի, այլ նոյն իսկ իւրաքանչիւր երևակացող պատճառու գլուխը սրտացնել և ուղեղի մէջ ամուր բեկուել այն անձնապաստան համոզմունքը, որ նա իրօք մի մեծ, մի անզուգական տաղանդ է որ կայ!...

Օր. Աշխենը կարգում էր այդ ներբողականը և զանազան բացականչութիւններով արտայայտում էր իւր կրած զգացմունքները: Երբ նա վերջացրեց գաւառական նամակի ընթերցումը,

—Տեսնում էք? ասաց՝ նայելով մերթ եղբօր մերթ ընկերունու երեսին։ Բանից դուրս է գալիս, որ մեր Արտաշէսը մի թագնւած տաղանդ է եղել։... Երբ նամակ գրես, Գարեգին, չմուանասիմ կողմից բարեել նորան և շնորհաւորել։

—Իմ կողմից ևս,—խնդրեց օր. Վարթումեանը։

—Ու րախութեամբ։ Թէև այս բոլորը, իհարկէ, չափազանցութիւն է, բայց և այնպէս հարկաւոր է շնորհաւորել։ Ի դէպ եղաւ այս։ Հէնց այս օրերս ես պիտի պատասխանէի նորա նամակին։

—Դու ինչ ասացիր, Գարեգին? Չափազանցութիւն? Ինչու ես այդպէս կարծում?

—Իհարկէ, չափազանցութիւն է։ Արտաշէսը դեռ այնքան անփորձ է... Քոյր ու եղբացը վէճի բռնւեցին այդ առիթով։ Սկըզբում խօսքը յատկապէս Ոսկերչեանին էր վերաբերում։ Ետոյ նա ընդհանրացաւ։ Տաղանդը բնածին է թէ ստացական? Ինչ նշանակութիւն ունի փորձառութիւնը ընդունակութիւնների զարգացման նկատմամբ? —Ահա այն խնդիրները, որոնց շուրջը պտտում էին նոցա յայտնած մոքերը, ինչպէս անիւը պտտում է իւր առանցքի շուրջը։ Օր Աշխենի կրակոտ բնաւորութիւնը երևում էր վէճի ժամանակ։ Նա տաքացած էր. աչքերը մեծանում և փայլվիլում էին։ Քրոջը չբարկացնելու համար Գարեգինը խօսում էր շատ հանգարտ։

—Ես համաձայն եմ քեզ հետ,—ասում էր նա, —որ ընդունակութիւնը բնածին է, և եթէ մարդ ի բնէ զուրկ է տաղանդից, ոչինչ չեն կարող անել ուսումը և փորձառութիւնը։ Բայց միւնոյն ժամանակ ես պնդում եմ, որ առանց ուսման կամ փորձառութեան տաղանդը չէ կարող ունենալ ոչ գեղեցկութիւն, ոչ փայլ, ոչ վեհութիւն։ Արտաշէսը, եթէ ձիքը ունի, դեռ ևս բովից անցած չէ, դեռ բոլորովին անփորձ է։ Ուրեմն ինչպէս կարող էր նա այնքան մեծ տպաւորութիւն դործել? Ահա ինչու ես կարծում եմ, որ այս թղթակցութեան միտքը ամբողջովին մի չափազանցութիւն է։

—Բայց դուք, պարո՞ն Գարեգին, —մէջ մոտաւ օր. Վարթումեանը, —երեի, յիշում էք Պուշկինի այն խօսքերը, որ նա ասում է «Բորիս Գոդունովի» մէջ, այն է թէ՝ «Наука сокращаетъ опыты быстротекущей жизни?»

— Այդ ճշմարիտ է: Բայց դորանով վերջնականապէս չէ հերքում փորձառութեան նշանակութիւնը:

Վիճողները իրար չկարողացան համոզել: Օրիորդները հաստատ մնացին իրանց կարծիքների մէջ: Խիստ ամուր էր այն հաւատը, որ նոքա ունէին դէպի լրագրական խօսքը, մանաւանդ, եթէ այդ խօսքը «Ճառագայթն» է ասում:

Յետոյ օր. Զառիկեանը սկսեց բարձր ձայնով կարդալ: Թերթը ծայրէիծացը կարգալուց յետոյ, նա դարձաւ եղբօրը և ասաց.

— Դու չես զարմանում, Գարեգին, որ Անումեանը ահա այս երկու ամիս է ոչինչ չէ գրում այստեղ? Հը? Մի հատ տող էլ չկայ! Այս ինչ է նշանակում?

— Այն, մի քիչ օտարոտի է թւում: Այդ նորանից չէ...

— Հրապարակը մնացել է Ազատեանին! Խմբագիր է դարձել մարդը: Եւ ինչքան էլ գրում է!...

— Օ, նա մի ուրիշ տեսակն է... Առաջ կը գնայ!...

Այնտեղ նոքա ուրախ ժամանակ անցկացրին: Մութը վրայ հասաւ: Անտառի մէջ օդը խոնաւացաւ: Այլ ևս մնալ անկարելի էր, և նոքա քաշւեցին իրանց բնակարանները:

Նոյն երեկոյեան Գարեգինը պատրաստեց մի նամակ Ռակերչեանի անունով և հետևեալ ասաւ օտ տարաւ ձգեց պոստարկդը: Իւր գրութեան մէջ Զառիկեանը նկարագրել էր ամարանոցը, ամարանոցային կեանքը, մի քանի տեղեկութիւններ էր հազորդել Վարթումեանների մասին, որոնց նկատմամբ գրել էր թէ. «Քո նախկին հարեւանները այժմ՝ ինձ են հարեւան դարձել»: Իւր սիրոյ պատմութիւնը, ի հարկէ, խնամքով թաղցրել էր իւր բարեկամից: Գալով այն յաջողութեան, որ Արտաշէսը ունեցել էր գաւառական բեմի վրայ, նա գրել էր հետևեալը. «Քո ներկայացման մասին մենք կարդացինք «Ճառագայթի» մէջ, ինչ ասել կուզէ, մեծ բաւականութեամբ: Ամենքս ուրախացանք ի սրտէ: Ընդունիր շնորհաւորութիւններ թէ իմ, թէ Աշխէնի և թէ օր. Վարթումեանի կողմից: Մենք այժմ սաստիկ հետաքրքրւած ենք քեզանով և անհամբեր սպասում ենք այն ժամանակին, երբ քեզ առաջին անգամ կը տեսնենք այստեղի թարառնի բեմի վրայ: Ինչ վերաբերում է Ռակերչեանի տւած հարցին՝ ժամանակակից հայոց գեղարւեսոի նկատ-

մամբ՝ Զառիկեանը խուսափել էր կարծիք յայտնելուց այն հիման  
վրայ, որ դա մի լուրջ խնդիր է, նորա մասին արժէ մտածել և  
որ մի որոշ պատասխան տալու համար հարկաւոր կը լինի ուսում-  
նասիրել 60-ական և 80-ական թւականների գործիչներին, համե-  
մատել այդ երկու սերունդները, մամուլը, գրականութիւնը և այլն,  
մի գործ, որ դեռ կատարւած չէ:

Ոսկերչեանը իւր ժամանակին ստացաւ Գարեգինի նամակը:  
Կարգաց, և ուրախութիւնից զգիտէր ինչ անէր: Աչքերը լցւցին  
արտասուքով: Կարգաց նորից, կարդաց երրորդ անգամ: Օր. Վար-  
թումեանի շնորհաւորութիւնը մանաւանդ նորան խենթացրել էր:  
Նա համբուրում էր այն տողը, ուր յիշւած էր նորա անունը: Նա  
սեղմում էր կրծքին այն նամակը, որ պարունակում էր իւր մէջ  
օր. Վարթումեանի անունը:

Երիտասարդ արտիստը ստացաւ նաև ուրիշ նամակներ իւր  
բարեկամներից, որոնք նոյնպէս շնորհաւորում էին նորան և քա-  
ջալերում:

Անասելի ուրախութիւն պատճառեց նորան և այն, ինչ որ տըպ-  
ւած էր «Ճառագայթի» մէջ նորա յաջող ներկայացման մասին:  
Մանկական թերթի» մէջ էլ երևացին շոշական խօսքեր, որոնք վե-  
րաբերում էին Ոսկերչեանի տաղանդի բնորոշման: «Ժամանակի» զա-  
ւառական թղթակցութեան մէջ ևս, ի միջի ազլոց, յիշւած էր  
ներկայացման մասին, թէև Ոսկերչեանի անունը չկար այնտեղ:

Նա ինքը իւր աչքում կարծես բարձրացել էր այդ բոլոր հրա-  
պարակական և մասնաւոր շնորհաւորութիւններից և գովաբանու-  
թիւններից յետոյ: Նորան թւում էր, որ շրջապատող հասարակու-  
թիւնը, մանաւանդ երիտասարդները, սկսել են նորա հետ աւելի  
մէծ յարգանքով վարել: Վերջին ժամանակները նա այնքան լա-  
ւատես էր դարձել, որ չէր ուզում հաւատալ նոյն իսկ չարի գոյու-  
թեանը: Մարդիկ զիտեն գնահատել բարին և գեղեցիկը. հետեա-  
րար իրանք էլ պիտի լինին հոգով բարի և գեղեցիկ: Եթէ մարդ-  
կութիւնը մարմնանար մի անձնաւորութեան մէջ, նա կը սեղմէր  
նորան իւր գրկի մէջ, ինչպէս սեղմում են սրտակից բարեկամին:

Գործելու և փառքի դափնիք քաղելու տեսանքը նորա մէջ աճելով աճում էր: Նա համարում էր շաբաթներ և օրերը: Նա անհամբեր սպասում էր այն ժամին, երբ կը թողնէ վերջապէս աշխարհի ծայրում կորած այն անկիւնը, որտեղ ժողովրդի ծափահարութիւնները աւելի զրգուեցին նորա փառասիրական ախորժակը, քան թէ յազուրդ տւին հոգուն:

Ինչպէս մեկնելու պատրաստ շոգեկառքը՝ սեղմ՝ գոլորշու առատութիւնից անհանգիստ և դողլոջ սպասում է նշանի, որպէս զի շարժեի հևալով և հանգիստ գտնի հսկայական թռիչքի մէջ, նոյնքան անհամբեր սպասում էր և Ոսկերչեանը իւր մեկնելու օրին, մեկնելու վայրկենին:

Եկաւ վերջապէս և այն օրը:

Կառքը սպասում էր փողոցում: Ոսկերչեանը իւր հօր հետ կանգնած էր տան դարպասի շեմքին: Լայնեղը գլխարկի վրայ փաթաթած էր սպիտակ թանձիֆ, որի երկայն ծայրերը թափւել էին ուսերին և մէջքին: Զախ կողքին ձգւած էր սակվօյաժը: Ոտերին հագած էր ճանապարհորդական կօշիկներ, որոնց վզերը ծնկներից շատ վեր էին:

Կառքի շուրջը սպասում էին մի խումբ երիտասարդներ՝ ձիաները հեծած: Մեծ մասը դպրոցի ուսուցիչներից էին: Նոքա պատրաստել էին ճանապարհ դնելու համակրելի երիտասարդին և քանքարաւոր արտիստին:

Արտաշէսը դիմորկը վերցրեց և կամեցաւ հրաժեշտ տալ հօրը. բայց ծերունին ձեռքով նշան արեց կառապանին, և կառքը շարժւեց: Ձիաները առաջ ընկան կառքը կամաց-կամաց գնում էր նոցաետեից: Իսկ կառքին հետեւում էին հայրը և որդին:

Ահա դուրս եկան գիւղաքաղաքից: Այգեստանն էլ մնաց նոցաետե: Բայց ծերունին չէր կամենում վերադառնալ, չնայած, որ Արտաշէսը թախանձում էր նորան ետ գնալ և իրան չցողնեցնել: Մօրուքը տմբտոմքացնելով, դաւազանը խփելով քար ու կաշկառին՝ ալեորը շարունակում էր առաջ գնալ, առանց ուշադրութիւն դարձնելու ոչ իւր յոդնածութեան, ոչ քրտինքի, ոչ իւր զաւակի խնդիրքի վրայ:

ձանապարհի աջ կողմում կար մի քարաժայուս Նորա ստորոտում Արտաշէսը հրամայեց կառապանին պահել կառքը:

Բաւական սրտաշարժ էր հրաժեշտը: Ծերունու աչքերի կոպերը կակիծով ամուր գոցւեցին, վշտալի դէմքը կնճռոտեց, անհուն կարօտով իւր գիրկն առաւ սիրելի որդուն և սկսեց հեկեկալ: Ոսկերչեանը համբուրեց հօր հետ երկար, կարօտալի համբոյր: Յետոյ թանձիքի ծայրով սրբեց աչքերը, որոնք շարունակ թրջւում էին արտասուքից, և ճարպիկութեամբ կառքի վրայ ցատկելով, նստեց ուղեկցի կողքին: Զիաները քայլեցին:

Ծերունին կրկին պահել տւեց կառքը, իր թէ բան էր մոռացել ասելու: Նա առաջ գնաց, կիսարերան մի երկու խօսք մընջաց, կրկին համբուրեց:

Կառապանը, որի համբերութիւնը հատել էր շատ սպասելուց, մտրակը ֆրուացրեց օդում, և ձիաները սլացան:

Ոսկերչեանը անդադար ետ-ետ էր նայում և գլխարկով վերջին բարեներ ուղարկում հօրը:

Ծերունին մենակ, գլխիկոր և գաւազանը ձեռքին՝ քարացածի պէս մնաց կանգնած տեղումը:

Կառքը անհետացաւ մի բլուրի ետև: Ծերունին գրեթէ մազլցելով վեր ելաւ քարաժայուի բարձրութիւններից մէկի վրայ և այնտեղից սկսեց նայել հեռու: Մի անգամ էլ տեսաւ Արտաշէսին, յետոյ նա նորից ծածկւեց, էլի երեաց և ապա կարծես խորխորասիջաւ. և այնուհետ բոլորովին անհետացան ձիաւոր երիտասարդներն էլ, կառքն էլ, Արտաշէսն էլ և ամեն ինչ. միայն փոշու պոտուող սիւնն էր, որ երեաց նոցա ետևից. այն էլ շուտով մշուշի պէս բարձրացաւ, օդը ցնդեց:

Եօթը վերստ հեռաւորութեան վրայ գտնւում էր մի սիրունաղբիւր՝ շրջապատւած մի քանի պատկառելի գեղեցիկ սօսիներով: Թանձր ստւեր էին ձգում այդ ծառերը աղբիւրի անապական ջրի վրայ և նորա չորս կողմը, և երբէք արեգակի ոչ մի ճառագայթը չէր համարձակուում լայնատերեւ ճիւղերի միջից թափանցել ներքեւ և մարգարտեայ շիթերի վրայ կայտուել ու շողալ: Սառնորակ, վճիռ և անուշ էր այդ աղբիւրի ջուրը:

Ահա այս սքանչելի վայրում իջան երիտասարդները կառքից և ձիաներից:

Աղբիւրի մօտ ձգեցին սփոսցը, խուրջիններից հանեցին գինու շիշերը և ուտելեղէնի պաշարը—և նախաճաշիկը պատրաստ էր:

Քէֆով, երգերով և ճառախօսութիւններով կերան ու խմեցին, և հաղար ու մի բարի ցանկութիւններ մաղթեցին ապագայ գործիչն:

Ոսկերչեանը՝ գինու բաժակը ձեռքին՝ չնորհակալութիւն առաւ և մի երկու խօսք ասաց: Նա ուխտեց հաւատարիմ մնալ իւր կոչման, գործել անխոնջ և շունչը փշել հասարակական ասպարիզի վրայ:

Բուռն կեցցէներով թնդացրին օդը: Յետոյ Ոսկերչեանը համբուրւեց ամենքի հետ և բարձրացաւ իւր տեղը:

Երիտասարդները իրանց ձիաները հեծան:

—Դէհ, պարոններ, կրկին անգամ մնաք բարե! ասաց Արտաշէսը, գլխարկը ձեռքին ըռնած:

—Բարի ճանապարհ!... Յաջողութիւն!... Բարի ճանապարհ!... գոչեց երիտասարդների խումբը:

Կառապանի մորակի ուժգին հարւածից կառքի ձիաները՝ ականջները սրած՝ թե առածի պէս սլացան: Քամին գւգւում էր և ձիաների բաշը ծածանում օդի մէջ: Ոսկերչեանի գլխարկի թանձիքը ֆրֆոռում էր հողմի առաջ և զարնուում նորա մէջքին, ուսերին և ուղեկցի երեսին:

Ոսկերչեանը թռչում էր իւր յոյսերի և երազների հետ...

Վերջ առաջին մասի

Դ. ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Քեզ ի՞նչ պատահեց, պատանի հասակ,  
Խնչու աշղափես շուտ թունաւորւեցիր.  
Ի՞նչն է քեզ մաշում, կասկած ու տանջանք՝  
Թք տեսած կեանքից շատ բան սովորեցիր:

Օտար, շտապող ճամբորդի նման՝  
Նայիր, անցնում են քո տարիները...  
Օրերը անհետ կորչում են անձայն, —  
Ուր են, ի՞նչ եղան քո ցնորքները:

Խնչու ես նայում ուրիշի կեանքին.  
Կամ անզօր կուին, փոքրոդի անկման,  
Խնչու ես տարւում ուրիշի ցնորքին,  
Ստրուկին յատուկ վհատ հաշտութեան...

Զգոյշ կաց, կ'անցնեն այս տարիները,  
Առաջ կը նայես, — ծերութիւն ու մահ.  
Ինչ որ կորցնես՝ էլ այն օրերը  
Յետ չեն տայ, կանչես, — էլ յետ չեն դառնայ...

Սովորականը թօթափի՞ր քեզնից,  
Ընտրիր քո ուղին ու առաջ գնա.  
Եւ եթէ զժգոհ կը լինես կեանքից՝  
Անողնք կուիր ու մենակ մնա...

## ՀԱԻԱՏՆ ԻՆՉ ԿԸ ՓՐԿԻ

(ՆԻԷՐ ՕՐ. Շ. Բ-ԻՆ)

Խշխանուհի Սոֆիա Երկայնաբազուկ. Արդութեանի

Երկու ընկերուհիների բոլոր նամակներից միայն այն նամակ-  
ներն եմ պահել, որոնք կանանց հարցին են վերաբերում:

Յիւրիի. 18.. Հոկտեմբեր 22.

Սիրելի և ժանկագին Սիրսն!

Ուժ օրւայ ճանապարհորդութիւնից լետոյ վերջապէս Յիւրիին  
հասաց: Կը հաւատամս որ մինչև հիմա էլ չեմ կարողանում ուշքի  
գալ ու երևակայել թէ մենակ եմ. այն էլ որտեղ—արտասահ-  
մանում...<sup>1)</sup> Յիշում ես թէ ինչ հաշք, ինչ անիրազործելի ցնորք  
էր ժւռում մեզ արտասահման ընկնելը... Այս կարճ ժամանակում  
այնքան եմ ապրել և այնպիսի ուժեղ պահանջ եմ զգում յայտնել  
քեզ իմ տպաւորութիւնները, որ առանց սպատասխանիդ սպասելու-  
երկրորդ նամակն եմ զրում: Երևակայում եմ թէ ինչքան կը ծիծա-  
ղես կարդալով ճանապարհորդութեան նկարագրութիւնը և այն  
բոլոր հիացումները, որոնցով լի է առաջին նամակս: Այսպէս ու-  
րեմն Յիւրիին եկայ իմ ուղեկից Աշխատաւորեանի հետ, որ իր  
սրբազն պարուն էր համարում մի քայլ անգամ չհեռանալ ինձա-  
նից և մի իսկական ասպետ լինել: Հենց որ զնացքը կանգ առաւ:

<sup>1)</sup> Դասընթացքն աւարտելուց վեց տարի վետոյ միայն Նաղեալին  
չաջողւեց արտասահման կուրսերի գնալ. նա այն ժամանակ 22 տարումն էր:

և իջանք վագոնից, Աշխատաւորեանը հաւաքեց մեր բոլոր իրերն ու ասաւ. «Դէ, օրիո՞դ, դուք արդէն ցամաքի վրայ էք... Արիացէք, համարձակ առաջ գնացէք։ Այստեղ, այս քաղաքում դո ք պէտք է իրականացնէք ձեր բոլոր ցնորբներն ու ծրագիրները։ Ես կը կատարեմ իմ վերջին պարուքը. դրախտի շէմքը կը հասցնեմ ձեզ, կը բանամ գուները և... այնուհետև ցտեսութիւն... Մտէք, չշփոթւէք, համարձակ ու եռանդու եղէք. չմուանաք թէ ինչ թանկ էք գնել դրախտ մտնելու իրաւունքը։ Այժմ գնանք փնտուելու այն ընտանիքը, ուր մեզ ուղարկել է ձեր հօրեղբացը։ Զեղ կը յանձնեմ այն ընտանիքին և երեկոյեան գնացքով կը շարունակեմ ճանապարհու:

Դու չես կարող երևակաչել թէ ինչ էր իմ օրը, երբ լսեցի վերջին խօսքերը! Մենակ, օտար քաղաքում, օտարների մէջ... Դէ, ի հարկ է, ասացի ես, թէև, ճշմարիտ, ինքս էլ չգիտէի թէ ինչ եմ ուզում ասել այդ խօսքերով։ Քաղաք մտանք։ Սիրելի Սիրան, որ իմանաս թէ ինչ հրաշալի, մաքուր ու փոքրիկ քաղաք է Ցիւրիխը! Ինձ ամենից շատ զարմացրաւ քաղաքում տիրող խաղաղութիւնը։ Փողոցները երկար չափչափ լուց յետոյ վերջապէս մենք մօտեցանք մի սիրունիկ տան և հարցրինք տիկին Ֆենտին։ Մեր առաջ ելաւ հսկայ հասակով մի կին և կարդալով հօրեղբօրս նոմակը շատ սիրով ընդունեց մեզ։ Ուղեկիցս նրան բաւականին կարճ յացոնեց իմ բոլոր պահանջներն ու պայմանները։ Աղջիկը նահապետական ընտանիքից է, օտարների մէջ իսկի չի ապրած, գերմաններէն շատ վատ գիտէ։ Լեզուն սովորելուց յետոյ մտադիր է հոմալսարանի բժշկական ֆակուլտէտը մտնել։ Համալսարանն պիտի մտնի, հարցրեց տանտիրուհին բաւականին զարմացած։ Զգիտեմ իսկապէս ինչը նրան զարմացրեց, այն, որ օխտը սարիս քամակից հասել էի այստեղ համալսարան մտնելու համար, թէ տարօրինակ թւաց այն, որ վայրենիներն էլ են լոյսի ձգտում... Ի միջի այլոց նրա միամիտ հարցերից երեսում է, որ մեր մասին իսկի գաղափար չունեն։ Դա հոմէացի, Զինացի, Թուրք, Հայ—մէկ է։ Wunderschön, wunderschön (հիանալի, հիանալի) կրկնում էր նա շուտ-շուտ։ Խսկոյն և եթ ինձ տարաւ մի բաւականին մաքուր կահաւորած փոքրիկ սենեակ և ասաց։ Հիմա հանգստացէք, իսկ վաղը աղջիկներիս կը ծանօթացնեմ ձեզ հետու—Հայ, նկատեց Աշխատաւորեանը, հանգս-

տացէք, ես էլ կ'երթամ՝ հիւրանոց. ժամը հինգին կը գամ մնաս-  
բարովի։ Ամենքը դուրս եկան։ Բոլորովին մենակ մնացի։ Առանց  
ինձ հաշիւ տալու, մեքենայաբար հանեցի վերարկուս, ուղեպարկս  
և ընկաց անկողնիս վրայ։ Ինձ թւում էր, որ ես զրկւել եմ մոա-  
ծելու և զգալու ընդունակութիւնից։ Հինգ րոպէ չանցաւ՝ որ քնե-  
ցի։ Ինձ արթնացրաւ դրան թխոցը։ Աշխատաւորեանն էր։ Եկել  
էր մնաս-բարովի։

«Մնաք բարով, ասաւ նա, նստելով աթոռի վրայ։ Ցանկանում  
եմ կատարեալ յաջողութիւն և ձեր ծրագիրներին իրագործում։  
վեց ամսից յետոյ այստեղով անցնելիս մի կը դիացեմ ձեզ. յոյս  
ունեմ, որ դուք իսկական ու սանող կը լինէք։»

Ես ինձ այնպէս կորցրի, որ մինչև անգամ չկարողացայ շնոր-  
հակալութիւն յայտնել այն բոլոր ծառայութիւնների համար, որ  
արել էր, և այն ուշագրութեան համար, որ ճանապարհին ունե-  
ցել էր դէպի ինձ։ Դուրս եկաւ. դուռը փակւեց։ Հիմի որ իսկապէս  
մենակ մնացի... Քանի Աշխատաւորեանից չէի բաժանւել, հայրե-  
նիքի կարօտ չէի զգում. միջոց չունէի միտք անելու, ուշքի գալու...  
Բայց երբ նա դուրս գնաց, ինձ մի անասելի կարօտ պաշարեց։  
Կարծես հէնց նոր արթնացայ մի խոր քնից։ Ո՞րտեղ եմ, ի՞նչ է  
պատահել ինձ, ուր եմ եկել այստեղ։ Ոչ մի բարեկամ, ոչ մի մօ-  
տիկ մարդ չկայ... Մայրիկ, մայրիկ, կանչեցի ես անսովոր ձայնով,  
և անկողնիս վրայ ընկնելով՝ լաց եղայ։ Կարծես տաք արցունքները  
հաւաքւել էին մի ամբողջ շաբաթ և այժմ ժամանակ գտան բոլոր  
ուժով դուրս պոռաթկալու։

—Մայրիկ, խեղճ մայրիկ, ով դիտէ ինչքան ծանր է քեզ հա-  
մար առանց ինձ մնալլ! Ինչու, ինչու ես քեզ համար տանջանք ու  
չարչարանք ստեղծեցի։ Մի բան կը դառնամ արդեօք։ Ինչու պիտի  
դու տանես մեր ազգականների բոլոր կծու նկատողութիւններն ու  
կշտամբանքները, որոնց այնքան զայրացրել եմ իմ այստեղ գալովա։  
Աստւած իմ, որքան ծանր էր նրա համար լսել շրջապատողների բոլոր  
անտեղի կասկածներն ու անվատահութիւնը դէպի իմ ապագայ գոր-  
ծունէութիւնը! Եւ այս բոլորը նա լուռ տանում էր յոյսը դնելով իմ  
ուժերի և զօրեղ ցանկութեան վրայ։ Զգիտեմ ինչու, յիշեցի այն  
երեկոն, երբ մօրաքրոջս տանը բաւականին ծաղրական կերպով խօսք

բաց արին իմ բարձրագոյն կրթութիւն սուանալու ցանկութեան մասին, և միտս եկաւ այն զգւելի, ճաղատ բժշկի կարծիքը, որ մեր ընկերուհիների անհասանելի իդէալն էր համարւում Յիշեցի նրա խօսքերը. «Աւսում առած կինը մի սիրուն զէնք է, զարդարւած հրաշալի քանդակներով, մի փայլուն, հղկած ու գեղեցիկ գործ: Դա մի կարինետային իր է, որոյ պարծենում են, ամենքին ցոյց են, տալիս, բայց որը ոչ պատերազմիհամար է պէտք, ոչ որսի, ինչպէս մանէժի ձին, որ ինչքան էլ լաւը լինի, այնուամենայնիւ վարժեցրած է»:

Խսկոյն վեր թռաց. կարծես մէկն ինձ խփեց. տրորեցի աչքերս և նստեցի սեղանիս մօտ: «Արիացէք, համարձակ առաջ գնացէք, յիշեցէք թէ ինչ թանկ է զնած այդ իրաւունքը, լսում էի միւս կողմից: Ի՞նչ երկչոտութիւն, ինչ փողրոդութիւն, հայնոյում էի ինքս ինձ: Վախենալ կռւից, փախչել ռազմագաշտից! Ես չէի որ պարծենում էի ընկերուհիներիս մօտ թէ ես նրանց համար ճանապարհ կը հարթեմ և իմ արածներով կողեւորեմ նրանց: Ես չէի որ փրփրած վիճում էի այդ բժշկի հետ և ապացուցում թէ ինչ մեծ նշանակութիւն ունի ընտանիքում կրթւած կինը: Զէ, ասացի ես, դուք չէք յաղթի, փթած հասկացողութիւնների տէր մարդիկ, չեմ թողնի որ ծիծաղէք մեզ վրաց! Ինձ կորած էք համարում. Արա ինչ ուղում ես, միայն մերոնց ուղիղ ճանապարհից մի շեղի՞ր: Ես ձեզ կապացուցեմ, որ կորած չեմ. ընդհակառակը, ես կը մեկ նեմ իմ ուժեղ ձեռքը և կը հանեմ նրանց ցեխուտ ու խորխորատ ճանապարհից հարթ ու մաքուր տեղ: Կը հաւատամս, այս մոքերի ժամանակ ես միանգամից ինձ հսկայ զգացի: Ինձ թւում էր, որ Սամսոնի պէս ընդունակ եմ ամբողջ տունը ուսերիս վրայ պահելու: Մի վայրկենում բազմաթիւ մաքեր եկան զլուխու: Առաջս բացւեց իմ երեակայած ապագայի պատկերը և մի անգամից այնպիսի կենսուրախ տրամադրութեան մէջ ընկայ, որ իսկոյն վերցրի թուղթու. ակսեցի քեզ նամակ գրել: Առայժմ ցտեսութիւն: Ասում եմ ցուեսութիւն, որովհետեւ յոյս ունիմ շատ կարճ միջոցից յետոյ քեզ ինձ մօտ տեսնել: Մանրամասն գրիր ինձ քո և բոլոր ընկերուհիներիս մասին:

Քո՞ նաղեա:

ԹԻՖԼԻՍ. 18.. 1 Դեկտեմբեր.

Թանկագին Նաղեա!

Երանի քեզ, որ այսքան կարճ միջոցում այդքան համելի զգացմունքներ ես ունեցել. Ինչ թարմութիւն ու կեանքի հոտ է զալիս քո նամակներից! Նրանք կենդանացնում են միօրինակ ձանձրալի կեանքս: Զուր ես կարծում՝ թէ ես կարող եմ այդտեղ դալ. խորտակւեցին ծրագիրներս, կորան յոյսերս... Հօրեղբացրս ամուսնացւ, առանձին առւն ու տեղ սարքեց և ամեն կերպ աշխատում է ինձ հասկացնել՝ թէ երկու առւն պահելը դժւար բան է: Նատ շուտշուտ է խօսք զցում մարդու գնալու մասին, որ գլխիցս հանեմ բարձրագոյն կրթութիւն ստանալն ու մտածեմ իմ ընտանիքի մասին: Լրագիրներում արդէն յայտարարութիւն կայ, որ մեր տունը ծախուում է: Դպրոցները փակւեցին. մասնաւոր դաս քիչ կայ: Տեսնում ես, բարեկամ, որ հանգամանքներն ստիպում են ինձ սեփական աշխատանքով ապրել: Ուստի մնում է ակամայ հաշտուել մեր կենսական պայմանների հետ, զոհ բերելով իմ ձգտումները դէսի այն, ինչ լաւագոյնն է և այդ անձնազոհութիւնը համարել որոնած իդէալս: Իմ միակ ցնորդն է այժմ նինային միջոց տալ գնալու Պետքբուրգ՝ կուրսերի: Երեկոները՝ ազատ ժամանակս ինքնակրթութեամբ եմ անցկացնում: Բայց այդ գրքերը, այդ մեռած տառերն ինձ բաւականութիւն չեն տալիս: Ամբողջ կեանքս աշխատանք է: Թէև զգում եմ, որ մենակ աշխատանքը մարդու համար ամեն բանի տեղը չի կարող բռնել: Միթէ կեանքը՝ կէսօրւայ անմիտ աշխատանքով՝ կեանք է:

Այնքան էլ նախանձելի չէ մեր վարժուհիների զրութիւնը, որոնք ցանկանում են միջավայրից դուրս գալ: Ոչ մի յարաբերութիւն չունեն ինտելինգենցիայի հետ, որ կարող էր բարձրացնել ու լայնացնել նրանց զարգացումը. չեն կարող յայտնել նրանց իրանց մոքերն ու տպաւորութիւնները. Նրանք պոկւած են նրանցից, որպէս ճանձրալի օրիորդներ: Կարւած են նոյնպէս և այն հասարակութիւնից, որին ծառալում են. հասարակութեան կեանքը նրանց հետ կազ չունի, նրանք էլ հասարակութեան կեանքի հետ կազ չունեն. մնում է բաւականանալ ընկերների մի նեղ շըմանվ և աւելի ու աւելի մտնել իրանց խեցիի մէջ... Ես տեսնում

եմ, որ շուրջս ամեն բան զգւելի, գարշելի է. և այն էլ մենակ ինձ համար չէ որ գարշելի է: Երբեմն կեանքս ինձ այնպէս անգոյն ու անմիտ է թւում: Ուր է այն, ինչի մասին երազում էինք պանսիոնում: Այն, ինչի այնպէս հաւատում էինք, ինչի անունով որ ապրում էինք: Ուր է երբեմն մշտ բոցավառող այն կրակը ինչ ձգտումներ էին այն ժամանակ և ինչ՝ այժմ... Այն ժամանակ այնքան ինքնամոռացում, այնքան զո՞ր լուսոյ մի ճառագայթի, մի լուսաւոր մոքի համար. այնքան հաւատ դէպի ինձ ու մարդիկ, դէպի ապագան և հէնց այդ լուսաւոր մոքերը!... Այնպիսի լուսաճամանչ իդէալ էր կանգնած առաջս... Գիտութեան, հասարակական օգուտի, բարձր ու մաքուր երջանկութեան իդէալ Խսկ մյժմ... Գիտես, ես այսքան դժբախտ չէի լինի, այսքան չէր ծանրանայ դրութիւնս ինձ վրայ, եթէ որ և է մէկն ինձ համար բարոյական յենարան լինէր: Օտարութեան մէջ դու գանդատուում ես քո մենակութիւնից, խսկ ես, մերձաւորներիս մէջ, ինձ մենակ եմ զգում: Խմ ամենամօս մարդիկը՝ մայրս, քոյրս ինձ չեն հասկանում: Քոյրս այս տարի աւարտում է 9.դ դասարանը: Աը հաւատոմս, որ մինչեւ այժմ չեմ կարող որոշել նրա բնաւորութիւնը, նրա ցանկութիւնները... Զկայ ոչ մի գրաւում, ոչ մի ցանկութիւն... Յիշմում ես, երբ պատահում էր որ մի տեղ էինք հաւաքւում՝ որքան տաք-տաք վէճեր էին առաջ գալիս մեր մէջ, որքան յափշուակւում էինք: Խսկ նատաշան կամ խուսափում է ընկերուհիներից, կամ թէ հաւաքւում են ու գրականապէս չգիտեն թէ ինչի մասին խօսեն: Դէպի շրջապատող ամեն բան վերաբերում են անտարբեր կամ, մինչեւ անդամ, սկեպտիկաբար: Երեակացիր, ինձ թւում է, որ նատաշան խղճալով է նայում իմ աշխատանքի վրայ: Ինչքան էլ ցաւալի, ինչքան էլ ծանր է խոստովանելը, բայց յաճախ ինձ թւում է, որ մեր անկանոն ընտանիքի ազդեցութիւնը երեխաների վրայ ահագին նշանակութիւն ունի: Յիշմում ես թէ ինչ ծանր օրեր էինք անց յացնում պանսիոնում: Բայց, ծշմարիտ, ես զգում եմ, որ չնայած պանսիոնի կատարեալ հակամանկավարժական պայմաններին, այնուամենայնիւ մենք հեռու էինք շատ ու շատ բանից: Ի հարկէ, ես պանսիոնը պաշտպանողներից չեմ՝ ընտանեկան կանոնաւոր պայմանների ժամանակ, բայց այնտեղ, ուր տեսնում ես միայն մի կեղտոտ ճահիճ, որ անկարելի է

շորացնել արեի և ոչ մի ջերմ ճառագայթով, այնտեղ երեխաներ չպիտի լինեն: Մեր ընտանիքների ահազին մեծամասնութիւնը առաջւայ նման կեանքի նոյն պայմանների մէջ է, ինչ որ էր 20 տարի առաջ: Ելի նոյն դատարկութիւնը, գծուծութիւնն ու չնչինութիւնը, ելի նոյն դատարկ բաները բանական բովանդակութեան տեղ:

Օրինակ Բնչ բան է մեր տունը: Մի հիւրանոց, որի դռները առաւօտից մինչև կէս գիշեր բաց են. ուր անվերջ են ամուսնութիւնների, ներկայացումների ու երեկոյթների մասին խօսակցութիւնները, բամբասանքն ու ծաղրը... Մաշան իր եսական սիրով ու նախապաշարութմներով ընտանիքի մէջ անհաճոյ ողի է մտցնում: Նատաշան, որպէս թոլլ բնաւորութեան տէր մի անձն, աւելի շատ նրան ազգեցութեան է ենթարկուում: Իր աւելորդ կասկածներով և թագուն մոքերով նատաշայի մէջ նա զարթեցնում է ամենաստոր զգացմունքներ: Ես նկատում եմ, որ նա մի գործնական ու գծուծ աղջիկ է դառնում: Ընդհանրապէս, նադեա, ես նկատում եմ, որ ընտանեկան աւանդութիւնների ազգեցութիւնն այնպէս ուժեղ է, որ ընտանիքից դուրս գտնւող և բարերար ազգեցութիւն անելու. ընդունակ ոչ մի միջավայր չի կարող այդ ուժի դէմք գնալ: Ահա քեզ օրինակ. մի 18 տարեկան զիմնազաւարտ աղջկայ, որի հետ խօսել են լաւագոյն իդէալների, երջանկութեան նշանակութեան և այլն մասին, համոզել են ամուսնանալ մի տգէտ մարդու հետ, որ մեծ հարցասութեան տէր է! Այս քեզ տրադիցիա! Երևակայիր, նատաշան՝ քոյրս անտարբեր է դէպի այդ ֆակտը: Ոչ զայրանում է այդ ֆակտի դէմ, ոչ էլ սկաշտապանում: Որտեղից ձեռք բերի մեր հայ աղջիկը այնքան կամքի ոյժ, որ վիրաւորւի ծնողների խիստ տգեղ վարմունքներից և ոչ միայն բողոք յաջանի այդ պասկի դէմ, այլ և դուրս գայ ընտանիքից, կանգնի ամուր սկատանդանի վրայ...

Բայց մինչև որ աստիճան դատարկ է մեր աղջիկների մեծամասնութեան կեանքը, որքան աղքատ ու խեղճ շահեր ունին նրանք. ոչ մի միոք իրանց ներկայ զրութեան մասին, ոչ մի փորձ քննադատաբար վերաբերելու դէպի շրջապատը, ոչ նոյն խոկ մի չնչին նկրտում լրացնելու իրանց խղճալի կրթութիւնը: Եթէ առաջները չկայ բալ կամ աշխարհացին ժամանց, այն ժամանակ նրանց համար սարսափելի,

սպանիչ ձանձրոցիթ է... Ամուսնութիւն, ահա մեծամասնութեան միակ նպատակը: Ո՞րքան տհաճ բան է, որ նոյն իսկ լաւագոյն աղջիկները սարսափելի կերպով ձգտում են հասնել այդ միակ նպատակին:

Ստեփանեանն եկաւ Պետերբուրգից: Առ այժմ ձև և լա Զայկից ամեն բանից զայրանում է: Գլխաւորապէս նրան զայրացնում է ընտանեկան կեանքի բացակայութիւնը: Ա՞նչպէս է բաւականացնում այստեղի երիտասարդութեանը կլուրի, փողոցի կեանքը: ասում էր ինձ այս օրերս: Տեսնենք ինչ կ'ասի երկու տարրուց յետոյ! Նա ամուսնանում է մի ոսուհու հետ, որ աւարտել է Բեսոտութեան կուրսերը<sup>1)</sup>: բայց ի հարկէ, այդ բանն ինձանից աւել ոչ ոք չգիտէ: Քանի որ նա բաւական յածախ է մեզ մօտ լինում և շատ յաճախ են նրան ինձ հետ տեսնում: ուստի բացառապէս ուրիշի կեանքով և ուրիշի շահերով ապրող մարդիկ արդէն նշանել են մեզ: Այն, նադեա, այս հիւանդութիւնը ոչ միայն հներն ունին, այլ և երիտասարդները...

Ի միջի այլոց. մեր անհոգ թռչնակ Վարեան մարդու գնաց մի եկտոր հարուստի, որի հետ ծանօթացաւ նշանւելուց երկու ժամ առաջ: Ո՞րքան ծիծաղելի է նա! Այդ կիսակիրթ աղջիկը, որ ամեն բանից քիչ-միշ վերցրել է, արհամարհանքով է նայում տնւորած տանտիկինների վրայ: Ինքը զեռ չի զարգացել մինչև կանանց պարտականութեան իսկական հասկացողութիւնը, բայց խառնում է ամեն տեսակ հասարակական գործերում և, ի հարկէ, ոչ մի տեղ խելքը գյուխին բան չի անում, քանի որ խելքը գլխին բան անելու համար հարկաւոր է պատրաստութիւն, ու արդէն բոլորովին թողնում է թէ տնտեսութիւնը, թէ մարդուն: Կասկած չկաչ, որ ապագայում երախաններին էլ մի կողմը կը ձգի: Խնչ դաստիարակութիւն կարող են տալ իրանց երեխաններին ացդպիսի, առանց ամուր հիմքերի, անձնաւորութիւնները: Բայց չէ որ նրանց երեխանները կը լինեն ինտելիգենտ ծնողների երեխաններ: Եւ միթէ նա մեր կեանքում բացառութիւն է: Նատ խօսեցի: Նուտ-շուտ

<sup>1)</sup> Բեսոտութեան անունով չափոնի են կանանց համար հիմնած բարձրագոյն մանկավարժական կուրսերը Պետերբուրգում:

գրիր. Նամակներդ կարգում եմ մեր վարժուհիների մօտ Հաճելի տպաւորութիւններիդ ովկեանոսում մի մոռանայ մեզ, որ սպասում ենք անհամբեր քո նամակներին:

Հո՞ Սիրան:

Ցիւրիս. 18...

Սիրելի Սիրան!

Քիչ եմ ապրել, բայց շատ բան տեսել: Վերակրթութիւն, վերադասարակութիւն, և այլն, և այլն: Երբ յետ ես գառնում ու նայում անցած 12 ամսւայ վրայ և անցեալ բոլոր արածներդ գումարում, այն ժամանակ թւում է, որ այդ գումարը ոչ թէ 12 ամսւայ՝ այլ մի քանի տարւայ արածներիդ գումարն է: Թէև այս տարին աջնքան էլ հարուստ բովանդակութիւն չունի, բայց, այնուամենայնիւ, նա լրացրել է թէ բնաւորութեանս և թէ հայեացքներիս պակասներից շատերը: Այս տարւայ խոչոր գէպերից մէկն այն է, որ մի տարի սրանից տառաջ կանգնած էի համալսարանի դիմաց ցանկութիւններով, բայց առանց ծրագիրների և միոքս շւարած՝ ցնորքների մէջ էի ընկել, իսկ այսօր մոքիս մշուշը կամաց-կամաց պարզում է և տեսնում եմ, որ աւելի իրական հիմքի վրայ եմ:

Հենց նոր Աշխատաւորեանին ճանապարհ գրի և կայարանից տուն եկայ քեզ նամակ գրելու: Խաալիս գնալիս երկու շաբաթ Ցիւրիխում հիւր ֆնաց: Զափազանց զարմացաւ, տեսնելով թէ ինչքան յաջող ու լաւ եմ սովորել գերմաններէնը և շատ ուրախացաւ, որ կարողացել եմ համալսարան մոնել և ամսից վաղ: Թէև, կարծում եմ, զարմանալու բան շատ քիչ կար. քանի որ ես բաւականաշափ կարգին գիտէի լեզւի տեսութիւնը, ինձ պակասում էր միայն գործնականը: Սարսափելի, սարսափելի է այն ուսանողների գրութիւնը, որոնք արտասահման են զալիս բացարձակապէս առանց լեզու իմանալու: Մանաւանդ այս պեղանոտ ու սառն գերմանացների մօտ կը հաւատան, առաջները, չնայած որ խօսել գիտէի մի քիչ, բայց այնքան ծանր էր շուրջս, այնքան սառն, որ ուզզակի ջղերս խանդարւեցին: Ցիշմում ես, քեզ շատ եմ գրել իմ հոգեկան գրութեան մասին: Աշխատաւորեանը զարմացաւ որ վճռել եմ թողնել Ֆենո՛ի ընտանիքը

և պանսիոնում անկախ ապրել։ Երկու ամիս է արդէն ինչ տեղափոխւել եմ պանսիոն։ Որ իմանացիր, բարեկամ, թէ ինչքան ծանր է մեզ պէս աղուհացի սովորների համար ապրել այդպիսի գործնական և հաշով ապրող մարդկանց հետ! Կը հաւատամա, որ նրանք հետեւմ են ամեն մի պատառ հացի և ամեն մի կում ջրի։ Գարշելի է, սառն ու ինչ որ ոչ մարդավարի, թէև ասում են, որ ապրուսի ացդ ձեւը քաղաքակրթութեան հետ է գալիս։ բայց տայ Ասուած, որ քաղաքակրթութիւնը, մեր երկիրը մուտք գործելիս, չդիպչէր մեր հիւրասիրութեան ու աղուհացին։

Ել բան չմնաց, որի մասին չխօսէինք Աշխատաւորեանի հետ Կանանց հարցի, մեր երիտասարդութեան, ամեն մի քաղաքացու ողարտականութեան, գեղարւեստի մասին, երաժշտութեան նշանակութեան մասին, դաստիարակութեան մասին։ մի խօսքով այս երկու շաբաթը մենք խօսող մեքենաներ էինք դառել։ Զարմանալի մարդ է նաւ իր պարզութեամբ ու անարւեստութեամբ մի անդամից այնպիսի հաւատ է ներշնչում մարդու մէջ և այնպէս է տրամադրում դէպի ինքը, որ կարծես նրան նոր չէ ինչ ճանաչում ես, այլ վաղից, շատ վաղուց։ Գիտելիքների որպիսի պատկառելի պապաշար և կեանիքի որպիսի փորձառութիւն ունի! Մեղքս ինչ թագցնեմ։ Էլի կ'ասեմ, որ եթէ կողմնակի ազդեցութիւն չլինէր, մեր աւանդական ընտանիքը այդպիսի ուժեղ մարդ չէր տայ ինչ ասել կ'ուզի, երեւում է որ բնութիւնը նրան պարզեել է թէ ընդունակութիւներ և թէ խելք, բայց և դրա հետ նա միջոց է ունեցել լաւ մարդկանց ձեռքին իր ընդունակութիւններն ու խելքը լաւ զարգացնելու։ Այնպէս հանգիստ է խօսում իր ապագայ գործունէութեան մասին, որ երեւում է թէ այդ վճիռը լուրջ մտածւած է և իւրացրած։ Նա գնում է Խտալիա իր մասնագիտութիւնը կատարելագործելու համար։ Ետոյ իրաւունք ձեռք բերելով Խուաստանում, դառնալու է հայրենիք և հոտպիր է գործարան բանալ ամենալայն սկզբունքների հիման վրայ։ Խոստացաւ ինձ նամակ գրել, և ես սրուանց ուրախ եմ։ Նրա երկու շաբաթ Յիւրիխ մնալը ինձ նկատելի կերպով կենդանացրեց։ Ինձ թւում էր, թէ մեր տանը, մերձաւորներիս շրջանումն եմ։

Չի կարելի ասել, որ արտասահմանի ուսանողուհու անձնական

կիանքը այնքան էլ նախանձելի է, ինչքան էլ լաւ նիւթական պայմաններով շրջապատւած լինի: Անձնական կեանք, ճիշտն ասած, խոկի չկայ էլ: Ամենքն էլ կտրւած են գերմանական հասարակութիւնից: Այսուղի հասարակութիւնն այնպէս է, որ մենակ ապրող ջահէլ աղջիկը համարեա թէ երբէք չի կարող ընդունւել գերմանական լաւ ագոյն հասարակութեան մէջ: Նրանց ընտանիքը մի փակ միջավայր է, ուր օտարերկրացին դժւարութեամբ կարող է մուտք գործել: Արտասահմանում սովորողները կտրւած են իրանց ընկեր ուսանողներից այն վերին աստիճանի տարօրինակ հայեացքների պատճառով, որ անի գերմանական երիտասարդութիւնը կնոջ մասին: Գերմանացիների մեծ մասը ուղղակի չի թողնում, որ կինը մոտածի բարձրագոյն կրթութեան մասին: Մի պիտի տեսնես՝ թէ ինչպէս են ուսանողներն ընդունում ուսանողուհիներին, երբ դրանք մոտնում են լսարան! Ծիծաղ, շշուկ, փոշոց, ծաղր և այլն: Շատ հասկանալի է սրանից յետոց, որ ուսանող կանանց մնում է շատ զգոյց լինել իրանց յարաբերութիւններով դէպի ուսանողները: Մինչև անդամ կարելի է ասել, որ կանանց համար կարծես թէ ուսանող չկայ, որովհետեւ նրանց միջև ոչ մի փոխադարձ յարաբերութիւն չկայ: Մնում է ծանօթներ փնտուել ընկեր կանանց մէջ: Քայց նախ՝ նրանք այսուղ համեմատաբար քիչ են, և երկրորդ՝ այստեղ հազիւ են հաստատուում այնպիսի յարաբերութիւններ, որ կարելի լինէր որ և է անձնական կեանք ունենալ: Խնչ այստեղ եմ, ես համոզւեցի, որ ուսանողուհու այդ առանձնացումը, ամեն տեսակ կեանքից պոկւելը անպատճառ դնում է իր կնիքը հէնց իրանց կանանց վրացնա չափից դուրս կենտրոնացած է իր պարապմունքների վրաց, ուստի և չափից դուրս միակողմանի է դառնում:

Չես կարող երեւակացել, թէ ինչքան գոհ եմ, որ քաջութիւն ունեցայ թողնելու սեհութենտալ և միօրինակ գերմանուհիներիս, որոնք ուղղակի գրգռում էին ինձ իրանց անվերջ դատարկախօսութեամբ: Բաղդի բերմամբ պանսիոնում երկու ուսանողուհի են ապրում: Աէկն ամերիկացի է և ինձ հետ բժշկական ֆակուլտետում է սովորում, միւսը՝ անգլիացի է և ուսումնասիրում է քիմիա: Տանտիկնոջ երկու աղջիկները վարժուհիներ են քաղաքացին ուսումնաբաններում: Հա, ասեմ, որ նրանց ուսումնաբանները շատ լաւ կազ-

մակերպութիւն ունին։ Ես կ'աշխատեմ լուրջ կերպով ուսումնասիրել ուսումնարանական գործը Զւիցերիսյում և ձեզ՝ վարժուհիներիդ մի զեկուցում ուղարկել այդ խնդրի մասին։ Այս վարժուհիները այսուղի միջնակարգ դպրոցներում են կրթութիւն ստացել։ Նրանցից մինը մինչեւ անգամ ուսուցչական սեմինարիայում է եղել։ Բայց ինչքան անգոյն են և իդէայից զուրկ! Ուղղակի զուրկ որևէ է լայն ինտերեսից, որևէ է բանով յափշտակելու ընդունակութիւնից։ Դրանք ինչ որ անզգայ արարածներ են, որոնց նոյնքան քիչ կարող է ատելի լինել շարը, որքան և ոգեսորել բարին։ Իրանց պարտականութիւնները կատարեալ աստիճանաւորների նման են կատարում։ Գլխաւոր իդէան— գոյութեան կոիւն է։ Դասերից գուրս՝ ազատ ժամերին կար են անում, որ և է բան գործում կամ տնտեսութեամբ պարապում։ Կը զարմանաս, որ ասեմ՝ թէ այդ վարժուհիները ամեն շաբաթ օր սասպնով լւանում են մեր գուները, պատուհաններն ու յատակը! Խսկի կարելի՞ է այդ գործնական եսական աղջիկներին համեմատել ուսւ զս զափշտական և անձնազո՞ն վարժուհիների հետ։ Խնչ սիրով եմ յիշում մեր Աննա Վլադիմիրովնային։ Հոգով ու մտքերով գեղեցիկ ու մաքուր, հեզ, համբերատար, ամբողջովին ուրիշների համար ապրող, իր մասին խսկի չմտածող այդ մեծ նահատակին, որի ամբողջ կեանքը այնքան նման չէր միւսների կեանքին։ Նա մեզ համար իդէալ էր. և ամեն լաւ բանի համար, որ կայ մեր մէջ, պարտական ենք նրան, որ իր հոգեկան յատկութիւններով նշանաւոր կին էր։ Նրա դեկին էր՝ ամեն բան ուրիշի համար, ոչ մի բան իր համար։ Այս զերմանուհիները ընդհանրապէս բազդից չափից դուրս գոհ մարդկանց տպաւորութիւն են անում։ Նրանց մէջ նկատելի է հոգու կատարեալ հանգստութիւն։ իրանց դրութիւնը գոնէ մի քիչ բարելաւելուց անկութիւն բոլորովին չկայ։ Ես մոռացայ քեզ ծիծաղի համար հաղորդել, որ մեծ քոյքն էլ է սեփական աշխատանքով ապրում, բայց բաւականին տարօրինակ աշխատանքով։ Նա մի շուն ունի, որ տարեկան առնւազն 600 մարկ (մօտ 275 ռուբլի) է աշխատում, բայց ոսկէ մեղալներից։ Հէնց որ յայտարարում է թէ որ և է քաղաքում շների ցուցահանդէս կայ, նա առաջուց ուղարկում է իր զգեղեցկուհու այցետոմալ, յետոյ ինքն էլ նրա հետ գնում այնտեղ:

«Դեռ զէպք չի եղելել, ասում է նա, որ իմ գեղեցկուհին ստացած չլինի փող և ոսկէ կամ՝ արծաթէ մեղալ»:

Բայց ինչքան ուրախ եմ, որ ծանօթացել եմ ուսանողուհիների հետ! Մեր սենեակների գոները բացւում են մի երկար նրբանցքի մէջ: Նրբանցքի միջով անցնելիս աջ ու ձախ շատ գոների վրայ կարելի է տեսնել փոքրիկ տոմսակներ, որոնց վրայ գրած է „engagedée“ նշան՝ որ սենեակում ապրողը այդ միջոցին զբաղւած է և չի ցանկանում, որ ընկերուհիներից մէկն ու մէկը ներս մտնելով ընդհատի նրա պարապմունքը: Ինուրոյն անձնաւորութիւն է ամերիկացի ուսանողուհին! Բանից դուքս է գալիս, որ Ամերիկացում չկայ այն շարունակող, սիստեմատիկ պատրաստութիւնը, որ տալիս է մեր երկրում զիմնազը: Ընտեղ աշխատում են ամենակարճ ճանապարհով տալ մարզուն այն, ինչ անհրաժեշտ է կեանքի համար և բաւականանում են նրանով, որ այլպիսով ստեղծւում է ընդհանրապէս ինտելիգենտ և գործնական կեանքին ընդունակ մի ցեղ: Կանանց և մարդկանց կրթութեան աստիճանը էապէս չի տարբերւում ոչ որակի և ոչ քանակի կողմից: Այդ ուսանողուհու մեծ քոյրը Պարիզում բնական գիտութիւններով է պարապել և այժմ դասախոսութիւններ է կարգում հոստոնում: Անգլուհին էլ մի շատ դուրեկան անձնաւորութիւն է, թէև սկզբում ինձ վրայ հաշւող և սառն անձի տպաւորութիւն արաւ: Տեսնենք ի՞նչ կ'ասես սրան, բարեկամ: Երբ ես նրան հարցը թէ «ինչո՞ւ այսոեղ էք եկել ու չէք մտել ձեր համալսարանը», նա պատասխանեց: Շեզում էի հեռանալ մեր ընտանիքից, ուր աւելի կամ պակաս չափով ինսամա, կալութեան տակ էի, որ բոլորովին մշակեմ բնաւորութիւնս և անփախ աշխատանքի սովորեցնեմ ինձ: Մինչև 20 տարին պարտական ենք տանը մնալ՝ միջնակարգ կրթութիւն և բարոյական պատրաստութիւն ստանալու համար: 20 տարին լրանալուց յետոյց, ուր ուղենանք՝ կարող ենք գնալ: Մեր աղջիկների մեծ մասը առաջ գնում է ճանապարհորդելու, առա սկսում է զրադւել գիտութիւններով: 27—30 տարեկան հասակում՝ դաւնում են տուն, պահում և նստում, մինչև որ երեխաները խելքի գան: Ասենք նրանք ուրիշ տեղ դնալու ցանկութիւն չեն էլ ունենում! Ամբողջովին իրան և իրում է ընտանիքին, երեխաներին և մայրական պարտակա-

նութիւններին ջահէլ ժամանակ այնքան բան է տեսել ու սովորել, որ նրան մնում է այժմ գործնականում իր բոլոր գիտելիքները գործադրել:

Տեսնում ես, բարեկամ, մեզ մօռ աղջիկը 18—19 տարեկան հասակում ամուսնութեան մասին է երազում, որպէս մի միջոցի, որով կարող է ազատութիւն ձեռք բերել: Այդ ազատութիւնը նրան միջոց է տալիս սիրտն ուզածին չափ կեանք վայելելու (ի հարկէ, ինչպէս ինքն է հասկանում), մինչդեռ անգլուհիները բոլորովին ազատ են ջահէլ ժամանակ, իսկ ամուսնանալուց յետոց այլ ևս ազատ չեն, իրանք իրանց չեն պատկանում: Հա, մի շատ տարօրինակ ցանկութիւն ունի. գնալ Հնդկաստան, 3—4 տարի վարժել գործնական բժշկութեան մէջ և դառնալ տուն: Մեծ քոյլը լէցբ-բժիշկ է եղել Աւղանստանի Էմիրի մօտ Զարմանալի անվախ են և անկախ! Բանից երեսում՝ է, որ նա բժշկութիւն սովորել է Գերմանիայում և Զւիցերիայում և ապա Աւղանստան գնացել: Մինչև նշանակւած տեղը հասնելը, 13 աւզան զինւորների ուղեկցութեամբ 12 օր ձիով ճանապարհ է կորել, գիշերները մնալով վայրենիների այրերում և անցնելով լեռներ ու անապատներ: Այնտեղ պալատում նա ձեռք է բերում մեծ հաւատ ամենքի կողմից և ահազին ազդեցութիւն ունենում ինչպէս Էմիրի, այնպէս էլ ներքին գործերի վրայ: Ի՞նչ ես կարծում, Սիրան, պիտի որ մարդ եռանդ ունենայ, որ կարողանայ 3—4 տարի ապրել բոլորովին մենակ, որպէս մի իսկական եւրոպացի կին, ամեն տեսակ ինտրիգների մէջ և 30 զինւորի մշտական պաշտպանութեան տակ: Նա այժմ Անգլիայումն է և կարդում է Աւղանստանի մասին դասախոսութիւններ: Համեմատիր այդ անկախութիւնը մեր անօգնական դրութեան հետ:

Երեակացիր, չնայած նրանց բոլոր արժանաւորութիւններին, ես այնուսմենայնիւ սուս կնոջը անհամեմատ աւելի վեր եմ դասում նրանցից: Նրանց կեանքի պայմաններն այնպէս են դասաւորւած, որ պիտի քաջ լինեն: Անչ եմ ասում, աչքերը բաց անելուն պէս նրանք վարժում են անկախութեան: Ընտանիքը, հասարակական կեանքը և շատ ուրիշ պայմաններ, բոլորը տանում են դէպի զարգացում, դէպի բարոյական և մտաւոր դաստիարակութիւն: Եւ ինձ

թւում է թէ ինչ որ նրանք անում են, անում են բանականութեան և ոչ թէ սրտի ազդեցութեան տակ: Մինչդեռ ոռւս կինը ծանր կուզ է դուրս գալիս իր նեղ դրութիւնից և թանկ է գնում իր ազատութիւնը: Նրա ամեն արածի մէջ երևում է սրտի մասնակցութիւնը: բարձր կրթութիւն ստանալով, ճանաշելով գիտութեան նշանակութիւնը՝ նա ամբողջովին իրան նւիրում է իր ժողովրդին, զոհ է բերում իր ամբողջ էութիւնը, իր բոլոր անձնական շահերը! Գուցէ ժամանակով ոռւս կինն էլ եւրոպացի կին դառնաց (իմ ասած մոքով), բայց այժմ, նա իր պարտականութիւնները դարձնում է իր կրօնը:

Սակայն կանանց խնդիրը յոգնեցրաւ ինձ: Բաւական է ինչքան գրեցի: Արձակուրդներից օգտւելով՝ վաղը ես ու անգլուհին գնում ենք ճանապարհորդելու: Հաւանօրէն կ'երթամ ֆընեւ, Պարիզ, Բերլին: Այնտեղից մանրամասն կը գրեմ տպաւորութիւններս: Արձակուրդային ճանապարհորդութիւնները սովորութիւն է օտարերկրեաց ուսանողների համար. և այդ ինձ շատ է դուր գալիս, քանի որ այդ ճանապարհորդութիւնները ահագին նշանակութիւն ունին ուսանողների համար:

Քո՞ նադեա:

## ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՆՑՈՒԱԺԵՇՈՒԹԻՒՆԸ

### Ֆ. ՄԱՐԴԱՆԵԱՆՑԻ

Արդիւնաբերութիւնը զարգանում է հսկայական քայլերով։ Նրա հետ զուզընթացաբար բազմանում են նրա ճիւղերը։ Իւրաքանչիւր ճիւղին համապատասխան մարդիկ ունենալու մեծ պահանջ կայ։ Ահա այդ հանգամանքն այսօր քաղաքակրթեալ Եւրոպային և Ամերիկային ստիպում է որոշ ուսումնաբաններին մի այնպիսի ուղղութիւն տալ, որ նոցա արտադրած մարդիկը կառարելապէս պատրաստ լինին գործնականապէս զեկավարելու արդիւնաբերութեան ճիւղերի գործերը։ Դրա շնորհիւ Եւրոպայում և Ամերիկայում առանձին ուշադրութիւն են դարձրել պրոֆեսիոնալ գիտութիւնների բազմակողմանի տարածման վրայ։ Առևտրական գիտութիւնները համարում են առաջիններին լրացնող գիտութիւններ։ Իւրաքանչիւր երկրի տնտեսական կեանքի բարենորոգման և առաջդիմութեան ամենաառուժեղ գէները այժմ անվիճելի կերպով համարւում է առևտրի մասին ամենաճիշտ և խելացի գաղափարների տարածումը այն մարդկանց մէջ, որոնք իրանց պատրաստում են կամ մտադիր են նւիրել առևտրական գործունէութեան։

Այժմ բոլորը հասել են այն եղբակացութեան, թէ երկրի առևտուրն ու արդիւնաբերութիւնը կարելի է զնել ամենաճիշտ և խելացի հիմունքների վերայ միմիացն շնորհիւ առևտրական գիտութիւնների տարածման, թէպէտ և չպէտք է ուրանալ, որ երկրում տիրող առևտրական լաւ օրէնքները ոչ պակաս դեր են կատարում այդ գործում։ բայցևայնապէս այդ հանգամանքը բարեյաջող պայմաններից մէկը միայն կարելի է համարել։ Ազ-

գերի դարաւոր փորձը մեզ ապացուցում է, թէ որքանէլ կատարելագործւած լինին այդ օրէնքները, սակայն առանց առետրական գիտութիւնների և կրթութեան անկարելի են առեւտրի աճումը և գորգացումը։ Առեւտրական օրէնքները ինքնին երբէք չեն նպաստել կապիտալերի, առեւտրական կամ արդիւնաբերական ձեռնարկութիւնների զարգացման։ Առեւտրական գիտութիւններ—ահա առեւտրական կեանքի զլիաւոր շարժիչը և կտրդաւորիչը։ Սոցա շնորհիւ է կարողանում առեւտրականը իւր գործերին ամենառողիղ ընթացք տալ, զգուշանում՝ պատահական սխալներից և իւր գործի համար վտանգաւոր ձեռնարկութիւններից։ Առեւտրականի համար անհրաժեշտ է իմանալ և վերաստուգել այն բոլոր պայմանները, որոնք այսպէս կամ այնպէս կարող են ազդել նորա ասրանքի վաճառման վրայ։ Նրան անհրաժեշտ է հետեւել առեւտրական աշխարհում տեղի ունեցող բոլոր բարեփոխութիւններին, շուկաներին, բորսաներին, նոյն իսկ պետութիւնների քաղաքական դրութեան։

Ահա թէ ինչ է ասում հեղինակաւոր գերմանացի առեւտրական Խէղէնը իւր „Allgemeine vergleichende Handels und Gewerbe-Geographie“ գրքի մէջ այն պահանջների մասին, որ առաջազրում էին գեռ դարիս սկզբի առեւտրականին. «առեւտրական աշխարհում պատշաճաւոր կերպով գործելու համար, ներկայում բաւական չէ ապրանքներ ճանաչելը՝ զանազանելով նոցա վաս կամ լաւ յատկութիւնները, հաշւապահութիւն իմանալը, իմանալ նոյնպէս թէ այս ինչ ապրանքը որտեղից և ինչ ճանապարհով է ստացւում, կամ որտեղ կարելի է ձեռլնառու պայմաններով վաճառել. ժամանակակից առեւտրականը պարտաւոր է իմանալ, ոչ միայն զանազան երկրներում տիրող մաքսացին օրէնքները և այն, թէ ինչ հիման վրայ են նոցա սահմանւած, նոյնպէս դրամների և ուրիշ շափերի հաշիւներն ու մուլհակի օրէնքները, նա, բացի այդ բոլորից, պարտաւոր է ուսումնասիրել բոլոր երկրների, այսպէս ասած, Փիզիքական աշխարհագրութիւնը, նոցա արդիւնաբերութեան տեսակները, ճանապարհների հաղորդակցութիւնը, մասնութակուրացին արդիւնաբերութեան էութիւնը, մի խօսքով՝ նա պարտաւոր է ուսումնասիրել առեւտրի գործնականը և տեսականը բառի ամենալայն մաքով։

Ծիծաղելի չը արդեօք մի այդպիսի բացատրութիւնից յետոց տեսնել մարդիկ, նոյն իսկ ինտելիգենտ համալսարանականներ, որոնք ուրանում են ոչ միայն առեւրական գիտութիւնների տարածման անհրաժեշտութիւնը, այլ նոյն իսկ զարմանում են, թէ ախր ինչ բան կաջ ալդտեղ սովորելու:

Այդ, գեռ ևս իր գոյութիւնը պահպանած, կարծիքը ոչ թէ համոզմունք է, այլ մի հասարակ թիւրիմացութիւն՝ առաջացած նորանից, որ շատ մարդիկ, նոյն իսկ կրթւած՝ անընդունակ են թափանցել մեր առօրեաց կեանքի մէջ և ըմբռնել այն բոլորը, ինչ կատարւում է մեր շուրջը: Ժան-Ժակ Ռուսո՞ն ասում է՝ «ամենամեծ փիլիսոփայութիւնը կայանում է նրա մէջ», որ մարդ կարողանայ հասկանալ և ըմբռնել այն բոլորը, ինչ կատարւում է իր շուրջը»:  
Աւազ, պէտք է խոստովանել, որ այդ տեսակներին մատներով կարելի է հաշւել. մեծամասնութիւնը անզգայ, անտարբեր է. նա կարծես կոյը է, չէ կարողանում տեսնել՝ թէ ինչ է կատարւում իւր աչքի առաջ և չէ հասկանում նրա իմաստը: Եւ եթէ ներկայումն գեռ կան մարդիկ՝ առեւրական գիտութիւնների անհրաժեշտութիւնը ուրացող՝ այդ մեզ չպիտի զարմացնի: Նոքա իսկապէս գժւարանում են և նոյն իսկ չեն կարողանում պարզել իրանց, թէ առեւրական դառնալու համար իւանութից և անմիջական պրակտիկայից դուրս բնչպէս և ինչ կարելի է սովորել:

Երբ խօսում ենք տեսնիկական գիտութիւնների մասին, այդ հասկանալի է ամենքի համար: Տեխնիկ բառը ամեն ինչ սպարզում է: Մենք տեսնում ենք, թէ ինչ են անում մեքենագէտները, քիմիկոսները, ճարտարապետները և այլն: Մեզ համար պարզ և որոշ է այդ մարդկանց աշխատանքը և գիտենք, թէ ինչ գժւարութիւնների յաղթելով, նոքա կարողանում են իրանց աշխատանքի արդիւնքը երևան հանել: Ուստի մենք յաճախ ենք լսում այն բարդութիւնների մասին, որ կազմում են տեխնիկական գիտութիւնների կուրսը: Առանց նախապատրաստութեան ոչ ոք չէ կարող լինել ոչ մեքենագէտ, ոչ քիմիկոս և ոչ ճարտարապետ:

Բայց երբ խօսում ենք առեւրական գիտութիւնների մասին, հարցը բոլորովին վտխւում է: Եւ յիրաւի, ինչպէս արտայայտել այդ գիտութիւնների մասին, որ կազմում են տեխնիկական գիտութիւնների կուրսը: Առանց նախապատրաստութեան ոչ ոք չէ կարող լինել ոչ մեքենագէտ, ոչ քիմիկոս և ոչ ճարտարապետ:

Միթէ կարելի է ասել, թէ առևտրական դպրոցներում մարդիկ սովորում են վաճառել... Այդ արևեստը այնքան էլ շօշափելի չէ: Դժւար է նրան որոշ շրջանակների մէջ զնել, մի որոշ պատկեր տալ, որովհետև նա բաղկացած է բազմաթիւ մանր մասերից, որոնք մեր աչքի առաջ կատարւում են ամեն օր ամենաանձունի կերպով և բոլորովին տգէտ ու անկիրթ մարդկանց ձեռքով: Ապրանք առնել, ծախել, փող տալ, ստանալ, ապրանք փաթաթել, հարկաւոր դէպքում սուտ երդումներ տալ—այնքան հասարակ երեսյթներ են, որ կարծես առևտրի համար մի առանձին պատրաստութեան կարիք էլ չկաց: Հեշտութիւնը, որով կատարւում են առևտրական գործերը, նոցա մաաշելիութիւնը կատարելապէս ծածկում են մեր աչքից գործի դժւարութիւնները, մանաւանդ որ մարդիկ շատ սակաւ են կարողանում գնահատել այն բանի կարեորութիւնը, ինչ ամեն օր կատարւում է նոցա առաջ:

Այժմ փորձենք պարզել, արդեօք ինչի՞ մէջ է կայանում վաճառականի ամենօրեայ կեանքի գիտութիւնը: Դորա համար մեծ դժւարութիւններ չկան, հարկաւոր է միայն քիչ խորը թափանցել, քիչ լուրջ և գիտակցաբար վերաբերել դէպի այն բոլորը, ինչ շրջապատում է վաճառականին: Նախ՝ վաճառականին զբաղեցնում են մի շարք մտածութիւններ զանազան առարկաների մասին (ապրանքների, տոկոսաբեր թղթերի, փողի և այլն): Երկրորդ՝ նա անմիջապէս յարաբերութիւն ունի զանազան հիմնարկութիւնների հետ. բանկերի, բորսայի, երկաթուղինների և այլն: Վերջապէս նրան հետաքրքրում է զանազան մարդկանց հետ իւր ունեցած յարաբերութիւնը—ծառայողների, առնողների և վաճառողների հետ:

Ահա այն երեք գլխաւոր ֆունկցիաները, որ կազմում են վաճառականի կեանքի հիմքը. այդ երեք ֆունկցիաներին համաձայն կարելի է բաժանել գլխաւոր առևտրական գիտութիւնները, որոնք, կարծում ենք և համոզւած ենք, կատարելապէս կը համապատասխանեն առևտրականի գործնական կեանքի պահանջներին:

Թէ ինչպէս են պատրաստում զանազան ապրանքներ և առասարակ մշակում զանազան նիւթեր—այդ մէնք գիտենք տեխնոլոգիայի կուրսից: Գլխաւոր ապրանքների յատկութիւնները, նոցա լաւն ու վատը, խառնուրդը և կեղծիքը, նոցա որոշելու

և պահպանելու միջոցները մենք կարող ենք իմանալ ապրանքագիտութեան կուրսից (товаровъдениe):

Մեզ մնում է իմանալ՝ թէ որտեղ, ինչ ապրանք է պատրաստում և ինչ տեղերում վաճառում, ինչքան է մօտաւորապէս նստում ապրանքը ապրանքատիրոջ և ինչ գներով են վաճառում գլխաւոր ապրանքները զանազան շուկաներում: Վերջապէս ինչ հանգամանքներ են նպաստում կամ խանգարում ապրանքի կանոնաւոր վաճառման զարգացմանը: Մի խօսքով, մեզ մնում է ուսումնասիրել, այսպէս ասած, տնտեսական կամ, ինչպէս շատերն են անւանում, առևտրական աշխարհագրութիւնը: դորանով արդէն լրանում է ապրանքներին վերաբերեալ գլխաւոր և ամենակարևոր տեղեկութիւնների կուրսը:

Մենք ապրանքների շարքում ցիշեցինք նոյնպէս փողի, տոկոսաբեր թղթերի և առհասարակ զանազան դոկումենտների մասին: Այդ դէպում մեզ նախ և առաջ հարկաւոր է իմանալ դրանցից խւրաքանչիւրի օգուտն ու վնասը, յարմարութիւնն ու անյարմարութիւնը գործածութեան ժամանակ. նոյնպէս մեզ հարկաւոր է ծանօթ լինել նոցա գործածութեան ամենակատարելագործած միջոցների հետ: Այդ արդէն կազմում է այն գիտութեան կուրսը, որ այսօր մեր մէջ յայտնի է քաղաքանատեսութիւնն անունով: Բացի դոցանից, մեզ հարկաւոր է իմանալ թէ ինչ օրէնքներ պէտք է պահպանել: Այդ տեղեկութիւնները մենք միշտ կարող ենք գոնել Առևտրական օրէնտգրութեան մէջ:

Համարեա նոյնը կարելի է ասել առևտրականի երկրորդ կարգի զբաղմունքների մասին, այսինքն զանազան բանկային, ապահովագրական, եւ կաթուղային և այլ հիմնարկութիւնների հետ նորառնեցած յարաբերութիւնների մասին: Թէ ինչի մէջ է կայանում այդ հիմնարկութիւնների գլխաւոր նշանակութիւնը և նոցա կազմակերպութիւնը, ինչպէս են նոքա գործում, ինչ օրէնքներով առաջնորդուում, ինչը պիտի համարել նոցա կազմակերպութեան մէջ լաւ և ինչը՝ վատ—այդ բոլորի բացատրութիւնը մենք կը գտնենք դարձեալ գործնական քաղաքանատեսութեան կուրսի մէջ:

Առայժմ մի կողմ թողնելով առևտրականի երրորդ կարգի զբաղմունքները, որոնք վերաբերում են նորա զուտ անձնականին,

մենք պէտք է ասենք, որ առաջին երկու կարգի զբաղմունքները ամեն օր մի շարք փոփոխութիւնների են ենթարկում նորա առետրական կապիտալը:

Անկարելիութիւնը պահել յիշողութեան մէջ այդ բոլոր փոփոխութիւնները մի կողմից և գործի միշտ դրութիւնը իմանալու կարեւորութիւնը միւս կողմից, պահանջում են ամեն օր խրճուղիաբար արձանագրել այն բոլոր փոփոխութիւնները, որ կատարում են գործի մէջ։ Այդ տեսակ դրութիւնների ամենահամապատասխան ձևերը մենք կը գտնենք հաշւապահութեան կուրսի մէջ։

Այսպէս ուրեմն, վաճառականի առաջին երկու կարգի զբաղմունքների ուսումնական բաժինը կատարելապէս համապատասխանում է նորա գործնական կեանքի պահանջներին։

Այժմ մեզ մնում է պարզել, լուսաբանել նորա երրորդ կարգի զբաղմունքների իմաստը — այսինքն մարդկանց հետ ունեցած նորա յարաբերութիւնը։ Առաջին անգամից բաւականին դժւար լուծելի հարցերի մի ահագին շարք... Եւ իսկապէս, կարելի է արդեօք պատրաստել մարդիկ այդ ուղղութեամբ։ Այն, կարելի է, կը պատասխանենք մենք։

Մենք ամենքս գիտենք, որ մարդկանց փոխադարձ յարաբերութիւնը երկու տեսակ է լինում։ Նախ՝ պաշտօնական — այսպէս ասած՝ զուտ ֆորմալ յարաբերութիւն, և երկրորդ՝ ընկերական։ Այդ վերջին տեսակի յարաբերութիւնը, պէտք է խոստովանած, որ մեր կեանքի ռազնա է կազմում։ Նորա ազդեցութիւնը այնքան մեծ է և ուժեղ, որ թափանցելով պաշտօնական յարաբերութեան ասպարէզը, մոցնում է նորա մէջ աւելի մեղմութիւն և քաղաքավարութիւն, մինչեռ այդ երկու տարրերի բացակայութիւնը ստորացնում է նորան և հասցնում դաժան արեւեստի աստիճանին։

Ահաւասիկ թէ ինչպէս է նկարագրում ֆրանսիացի գործնական տնտեսագէտ Կուրսել Սլնեցլը գործունեաց մարդուն։ Ենախ և առաջ մարդ միշտ և ամեն տեղ պէտք է լինի քաղաքավարի։ Վաճառականի քաղաքավարութիւնը պէտք է կայանայ ոչ թէ հասարակ ձեւականութեան և սովորական խօսակցութեան մէջ, այլ նորա ամբողջ յարաբերութեան, գործի, խօսակցութեան մէջ։ առհասարակ նա իւր ամբողջ խօսակցութեան միջոցին պէտք է լինի ուշագիր,

համեստ, միւնոյն ժամանակ իրեն պէտք է պահէ վայելուչ կերպով, խաղաղ և դրական, պէտք է աշխատէ գրաւել ուրիշների սէրն ու համակրանքը և օգտակար լինել ուրիշներին։ Քաղաքալարութեան այդ զգացմունքը սակաւ չէ նկատում վաճառականների մէջ, բայց պէտք է ասել, որ մեծ մասամբ՝ մեծ, հարուստ վաճառականների մէջ, չսանդարելով նրանց միւնոյն ժամանակ լինել դրական և զգաստ։

Ճակական առետրականը հասարակ է իւր յարաբերութեան մէջ, անկեղծ, ճշտապահ, հաստատ իւր խօսքին և պարուականութիւններին, փարթամ չէ և ոչ էլ չարամիտ։ Գտնւելով մարդկանց հետ անմիջական յարաբերութեան մէջ՝ նա զիտէ նոցա բոլոր թուկութիւնները և այդ պատճառաւ նա միշտ ներողամիտ է և զգոյշ իւր խօսքերի մէջ, հանգիստ իւր դատողութեան մէջ, համբերող և դրական իւր գործողութեան ժամանակ, միշտ բարի, բայց չափաւոր, և առանց յափշտակւելու, միշտ խաղաղ ու հանդարտ, առանց վախենալու զրպարտութիւնից և անթաւականութիւնից։

Այդ նկարագրութեան մէջ մենք խսկապէս տեսնում ենք օրինակելի մարդու պատկեր, մարդու, որի հետ միշտ կարելի է գործ տեսնել և որին կարելի է վստահօրէն հասարակական գործ յանձնել։ Բայց ասացէք խնդրեմ, միթէ այդ տեսակ մարդիկ պատրաստելը չէ եղել միշտ, ամեն ժամանակ ու ամեն տեղ ուսումնարանների նպատակը։ Այս, բայց միթէ մեր կրթութեան մէջ միմիայն ուսումնարաններն են դեր կատարում, չէ որ աւելի մեծ դեր են կատարում մեր ընտանիքներն ու մեզ շրջապատողները։

Վերջացնելով մեր խօսքը առեւտրական կրթութեան մասին, մենք պարտք ենք համարում մի քանի խօսք ևս ասել քաղաքատնասութեան մասին, այն գիտութեան՝ որի մէջ մենք գտնում ենք մեր կեանքի ամենակենսական խնդիրներից շատերի լուծումը։ Ուսոի շատերը նորան հետևեալ բանաստեղծական բացատրութիւնն են տալիս, որ աւելորդ չենք համարում առաջ բերել։ Քաղաքատնասութիւնը ուսուցանում է այն ամենը, ինչ մարդիկ կարողացել են հնարել իրանց անտեսութիւնը լաւ կազմակերպելու համար, այն ամենը՝ դէպի ինչ մարդիկ ձգտել են և ինչին հասել։ Պէտք է աւելացնել, որ այդ գիտութեան մէջ անտեսական բարդ կեանքը

տարրականանում՝ է և իւրաքանչիւր դէպքը քննուում է օգտի, յարմարութեան և այն զոհողութիւնների տեսակէտից, որ պահանջում են մարդկանցից, և ապա եզրակացնուում յօգուտ կամ ընդդէմ ներկայ գաղափարի, ի հարկէ ի նկատի առնելով թէ որքան է համապատասխանում նա ճշմարտութեան և ընդհանուրի շահին։ Ենորհիւ առարկացի ընդարձակութեան և բարոյական տարրի ներկայութեան, չի կարելի ընդունել թէ կրթական տարրը առևտրական ուսման մէջ գլխաւորապէս պատկանում է քաղաքանտեսութեան, մինչդեռ միւս առարկաները ներկայանում են որպէս ուսումնական նիւթի ներկայացուցիչներ։ Եթէ աւելացնենք այդ բոլորի վրայ և մի քանի լեզուներ, մեր առաջ կ'ամփոփւի առևտրական ուսման ամբողջ կուրսը, որ այժմ Եւրոպացի առևտրական ուսումնարում ընդունւած է։

Մեր ասածներից այժմ դժւար չէ եզրակացնել այն նողառակը, որ ունի առևտրական ուսումը։ Նա պէտք է ուսուցանէ երիտասարդներին առկուն աշխատանքի, պէտք է ծանօթացնէ քաղաքական և առևտրական օրէնքների հետ, հաշւարարութեան կատարելագործած ձևերի հետ, պարզէ նրանց առևտրական բարդ կոմբինացիաների էութիւնը, պատրաստէ այն աստիճանի գործնական ձևով, որ նոքա քիչ փորձառութիւնից յետոց առանց նեղութեան կարողանան զանազան արդիւնաբերական ձեռնարկութիւններին կազմակերպութիւն տալ, նոցա խելքը այն եղանակով մշակել, որ կարողանայ գործել հեշտ ու արագ, իսկ բարոյական տեսակետից սովորացնել և մարմին ու ոդի գարձնել ճշտութիւնը, կարգապահութիւնն ու առկուն աշխատանքը, որպէս զի նոքա իրանց երջանկութիւնը տեսնեն իրանց աշխատասիրութեան մէջ։

Այդ ուղղութեամբ պատրաստւած երիտասարդները իրանց հայքենիքի համար կազմում են մի տեսակ հարստութիւն։

Արտասահմանում առևտրական ուսման վրայ առանձին ուշք են դարձնում. այնտեղ այդ գործը բաւականին խելացի կերպով է դրւած։ Թէ որ աստիճանի լուրջ ուշագրութեան է արժանացած առևտրական ուսումը Ամերիկայում և արևմտեան Եւրոպայում, մեզ բաւականին ճիշտ գաղափար են տալիս հետեւեալ վիճակագրական աեղեկութիւնները, որ քաղում ենք մի զերմանեական ամսա-

գրից։ Արևմտեան Եւրոպայում և Ամերիկայում այժմ՝ հաշւում են մօտ 842 առևտրական ուսումնարաններ, որտեղ ուսանում են 150 հազարի չափ աշակերտներ։ Այդ թւանշանները հետեւալ կերպով են դասաւորում։ Ամերիկա՝  $42\frac{1}{2}\%$ , Աւստրիա՝  $36\%$ , Գերմանիա՝  $8\frac{1}{2}\%$ , Ֆրանսիա՝  $7\frac{1}{2}\%$ , իսկ Թիագեալ Եւրոպական երկիրներում  $5\frac{1}{2}\%$ ։

Բոլորովին հակառակ պատկեր է ներկայացնում մեզ Ռուսաստանը։ Այդ ահազին լայնատարած երկրում, ուր 127 միլիոն ժողովուրդ են հաշւում—ուսեալ, կրթւած առևտրականներ աչքի են ընկնում որպէս օազիս Սահարա անապատում։ Խճճն վերագրել այդ երեսին, եթէ ոչ լաւ կազմակերպւած և կուրսը տեղական կեանքին յարմարեցրած առևտրական դպրոցների բացակայութեան Եւ յիրաւի, այդ ահազին տարածութեան վերայ միմիայն 6 առևտրական դպրոցներ կան (2 Պետերբուրգում, 2 Մոսկվայում, 1 Վարշաւայում և 1 Օդեսսայում) և ռէալական դպրոցներին կից 34 առևտրական բաժանմունքներ, որոնց գործունէութիւնը սկսեալ այն օրից, երբ առաջին դպրոցը հիմնել են Պետերբուրգում (1892թ.) ահա թէ ինչ թւերով է սահմանափակում։ 6 առևտրական դպրոցներում մինչ օրս աւարտել են միմիայն 3000 հոգի, իսկ ռէալական դպրոցներին կից բաժանմունքներում, սկսեալ նոցա սահմանան օրից (1874թ.)—միմիայն 1966 հոգի։

Մինչդեռ Բելգիայում, որը Ռուսաստանի մի հարիւրերորդ մասը չէ կազմում իր տարածութեամբ և որը առևտրական աշխարհում այնքան էլ նշանաւոր տեղ չէ բռնում, այժմ գոյութիւն ունին 3 բարձրագոյն և մի շարք միջնակարգ առևտրական դպրոցներ իրանց բազմաթիւ ունկնդիրներով։

Արտասահմանի առևտրական դասակարգն ինքը առանձին խընամբ է տարել ուսումնարանների թիւը աւելացնելու գործի վրայ Քաղաքատնտեսներից շատ շատերը վկայում են, որ այն դէպքում, երբ կարիք է զգացւել մի որեւ է առևտրական կենտրոնում կամ մի այլ քաղաքում առևտրական դպրոց բանալու և պետական բիւջէի համար ծանր է եղել դպրոցի ծախքերը հոգալ, այն դէպքում դպրոցը բացել և պահել են իրանց հաշւով առևտրականները։ Այդպէս 1832 թ. Դանցիգում հիմնւած է առևտրական ակադեմիա,

1839 թ. Նառւմբուրգում, Բրեսլաւլում և Լայպցիգում, 1844 թ. Դրեզդենում, 1849 թ. Քեմնիցում և 1850 թ. Ֆրէքուրգում։ և էլի այդ տեսակի մի շարք ուսումնարաններ զանազան տեղերում։

Ոուսաստանը արդիւնաբերական երկիր է և հետեւապէս առևտրական դպրոցների կարիքը միշտ զգացել է։ եղածներն այնքան քիչ են, որ ցանկացողների մի հարիւրերորդ մասին բաւականութիւն չեն կարողանում տալ։

Վերջին ժամանակները տէրութիւնը մի առանձին խնամքով և համակրանքով է վերաբերում առևտրական դպրոցների թիւը աւելացնելու հարցին։ Նոյն իսկ մարդիկ են ուղարկւած արտասահման, որ տեղնուտեղն ուսումնասիրեն այնտեղի ուսումնարանների տիպը և ապա կարելոյն չափ յարմարեցնեն մեր երկրի պայմաններին։ Ոուսաստանի առևտրական քիչ թէ շատ նշանակութիւն ունեցող բոլոր քաղաքներից համարեա խնդիրներ են ներկայացրած նախարարութեան, բայց երբ լուծում կըստանան ազդխնդիրները, դրականապէս զեռ ոչինչ յայտնի չէ։ Այսքանս կարելի է ենթադրել, որ շտաբը մերժում կ'ստանան այն հասարակ պատճառով, որ դործին հմուտ ուսուցիչներ չկան Ոուսաստանում։ Այդ հանգամանքը մի ցաւալի երեսյթ է և դառն պայման, որի շնորհիւ գործէ մի քանի տարի ևս գործը ուշանայ։

Միւս անգամ մենք կ'աշխատենք պարզել թէ ինչ տիպարի ուսումնարան է հարկաւոր կովկասում։

1897 թ. Ապրիլ 10

Բագու

# ԵՒՈԼԻՒՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԻ, ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

Միջին դարերում գիտութիւնը մահւան էր գատաղարտւած։ Նա կենարոնացել էր բացառապէս վանքերի ու մենաստանների մէջ։ Կղերն էր, որ տիրապետում էր ամենուրեք, նա էր, որ ղեկավարում էր, կամ ճիշտ կը լինէր ասել՝ սպանում էր մարդկային միաքը։ Բնագիտութիւնը սատանայի ծնունդ էր համարւում, նրանով զբաղւելլ՝ մահացու յանցանք, հերետիկոսութիւն։ Դրա փոխարէն՝ ծաղկում էր սխոլաստիկան՝ խաւարի ու մտաւոր թմրութեան վարդապետութիւնը, արձակ ասոգարէզ էր բացւել տատւածաբանական, կեղծ—վիլիսոփայական ազլանդակ ճոռոմաբանութիւնների համար։ Վիճում էին թէ արդեօք հրեշտակները սև են թէ սպիտակ. վիճում էին, արդեօք Արամը պրորու ունէր թէ չէ. վիճում էին—և լուրջ էին վիճում—թէ արդեօք երկնացին արքացութեան մէջ աղբ կաց թէ չէ։ Վիճում էին ճանճի, միրուքի և ուրիշ շատ քարձու, փիլիսոփայական նիւթերի մասին։

Այդ խաւար ժամանակներն էր, երբ որոտաց Զորդանօ Բըռունօի ձացնը. «Օ՛ դու երանելի, սրբազան Յիմարութիւն, սրբազործւած Տգիտութիւն և Աղուշութիւն, ամեն միաք, ամեն քննադատութիւն հալածւած է այնտեղ, ուր դու բնակութիւն ես հաստա-

<sup>1)</sup> Տես Մուրճ 1897 թ. № 2—3.

տել։ Դուք, ովք բնագէտներ, հետազոտողներ, թողէք. ինչ պէտք է ձեզ ուսումնասիրել բնութիւնը, ինչ պէտք է ձեզ իմանալ, արդեօք աստղերը, մոլորակները կրակից են առաջ եկթը, թէ հողից, կամ ջրից։ Սրբազն Յիմարութիւնը արհամարհում է այդ ամենը և ծնկաշոք Աստուծուց է սպասում իւր փրկութիւնը։ Այսպէս էր որոտում Բրունօն կղերի դէմ, այն կղերի, որը քիչ յետոյ խարոյկ պիտի բարձրացնէր նրան։

Զ. Բրունօն մէկն էր այն փիլիսոփաներից, որոնց համար փիլիսոփայութիւն և բնագիտութիւն միևնոյն գաղափարներն են։ Տէլէզիօչի, Ռոջեր Բակոնի, Գալիլէյի, Կամպանելլայի և այլոց շարքում նա էր, որ առողջոք կուր մղեց միջնադարեան կղերի բըռնակալութեան դէմ։ Դրանք բոլորն էլ ներկայացու ցիշներ էին միևնոյն փիլիսոփայական ուղղութեան, այն է՝ Բնափիլիսոփայութեան, կամ բնութեան փիլիսոփայութեան (Naturphilosophie), որը մեծ զարկ տւեց էւոլյուցիայի գաղափարի զարգացմանը։

Որքան աւելի միջնադարեան էպոխան մօտենում էր իւր վախճանին, նոյնքան աւելի զարգանում էր այդ ուղղութիւնը։ «Բնութիւնը ուսումնասիրել—եղաւ ընդհանուրի ձգտումը։ «Փիլիսոփայութիւնը գրւած է բնութեան մեծ գրքում—ասում էր Գալիլէյ։

Այս մտաւոր շարժումը յիշեցնում է 18-րդ դարու կիսում Ռուսօ՞ի առաջ բերած գրական և փիլիսոփայական ուղղութիւնը։ Այն ժամանակ նա հնչեցնում էր ճակատագրական կոչը՝ «դէպի բնութիւն»։ Մի տեղ նա բողոք էր նեխւած, փչացած արիստոկրատիայի արւեստական կեանքի դէմ, միւս տեղ նա բողոք էր կղերի դոգմայական տիրապետութեան դէմ։

Փոխուում են տիեզերքի և ստեղծագործութեան հասկացողութիւնները։ սոքա այլ ևս այն չեն, ինչ որ քրիստոնէական կրօնն էր ուսուցանում։ Բնութիւնն այլ ևս չի անիծւում, այլ փաստաբանւում, ասուածացւում է։

«Աշխարհս Աստուծոյ իսկական պատկերն է»—կոչում էր անվախ Տէլէզիօ։ «Բնութիւնը ոչ այլ ինչ է, բայց միայն իրերի Աջ մարմնացած Աստածու—ասում էր Զ. Բրունօ։ Կամպանելլան կենդանացնում է տիեզերքը, որը նրա հասկացողութեամբ մի մեծ ու կատարելագործւած կենդանի է։

Աստւած տիեզերքի մէջ է, նրա հետ անբաժան կապւած—և նրա հետ կազմում են մէկ հիմնական տարր—Նիկլօ, և միմիայն մէկ հիմնական սպատճառ—Ռյժը. այդ երկուսից է կազմում ամեն մի մարմին—այս է Բրունօի փիլիսոփայութիւնը:

\* \*

Անցնենք նոր գարերի շրջանը և միշտ առաջ ձգենք էւոլիցիայի թելը: Փորձնական բնագիտութիւնը սկսում է աւելի և աւելի առաջադիմել, փիլիսոփայութիւնը հետզհետէ դուրս է մզում մետաֆիզիկական ապարդիւն սպեկուլացեաները և ընկնում է (մանաւանդ Անդլիայում) գրական, պողիտիւ ճանապարհի վրայ, ուր նա առաջ է գնում ձեռք ձեռքի տւած բնական գիտութիւնների հետ Միմիայն Գերմանիայում երկար ժամանակ—մինչև այս դարու 30-ական թւականները—դեռ կանգուն էր իդէալիստական փիլիսոփայութիւնը և ծագկում էր ամենաաբստրակտ մետաֆիզիկան:

Էմպիրիզմը (փորձի վրայ հիմնած գիտութիւնը) սնունդ էր տալիս փիլիսոփայութեան, իսկ վերջինս էլ լրացնում էր էմպիրիզմը՝ ընդհանրացնելով և որոշ սիստեմի վերածելով նրա տւած արդիւնքները .. Օր աւուր աւելի և աւելի խոր զգացւեց, որ փիլիսոփայութիւնը, առանց փորձի՝ օդի մէջ է կախւած, բայց որ գիտական ամենաառատ պաշարը ևս, առանց փիլիսոփայական ընդհանրացումների՝ արժէք չունի:

Նէդացի Լիննէյ հիմնեց նորագոյն բնագիտութեան շկոլան էմպիրիզմի, փորձնական գիտութեան հողի վրայ: Բայց նրա տւած գիտելիքների մէջ քաօս էր տիրում. խառնակ էին, անկապ, անսիստեմ: Առաջ եկաւ բնափիլիսոփայական (naturphilosophische) ու էակցիան, որի պարագլուխներն էին Լամարկ, Ֆոփոււ Սենտ-Ելեր, Գէօմէ և Օկէն—դրանք արդէն կարգ ու սիստեմ մացրին տիրող քաօսի մէջ:

Գէօմէն և Լամարկը—գերմանացի հանճարեղ բանաստեղծը և Փրանսիացի մեծ կենդանաբան-փիլիսոփան—նշանաւոր դեր խաղացին օրգանական էւոլիցիայի թէօրիայի մէջ, իբրև հիմնադիրներ այսպէս կոչւած «ծագման վարդապետութեան», (Abstammungslehre, théorie de la descendance) և իբրև Դարւինիզմի կարսպեաներ:

Գէօթէն առաջին անգամ յացնի եղաւ բնագիտութեան մէջ իւր մի աշխատութեամբ՝ «Բոյսերի կերպարանափոխութիւնը» (Die Metamorphose der Pflanzen) վերնագրով, որը լուս տեսաւ 1790-ին։ Այդտեղ նա արգէն մատնացոյց է լինում էւոլյուցիական թէօրիայի հիմնական սկզբունքի վրայ։ Նա ցոյց է տալիս բոյսերի մէջ այն հիմնական օրգանը, որից աստիճանաբար զարգանալով ու կերպարանափոխուելով՝ տուած է եկել ամրողջ բուսական աշխարհը իւր ամբողջ բազմատեսակութեամբ։ Այդ հիմնական օրգանն է Գէօթէի կարծիքով—տերեւը։ Այստեղ, անկասկած սխալում է Գէօթէն, բայց նրա հիմնական միտքը ճիշտ է։ Եթէ այն ժամանակ խոշորացոյցը համասարած բարիք լինէր, Գէօթէն կարող էր նրա միջոցով աւելի խորը թափանցել բուսական օրգանիզմի շինւածքի մէջ, և այն ժամանակ նաև կը տեսնէր, որ հիմնական և մշտապէս կերպարանափոխուող օրգանն է բջիջը<sup>1)</sup>, (Zelle, էլետոչկա) և որ տերեւը ինքը նրանից է առաջացել։

Մի ուրիշ ծառայութիւն, որ Գէօթէն մատուցեց բնագիտութեան՝ դա «Գանգի ողնային թէօրիան» է։ (Wirbeltheorie des Schädes). նա դուաւ, որ մարդկային և կենդանական գանգը ոչ այլ ինչ է եթէ ոչ մի ոսկրացին զանդւած, որը բազկացած է այնպիսի մասերից, ինչ որ և ողնաշարը։ դրանից հետեւում է այն, որ գանգը նոյն ողնաշարն է, նոյն պառոցաքը, միայն ժամանակի լնթացքում աւելի բարդւած ու կերպարանափոխուած։

Գէօթէն ունի և ուրիշ գիւտեր բնագիտութեան մէջ։ նրան է սկատկանում նաև մարդկային միջնածամելիքի (Zwischenkiefer) գիւտը։ Յայտնի էր Գէօթէին, որ միջնածամելիքը բոլոր կաթնասուն կենդանիների մօտ գոյութիւն ունի։ ուրեմն, մարդն ևս, իբրև կաթնասուն կենդանի, անպայման պիտի ունենայ։ Գէղուկցիան (Déduction) օգնութեան է համնում բանաստեղծ-գիտնականին և նա

<sup>1)</sup> Բջիջները ամեն մի օրգանական էակի (բոյսի, կենդանու, մարդու) ամենաստարբական օրգաններն են։ նոքա տեսնուում են խոշորացոյցով՝ փոքրիկ, կենդանի կազմւածքներ են, որոնց ամենաէական մասը ձևի սպիտակուց պարունակող հեղուկային սուբստանցին է (որ պլազմա, պրոտոպլազմա է կոչւում), որի մէջ սովորաբար կոլու կորիզ կա։ (բջիջի կորիզ), մնա մասամբ կաշտով պատած։

երկար, քրտնաշան աշխատանքներից յետոց յաջողում է մարդու մօտ ևս գտնել միջնածամելիքը:

Մեծ էր այն կենդանի մասնակցութիւնը, որ ունէր Գէօթէն իւր ժամանակւայ բնական հետազոտութիւնների և մասնաւորապէս էւոլիցիական թէօրիայի զարգացման մէջ:

Երբ 1830 թ. յուլիս ամսում հրապարակական վիճ էր բացւել Սենտ. Իլէրի (էւոլիցիական թէօրիայի պաշտպան) և հոչակաւոր Կիււիէի (անշարժութեան թէօրիայի պաշտպան) մէջ Պարիզում՝ Գէօթէն աւելի զբաղեցնում էին այդ վիճաբանութեան հետեանքները, քան թէ յուլիսեան փոթորկալից յեղափոխութիւնը, որ այն ժամանակ (1830 թ.) պայմել էր Ֆրանսիայի մայրաքաղաքում:

Թէ որ աստիճան այդ գիտական կուրս ոգեսորում՝ էր 81 տարեկան Գէօթէին, ցոյց է տալիս գիտնական Սորէի պատմած հետեւեալ անեկդոտը:

«Երկուշաբթի, 2 օգոստ. 1830. Յեղափոխութեան լուրը հասել էր արդէն Վայմար և ընդհանուր իրարանցում էր առաջ բերել: Գնացի Գէօթէի մօտ. «Ռ, Բ'նչ էք մոտածում այդ մեծ անցքի մասին—բացականչեց նա, ինձ գիմաւորելով. հրաբուխը ժայթքել է, ամեն բան բոցավառած է»: Այն, զարհուրելի պատմութիւնն է—պատասխանեցի ես. սպական Բ'նչ կարելի է յուսալ այսպիսի պայմաններում. և այս տեսակ մի մինիստրութեան օրով. թերեւս կը քշեն այժմեան իշխանական ընտանիքը և գրանով ամեն բան կը վերջանայ:

«Ինձ թւում է... թէ մենք իրար չենք հասկանում, սիրելիս,—հակաճաւեց Գէօթէն. իմ խօսքը յեղափոխութեան մասին չէ. ես խօսում եմ այն հանդիսաւոր գիտական ընդհարումի մասին, որ տեղի է ունեցել Պարիզի Ակադեմիայում Կիււիէի և Փոֆուուա Սենտ. Իլէրի մէջ,—մի ընդհարում, որ եղել է բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, չնայած տիրող արհաւիրքներին. հարցը մեծ է և խիստ կարեւոր: Սորէն, ինչ ասել կ'ուզէ—շւարած է մնում այս խօսքերից յետոց:

Այժմ յիշենք Գէօթէի մի այլ ծառայութիւնը, որ աւելի մեծ նշանակութիւն ունի օրգանական էւոլիցիայի տեսակէտից: Բոլոր օրգանիզմների մէջ նա գտնում է երկու տեսակ մշիներ, մէկը՝ փո-

փոխական, միւսը՝ պահպանողական, կամ երկու տեսակ ոյժեր, մէկը՝ կենտրոնախոյզ, միւսը՝ կենտրոնաձիգ։ Առաջին մզիչը (Trieb) դըրդում է օրգանիզմին գէպի անընդհատ փոփոխականութիւն։ Նա առաջադիմականն է։ Երկրորդը ձգում է պահպանել օրգանիզմի մէջ այն, ինչ որ էական է։ Այդ երկու մզիչները համապատասխանում են «Յարմարման» (Anpassung, Adaptation) և «Ժառանգականութեան» ((Vererbung, Hérédité) ոյժերին, որոնք եղան Դարինիզմի և ընդհանրապէս էւոլիցիական վարդապետութեան անկիւնաքարերը։ Քիչ յետոյ մենք կը պարզենք այդ երկու հիմնական ոյժերի էութիւնը։

Բացի այդ Դէօթէն յայտնում է և մի ուրիշ նշանաւոր միաբ։ Բոլոր ողնաւոր կենդանիները՝ ձկները, թռչունները, կաթնասունները և վերջապէս այդ բոլորին գլուխ կանգնած մարդը, ունին փոխադարձ, ազգակցական կապ, և բոլորը առաջ են եկել միենոյն սկզբնական օրգանիզմից աստիճանական կերպարանափոխութեամբ։ Նա ենթադրում է նոյնական, որ ազգակցութիւնը գոյութիւն ունի նաև կենդանիների և բոյսերի մէջ, որովհետև—ասում է նա—սաղմացին դրութեան մէջ վերցրած՝ բոյսը և կենդանին հազիւ են տարբերուում իրարից։ Դէօթէի այդ նշանաւոր հիպոթէզները այսօր արդէն մեծ հաւանականութիւն են ձեռք բերել։ Կընէսո Հէկէլը՝ աւելի ուշ պիտի խօսէ և ապացոյցներ բերէ «միանական» (monophyletisch) ծագման մասին, որի համեմատ ամբողջ օրգանական աշխարհը՝ մարդիկ, կենդանիներ, բոյսեր՝ աստիճանաբար զարգացել են միենոյն նախնական էակից (Urwesen), որին նա տաղիս է «մոնէր» անունը։

Դէօթէի մասին վերջացնելով, մենք այժմ յիշենք նրա ժամանակակից մի ուրիշ գերմանացու՝ Օկէնին, որի անունը նոյնական պատկանում է էւոլիցիացի պատմութեան։

Օկէնը յայտարարեց, որ բոլոր օրգանիզմների կենսական երեւոյթները բջիւում են միենոյն սկզբնական պարզ քիմիական սուբստրատից, որի անունը նա կնքում է Urschleim (Schleim—լորձունք) նախալորձունք։ Այսօր այդ նոյն զաղափարը որոշւում է արդէն ավրոտովազման բառով։ Բառի փոփոխութիւնն է միայն տեղի ունեցել, հիմնական միաբը մնում է նոյնը։ Օկէնը պնդում էր, որ այդ

Urschleim-ը, այդ սկզբնական լորձունքը, որը ներկայացնում է կէս ամուր, կէս-հեղուկ սպիտակուցային մի զանգւած, ծնունդ է առել ծովի մէջ անօրդանական նիւթից: Սա լիշեցնում է Հեկիելի և ինքնարերական ծնունդը (Archigonie), որի մասին գեռ առիթ կ'ունենանք խօսելու:

Մի ուրիշ թէօրիա, որ դարձեալ հոչակաւոր դարձրեց Օկէնի անունը, դա ևինֆուզորիաներից թէօրիան էր: Սկզբնական լորձունքը (կամ ժամանակակից գիտութեան լեզուով՝ պրոտոպլազման) ծովի մէջ ծնունդ առնելով, ընդունում է մանրիկ, միկրոսկոպական պղպջակների ձև: Ամեն մի օրդանական մարմին (կենդանի բոյս) բաղկացած է անհաշիւ պղպջակներից, կամ ինֆուզորիաներից:

Օկէնի ինֆուզորիան էլ համապատասխանում է բջիջին (Zelle, cellule, էլեմենտ), որը լնդունւած է նորագոյն բիոլոգիայի մէջ: Ուրեմն հարկաւոր է միայն ևինֆուզորիային տեղ բջիջ բառը դնել և մենք կը սոսանանք 19-դ դարու ամենանշանաւոր բիոլոգիական թէօրիաներից մինը—բջիջային թէօրիան (Zellentheorie), որի հիմնադիրներն են Շլայդէն և Շամի: 30-ական թւականներին այդ երկու գիտնականները գիտականօրէն հաստատեցին, որ բոլոր օրդանիզմները ներկայացնում են կամ պարզ բջիջներ, կամ թէ բջիջների զանգւածներ (Agregat): Եւ պրոտոպլազմայի նորագոյն թէօրիան ցոյց տւեց, որ բջիջի ամենաէական բաղադրիչ էլէմէնտը պրոտոպլազման է, կամ Օկէնի լեզուով՝ սկզբնական լորձունքը:

Ինչպէս տեսնում ենք, Օկէնի երկու թէօրիաներն էլ չափազանց բեղմնաւոր էին: Անցնենք:

Մենք գեռ ունինք մի շաբք բնագէտ-փիլիսոփաներ կամ բնափիլիսոփաներ, որոնցից ամեն մէկը մի-մի գիտով ու ինքնօրինակ մոլքերով հարստացրեց էւոլյուցիական թէօրիան, և այզպիսով էու լորը միասին պատրաստեցին պարարտ հող ու գիտելիքների անսպառ աղբիւր լետագայ աւելի մեծ ու հսկայական թէօրիայի՝ Դարւինիզմի համար:

\*  
\* \*

Էւոլյուցիայի պատմութեան մէջ կանուն ևս մեծ բաժին ունի: Բոլոր փիլիսոփաներից այդ ամենավերացական փիլիսոփան ևս ու-

առևմասիրել է բնութիւնը և նոյն իսկ փորձ է արել բացառիկ տիեզերական ամբողջ շենքը և նրա զարգացման ընթացքը զուտ մեքենայական պատճառներով՝ պատճառներ, որոնք միանգամայն դուրս են մղում հրաշքի ամեն հասկացողութիւն։

1755 թւականին Կանտը հրատարակեց իւր նշանաւոր բնագիտական աշխատութիւնը՝ «Ընդհանուր բնական պատմութիւն և երկնքի թէօրիան», որը ամբողջ գարագլուխ կազմեց։ Նրա կոսմոգոնիան (տիեզերածնութիւն), կամ կոսմոլոգիական գաղային թէօրիան՝ որը ցետոյ աւելի հիմնաւորեցին և ապլասը (Փրանսիացի աստղագէտ) և Հերշէլը (անգլիացի աստղագէտ), այսօր տակաւին միակ հաւանական հիմութէզն է տիեզերքի ծագման մասին և կը շարունակէ գոյութիւն ունենալ այդպէս, մինչև որ նրանից աւելի լաւը, առ ելի հաւանականը հանդէս կը գայ: Մենք այդ հիմութէզի մասին ցետոյ կը խօսենք աւելի հանգամանօրէն. առաջմէմ ցիշտառէնք Կանտի արած ծառայութիւնները բիոլոգիական (կենսաբանական) էւրիւցիայի աշխարհում։ Այստեղ Կանտի վիթիարի հանճարը անհետնողական է հանդիսանում։ Նա մատերիալիստ է և բառիս բռն մաքով՝ մոնիստ (moniste) անօրգանական էւրիւցիայի մէջ, բայց դուալիստ է (dualiste) օրգանական բնութեան մէջ։ Առաջինում՝ անօրգանական աշխարհում (անկինդան մարմիններում, որպէս հողը, մետաղները) գործում են կոյր, մեքենայական ոյժեր, իոկերկորդում՝ օրգանական աշխարհում (որպէս բոյսերը, կենդանիները, մարդը)՝ գործում են նպատակայարմար, գիտակցական ոյժեր։ Այստեղ արդէն կորչում է մոնիզմը, և երեան է գալիս Կանտի տէլէօլոգիական (կամ զուալիստական) հասկացողութիւնը, որը — ինչպէս արդէն բացատրել ենք — բնական երևոյթների մէջ խոթաւմ է ւանհատական ստեղծողին կամքը և նրա գիտակցական գործունէութիւնը։ Կանտը պնդում է, որ ամբողջ անօրգանական բնութիւնը (մետալներ և աշխարհը) իւր բազմազան երևոյթներով պէտք է բացատրել մեքենայական պատճառներով, այսինքն նիւթի շարժութեամբ, մինչդեռ օրգանական բնութիւնը բացատրելու ժամանակ՝ մեքենայական ոյժերը անզօր են հանդիսանում և պէտք է անպայման ընդունել վերջնական պատճառների (Causes finales) գիտակցական գործունէութիւնը։

«Պէտք է անպայման ընդունել «վերջնական պատճառները» (Causes finales), որովհետև մարդուս հասկանալու, ճանաչելու ընդունակութիւնը սահմանափակ է և անկարող է բացատրել կենդանի բնութիւնը, բոյսերի, կենդանիների, և մարդկանց աշխարհ»:

Այստեղ արդէն խօսում է Կանոնի գործնական բանականութիւնը (praktische Vernunft): «Պէտք է ընդունենք, որպէս զի կարողանանք բացատրելու: Զի՞ որ նա նոյն դատողութիւնն է տալիս և կրօնական աստւածաբանական հարցերում: «Պէտք է ընդունենք բացարձակի» (լ’Absolu) կամ Աստուծոյ գոյութիւնը» բարոյական, գործնական պատճառների համար — թէև այդ գոյութիւնը ոչ մի կերպ չի ապացուցում: Կանոնը թոց է տալիս կամքի բացարձակ ազատութիւնը միմիայն նուռմէնի (Numen—այն՝ որ երևոյթ» չէ, այն՝ որ մեր զգայարանքներին անմատչելի է) աշխարհում, իսկ ընական երևոյթների մէջ նա ծայրայեղ գետերմինիստ է, այսինքն ընդունում է, որ բոլոր երևոյթները շղթայւում են իրար հետ օրինական պատճառական կապակցութեամբ: Ex nihilo nihil. (Ոչնչից ոչինչ կը լինի). ամեն բան բնութեան մէջ ունի իր պատճառը: Այդ գետերմինիզմի, պատճառական կապակցութեան վրայ քանից շեշտում է Կանոնը իւր փիլիսոփայութեան մէջ: Առանց դետերմինիզմի—ասում է նա—գիտութիւնը անհնարին է, աներևակայցելին:

Ասդա ուրեմն զուտ գիտական, թէօրիտական տեսակէտից Կանոնը պէտք է ընդունէր, որ բոլոր երևոյթները առանց բացառութեան, կարելի է բացատրել միմիայն մի եղանակով—մեքենայական պատճառներով: Այլպէս նա վարւեց բովանդակ տիեզերքի հետ, այդպէս վարւեց անօրգանական բնութեան հետ, բայց կենդանական ու բուսական աշխարհի գիմաց՝ նա թողեց զետերմինիզմը կամ գիտութիւնը, (քանի որ մարդկային խելքը անզօր է բացարելու) և ապաստան դուաւ causes finales-ի կամ մետաֆիզիկացի աշխարհում:

Կանոնի մօտ—որ աւելի կարևոր ու հետաքրքրական է—մենք գտնում ենք «Ժագման թէօրիայի» հիմնական միոքը, այն՝ որ օրգանական բոլոր տեսակները անօրգանական նիւթից են ծնունդ առել և մեքենայական (?) պատճառներով, ճիշտ այնպէս՝ ինչպէս

կրիստովն է գոյանում, և որ այդ տարբեր օրդանիզմները զարգացել են աստիճանաբար։ Այսուեղ պարունակում է մի խոշոր հակասութիւն կանոնի տէկէոլոգիական կամ դուալիստական հասկացողութեան հետ, որը մենք տեսանք նրա մօտ օրդանական աշխարհի վերաբերութեամբ։ բայց մեզ կարեոր է հիմնական միտքը։

Թւենք էլի մի քանի անձնաւորութիւններ Գերմանիայում, որոնք աշխատել են ի նպաստ օրդանական էւոլիւցիայի և մասնաւորապէս ծագման թէօրիայի։

1834 թւին գերմանացի բնագէտ Կարլ Բեր (Bär) կարդաց մի զասախօսութիւն։ «Բնութեան ընդհանուր օրէնքը էւոլիւցիայի մէջ», ուր նա բացատրեց օրդանիզմների տեսակների ծագումը և զարգացումը միևնոյն, ընդհանուր տոհմածառերից։

1852 թ-ին Վիեննացի բուսաբան Փ. Ռևէզը հրատարակեց մի գիրք. «Փորձ բուսական աշխարհի պատմութեան», ուր նա բացատրեց բոյսերի բոլոր տեսակների ծագումը և զարգացումը մի կամ մի քանի տոհմածառերից։

1853 թ-ին լոյս տեսաւ Լայսցիգում Վիկտոր Կարոսի աշխատութիւնը Վենդանական մորֆոլոգիայի սիստեմ, ուր ասւածէր, «Հողային հնագարեան շերտերում թաղւած մարմինները անշուշտ նախահայրերն են աչժմ գոյութիւն ունեցող անհաշիւ օրդանական տեսակների, որոնք առաջացել են նրանցից աստիճանաբար, յարմարւելով կենսական պայմաններին, աստիճանաբար կերպարանափոխւելով»։

1855 թ-ին յայտնի մատերիալիստ-ֆիզիոլոգ Լուդվիգ Բիւխնէր իւր Շնիւթ և ոյժա նշանաւոր գրւածքի մէջ զարգացրեց բուրովին ինքնւորոյն կերպով ծագման թէօրիայի հիմնենքները՝ հիմնըւած պալէօնոպոդիայի (Paläontologie, հնախօսութիւն) <sup>1)</sup> և համեմատական կազմաբանութեան (Anatomie) տւած արդիւնքների վրայ։

Մենք դիտմամբ յիշատակեցինք այսուղ այս մի շարք հեղինակներին, որպէս զի ցոյց տանք ընթերցողին թէ որքան ահագին

<sup>1)</sup> Բնագիտութեան այն ճիւղը, որ զբաղւում է պեղումներից առաջած օրդանական մնացորդների ուսումնասիրութեամբ։

Նախապատրաստական աշխատանքը էր կատարւած արդէն Դարւինից առաջ Դարւինին մնում էր սիստեմի բերել գիտելիքների այդ հրակայական պաշարը, իւրն ևս աւելացնելով. բայց որ գլխաւորն է, նրան մնում էր հիմնաւորել իրանից առաջ հրատարակւած Փակտերը, այսինքն պատճառական հիմունք տալ այդ Փակտերին. դրամէջ էր Դարւինի հանճարը և գիտութեանը մատուցած նրա անհուն ծառացութիւնը: Այդ է ընդհանրապէս բոլոր մեծ մարդկանց բաժինը: Մեծ մարդիկ սովորաբար նոր ճշմարտութիւններ չեն աւետում աշխարհին, այլ նրանք ընդհանրապէս հիմնաւորում են իրենց նախորդների ասածները: Մենք այդ աւելի պարզ կը տեսնենք հասարակական գիտութիւնների մէջ:

Բայց դեռ Դարւինիզմի ամենահոչակաւոր կարապետը մնում է. մենք դեռ նրա մասին չենք խօսել:

Դա ֆրանսիացի ժան Լամարկն է, ծագման թէօրիայի (Théorie de la descendance) հիմնադիրը:

«Բոլոր օրգանական տեսակները (espèce) զարգացել են մէկը միւսի ետևից, աստիճանաբար: Կենսական պայմանների տարբեր լինելը, ինչպէս նաև օրգաններ գործածելը և չգործածելը ազդում են կենդանիների վրայ և անընդհատ փոփոխութիւններ են առաջացնում նրանց մարմնի մէջ: Սկզբում ծնունդ են առել ամենաստորին, պարզ կենդանիները և բոյսերը, ապա նրանցից առաջ են եկել աւելի բարդ օրգանիզմները: Երկիրը նոյնպէս զարգացել է աստիճանաբար, առանց անակնկալ յեղաշրջումների: Կենսական բոլոր երևոյթները առաջանում են ֆիզիկական-քիմիական պատճառներից, որոնք յատուկ են օրգանական նիւթին: Սմենաստորին կենդանիները ծնունդ են առել ինքնաբերաբար, և այսօր ևս ծնունդ են առնում նոյն եղանակով (Génération spontanée): Թէ օրգանական և թէ անօրգանական աշխարհները ենթարկւած են միւսնոյն բնական օրէնքներին» և այլն, և այլն: Այս է Լամարկի փիլիսոփայական դաւանանքը: Մենք տեսնում ենք, որ նա բիոլոգիայի մէջ մոնիստական աշխարհայեցողութեան պաշտպան է: Այդ բոլորը կարելի է տեսնել նրա հիմնական աշխատութեան մէջ «Philosophie Zoologique», (կենդանաբանական փիլիսոփայութիւն), որի առաջին հատորը լոյս տեսաւ 1815 թ-ին:

Միջավացրի փոփոխութեան համեմատ փոփոխում են և օրգանիզմները—դա յարմարացման (adaptation) գաղափարն է, որ մենք տեսանք արդէն Գէօթէի մօտ Բայց Լամարկը ահագին նշանակութիւն է տալիս օրգանների մարմնի այս կամ այն անդամի գործածելուն, կամ չգործածելուն, այսինքն սովորութեան:

Սակայն միջավացրի պայմաններին յարմարւիլը միակ գործող ոյժը չէ, ասում է Լամարկ: Օրգանիզմները փոփոխում են, բայց միշտ պահպանում են իրենց մէջ արիւնի ազգակցութիւն: Դա ժառանգականութեան ոյժն է:

Այդ բոլորը աւելի լաւ էր ըմբռնում Լամարկը և աւելի հիմնական կերպով էր բացատրում քան իւր նախորդները: Նա աւելի լաւ էր հասկացել երկու հիմնական ոյժերի՝ յարմարացման և ժառանգականութեան փոխադարձ ազգեցութիւնը. և եթէ նա մի քիչ էլ աւելի հեռու գնար ու հաստատէր «Բնական ընտրողութիւնը գոյութեան կուրի մէջ», — դա կը լինէր արդէն լիակատար Դարւինիզմ: Այդպէս չեղաւ, սակայն, և ծագման թէօրիային կամ «Լամարկիզմին» թէօրիական հիմնաւորութիւն տալու համար հարկաւոր եղաւ սպասել էլի կէս դար:

Լամարկը փորձեց ապացուցանել, որ մարդկացին ցեղը զարգացել է կապիկանման կաթնասուններից, — և այդ նրան մի ուրիշ մեծ արժանաւորութիւնն էր: Բայց այդ զարգացման զաղտնիքը բացատրելու համար նա դարձեալ գլխաւորապէս յենւում էր «սովորութեան» վրայ: Այդպէս, նա յայտնում էր, որ նախամարդը ծնունդ է առել մարդանման կապիկից չնորհիւ այն հանգամանքի, որ կապիկը ցետ է սովորել (déshabiter) չորեքթաթ քայլել և փոքր առ փոքր ընտելացել է կանգուն, ուղիղ քայլւածքին:

Սա իհարկէ բացատրութիւն չէ. միայն սովորութիւնը գեռ չնչին պատճառ է: Այնուամենայնիւ նշանաւոր էր «կապկացին ծագման միաքը», որ 50 տարուց յետոյ պիտի հիմնաւորւէր:

\*  
\* \*

Ֆրանսիական բնագէտ—փիլիսոփաներից յայտնի էր մեր դարու սկզբներում և Ժոֆրուա Սենտ-իլէր, — կիւրիէի նշանաւոր հակառակորդը: Նա ընդունում էր Լամարկի ծագման թէօրիան, մի-

այն աւելի մեծ արժեք էր տալիս ոչ թէ սովորութեան, այլ շըր-ջապատող միջավացրի ազդեցութեան. մանաւանդ մթնոլորտի պայմաններին: Նա յաշտնում է, օրինակ, որ միմայն ածխաթթւի քշանալը մթնոլորտում պատճառ է եղել, որ թռչունները ծագել են մողեսանման սողուններից. աճել է թթւածինը օդի մէջ, աւելի արագ ու կենդանի է կացուցել շնչառութեան պրոցէսը, աւելացել է ուրեմն արեան ջերմութիւնը, բարձրացել է ջղերի և մկանունքների էներգիան,—և ահա սողունների խորխը փոխւել է յանկարծ թռչկան թերերի. ևայն ևայն: Միտքը սխալ չէ. մենք այդ կը տեսնենք թերես աւելի ուշ:

Սակայն սոսկ այդ մի հանգամանքը ինքն ըստ ինքեան անբաւար է լուծելու համար տեսակների ծագումը և փոփոխականութիւնը,—նոյնքան անկարող, որքան և Լամարկի առաջարկած սովորութիւնը:

Ժոֆրուան աւելի համբաւ ունէր իբրև Կիւլիէլի ախոյեան: Նախ քան Դարւինին անցնելը, տեսնենք թէ ինչ էր վարդապետում հոչակաւոր Կիւլիէն:

Էւոլյուցիական գաղափարի պատմութեան մէջ նա խաղաց մեծ դեր, թէպէտ բացասական դեր:

Բնագիտութեան մէջ Կիւլիէն խոշոր մեծութիւն է: Պալէօնտոլոգիան և համեմատական կազմաբանութիւնը (Anatomie comparée) նրան են սպարտական իրենց գոյութեան և գիտական հիմնաւորութեան համար: Պալէօնտոլոգիայի մէջ նա հաստատեց այն նշանաւոր օրէնքը, որի համաձայն՝ բոլոր մեռած և արդէն քարացած կենդանիների տեսակները, որոնց մնացորդները հանգստանում են երկրաշին կեղեւի միմեանց վրայ թեքւած շերտերի մէջ, տարբերում են այսօր գոյութիւն ունեցող կենդանիներից, և այդ տարբերութիւնը նոյնքան մեծ է, որքան աւելի խոր են ընկած հողացին շերտերը, այսինքն որքան աւելի հեռու են այն նախնական ժամանակները, երբ այդ կենդանիների տեսակները ապրելիս են եղել:

Այդ ձիշտ գրութիւնից Կիւլիէն եկաւ մի սխալ ու անհեթեթեղբակացութեան: Նա յայտարարեց, որ «Եթէ առեն մի հողային շերտում քարացած կենդանու տեսակը տարբերում է այն տեսակներից, որոնք մնացել են այդ շերտից վերև ու ներքեւ ընկած շեր-

տերի մէջ, եթէ մենք ոչ մի ժամանակ չենք տեսնում, որ միևնոյն անասնական տեսակը առաջ գայ երկու իրար յաջորդող շերտերի մէջ,—ապա ուրեմն եղել են ստեղծագործութեան տարբեր շրջաններ (սկերիօգներ), որոնք յաջորդել են միմեանց և որոնցից իւրաքանչիւրը ունեցել է իր առանձին տեսակ անասնական և բուսական աշխարհը, (Փառնա և Վլորա):

Ստեղծագործութեան այդ տարբեր շրջանները առաջացել են Կիւլիէի կարծիքով շնորհիւ տեղացող կատաստրոֆների ու յեղաշըրջութների (cataclysmic): Ամեն անգամ, երբ կատաստրոֆը վրայ է հասել, կործանել է գոյութիւն ունեցող բոլոր կենդանիներին ու բոյսերը, որից յետոյ սկսւել է մի նոր ստեղծագործութեան շրջան, բոլորովին նոր, տարբեր օրգանական տեսակներով:

Նորից ծել ու ծազկել է կեանքը, —նոր կեանք՝ տարբեր անասնական ու բուսական աշխարհներով—բայց այդ շրջանն ևս յաւիտենական չէ եղել, նորից վրայ է հասել ճակատագրական կատաստրոփն ամեն բան տակն ու վրայ է արել: Եւ այդպէս շարունակ:

Այս է Կիւլիէի նշանաւոր կատաստրոփային թէօրիանս: Իսկ պատճառովնէրը:

Նա զժւարանում է պատասխան տալի Յամենայն դէպս—ասում է նա—մեր օրերում՝ անընդհատ գործող և երկրի մակերևոյթը կերպարանափոխող ոյժերը չեն կարող առաջացնել այնպիսի ահաւելի կատաստրոփներ: Այդ ոյժերն են՝ անձրեւը, որ անդադար քերում է բարձրութիւնների կատարները և հողային զանգւածը քշում դէպի ստորոտները. ապա՝ հոսող ջրերը, գետերը, որոնք այդ զանգւածը անընդհատ առաջ են մղում ու հաւաքում ծովերի, լճերի մէջ. ապա՝ հրաբուղինները, որոնք կատաղի ժայռներով լեռներ են կազմում երկրագնուի երեսին, —այդ բոլոր բնական ոյժերը չեն կարող պատճառ լինել Կիւլիէի կատաստրոփներին, —նրանք չափազանց դանդաղ են գործում:

Ապա ուրեմն պատճառները ուրիշ տեղ են թագնւում: Կիւլիէն օգնութեան է կանչում գերբնական ոյժերը: Եւ յիրաւի, միայն այդ տեսակ ոյժերով, միայն հրաշքով կարելի է բացատրել այդ առասպելական, և միանդամայն հակաբնական կործանումները և վերաստեղծումները: Իսկ դա գիտական բացատրութիւն չեղաւ, որովհե-

տե, ուր հրաշքը սկիզբ է առնում, այնուղղ դադարում է գիտութիւնը:

1830 թ-ին լոյս տեսաւ Լայելի նշանաւոր երկրաբանական աշխատութիւնը, որ դուրս բերելով երկրային բոլոր կերպարանափոխութիւնները իբրև արդիւնք բնական ոյժերի՝ անձրևի, ծովերի, գետերի, երկրաշարժի և այլ բնական ֆակտորների դարաւոր գործունէութեան՝ ահազին հարւած տւեց Կիււիէի և անակնկալ յեղաշջումներից վարդապետութեան:

Բայց և այնպէս այդ վարդապետութիւնը կանգուն մնաց, չնայելով, որ ունէր այնպիսի գիտնական հակառակորդներ, ինչպէս Լամարկ, Լայելլ, Ֆոֆրուա ևայլն: Մեծ էր այն հեղինակութիւնը, որ Կիււիէն վաստակել էր Փրանսիական բնագիտութեան աշխարհում—և այդ էր միակ պատճառը, որ նրա հակառակորդ-էւոլիւցիօնիսանները միշտ Փիասկօ էին կրում: 1830 թւականին Սէնտ-Իլէրի հետ ունեցած հրապարակական վէճի մէջ ևս Կիււիէն էր յաղթանակողը, մասսան և աննշան գիտնականները նրա կողմն էին և նրա ասածները պատգամի տեղ էին ընդունում:

Մահացու հարւած ստացաւ ևկառաստրոֆի թէօրիան» 60-ական թւականներին, երբ լոյս էր տեսել արդէն Դարւինի հեղինակաւոր աշխատութիւնը, և երբ, բացի այդ, զանազան տեղեր գիտական, պալէօնտոլոգիական հետազոտութիւնների միջոցին երևան էր եկել «աղեղւած մարդը» (l'homme fossile), որի գրցութիւնը կտրակի հերքում էր Կիււիէն: Այդ մասին աւելի ուշ՝

Մենք այժմ հասանք Գարվինին և նրա հետ էւոլիւցիական թէօրիայի ամենակարևոր ու ամենաէական կէտին:

(Շարունակելի)

## ԲԱՆԱՍԵԼԾ-ՔԱՂԱՔԱՑԻ

(Դ. Պատկանեանի գրական գործունէութեան ընդհանուր  
բնագիծը)

### Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ

#### I

Տիսուր ու վշտացուցիչ պատկեր էր ներկայացնում հայ հասարակութիւնը։ Ոչ մի նշնչ գաղափարական կեանքի, ոչ մի նշան առաջդիմութեան։ Նա գտնւում էր մոռաւոր ու բարոյական ճգնաժամի մէջ։

Մինչդեռ ազգերը կատարելագործւում էին ու հասարակակեցութեան բարիքները վայելում, ոգու ու մոքի պահանջներով զբաղւում, հայը նիրհում էր քաղցր անշարժութեան մէջ։ Խաւարի և տգիտութեան, դասակարգերի քմահաճոյքի ու բռնակալութեան կատարեալ թագաւորութիւն էր... Կեանքի թշւառ պատմական պայմանները, նւաճամոլ ազգերի բռնութիւններն ու ճնշումները չեղաթիւրել էին հայի կերպարանքը։ Միշտ ստիպւած լինելով յարմարւել հանգամանքներին՝ նա իւրացրել էր և համապատասխան յառկութիւններ, և որքան մեծ էին ու զգալի տապաւորութիւնները, այնքան խորն էին թափանցում ու արմատանում նրա բնութեան մէջ այդ յատիկութիւնները, միշտ կրկնւելով, միշտ սերնդէ սերունդ անցնելով։ Անընդհատ ինքնապաշտպանութիւնը կաշկանդել էր նրա հոգին ու միտքը, սահմանափակել էր նրա բարոյական աշխարհը։ Գոյութեան անդադրուն կոիւը, մշտական մոածմունքը անձի ու գոյքի մասին զարգացրել էին նրա մէջ անհատականութիւնը, բայց

համարեա ոչնչացրել հասարակակեցութեան ոգին, բարձր մտաւոր շահերը:

Զկար կազմակերպւած հասարակութիւն, չկար հասարակական կարծիք: Ամեն դասակարգ իւր համար էր ապրում, ամեն մէկը— իւր մէջ:

Եկեղեցին մի մարմին էր, որ անձնաւորում էր իւր մէջ աղ- գային գաղափարը, որ ամփոփում էր հասարակութեան բոլոր յո- սերն ու իդէալները:

Պակաս էին որոշ բարոյական հակումներ, որոշ տարրական բնազդումներ: Նեղ էր մոքի ու բարոյական զգացմունքի շրջանը:

Պարսկական ճնշումը կորացրել էր հացին, մինչև իսկ ստրկացրել. բայց որտեղ նա դիպւածով ոյժ էր հանդիսանում, տեսէք, թէ ինչու երէկւայ գառնուկը, սորուկը՝ աշխօր անյագ գացլ էր, հրա- մացող պարոն:

Կրօնաւորը և առևտրականը, վաշխառուն և փողբադչին տի- րել էին ասպարիզին: Ժամանակի ու դէպքի հիւթերը քամող ան- հատները, անձնական բարօրութեան տենչի զաւակները միամիտ- ների դառն աշխատանքից առեղծել էին իրանց համար մի անկախ դիրք՝ հրամայողական և աղայական դիրք:

Եկեղեցու պաշտօնեանները, մեր հոգու այդ պաշտօնական խնա- մակալները, կարծիս, թաղած լինէին իրանց լաւագոյն տրադիցիա- ները հնութեան փլատակների մէջ ու խնամում՝ իրանց եսը, անձ- նական հաճոյքը:

Խսկական ժողովուրդը թափառում էր խաւարի մէջ, առանց խնամքի ու հոգացողութեան, իրաւագուրկ, ծանրաբեռնաւած օրւայ պարէնի հոգսերով, չարչիներից կաշկանդւած: Դարոցը, լուսաւորու- թիւնը վանական կամ տիրացուական գիտնականութեան հովանու տակ էր: Մեռեալ էր նաև երդւեալ գրադէտների լեզուն, որ չէր կարող լինել կինդանի մաքերի թարգման:

Ահա սկսում է հնչել ահով և երկիւզով աշխարհիկ բարբառը. բայց աս էլ դեռ անկերպարան էր և թլւատ:

Դարման չկար հասարակութեան բիւրաւոր ցաւերին: Երիտասար- դութիւնը նոր էր ճաշակել արևմուտքի պատուղները, բայց նա առաջին սերունդն է և, լինելով՝ պատանեկութեան հասակում՝ գեռ անպատ-

բաստ է գիտակցական մաքառման համար; Զարթել են նրա մէջ ինչ որ նոր, բայց անորոշ զգացմունքներ. մի ինչոր խորհրդաւոր ոյժ երերում է նրա տրամադրութիւնը. նաև տարութերում է նոր մտածմունքների մէջ: Նրա կեանքը ստանում է աւելի ապրուն բնաւորութիւն: Անհատները սկսել էին աւելի արտայայտուել և իրանց գնահատել: Հին աշխարհայեացքը այլ ևս բաւարարութիւն չէր տալիս:

Սակայն նոր սերունդը պարզ չէր հասկանում իւր քաղաքացիական վշտի բոլոր ծանրութիւնը: Նրա ցանկութիւնները թագ-նւել էին սրտի խորքում, նրա լեզուն կարկամում էր:

Զգացւում էր թարմ օդի, արթնացնող լոյսի կարօտը. զգացւում էր մտածողութեան նոր եղանակի պահանջը, բայց չկար մի հեղինակաւոր ձայն, վստահ և քաջարի ձայն, որ գոչէր բռնացող չարիքների դէմ: քաջութիւն ներշնչէր ներքին շփոթից տարութերողներին. չկար մի համարձակ առաջնորդ, որ քաղաքացիական փողը հնչէր:

Երկնում էր ազգային ոգին: Տատամում էր հասարակական միտքը:

Արևմուտքի նորանոր գաղափարները տարածւում են ամեն տեղ և հայերին, յոյս և վստահութիւն են ազգում, և որքան սաստիկ էր իրերի այդ անխուսափելի հոսանքը, այնքան էլ անպէտք ու մաշւած էին երեսում մեր տնասուն սկզբունքները, մեր արևելեան աշխարհայեացքը:

Հարկաւոր էր զինւել ժանո բախտի սուր սլաքներին: Հայն սկսում է հասկանալ քաղաքակիրթ գոյութեան հրապոյրները: Նա զգում է իւր մէջ կենսունակութեան նշաններ:

Սկսում է պարզել մտաւոր հորիզոնը. քաջալերւում է ոգին. խղճահարւում է նաև չարախնդաց վիճակը: Լարւում են ազգային ոյժերը, արթնանում է հայի միաքը, և ահա սիրումաշուկ վշտերի միջից դուրս է դալիս մի օրհնած պատանի, որ առնում է փոշիոտ հայքնարը, թափ է տալիս նրան, խփում է լարերին և հնչում է իւր կորովի մեղեղին: Նա երգում է «Զարմայր նահապետի քաջարի գործերը», նրա փեսայութիւնը մահւան գրկում, նդա լերան հովիտների մէջ, նրա «հարմնարանը», որ «դիտակներով է» զարգարած, նրա «առագաստը», որ «երկնից կապուտակ կամարն» է, նրա «ան-

կողինը, որ սառն ու խաւար գէճ հողին է, նրա մնադարանը, որ ամպոց ահեղ գոռալնա է։ «Նշանւեցաւ», նա սուր սլաքօք նետերու, և լսակւեցաւ պղղովատիկ սուսերով... (1850 թ.):

Պատանի երգիչը մի սուր հայեացք է ձգում մեր կեանքի վրայ և տեսնում է ամենից առաջ հայ շինականին, տեսնում է ու հրճում, ուժգին խփում իւր քնարի լարերին և երգում նրա մաքուր, անարաս կենցաղը, նրա ժիր և տոկուն բնաւորութիւնը. նա և երգում է երգ ոլորուն ու անուշ, նրա քնարի ձայնն է մեղմիկ ու քնքուշ:

Կրկին մի հայեացք, և նա տեսնում է հայ աղայի հոյակապ տունը. բաղխում է դուռը, բայց սա չէ բացւում.

«Ես է հիմիկւայ աղաթը, կուզես ջիգրից տուաքի,

թէ քասիթիս, ջուրը ննդի, թէ խօջախս. տուն մտի» (1855): Պատանին խորասուզւում է մտածմունքի մէջ. նա տեսնում է, որ իւր հայրենիքի դարդը մեծ է ու պէս-պէս։ Վիշտը պաշարում է նրան. տիսուր ու տրտում ուղղում է իւր ճանապարհը դէպի իւր մայր-երկրի ծոցը, որտեղ հապար հոսում է հայրենիքի մայր-գետը, արգաւանդ հողերի ու արտերի ոռոգող՝ գորովագութ Արաքսը. քայլամոլոր գնում է նրա ափերով և ալիքների մէջ պտրում հին գարերի լիշտակը։ Բայց Արաքսի ջուրը պղաորւել է, բայց նա լալիս է և նրա սէգ աշերից արցունքներ են ցայտում։ Արաքսը ողբում է իւր ճարաւաւ, նօթի, անտէրունչ զաւակներին. նա փրփրում է վիզախի, անմիտ պատանու սփոփիչ խօսքերից. վրդովւում է նրա դարեսոր նիրհը, նորոգւում են նրա բիւրաւոր ցաւերը. նա ուոցնում է մէջքը և ահազին յորձանք տալով՝ «օղակ-օղակ» օձի պէս, առաջ է սողում մոլեգին» (1856 թ.):

Հնչեց խիզախ պատանու ազատ խօսքը, որ վստահացաւ վըրդովիել իւր հայրենիքի դարեսոր նիրհը. անուշիկ երգեց վանդակից փախած ազատասէր հայ սոխակը. ձայն—աղաղակ բարձրացրեց նախնեաց ոգով ներշնչւած արիասիրո հայ պատանին, և մեր նորածիլ գրականութեան մէջ փայլեց Գամառ-Քաթիպան։

## II

Երբ մի աղդ ծնում է տաղանդաւոր բանաստեղծ, նշանակում

է, որ այդ ազգի մէջ, գոնեաց նրա լաւագոյն հասարակութեան մէջ, կայ մի կենսունակ ոչժ, մի որոշ տրամադրութիւն; որ կարօտ է քաղցր և գաղափարական մեղեղու հնչիւններին, կան կատարել ազործութեան ու յառաջադիմութեան սերմեր:

Բանաստեղծը որոշ պատմական ժամանակաշրջանի գաւակ է, որոշ մաւարոր և բարոյական տրամադրութեան ծնունդ է. նա արգասիք է ստեղծագործող ոյժերի և արթնացող ազգային մոքի: Երբ հասարակական կեանքի մէջ նկատում են ինքնուրոյնութեան, գիտակցականութեան նշոյներ, երբ հասարակական միոքը սկսում է բնազդմամբ որոնել կեանքի նոր նեցուկներ, երբ, վերջապէս, ազգը սթափւում է, և պահանջ է զգում լայնացնել իւր կեանքի շրջանակները, հանդէս է գալիս մի մեծ մարդ, որ անձնաւորում է իւր մէջ ամբողջ ազգը, բարձրացնում է իւր մարդարէական ձայնը, ցրւում է հասարակական ասպարիզից մէդ ու մառախուզը, որոշում է անորոշ մոքերն ու տրամադրութիւնը և աւետում է իւր հանճարի բովից անցած կենսունակ իդէալ, աւետում է նոր կեանք, նոր ձգառումներ:

Կեանքը երերուն է, ինչպէս մրրկածուփ ովկիանոսը, անհուն է և անսահման, ինչպէս երկնալին տարածութիւնը:

Մարդիկ, կենսական ովկիանոսի այդ աննշան լողորդները, աիեղերքի այդ թափառական կրակիկները, ոլոր-մոլոր պատելով՝ սպասում են ահ ու դողի մէջ իրանց վիճակին: Բանաստեղծը այն համարձակ նաւավարն է, որ իւր նուրբ հոգու և սուր մոքի տեսողութեամբ վստահանում է տանել մեզ դէպի տենչալի նաւահանգիստը: Նա շունչ և կենդանութիւն է տալիս մարդկանց՝ այդ շուտշուտ հանգչող կրակիկներին. նա է, որ բնութիւնից օժտւած և երկնքից վարձատրւած, վառ է պահում մեր մէջ աստւածային կայծը. նրա անմիջական նուրբ զգացմունքը մեր շփոթարկու կենսական նաւի խարիսխն է, իսկ հեռատես մարդարէական միոքը մեզ կարապետող բարի ոգին է:

Գամառ-Քաթիսլայի գրականական վաստակները մի նշանաւոր և բացառիկ երեսյթ է մեր գրականութեան մէջ, որ արժան է ամենամանրազնին ուսումնասիրութեան. սակայն նրա յիշատակը չափազանց թարմ է անաշառ և ուղղամիտ քննադատութեան հա-

մար: Նրա ոգեշունչ քնարի մեղեդին դեռ շատ է կենդանի ձայնում, ոմանց զմալլեցնելով, ոմանց սրտից ւարիւն քամելով: Կիրքը և խոյսուած սրտերը դեռ չեն հանգստացել. նրա մորակի հետքերը դեռ չեն անհետացել:

Բայց և այնպէս՝ նրա գրականական գործունէութեան, քաղաքացիական դաւանակի, նրա բանաստեղծութեան հասարակական եղանակների ընդհանուր բնագիծը (характеристика) և' կարելի է և' անհրաժեշտ է անել:

Գրականական քննադատութիւնը որոշում է հեղինակի տաղանդի յատկութիւնները. հետևում է նրա ստեղծադործական ոյժերի գարգացմանը, բնորոշում է նրա մտաւոր ու բարոյական կերպարանքը, նրա գեղարւեստական զգացողութեան նրբութիւնները: Քննադատութիւնը պիտի ըմբռնի և արտազայտի այն բոլոր իդէալները, որ ներկայումս ստեղծւում են լաւագոյն հասարակութեան գիտակցութեան մէջ, և եթէ քննելի հեղինակը լիովին չէ իւրացրել իւր ժամանակի ընտիր հասարակութեան իդէալները ու տալիս է մեզ անկատար պատկերներ, գրականական քննադատութիւնը պիտի լրացնի պակասը: Մենք նպատակ չունենք Գ. Փ.-ցի բանաստեղծական գործունէութիւնը ենթարկել լիաման քննադատութեան —այդ կը լինէր գուցէ և ապարդիւն ներկայ հանգամանքներում,—մենք կամենում ենք բնորոշել նրա գրականական և հասարակական կերպարանքը, նրա անզուգական քնարի նշանակութիւնը մեր գրականութեան և հասարակական ինքնագիտակցութեան համար:

Հասարակութիւնը մի պատկառելի մարմին է, որի մտածողութեան ու զգացողութեան եղանակները բարդ են և բազմատեսակի: Հասկանալ նրա հոգեբանութեան ելևէջները, նրա մէջ գործող ասրբերի զերերն ու նշանակութիւնը, ըմբռնել նրա ընտիր, գիտակցօրէն ապրող մասի յոյսերն ու փափագները և պաշտպան հանդիսանալ սոցա, ահա այս է գեղարւեստագէտի էական գործը:

Ի հարկէ, այս պահանջը չի սահմանափակում հեղինակի աղատութիւնը, նրա երևակայութեան թոփչքը: Բանաստեղծը որպատական չէ իւրաքանչիւր քայլափոխում հաւատարիմ լինել իրականութեանը. նա չի կարող երգել որոշ սահմանների մէջ, նա թեւաւոր է և սլանում է հեռու աշխարհներ, որտեղից աւետում է

մեղ աւելի կառարեալ կենսապայմաններ, նա չի կաշկանդւած իրականութեան պրոզացով, այլ ազատ հնչում է թովիչ մեղեղին իւրան փափազների մասին, որոնք գեռ չեն թափանցել հասարակական գիտակցութեան մէջ, և նոցա իրականացումը, գուցէ, հեռու ապագայումն է:

Հռչակաւոր բելինսկին ասում է. «ոչ ոք չի կարող սախակել բանաստեղծին երգել անպատճառ առաքինութեան տաղեր կամ՝ երգիծաբաննել մոլութիւնները, սակայն ամեն մի խելացի մարդ իրաւունք ունի պահանջելու, որ բանաստեղծութիւնը լրատասխան տայ ժամանակակից հարցերին կամ գոնեայ ներշնչւած լինի իւր ժամանակի ծանր, անլուծանելի հարցերի վշտով։ Պարզ է ուրեմն, որ քննադատութիւնը չպէտք է առաջնորդւի միայն էսթետիկական և գրականական սկզբունքներով, այլ և հասարակական։ Եթէ բանաստեղծութիւնը պիտի պատասխան տայ ժամանակի հարցերին և ցոլացնի իւր մէջ նրա ոգին, չէ որ նա հրաւէր է կարգում դէպի հասարակութիւնը և սրա ինքնագիտակցութիւնը, չէ որ նա պիտի զարգացնի բացի գեղեցկութեան զգացմունքից, գեղարւեստական ճաշակից, նաև հասարակակեցութեան ոգի, առանց որի չկայ առաջադիմութիւն, ճշմարիտ մտաւոր կեանք։

Իրաւ, զուտ արւեստը չի ճանաչում տենդենցիա, նրա առաջնորդող սկզբունքն է՝ արւեստը արւեստի համար։ Նրա հոգին, էութիւնը ֆորմայի մէջ է. նա հետեւում է բնութեանը, կարծես, մրցում է սրա հետ ստեղծագործելու ընդունակութեամբ. Նրա ոյժը, նպատակը և յաղթանակը երևոյթի կամ առարկայի ճշդրիտ ըմբռնողութիւնն է՝ ստիլել առարկան կեանքով շնչել։

Ամեն ժամանակ ունեցել է և ունի իւր պահանջներն ու ճաշակը։ Մարդկացին միտքը այնքան կենսունակ է և առաջադիմող, որ երեկուայ տիրագլուխ օրէնքը այսօր արդէն գոհացում չի տալիս նրան. նա անդադար որոնում է նոր յեցուկներ։ Քանի կեանքը բարդում է, այնքան էլ լայն ասպարեզ է բացւում քննայոյզ մոքի համար։ Կար ժամանակ, երբ արւեստը արւեստի համար սկզբունքը գերիշտող օրէնք էր, երբ բանաստեղծը իւր ի վերուստ տւած քանքարը ծառայեցնում էր ֆորմայի և գեղեցկութեան զաղափարին, երբ նա այսպէս ասած՝ գեղարանի լով էր վերաստեղծում։ Բայց ամեն

բան կեանքի համար է, ապա ուրեմն և բանաստեղծութիւնը, որ պիտի արձագանք տայ կենսական երեսյթներին, գեղարւեստօրէն վերլուծի նրա բարդ խնդիրները, թեաւորի թոյլերին, ազնւացնի սրտերը իւր քննոյշ մեղեղիով, լոյս սփոթ այնտեղ, ուր մուժ է, տաքացնի, ուր ցուրտ է:

Գամառ. Քաթիսպայի գրականական գործունէութիւնը այս հայեացքի ակտականութիւնը կարելի է համարել և կատարեալ և օրինակելի: Նա կինդանագրում է բանաստեղծական նրբազգացութեամբ և մեծ գեղարւեստական ճաշակով կեանքի այն պատկերները, որոնք այսպէս թէ այնպէս խիստ են տպաւորւում նրա մտքի մէջ կամ գրաւում են նրա խորին ուշագրութիւնը: Նրան անծանօթ է զուա գեղարւեստագրիտ այն զւարճութիւնը, որ սա ստանում է իրողութեան ճշգրիտ վերաստեղծումից՝ միայն իրականութեանը հաւատարիմ լինելու համար: Նրա մուսան և սիրել զիաէ և ատել, և համակրել և ծաղրել, նրա համար նշանաւոր է առարկայի կամ երեսյթի ներքին բովանդակութիւնը, սրան աիրող ոգին:

Սիրել գիտես, գիտցիր—գիտցիր դու ատել  
Ինչ որ հոգիդ վկայում է ատելի:  
Դու նմանիր աղատախօս թռչնակին,  
Որ երգում է անանձնասէր ցյսերով:

Նա նայում է բանաստեղծութեան վրայ, ինչպէս մի միջոցի՝ իւր գիտակցօրէն որոշած նպատակի համար: Նա ունի որոշ հոգեբուղիս գաղափարներ, ունի իւր երեակացութեան մէջ ստեղծած մի աշխարհ, որ յափշտակում է և ոգեսորում նրան: Նա նախագծել է իւր գործունէութեան համար մի ծրագիր, իսկ բանաստեղծութիւնը նրա աչքում մի գեղեցիկ և փայլուն միջոց է, որով կարելի է և պէտք է իրականացնել ազատ մտքի ու վեհ հոգու ձբդտումները<sup>1)</sup>:

Վեր առեք Գ. Ք.-յից նրան զմայլեցնող գաղափարները, ստիպեցէք նրան հրաժարւել իւր փայփայած հայեացքներից, և նրա զօրեղ ձիրքը կը դառնայ մի հասարակ, բարեվաստակ ընդունակութիւն: Յիշեցէք այն ոտանաւորները, որ գրել է բանաստեղծը

<sup>1)</sup> Տես. «Երկու բանաստեղծ»:

ոռւս-տաճկական պատերազմի ժամանակ, և դժւք պարզ կը տեսնէք, թէ ինչպէս է հասկանում՝ նա բանաստեղծութեան կոչումը։ Ողեգմաց բանաստեղծի հոգու բոլոր լարերը, նրա մտքի բոլոր ոյժերը ներշնչած են այն մուծունքով, թէ ինչ վիճակ է սպասում իւր վշտահար հայրենիքին։ Զէ որ ամեն բան կեանքի համար է, ուրեմն և արւեստը, որ պիտի նպաստի մոքերի ու զգացմունքների աղնըւացման, յառաջադիմութեան ու ճաշակի զարդացման։ Գ. Քաթիպան ծառայեցնում է իւր քանքարը այն դաղափարներին, որոնց իրագործումը և յաղթանակը իւր պարծանքն է, իւր պատիւը։

Ռուս-տաճկական պատերազմը, որ մզւում էր յանուն մարդասիրութեան և եղբայրութեան, սլաւոնական քրիստոնեայ ցեղերը բարբարոս տաճիկների ճանկերից ազատելու համար, յուսադրեց մեր բանաստեղծին, խորը շարժեց նրա խօսնակ քնարը, որ անընդհատ երգում էր, մերթ սրտալի բողոքներով, մերթ վշտալի գեղգեղանքով և դաշլայլիկներով։

Կան բանաստեղծաբեսութեան իրերի մէջ, որոնք նկարագրում են կեանքը և բնութեան զեղեցկութիւնները նրբամիտ դիտողականութեամբ, մեծ ճաշակով և վերամբարձ հայեացքով իրերի վրայ, բայց նկարագրում են հանգիստ, առանց վշտի և տարակուսանքի։ Նոքա խորը թափանցում են իրերի մէջ, մի ակնթարթում ըմբռանում են սոցա ներքին ու արտաքին յատկութիւնները, և ապա առնում են իրանց վրձինը ու պէսպէս զոյներով կենդանագրում իրանց դիտածը։ Նոքա երևոյթների սառնասիրու հանդիսատեսներ են։

Բանաստեղծի անդորր վերաբերումը դեպի իրականութիւնը մեզ դուր չի գալիս. մենք պատրաստ ենք դատապարտել այդ տեսակ տաղանդ։ Իրաւուց մենք սրահանջում ենք բանաստեղծից, որ նա գրգոր մեր զդացմունքները, յափշտակի մեզ՝ փափկակիեացներիս և գաղափարական կեանքից խորշողներիս, բայց այս պահանջը չունի ծանրակշիռ։ Հիմունքներ և հետեւանք է մեր անշարժութեան, ինքնուրոյն մուածելու և զգալու չկամութեան։ մենք ուզում ենք ունենալ միշտ զեկավարներ, անգամ զգացմունքների մէջ։ Այսպէս թէ այնպէս՝ մեր բոլոր ուշադրութիւնը և համակրութիւնները դրաւում է այն բանաստեղծը, որ զգայուն է և ներընդունակ, որ վշտանում է և ուրախանում հասարակական վշտով և ուրախու-

թեամբ, որ տալիս է մեզ մեր կակիծների ու փափագների լիակատար պատկերը:

Ամենուրեք է Գամառ. Քաթիսպայի միշտ խօսնակ քնարը: Ամեն ինչ, որ ապրուն է և շարժուն բնութեան և մարդկացին հասարակութեան մէջ՝ հրաշալի նիւթ է նրա համար, նիւթ լիրիկական զմայանքի, նիւթ երգիծաբանութեան և վիպասանական վերաստեղծման:

Որքան էլ գեղարւեստորէն նկարագրւած լինեն բնութեան երեսյթները, վարդն ու շուշանը, կարկաչող առուն և տերեւների պանչելի սօսաւիւնը, գեղեցիկ համեմատութիւններով ու պէսպէս գոյներով, բայց էլի՛ բացի այդ հրաշալիքներից, մենք պահանջում ենք բանաստեղծից, որ նա ցոյց տայ մեզ կատարեալ կեանքի նոր հիմքեր, բացի մեր առաջ կենդանի արարածների ներքին աշխարհը, նոցա հոգու անթափանցիկ խորշերը, որ ցոյց տայ չարն ու բարին, երգի հասարակական վիշտը, հրճւի հասարակական բարիքից և յառաջադիմութիւնից:

Գրականութեան և հասարակութեան համար նշանաւոր է այն, թէ ինչ է երգում բանաստեղծի քնարը:

Գամառ-Քաթիսպան երգում է մեր պղտոր կեանքի դառն իրականութիւնը: Նրա երկերի մէջ պատկերանում է մեր թառամած ոգին, պատկերից ժառանգած մեր պակասութիւնները. զուրս են բերւած ժամանակակից տիպերը ճշտութեամբ և անինայ խստութեամբ: Նա ողբում է մեր փոքրոգութիւնը և երկշոտութիւնը. նւազում է անվեհերութեան և անձնազոհութեան երգեր, ներշընչում է մեզ ձգտումն դէպի ազատ կեանք և ատելութիւն դէպի ճնշումը ու բնակալութիւնը:

Նրա քնարը հնչեց նոր և կենդանի խօսք, հնչեց պարզ և հաստատուն, առանց յուսահատութեան, ճշմարտութեան լիակատար գիտակցութեամբ:

Մինչև Գամառ Քաթիսպայի գրական ասպարէզ գալը չկար ճշմարիտ հայ բանաստեղծութիւն: Նա քաշ ծանօթ լինելով ռուսաց և եւրոպական գրականութիւններին՝ հասկանում էր ոտանաւորի հրաշակերտ երաժշտականութիւնը: Այս բովից անցած նրա բնատուր հանճարն ու ճաշակը տւին մեր բանաստեղծութեանը հիմնաւոր ուղղութիւն և ներդաշնակութիւն: Նա ապացուցեց, որ կարելի է

ոգի ներշնչել անփենդան յանգաւոր հնչիւններին, սրտի ու մոքի պերճախօս թարգման, հանդիսացնել։ Նա տւեց մեր ոսկրոտ լեզւի տեղսահուն և ոլորուն լեզւի փայլուն օրինակներ։ Նա ստեղծեց ռուսահայերիս հայ բանաստեղծութիւնը և բանաստեղծական լեզուն։

«Անսապից, անձայն, խորհուրդ ճակատիդ,  
Պատանի, ուր ես մոքով մոլորւած,  
Ների ու վրձիններ ցիր-ցան առաջիդ,  
Վշեայ կտաւը քու հանդէպ փլուած։

Շնուր տուր աչերդ, նայէ դէս ու դէն,  
Տես, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.  
Զարթիր, սիրելի, այդ անուշ քնէն,  
Գոնէ մի անգամ հանէ քո ոխը։

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,  
Խուլ ես աշխարհի ունայն շշու կին...  
Յանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորհքով,  
Հսկացի սիրտդ թնդաց խիւտ ուժգին։

Ապշեց ամբոխը. վազեց, յառաջեց  
Քո կենդանագիր պատկերի դիմաց,  
Ծնկաչոք զմուռս ու հալուէ խնկեց,  
Գոչեց մեծաձայն. ողա է իմ Ասուածու։

Բայց անի, քո անքուն ժամերու ճիգը  
Քանի մի արծաթ հազիւ գին դրին.  
Ստեղծողդ դարձար քո խեղճ խրճիթը,  
Ակեր շարեցին շուրջ քո պատկերին։

Զէ որ նոր լեզու է հնչում այս ոտանաւորի մէջ, կենդանի և  
գեղարւեսայօրէն կատարեալ լեզու։ Բանաստեղծը իւր կոչման բարձ-  
րութեան վրայ է։ Նա նւազում է կրակոտ քաղաքացու և ստեղծագործող նկարչի երգը ամբոխի մոտաւոր ու բարոյական կուրութեան դէմ։ զգացուն քաղաքացին կրակ է ցայտում, ոխ է պահան-  
ջում, իսկ բնութիւնից արտօնւած բանաստեղծը մեծահոգութեամբ ներում է աշխարհին սրա ունայն շշուկը։ Ասուածընտիր բանա-

ստեղծի վեհութեան այս հրապուրի; տեսարանը վերացնող տպաւութիւնն է գործում: Նրկրի զաւակը բորբոքւում է մարդկանց անիրաւութիւնից, սակայն երկնքի ընտրեալը փայլում է սուրբ շնորհքով, ներշնչում է բարձր խորհուրդներով և թափում անկենդան կտաւի վրայ իւր վեհ մտքի ու ներող սրտի բոլոր վիշտը:

Այստեղ բանաստեղծի քնարի մէջ հնչում է և՛ երաժշտականութիւն, և քաղցր մեղեդի: Ճշմարիտ տաղանդի տրամադրութիւնն է այս. նուրբ ճաշակի, վառ երևակայութեան և ազնիւ զգացմունքների հեղման կենդանի պատկեր:

Գ. Ք.-ան իւր սահուն աշխարհիկ լեզով, իւր պարզ և դիւրը մբռնելի ոճաբանութեամբ նոր գրականական լեզւի ամենափայլուն հիմնագիրն է: Այն ժամանակաշրջանում, երբ գրոց լեզուն և գրաբարասէրները տիրապետում էին գրականութեան և գրագրութեան մէջ, երբ աշխարհիկ լեզուն համարւում էր գոնիկ, երբ սրա ջատագովները հրապարակաւ հռչակւում էին ազգատեաց և տգէտ, Գ. Ք.-ի յանդուգն քնարը 1850 թ.ին համարձակ ձայնում է աշխարհիկ բարբառով ի զարմանս և զայրոյթս հնամենների: Նրա տաղանդաւոր գրիչը և վսեմ միտքը ստեղծեցին այսպիսի լեզու, որով կարելի է արտայատել և վերացական գաղափարներ և եւրոպական քաղաքակարթութեան նորանոր հասկացողութիւններ, լեզու, որ հիացնում է իւր հարստութեամբ, հարազատութեամբ և անարւեստութեամբ: Նրա մէջ դուք կը գտնէք և գաւառական դարձւածներ և գրոց լեզւի ձեւեր, բայց բանաստեղծի նուրբ ճաշակը ներդաշնակօրէն շաղկապում է ամեն ինչ և, դասւորելով գաւառականը գրաբարի, ժողովրդականը գրականականի հետ, ստեղծում է մի ինքնուրոյն, պարզ և գեղարւեստական լեզու, որ բովանդակում է իւր մէջ կենսունակութեան և բանուկ գրչի տակ ապագայում՝ զարգանալու և կատարելագործելու բոլոր յատկութիւնները<sup>1)</sup>: Գ. Ք.-ի լեզուն հարազատ է և ուժեղ, հարուստ է և բնական, և այդ պատճառով եղական տեղ է բռնում:

<sup>1)</sup> Տե՛ս. «Բունի պատկ», «Արաքսի արտասուբը», «Վարդանի մահը» վեպ. «Իմ սոխակին», «Դեւ Մրուս», «Մշակ», «Թէ իմ ալիւր հերքս սենային» և այլն.

մեր բանաստեղծութեան մէջ։ Ոռուսահայերիս բանաստեղծութեան նահապետի լեզուն այժմ ծլում է և ծաղկում, և լինելով առողջ ժառանգութիւն տաղանդաւոր գրողների համար՝ ևս առաւել կը կոկւի և կը ճոխանայ. նա ունէր փառաւոր ներկայ, ունի և ապագայ, և երկար չի կորցնիլ իւր գեղեցկութիւնները մեր աչքում։ Աշխարհիկ լեզուն ճոխանում է օրէցօր։ Յայտնի վիպասան նիրաւանգաղին իրաւամբ համարւում է ներկայումս ժամանակակից գրականական լեզւի ամենափակուն ներկայացուցիչը, բայց և այնպէս՝ թէ նրա և թէ վիպասանական լեզւի ստեղծիչ Խաչքու գրւածների մէջ պատահում են երթեմն ջանհարազատ ոճեր ու դարձւածներ, ոսարանութիւններ. բացի այս՝ կարգալով նոցա երկերը, որքան էլ մեծ լինեն ազդած տպաւորութիւնները, զեղարւեստական՝ արժանաւորութիւնները, մենք ակամայ զգում ենք, որ նոքա էլ երթեմն մուածում են ուուսերէն, ինչպէս և իւրաքանչիւրը մեզանից, որ ապրում է և կրթւում Ոռուսաստանում։

Գ. Ք.-ան և գրում է և մտածում հայերէն։ Նա այնպէս է իւրացրել մայրենի լեզւի ոգին իւր պկապէս ճիւղերով, այնորէս է տիրապետում նրան, որ դժւար է գանել նրա լեզւի մէջ որ և է անհարազատութիւն։ Նրան հաւասար յայտնի են գրաբարը, Արարատեան և Թիֆլիզեցոց բարբունները, Մուշի և Նախիջևանի խօսքը. նա զերպատառմ է ժողովրդականը գրաբարին, բայց չի ուրանում վերջինի բարձր նշանակութիւնը նոր գրականական լեզւի զարգացման համար։ Նրա աչքում դրաբարը մի անփոխարիտնելի գանձ է կիրթ և վերացական մաքեր արտայացտելու համար, և զարմանալի շնորհքով և նուրբ ճաշակով օգտւում է նա այդ գանձից, կենդանացնելով և հարազատացնելով ամենախրթին խօսքերն ու ձեւերը։ Գրականութիւնը հասարակութեան համար է, և այս հասարակութիւնը—գրականութեան։ Ազգացին վշտի երգիչը պիտի մատշելի լինի հասարակութեան բոլոր տարրերին, ուստի Գ. Ք.-ան.՝երգում է այն լեզով, որ հասկանալի է բոլորին Բայց երբ նրա մուսան հանգիստ է շնչում առօքէականութեան հոգսերից, երբ իրականութիւնը արգելքներ չի դնում նրա երեակացութեան առաջ, նա նւազում է բուն արւեստի տաճարից վերամբարձ եղանակներ համապատասխան կատարուն լեզով։ Նրա «Նկարիչը»,

«Արաքսի արտասուքը» այնպիսի մարդարիտներ են, որոնք կարող են պատիւ բերել և եւրոպական գրականութեան։ Կարճամիտ մարդիկ կարծում են, որ լեզւի գեղեցկութիւնը և ոյժը ձռնուան խօսքերի կուտակման մէջ է։ Բարձրաճիշ և անիմաստ խօսքերի ժամանակն անցել է։ Այն գրականն է նպաստում լեզւի կատարելագործութեան, որ գրում է պարզ և անպամոյն, որ հասկանալով բառերի բուն իմաստը զուգաւորում է նոցա ներդաշնակութեամբ։ Ոմանք հոչակում են Ս. Նազարեանցին կարապետ նոր գրականական լեզւի։ 1) Վատահանում ենք ասել, որ դա մի բանաստեղծական թիւրիմացութիւն է և ոչ առողջ քննադատութեան արգասիք։ Իրաւ, Ս. Նազարեանցը հասկացաւ ժամանակի պահանջը և նոր հոսանքի արժանաւոր պաշտպան հանդիսացաւ։ բայց բաւական չէր քարոզել աշխարհիկ լեզւի գործածութեան անհրաժեշտութիւնը և այդ գիտակցութեամբ կուիւ մզել գրաբարի պաշտպանների դէմ։ Հարկաւոր էր նաև, հին կլասիկական լեզւի տեղ, տալ կենդանի ու կանոնաւոր լեզու, մի գործ, որ վեր էր Նազարեանցի բնական ոժմերից։ Նա, իրեւ հրապարակախօս, փաստաբանում էր աշխարհիկ բարբառի քաղաքայիութիւնը, և ունեցաւ աջողութիւն, բայց ոչ իւր լեզւի կատարելութեան շնորհիւ, որ չափազանց արեւեստական էր և անկանոն, և որին վիճակւած էր մեռնել կարճ միջոցում։ Նազարեանցը զրական (ԱՐԵՎՈՏՈՅՔ) չէր, և վատահանում էր կերտել զրականական լեզուն ըստ իւր ազատ կամքի և հայեցողութեան, կարծես, կուում լինէր նրան իւր գիտնական դարբնոցում։ և այդ լեզւակերտութիւնը ցոյց տւեց միայն իւր հեղինակի անձեռնաւութիւնը և անձաշակ լինելը։

Գրականական լեզւի հիմնադիր լինելու արտօնութիւնը տւած է միայն բանարեստագէտներին (ԽՍԴՋՀԱԿԻ ԸԼՈՎԱՅԻ), որոնք ողի են ներշնչում նրան, անցկացնելով իրանց հանձարի բովից։ միայն գոյների ու պատկերների արարող-արւեստագէտը կարող է իւր առեղծագործութեան արհեստանոցում հասունացնել և ծաղկեցնել մանուկ, թոթովախօս լեզուն իւր կենդանարար շնորհքով։

Այսպէս՝ աշխարհիկ լեզւի ամենափայլըն հիմնադիրը, նրա քաղաքայիութեան օրինաւորիչը Գամառ Քալթիպան է, որին աջողութեամբ գործակցել է և Ս. Նալբանդեանցը իւր կիրթ, կանոնաւոր և կենդանի խօսքով։

(Շարունակելի)

1) Տես Ս. Շահապիզեանի «Հրապարակախօս ձախ» երկը։

## Գ. Բ. Ա. Խ Օ Ս Ո Ւ Ի Թ Ի Ւ

ԼՈՒՄԱՅ. — «Գաբօի ընտանիքը», վեպ Թիֆլիսի կեանքից. 1895թ.  
Թիֆլիս. տպ. Կովկ. կառավարչապետի. 196էջ, գինը 60 կոպէկ:

Ամեն մի վէպ, որ նպատակ ունի  
տալ մեզ իրական կեանքի պատկերը,  
պիտի որոշ կարգի երեղիթների ընդ-  
հանրացում լինի. թէ դործող ան-  
ձերը և թէ նրանց փոխադարձ լա-  
րաբերութիւնները բացառական չը  
պիտի լինեն, այլ ընդհանուրը Ալո  
պայմանով միաւն վէպը մեծ նշանա-  
կութիւն կարող է ունենալ. Ով չի  
տալիս իրական կեանքը, այլ իր ե-  
րմակալութեան ուժով ինչ որ նոր  
կեանք է հնարութ և որպէս որ և է  
շարք երեղիթների ընդհանրացում  
առաջարկում մեզ, նա առատ է խօ-  
սում. Մասնաւոր, բացառիկ երե-  
ւոյթը երբեք չի կարող մի շարք  
երեղիթների համար ընդհանուր լի-  
նել. ուստի այն վէպերը, որոնք ալդ-  
պիտի բացառիկ, ոչ սովորական, ոչ  
շատ տեղ հանդիպող երեղիթ են ներ-  
կալացնում և երեղիթների ընդհա-  
նուր պատկերի տեղ են մեզ  
առաջարկում, կարող են միաւն այն  
տեսակէաից հետաքրքրական լինել  
և ուշադրութեան արժանի, թէ ինչ-  
պէս ազդ վէպերի հեղինակները ընկ-

նում են թիւրիմացութեան մէջ, չեն  
հասկանում իրանց ներկալացրածի-  
իմաստը և վերջը մնում են աչ-  
պիսի դրութեան մէջ, որ պիտի  
արտասանեն. «բազում աշխատեցաք  
և ոչինչ կալալո»:

Աչդպիսի մի վէպ է այս Լումաչի  
վէպը. Աչդ վէպում ներկալացրած է  
մի արհեստաւորի ընտանիք՝ «օջախ»,  
որ կազմւած է ընտրովի անպէտք  
մարդկանցից, Ընտանիքի հայրը՝ Դա-  
րօն հասկին առած մարդ է և հա-  
մարեա անգործ է՝ կինը մի կատա-  
րեալ հրեշ զուրկ բոլոր մարդկաւին  
զգացմունքներից. մեծ որդին՝ Բաղ-  
դօն աշխատասէր, «նամուսով,  
զաւրաթով» տղակ է և կատարելապէս  
կամքից զուրկ. ամենսափոքը տղան  
մի աշխատասէր զալոցական է, բայց  
հնդինակի ցանկութեամբ վէպի կի-  
սից փշանում է, ընկնում է վատ  
շրջան և անառականոցներում օրն  
անցկացնում էնտու, ըստ երեղիթին,  
սիփիլիս ընկնում. Գաբօի աղջիկը՝  
Մական մի մարդաթող կին է, և  
կարգին կին չի երեսում. մնացած

տղաներից մէկը քելեխ ուտելով է ման զայիս, միւսը աօր դադում օր ուտում է», աշխատանքը տուն չի տանում և ոչ մի օգուտ չի բերում ընտանիքին։ Այս երկուսը ընտանիքի համար չլինեն աւելի լաւ է, քան թէ լինեն, Դուք տեսնում էք այս ընտրովի անդամներից կազմած ընտանիքը։ Ով կարող է ձեռք սրտին դրած ասել՝ թէ աւսպէս են մեր օջախները, ալսպիսի խրտալակներից են կազմւած... Ո՞վ կարող է ասել, որ դա մեր օջախների հաւատարիմ պատկիրն է, բաճաստեղծական ընդհանրացումը։ և ով չի ասիլ, որ այդ տեսակ ընտանիք մեզ մօտ գուցէ լինի, բայց բացառիկ երեսով է, ամեն տեղ չի պատահում։

Բացառիկ երեսովը բացառիկ վիճակ էլ կ'ունենաաւ բազդօն նշանուում, պասկում է և հարսին տուն բերում։ Այդ հարսը «տանու աղջիկների» ամենալաւ տիպին է պատկանում։ Ընտանիքի հրէշը՝ մայրը սկսում է հարսին ճնշել, ամեն տեսակ կասկածներ լայտնել որդու մօտ, նորապակներին իրարից սառցնել։ Զահել ամուսինները սառչում են իրարից։ մարդը կնոշն սկսում է ատել։ կինը մի ինչ որ վրացի իշխանի հետ նամակագրութիւնն է սկսում, չետույ տան արծաթեղինն առնում փախչում նրա մօտ։ Իշխանը փողերն ուտելուց չետույ Նատօին վունդում է, երբ նա չի համաձանում դնալ և անառակութեամբ փող ճարել։ Խեղճ կինը փախչում է հօրեղօր մօտ։ հօրեղբակը հաշտեցնում է նրան իր մարդու հետ և երկու սենեակ տալիս, որ ապրեն։ Մայրը էլի շարու-

նակում է իր որոգակթները լարել։ որդու ականչջում հալում է թէ Նատօի ծնած երեխան իրանից չէ։ Վրացի իշխանը նորից երեսում է, պարկապղուկ ածողի շորով զալիս է Բաղդի ու Նատօի առաջ իրան գովում։ իսկ Բաղդօին վատաքանում։ Բաղդօն ճանաչում է, վազում է լետեից, սպանում։ զառնում տուն և... մեռնում։ Թող ընթերցողն ինքն ասի՞ միթէ ոա մեր կեանքն է։ միթէ մեր կեանքում ալսպիսի երեսովթներ շատ են պատահում։ Ով չգիտէ որ իրականում «տանու աղջիկները» հաշտում են իրանց դժբախտ ճակատազրի հետ, սուսուփուս կրում են իրանց ճանր լուծը, առանց ակրնչալու ու եռանդրա բողոքների։ և եթէ բողոք էլ լինում է, այդ ձեռվ չի լինում ընդհանրապիս, Կրկնում ենք, զուցէ աղջպիսի մի զէպք պատահած լինի, բայց դա ընդհանուր երեսով չէ։

Եւ այդ բոլորը հեղինակն արել է ինչի համար։ Որ ցոց տալ իր զործող անձերից մէկի բերանով թէ մեր ընտանիքները լաւ չեն կազմած։ բաղմաթիւ անդամ ունեցող ընտանիքի մի տան մէջ ապրելը վեսասկար է։ Վերջին կետընա ամենից խիստ է շեշտուա։ նա պահանջում է, որ ուսրապսակները պսակի գիշերը եկեղեցուց ուղղակի գնան իրանց նոր վարձած տունը և իրանց հերթին նոր օջախ կազմեն։

Ուշի ուշավ հետեւնք վեպի ընթացքին և տեսնենք թէ Գարօն ընտանիքի վատութեան պատուան խկապէս մի սենեակում ապրելն է, խմբովին կեանք վարելն է (Ըրկա-

տենք, որ մենք ալստեղ հավասութիւններ ենք ուզում ցուց տալ և ոչ մեր ընտանիքի ալֆմետն կազմը պաշտպանել). Ամենից առաջ իւրաքանչիւր ընթերցողի անմիջական դիտողութիւնները գալիս են հակառակը պնդելու. Ով չի կարող բաւականին օրինակներ բերել իր ծանօթ ընտանիքներից, ուր անդամները թէն խըմբւած են, մի տան մէջ են ապրում, բաց և՝ ծով ու անպէտք մարդիկ չեն. Այդ հօ պարզ է, Բաց մենք նաևնք պ. Լումափի վէպին և կը տեսնենք միենոնը, ապսինքն որ խմբովին ապրելն ալստեղ միակ կամ ոռաջնակարգ պատճառը չէ: Ինչ ընտանիք է Դարօի ընտանիքը, ինչի նման է. Նա աւելի մի խողաբուն է, քան ընտանիք: Այդ ընտանիքը առանց կողմնակի ազգեցութիւնների էլ անպէտք է ու վատ կազմած. Նա արդէն փշացած է իր հիմքում. Խոկ այդ փշանալու պատճառնելը բոլոր ովին ալլ կենսական պալմաններ են, որոնց թուում նաև միատեղ ապրելը, որ եկրոգական և, եթէ կ'ուզէք, մինչև անգամերորդական պալման է: Ինչ որ պատճանեց Դարօի ընտանիքին, առաջ եկաւ նրա անդամների վատութիւնից, թէն, նկատենք, որ նատօի փախուստի նման գէպք մեր ընտանիքներում դժւար, շատ դժւար կարող է պատահել. Այսպէս ուրեմն պարզ է, որ պ. Լուման հարցի արմատից չի բռնել, հիմնական պատճառը չի բռնել, իրական կեանքին հաւատարիմ լինելը՝ վէպը դառնում է ոչ համոզիչ, նա միայն զարմանք է առաջացնում. ինչի տեղ է դնում իր ընթերցողներին հեղինակը...

Մի բարդ երեսվթի պատճառը փնտում է զլխաւորապէս ախափիսի մի պատմանի մէջ, ինչպիսին խմբւած պայրեն է:

Դոստուսկու Ե՞ս անունով վեպում գործող անձերից մէկն ասում է. „Ե յ ըմբալ մօջ ածեօ, ա մօյ ածե ըմբալ մօյ“ (ես չեմ կերել իմ իդէան, ալ իմ իդէան է ինձ կերել), Նոյնը կարող է ասել և պ. Լումափի վէպը, Նա ամբողջովին ճնշւած է իր իդէալի ծանրութեան տակ. հեղինակը իր վէպը սղմում է ու սղմում, դրա համար էլ վէպը, Կորցնելով իր բնականութիւնն ու իրականին հաւատարիմ մնալը, դառնում է անձունի և ալյանգակ մի բան: Պ. Լուման կարծել է, որ տարօրինակ և անսովոր դէպքեր մէջ բերելով, զէպքերի գոյները խտացնելով, կարող է իր նպաստակին հասնել, կարող է իր ուզած միտքը ապացուցել և... մեծ սխալ է արել, ինչպէս վերը տեսաւ ընթերցողը, Կորցնելով իր բնականութիւնը, ճշտութիւնը, իրական կեանքին հաւատարիմ լինելը՝ վէպը դառնում է ոչ համոզիչ, նա միայն զարմանք է առաջացնում. ինչի տեղ է դնում իր ընթերցողներին հեղինակը...

Կեանքում շատ է պատահում, որ մէկը փրփուրը բերնին ճգնում է ապացուցել մի բան, և զուրս է զաւիս, որ ալլ բան է ապացուցել, կամ իր ցանկացածի հակառակն է ցուց տւել. Այդպէս էլ պ. Լուման. Ցանկանալով ապացուցել, որ մեր ընտանիքները վատ են կազմած՝ խմբովին են ապրում, ուստի և վնասում են իրանց, ցուց է տւել, որ Դարօի ըն-

տանիքն է վատ կազմած, մի բան, որ անկասկած է, իսկ ինչ ասել կ'ուզի, որ «մեր ընտանիքները» Գա թօխ ընտանիքը չեն. այդ երկու գաղափարների մէջ չի կարելի հաւասարութեան նշան դնել.

Վէպի գեղարւեստական կողմի մասին չգիտենք. ինչ ասենք. շատ թուլ է, Վարմունքները չեն պատճառաբանւած, հոգեբանական վերլուծութիւն համարեա չկայ. Օրինակ լաւոնի չէ թէ ինչո՞ւ Վանօ՞ւ փոքր որդին, որ մի աշխատասէր դպրոցական էր, լանկարծ անառականոցներն է գնում. Նաստի փոխւելը, փախչելը մարդ չի իմանում թէ ինչ հոգեկան պրոցեսի արդիւնք է: Ել չե՞մ ասում, որ գեղարւեստական լինելու առաջն պալմանը իրականութեան հաւատարիմ լինելն է, իսկ մենք տեսանք, որ Լումաչի վէպը, ամբողջովին առած, հաւատարիմ պատկեր չէ մեր ընտանիքների: Ինչ մնաց վէպի ձեին, կազմութեան՝ կատարելապէս անբաւարար է: Անտեղ կաչ մի անձնաւորութիւն, Գէորգ անունով, մի կատարեալ հոգեկան հրանդ, որ բոլորովին աւելորդ մարդ է: Անձնաւորութիւններ են մէջ բերած, որոնք վէպի ընթացքի հետ կապ չունեն. ալգովէս են Բաղզօի հղբալոները, որոնք Գաբօի ընտանիքը կազմելու համար են միան, ել ուրիշ դեր չեն խաղում վէպի մէջ:

Վէպի մէջ շատ կան աւելորդ կտորներ՝ խօսակցութիւններ և նկա-

րագրութիւններ: Մանրամասն մէջ են բերած թիֆլիզեցոց խօսք ու զրոյցը, հաւատալիքները, նախապաշարումները, սնուտիապաշտութիւնները, սովորութիւնները, հանդէսների նկարագրութիւնները և այլն: Այս բոլորը վէպի ընթացքի, նրա սիւծէտի հետ կապ չունեն, բայց հետաքրքրական են աղջապրական տեսակէտից և ուշադրութեան արժանի: Մի նկատողութիւն էլ լիզի մասին և... վերջակէտ: Պ. Լուման շատ աղքատ լեզու ունի. ոչ ոճերի հարստութիւն կաչ, ոչ բառերի պաշար, ոչ նկարագրութիւնների պատկերաւորութիւն: Երեակալութիւնը թուլ է, ուստի պրոտոկոլիստի նման է նկարագրում տեսարանները Բայց որ գլխաւորն է, նա շատ էլ նշանակութիւն չի տալիս խօսքերի իսկական իմաստին. մի օրինակ՝ «Ակրա(ո)բատները գետնին ցցած մի փալասի կտորի վրաւ կլըսկոնձի տալով իրանց քաջութիւնն էին ցոյց տալիս» (Էջ 5): Տեսէք քանի սիսակ կաչ աչս երկու տողի մէջ, նախ՝ ակրոբատները փալասի կտորի վրաչ չեն կլըսկոնձիո տալիս, երկրորդ՝ կլըսկոնձի իսկի չեն էլ տալիս, դա մի դժւար և զարմանալի բան չէ. ամեն մարդ էլ երեխակ ժամանակ արած կը լինի. և երրորդ՝ նրանց արածը քաջութիւն չէ, այլ ճարպի կութիւն:

Ն. Աղքալիսնց:

ԴԻԿԿԵՆԸ, Զ.—ԺԼԱՄ ԱԿՐՈՒՋԸ—ԺՄԱՐԳԲ. ԱՌԱ. ԶԻԳԻԱՆԵԱՆ.  
1897. ԹԻՖԼԻՍ, 40 Էջ. գինը 15 կոպ.

Բարուշական մեծ քաջութիւն է հարկաւոր, որ մարդ կարողանալ հրաժարւել իր անցեալից, ինչ տեսակ էլ լինի այդ անցեալը. Ընկնելը քաջութիւն չէ, ինչպէս և անդիտակցարար, հոսանքին ենթարկւելով բարձրանալը. բայց անցեալից գիտակցարար և անկեղծօրէն հրաժարւելը չանուն մի աւելի բարձր բանի, որ ընդունում են այդ բոսի, ին, մեծ քաջութիւն է. Աչտեղ գնահատութեան կարող է ենթարկւել ոչ իրողութիւնը, պատահած ֆակտը, այլ այն ուղղութիւնը, որով կատարում է հրաժարումը վերածնութիւնը. Յալտնի տեսակէտներից նայելով կարելի է ցաւել կամ ուրախանալ, զոմիկ կամ պարտաւել որև է մէկի անցեալից գիտակցարար հրաժարւելը, բայց քաջութիւնը երկու գէպքում էլ անկասկած է. Թուլ, կամ մազուրկ և անպէտք մարդը երբէք չի կարող գիտակցարար ատել, արհամարժել իր անցեալը, կորիւ մղել նրա դէմ. Պօղոսը այն առաքեալը չէր լինի, որ մենք ճանաչում ենք, եթէ քաջութիւն չունենար Սաւուղ լինելը թողնելու. Անցեալից հրաժարւելը արդիւնք է բազմաթիւ և բազմատեսակ պատճառների, որոնց կոնցերտում որ և է մի պատճառ աւելի բարձր, աւելի տիրող ձան է հանում. այդ պատճառը կարող է վախը լինել, խղճի խալթոցը և ալն, վախլից պուած եկած մի ալդպիսի հրաժարիմքի պատմութիւն է միր գրախոսելիքը գրքուկը.

Ակրուջը, որ մի չափից գուրս ժլամ մարդ է, Ծննդեան երեկովին, ամեն օրաւալ պէս, գրասենեակից դառնում է իր առւն, շրջում դատարկ սենեակները, մտնում իր առանձնատանեակը, նստում կրակի մօտ ու սկսում մտածել, Տուն գալուց մի քիչ առաջ, նա կոպտութեամբ է վարւել եղբօրորդու հետ, որ եկել էր նրա տօնը Հնորհաւորելու և ճաշի հրաժիրելու, խիստ սառն դասեր է տել իր գրազրին, որ մի հեղուու աղքատ մարդ է, սառնութեամբ հեռացրել է աղքատների համար փող հաւաքողին և կոպտութեամբ վոնտել պատու հանի տակ ողորմութիւն խնդրող ցնցոտիներ հաղած աղքատ տղազին. Այդ գէպքերի ազդեցութեան տակ է անշուշտ. մտածում է. յան կարծ լսում է դրան թխկոց և ներս է մանում իր մեռած բարեկամ և ընկեր Մարլէը, քաշ տալով իր չետելից մի երկար շղթակ, որ, ինչպէս ինքն է բացատրում Ակրուջին, կրում են բոլոր մեղաւորները, և նոչն իսկ ինքը՝ Ակրուջը, այն էլ՝ իր ունեցածից աւելի երկար շղթակ նա իրար ետելից ցուց է տալիս Ակրուջին նրա անցեալը՝ աշակերտական տարիները, ծառակութիւնը, ուրախութիւնները, ներկան՝ նրա ձեռքից տանջւած ու չարչարւած մարդկանց Ծննդեան տօնը, և ապագան՝ նրա մահը անօգնական ու անխնամ հիւանդութիւնից կետոց, նրա փողերի և ունեցած-չունեցածի Հներոց.

գելերոց լինելը, նրա անշուք գերեզ մանը և մահւան լուրը լսողների կատարեալ անտարբերութիւնը: Կամաց կամաց Սկրուջը սարսափ է զգում, ցանկութիւն է ծագում նրա մէջ ամեն բան ողբելու, անցեալի վրայ թքելու, հեռանալու և... զարթնում է: Քալծառ ու ցուրտ առաւտու է: Ինքը կենդանի է և իր տանը, ուրեմն դեռ ամեն բան չի կորած, դեռ կարելի է սխալն ուղղել Եւ նա փողոց է դուրս գալիս ու իսկոյն սկսում իր ապրելու ձեւը փոխել. նա դեռ երեկ երազում համոզւեց, որ ամարդուս երջանկութիւնը կալանում է մարդիկ սիրելու, մարդկանց գթալու մէջ»: և աղջաս, այդ օրւանից մինչև իր կեանքի վերջն էլ Սկրուջը մնում է բարի և ողորմած մարդ:

Դրքովկը թարգմանած է ռուսերէն՝ համառօտութիւնից: Համառօտութիւնները շատ վատ բաներ են. գրւածքը կորցնում է իր կաշին, մկանները, մարմնի ձեսերը և միում է միան հիմքը՝ կմախքը. երկրադական համարւած շատ զծեր երբ պակասում են, այն ժամանակ ոչ գրածքն է ուժեղ ապաւորութիւն անում և ոչ պատմածը իրական թւում: Այդ պատճառով այս գրքովկը շատ չոր է և Դիվկենսի համեն ու հոտը չկալ մէջը:

Ընթերցողներին գուցէ անընական թւակ Սկրուջի կանկարծական վերաճնութիւնը. վեր առնելով դէպքն ինքն ըստ ինքեան, զարմանալու ոչինչ չկայ: Աչդպիսի վերաճնութիւններ շատ նն պատահել և շատ են պատահում: Հարկաւոր է միան որոշ տրամադրութիւն և տպաւորութիւնների որոշ կոմբինացիա՝ խմբումն:

Ամեն թարգմանիչ, մեր կարծիքով, որոշ բարուական կապ պիտի

ունենակ այն հեղինակի հետ, որի գրւածքը թարգմանում է. այդ կապը կարող է բարձրանալ ու դառնալ մէր, հիացք, ոգեստութիւն, երկրպագութիւն և ալճն, բաց այդ կապի ամենապարզ և առաջին օղակը թարգմանչի բարգանքն է զէպի հեղինակի անունն ու փշտակը: Առասարակ ամեն թարգմանութիւն պիտի լաւ լինի, բաց մանաւանդ՝ Նշանաւոր երկերի թարգմանութիւնը, Նշանաւոր հեղինակների գործերի թարգմանութիւնը պիտի արժանի լինի նրանց անւան իր հաւատարմութեամբ, բարեխտգութեամբ և կոկութեամբ: Այս տեսակետից նաևլով զործի վրայ, պ. Զիգֆիանեանի թարգմանութիւնը շատ վատ է, Մենք մի քանի օրինակներ կը բերինք «Տանիքից թռան... ու ամեն տեղ հանդիպեցան այն տեսակ հոգիներին, ինչպիսին էր Մարլէն» (Էջ 14): «Գրասենեակն էլ նրանը չին, կանկարասիքը նմանապէս նրանը չին...» (Էջ 33): Եւ սա հայոց լեզով է թարգմանած! «Աս ծեղ կաւելացնեմ ձեր ուռիկն» (Էջ 40), «Աչկերն անհանգառութեամբ վարւում էին և ամաչում էր» (Էջ 20) և ալին... Դրքովկը հրատարակւած է շատ անխնամ, տառասխաններով լիքը, այն էլ շատ վատ տառասխալներով: Միակ լաւ բանը որ կաչար Դիվկենսի լաջողւած պատկերն է: Գրքովկի մէջ երկու ուրիշ պատկերներ էլ կան, որոնք անջանող են Պ. Զիգֆիանեան, ինչպէս երևում է գրքովկի ճակատին զրւած «Ն. Զիգֆիանեանի հրատարակութիւնները» խօսքերից զիտաւորութիւն ունի մի շարք գրքեր հրատարակելու ևթէ ալդպիսի թարգմանութիւններ պիտի լինեն հրատարակութիւնները՝ լաւ է մեզ աղատի արջի ծառակութիւնից:

Ն. Աղուեսնց:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՅՈՒԱՌԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Մի երկրի յառաջդիմութեան գլխաւոր պայմաններից մէկը ինքնավարութեան գաղափարի ծաւալ ստանալու և իրականանալու մէջն է կազանում։ Ի շարս մեծ ռեֆորմների, որ հանգուցեալ Ազատարար-Կայսր Ալեքսանդր II մոցրեց Ռուսիայում լայնածաւալ երկրի յառաջդիմութիւնը ապահովեցնելու։ Համար - մեծ տեղ է բունում նաև նահանգական և գաւառական ինքնավարութիւնը, որ կոչւում է զեմնութօ և որ ներկայացնում է նահանգական և գաւառական դասակարգացին ներկայացուցիչների ժողով - նահանգական կարիքների մասին մոտածող և հոգացող մի մարմին։ Այն նահանգներում, ուր կան զեմստւացին հաստատութիւններ Ռուսաստան ում, այնտեղ զեմստւացին կեանքը կազմում է հասարակաց կեանքի և գործունելութեան զարկերակը։ և բնական է, որ յառաջադէմ մամուլը իւր որոշ դիրքն ունի բռնած դէպի զեմստւացին հաստատութիւնների գործունելութիւնը, որի զարգացման հետ նա իւր սեփական դատն է կապում։

Զեմստւացին հաստատութիւնները մինչ այժմ մուտք չեն գործել Կովկաս, որը զուրկ է նաև մի քանի այլ բարիքներից, օրինակ՝ երդւեալների գատարանից։ Այժմ արդէն Կովկասի բոլոր քաղաքները վայելում են ինքնավարութիւն, բայց ոչ մի նահանգ և գաւառ ինքնավարութիւն չունի։ Ինչպէս որ քաղաքները առաջ կառավարում էին միայն ոստիկանական-վարչական ձևով, այդպէս են այժմ նաև նահանգներն ու գաւառները, որոնք իրենց տեղական ինդիրների համար այլ օրգաններ չունին, բայց եթէ միայն նահանգապետութիւնը և գաւառապետութիւնը, այսինքն զուտ վարչական-ոստիկանական օրգաններ։

Թէ զեմստւային հաստատութիւնների ներմուծման հետ մեր երկրում ինչ շահեր կան կապւած, այդ մասին մենք անցեալում առիթներ ունեցած ենք խօսելու. բաւականանում ենք ցիշելով մեր յօդւածը Յառաջդիմութեան պայմանները՝ ամսագրիս 1891 թ. № 1-ում:

Զեմստւօ՞ի խնդիրը մի անգամ թոյլ կերպով շօշափւեց դեռևս 1871-ին, ապա նորից դրւեց 1882-ին. և միշտ անաջող. 1894-ին նորից յարուցւեց Թիֆլիսի նահանգի ազնւականաց ժողովի մէջ, որը ձեռնարկեց պրօէկտ կազմելու. այժմ նա կոչւած է այդ խնդիրը աւելի առաջ տանելու: Նա դառել է Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնւականաց ժողովների հերթական խընդիրը: Այսպիսով յուսոյ նշոյլ է բացւում, որ եթէ ոչ ամեռզջ Կովկասի նահանգները, գեթ սոցանից երկուսը պիտի կարողանան խնդրի լուծումը պաշտօնական ճանապարհով առաջ տանել: Ի նկատի ունենալով այն առաջնորդող դերը, որ յատկացրած է տեղական ազնւականութեանը զեմստւային հաստատութիւնների 1890 թ. կանոնադրութիւնով, Թիֆլիսի և Քութայիսի ազնւականութեանը, որ գլխաւորապէս վրացական է, գեղեցիկ առիթ է ներկայանում Կովկասում զեմստւային հաստատութիւնների խնդրի արծարծման մէջ նախաձեռնութեան առաջնակութիւնն ունենալու, թէկուզ դալինի երկրիս միայն մի մասի համար, այն մասի, ուր թէ ազնւականութեան և թէ այլ քնակիչների թւի մէջ վրացական տարրը տիրապետող է: Հայ-թբքական նահանգների համար մեծ վաստակ կը լինի այժմ նոյն իսկ այն հանգամանքը, որ իրենց դրացի երկու նահանգներում կը գործեն գաւառական ինքնավարութեան յատուկ օրգաններ: Մենք ուշով կը հետևենք խնդրի ընթացքին, նորա ամեն մի յաջող քայլի մէջ երկրիս բարի յոցերի իրականացումը տեսնելով:

Ա. ԱՐԱՍԽԱՆԵՍՆՅ:

# Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## I

ՀԱՅԱՐԿԱԴՆԵՐԸ Եւ ԸՆՏՐՈՒԹԻՈՒՆՆԵՐԸ:

Մակերևույթ 18-ին քաէարկութեան ենթարկւեցին ներքոչիշեալ 177 թեկնածուները, որոնցից ընտրւեցին այս անգամ 57 հոգի,

| սպիտակ                                      | սև  |             |
|---------------------------------------------|-----|-------------|
| Աքելեան, Բարսեղ . . . . .                   | 431 | 621         |
| Աւթանդիեան, Միքայէլ բժ. . . . .             | 616 | 438 ընտրւած |
| Ակոպով, Եզոր . . . . .                      | 523 | 536         |
| Ալիբէկեան, Պետրոս . . . . .                 | 504 | 551         |
| Ալիսանեան, Ցովհաննէս. Մ. . . . .            | 561 | 497 ընտրւած |
| Ալիսանեան, Ցովհաննէս. Ս. . . . .            | 629 | 425 ընտրւած |
| Ալիսանեան, Կոնստանդին . . . . .             | 662 | 397 ընտրւած |
| Անտանեան, Ստեփանոս բժ. . . . .              | 571 | 482 ընտրւած |
| Անդրոնիկով, Իշխ. Խօսիփ Եակ. . . . .         | 437 | 616         |
| Անդրանիկով Իշխ. Նիկոլայ Դաւ. . . . .        | 520 | 539         |
| Ավեանց, Ղազարոս . . . . .                   | 420 | 639         |
| Արզութեան-Երկանաբազուկ, Իշխ. Ալէք. Միխ. 745 |     | 311 ընտրւած |
| Արզութեան-Երկանաբազուկ, Իշխ. Նիկ. Վաս. 745  |     | 309 ընտրւած |
| Արզութեան-Երկանաբազուկ, Իշխ. Նիկոլ. Եղ. 633 |     | 425 ընտրւած |
| Արզութեան-Երկանաբազուկ, Իշխ. Պօղոս Միխ. 671 |     | 389 ընտրւած |
| Ախուճգով, Ռաշիդ-Բէկ . . . . .               | 381 | 672         |
| Ագապեն, . . . . .                           | 456 | 602         |
| Բաբեան, Արշակ Ս. . . . .                    | 530 | 530         |
| Բաբեան, Գրիգոր . . . . .                    | 514 | 541         |
| Բարխուդարեանց, Արշակ Պ. . . . .             | 458 | 601         |
| Բէհրութեան, Իշխ. Ցովսէփ . . . . .           | 649 | 411 ընտրւած |
| Բերնատեիչ, Ի. Ա. . . . .                    | 461 | 596         |
| Բիլֆելդ, Լ. Պ. . . . .                      | 564 | 496 ընտրւած |

|                                         | սպիտակ | սե          |
|-----------------------------------------|--------|-------------|
| Բուղդանեան-Բաղդասարեան, Արշակ . . . . . | 421    | 638         |
| Բարաթով, իշխ. Ի. Գ. . . . .             | 431    | 630         |
| Բարաթով, իշխ. Դ. Զ. . . . .             | 436    | 619         |
| Բողդանեան, Խաչակ . . . . .              | 478    | 577         |
| Բուրգարդտ, Է. Ֆ. . . . .                | 688    | 368 ընտրւած |
| Բուտկելիչ, Կ. Յ. . . . .                | 605    | 455 ընտրւած |
| Բէժմանքէկնանց . . . . .                 | 310    | 749         |
| Բուղդանեան . . . . .                    | 338    | 721         |
| Բարնովի, Ի. Վ. . . . .                  | 344    | 708         |
| Վարձելեան, Կոստանդին . . . . .          | 351    | 708         |
| Վարդանեան, Արտեմ բժ. . . . .            | 520    | 543         |
| Վարդանեան, Գրիգոր Մ. . . . .            | 369    | 699         |
| Վարշամեան, Ազէքսանդր . . . . .          | 377    | 591         |
| Վասիլե, Պ. Ս. . . . .                   | 435    | 626         |
| Վացաձէ Ս. Ի. . . . .                    | 467    | 603         |
| Վետյել Ֆ. Կ. . . . .                    | 606    | 454 ընտրւած |
| Վերմիչև Գրիստ . . . . .                 | 636    | 430 ընտրւած |
| Վեսելովզորով Բ. Պ. . . . .              | 476    | 585         |
| Վեսելովզորով Մ. Ն. . . . .              | 484    | 575         |
| Վախճախով իշխ. Ա. . . . .                | 399    | 662         |
| Գաբահւ Վ. Բ. . . . .                    | 436    | 626         |
| Գաբահւ Վ. Իլ. . . . .                   | 399    | 664         |
| Գւատուա Գ. Կ. . . . .                   | 406    | 649         |
| Գրաբովսկի Վ. Վ. . . . .                 | 419    | 638         |
| Գրիգորեան Նիկ . . . . .                 | 484    | 580         |
| Գրինեով Ն. Ա. . . . .                   | 498    | 564         |
| Գրուգինսկիյ պաէծառ. իշխ. Միխ. Ալեքս. .  | 643    | 416 ընտրւած |
| Գրուգինսկիյ պաէծառ. իշխ. Պետր. Ալեքս. . | 638    | 423 ընտրւած |
| Գուրգենքզեան Խւան. Օս. . . . .          | 472    | 591         |
| Գանիլով Ե. Մ. . . . .                   | 496    | 576         |
| Զանշեան Ալ. Աւ. . . . .                 | 457    | 600         |
| Զամբակուր-Օրբելիանի իշխ. Գ. Ի. . . . .  | 554    | 508 ընտրւած |
| Զամբակուր-Օրբելիանի իշխ. Ի. Մ. . . . .  | 573    | 488 ընտրւած |
| Դալուխանեան Մարկ. Իս. . . . .           | 608    | 452 ընտրւած |
| Դոլինսկի Ի. Կ. . . . .                  | 396    | 667         |
| Եւանգուլեան Ա. . . . .                  | 518    | 544         |
| Եւանգուլիան Գէորգ. . . . .              | 635    | 426 ընտրւած |
| Եղիազարեան Վ. . . . .                   | 436    | 620         |

|                       | սպիտակ | սե          |
|-----------------------|--------|-------------|
| Զուբալով Ա. Զ.        | 317    | 746         |
| Խւանենկօ Ապոլոն. Աֆ.  | 613    | 446 ընտրւած |
| Եղիզարով Նաղիր-բէկ    | 360    | 701         |
| Երիցփոխեան Ա.         | 681    | 382 ընտրւած |
| Յօհաննիսեան Աբգ.      | 605    | 457 ընտրւած |
| Կաւրիե Կ. Ի.          | 365    | 699         |
| Քալանթար Ալեքս.       | 585    | 478 ընտրւած |
| Կալաչնիկով Ե. Մ.      | 366    | 691         |
| Կանդուրալեան Պ. Գ.    | 430    | 630         |
| Կանդուրալեան Վ. Գ.    | 461    | 609         |
| Կարապետեան Նիկիտա.    | 532    | 528 ընտրւած |
| Քեմիսուզեան Ի.        | 480    | 578         |
| Կիպրոսի Վ.            | 557    | 511 ընտրւած |
| Կիսլիանի Մ. Կ.        | 448    | 615         |
| Կոլուբանսկի Գ. Մ.     | 465    | 597         |
| Կոնդրատենկօ Ֆ. Ի.     | 443    | 621         |
| Դորդունեան Վաս. Գ.    | 540    | 524 ընտրւած |
| Դորզոնեան Գ. Զ.       | 594    | 467 ընտրւած |
| Դորզոնեան Ի. Ս.       | 580    | 481 ընտրւած |
| Կոսցինսկի Իօ. Ի.      | 390    | 678         |
| Կուսիկեան Ն. Ս.       | 467    | 602         |
| Քիչարեանց Կար. բժ.    | 536    | 532         |
| Քարտուելով Ի. Մ.      | 406    | 657         |
| Լաւրով Ա. Մ.          | 426    | 637         |
| Լենչեւսկի Ա. Մ.       | 435    | 631         |
| Լիսիցեան Ատ.          | 504    | 558         |
| Լոնկիւիչ Մ. Վ. բժ.    | 625    | 439 ընտրւած |
| Մակարոսկի Ֆ. Իօ.      | 410    | 649         |
| Մալինին Յակ. Ի. բժ.   | 703    | 354 ընտրւած |
| Մակարոսկի Ա. Կ.       | 327    | 727         |
| Մասալով Ֆ. Ֆ.         | 339    | 719         |
| Մկերեւան Լևան Սակ.    | 616    | 443 ընտրւած |
| Մկերեւով Իշխ. Գ. Զ.   | 589    | 470 ընտրւած |
| Մկերեւան Ի. Գ. բժ.    | 532    | 530 ընտրւած |
| Մկելիք Բէզարեան Յովա. | 556    | 506 ընտրւած |
| Մկելք-Նուբարեան Ս. Գ. | 480    | 579         |
| Մկելքումեան Ա. Գ.     | 280    | 777         |
| Մկելքումեան Վ. Գ.     | 307    | 761         |

|                        | սպիտակ | սե          |
|------------------------|--------|-------------|
| Միքելաձէ իշխ. Վ. Սիմ.  | 516    | 544         |
| Մինէեւ Ս. Ա.           | 356    | 702         |
| Միրմանեան Բագր.        | 362    | 693         |
| Միրզոյեան Գաբր. Զ.     | 461    | 598         |
| Միտկնիչ Ա. Ի.          | 436    | 624         |
| Մամացն Խ.              | 461    | 601         |
| Մուլին Տ. Ի.           | 492    | 572         |
| Օդնոսւմով Ա. Իօ.       | 507    | 543         |
| Օգորոդնեւ              | 267    | 794         |
| Օպոջնին Պ. Ա.          | 692    | 368 ընտրւած |
| Օրլով Ա. Ն.            | 406    | 653         |
| Օստրովսկին Իւ.         | 434    | 627         |
| Օստրոգորսկին Ն.        | 552    | 513 ընտրւած |
| Պանկրատով Ե. Վ.        | 347    | 717         |
| Պախոժով Վ. Ն.          | 454    | 612         |
| Պորֆիրին Ֆ. Պ.         | 331    | 712         |
| Փրիդոնեան Ալեքս.       | 672    | 387 ընտրւած |
| Փրիդոնեան Նիկ.         | 610    | 453 ընտրւած |
| Փսարեան Ի. Ե.          | 514    | 548         |
| Ռեմիզով Ս. Ֆ.          | 409    | 651         |
| Ռէյտեր Կ. Ն.           | 871    | 191 ընտրւած |
| Ռուսանով Դ. Ա.         | 444    | 619         |
| Ռիդ Խուլ. Խուլ.        | 375    | 684         |
| Ռոտինեան Մ. Դ.         | 471    | 584         |
| Ռուշենկօ Ս. Ա.         | 311    | 750         |
| Սոբենեսկի Ս. Ե.        | 306    | 735         |
| Սլիվիցկի Ս. Ա.         | 510    | 552         |
| Սովիեռ. Արամ-Կուլի-Բէկ | 336    | 725         |
| Ստեփանեսնց Կար. բժ.    | 375    | 683         |
| Ստեփանեսնց Յովհ. Ս.    | 364    | 700         |
| Սուլիխանով Վ. Ա.       | 389    | 671         |
| Սուլիխանով Իօ. Ա.      | 437    | 625         |
| Սունդուկեանց Յովհ. Մ.  | 450    | 609         |
| Թայիրին Յովհ. Ա.       | 564    | 491 ընտրւած |
| Թամամչեան Ի. Գ.        | 485    | 573         |
| Թամամշեան Միք.         | 711    | 350 ընտրւած |
| Թամամչեան Ն.           | 524    | 538         |
| Թարխանով Իշխ. Ե. Դ.    | 446    | 608         |

|                                     | սպիտակ | սև          |
|-------------------------------------|--------|-------------|
| Թաթուղեան Գ. Ե. . . . .             | 415    | 645         |
| Տետրաձէ Կ. Դ. . . . .               | 364    | 696         |
| Տէր-Ասատուրեան Գէորգ. Բողդ. . . . . | 511    | 550         |
| Տէր-Դրիգորեանց Արշ. . . . .         | 473    | 586         |
| Տէր-Ղուկասեան Տ. Ե. . . . .         | 401    | 655         |
| Տէր-Ղազարեան Գ. . . . .             | 354    | 706         |
| Տիգրանեան Նազարեթ . . . . .         | 537    | 521 ընտրւած |
| Տիրիոն Վ. Ա. . . . .                | 331    | 731         |
| Տիխանով Ա. Ի. . . . .               | 384    | 667         |
| Տուլաեւ Ի. Դ. . . . .               | 495    | 566         |
| Թումանեան Իշխ. Գէօրգի Միկ. . . . .  | 670    | 387 ընտրւած |
| Թումանեան Իշխ. Նիկ. Զ. . . . .      | 456    | 604         |
| Տուրկովսկի Ա. Գ. . . . .            | 490    | 570         |
| Տէր-Ղուկասեան Ն. Ա. . . . .         | 498    | 558         |
| Ուսնելով Ի. Գ. . . . .              | 601    | 457 ընտրւած |
| Խարազեան Դաւ. . . . .               | 396    | 662         |
| Խաչատրեան Ա. Զ. . . . .             | 322    | 737         |
| Խրիստանֆով Ա. Ի. . . . .            | 374    | 684         |
| Խուզաղեան Նիկ. Ա. . . . .           | 608    | 451 ընտրւած |
| Խուզաղեան Ի. Մ. . . . .             | 345    | 715         |
| Ծերեթելի Գէօրգի Եֆ. . . . .         | 489    | 578         |
| Ցիցիանով Իշխ. Գ. Ս. . . . .         | 403    | 657         |
| Ծովիանեան Յով. Իս. . . . .          | 649    | 411 ընտրւած |
| Ծուրինեան Արտեմ Ա. . . . .          | 567    | 492 ընտրւած |
| Ցիւմաձէ Ն. Զ. . . . .               | 425    | 642         |
| Ցիօնղլինոկի Ս. Ռ. . . . .           | 331    | 733         |
| Ճաւճաւաձէ Իշխ. Խլիս Գ. . . . .      | 504    | 559         |
| Չելոկեան Իշխ. Ա. Զ. . . . .         | 589    | 475 ընտրւած |
| Չերկեզով Իշխ. Վ. Ն. . . . .         | 523    | 537         |
| Շաղինեան Յով. . . . .               | 506    | 558         |
| Շագին Ֆ. Ի. . . . .                 | 339    | 713         |
| Շաի-Ազիդ-Կամսարական Ալ. . . . .     | 729    | 335 ընտրւած |
| Շահպարոնեանց Միք. Ս. բժ. . . . .    | 621    | 439 ընտրւած |
| Շերշենկո Ի. Ա. . . . .              | 491    | 569         |
| Շեռաւակով Մ. Ս. . . . .             | 377    | 681         |
| Շիմիկեիչ Ա. Պ. . . . .              | 555    | 505 ընտրւած |
| Հնֆիաճեանց Արտաշէս . . . . .        | 460    | 600         |
| Հնֆիաճեան Տիգր. . . . .             | 638    | 420 ընտրւած |

|                              |     |             |
|------------------------------|-----|-------------|
| Ետկիմով Պաւէլ. Միիւ. . . . . | 536 | 519 Ընտրւած |
| Նարակեան Գր. Զ. . . . .      | 589 | 469 Ընտրւած |

## II

## Հնտրութեան մանրամասնութիւնները

1) Ըստ ընտրողական ցուցակի, ընտրութեան մասնակցելու իրաւունք ունէին 2.854 հոգի, Դոցանից, մեր մօտաւոր հաշւով, հազեր են 1370 հոգի, ուսներ 680, վրացիք 510, գերմանացի, խոտացի, լոյն, հրէակ 175, մահմեղականներ 74, լեհացիք 40 հոգի:

2) Առաջին ընտրութիւններին մասնակցեցին 1049 հոգի, որոնցից 50 հոգի երկու ձախով (հաւատաբաթզթերով). որով ձախների թիւը եղաւ 1099. Ախալիսով ընտրողական ժողովն եկաւ. ընտրելու իրաւունք ունեցողների 38% -ը. Բայց մինչ 30 հոգի քէշարկութեան չմասնակցեցին. այնպէս որ քէշարկութեան մասնակցեցին շուրջ 1060 ձախութիւններից մօտ 30 հոգին, որպէս հաւատացնում են, վրացիներից էին և ոսներից:

(1893 թ.-ին առաջին ընտրութիւնները կալացան 16 մազիս՝ միջին թւով 918 հոգու մասնակցութեամբ. ալդ առաջին ընտրութիւնները բեկանւեցին, որովհետեւ ամենքի սև քէշները չէին հաշւած. ընտրութիւնները նորից նշանակւեցին մազիս 30%-ին և ալդ օրը մասնակցեցին 838 հոգի, ալսինքն ալդքան ձախով. հետևապէս ալս տարի մասնակցող ձախներ աւելի էին մօտ 200-ով).

2) Ըստ ազգութիւնների ժողով եկան 642 հազ, 203 ոռու, 203 վրացի, 24 լիհացի, 12 մահմեղականներ, 15 գերմանացի (ամենքը ի հարկէ ռաւսահպատակներ). Խոկ քէշարկութեան մասնակցեցին վրացիններից 30 հոգի աւելի պակաս. Ախալիսով հակերը կազմում էին ընտրողական ժողովի շուրջ 60%, միւս բոլոր ազգութիւնները 40% -ը.

3) Ծնտրւելու համար առաջարկւած էին նախօրօք թերթիկներով 290 հոգի. (զորա համար ժամանակ էր որոշած մինչև մայիսի 4-ը, քաղաքացին վարչութեան մէջ). զոցանից ոմանց ընտրողական իրաւունք շունենալու պատճառով՝ մազիսի 18-ին իրենց տուփը դրին 181 հոգի, որոնցից, ձախների բացարձակ առաւելութեամբ, պէտք է ընտրւէին 80 իրաւասու. և 16 անձնափոխանորդ).

(1893 թ. մազիսի 16 ի չետոյ բեկանւած՝ ընտրութիւններին թեկնածուների թիւն էր 175, ուրեմն մօտ նունքան, որքան ալս տարի. իսկ մազիսի 30-ի վաւերացան ընտրութիւններին իրենց քէտուփը դրին միան 92 հոգի, զլիսաւրապէս, որովհետեւ զրեթէ բոլոր վրացիք և ապառուսներից շատերը ու նաև հազ երիտասարդ կուսակցութեան թեկնածուները իրենց տուփերը ետ վերցրին):

Զաների բացարձակ առաւելութեամբ ընտրւեցին ալդ օրը, սական, միան 57 հոգի. հատեապէս միւաները (23 իրաւասու և 16 անձնավոխսանորդ) պէտք է ընտրւեն իաջորդ ժողովում, որ կալանալու է լունիսի 1-ին:

(1893-ին մայիսի 16-ի բնկանած ընտրութիւններին ընտրւեցին 72 հոգի, մայիսի 30-ի վաւերական ընտրութիւններին 75 հոգի. պակասորդը լրացւեց լրացուցիչ ընտրութիւններին):

4) Ընտրողական տուփերը շարւած էին ալբրենական կարգով, շարքերով, 25-ական տուփ ամեն մի շարքում: (1893-ին տուփերը շարւած էին ոչ թէ ալբ թենական կարգով, ալլ նակած թէ ով ինչքան ձախով էր առաջարկւած: Եւ որովհետև զորքովը կոչւած կուսակցութիւնը ամենազօրեղն էր և նորա թեկնածուները ամենից շատ ձախով էին առաջարկւած, ուստի նոյն տուփերն էլ սկզբում դրւեցին, որով և հեշտանում էր ամբոխի համար ջոկելը թէ ով իրենց թեկնածուն է և ով—ոչ. նոյն առանց ալենակութեան առաջին 80 տուփերը սպիտակ դցեցին, լետով դրւած տուփերը՝ սի):

5) Քւէարկութեան համար գնդակներ բաժանողներ նշանակում էր նախագահողը, քաղաքաղլսի պաշտօնակատար Ապ. Աֆ. Խւանենկօն, ընտրողների միջից, ուշք դարձնելով, որ ազգականը չկանգնի ընտրւող ազգականի տուփի մօտ գնդակ բաժանելու համար:

6) Քւէարկութեանը կանչւում էին բնտրւողները ան հերթով, ինչ հերթով որ նոքա ժողով էին եկել և թղթին ստորագրել:

7) Քւէարկութիւնը տեսեց առաջուակ ժամ 10-ից մինչև ժամ 5<sup>1/2</sup>, կէսօրից լետով:

Ամեն ընտրող, առաջին տուփից մինչև վերջին տուփը գնդակ դցելու համար, ամենալաջող դէպքում գործ էր զուում 19—20 րոպէ ժամանակ:

8) Ամեն քւէտուփի վրայ դրւած էր սպիտակ կարդոնի թղթի վրայ տպած քւէարկուղի ազգանունը, անունը և հօրանունը՝ ոռուսերէն, վրացերէն և հայերէն՝ լեզուներով և տառերով: Եւ նշանակւած չէր թէ ով որքան ձախով էր առաջարկւած:

9) Քւէարկութեան գնդակները ներկալայնում էին ֆլուտըներ՝ սպիտակ ներկած:

10) Քւէարկութիւնը վերջանալուց լետով՝ ամեն մէկի սպիտակ և սի քւէները հաշելու համար նախագահողը կարգադրել էր նախօք սեղաններ դարսել, որպէս զի միաժամանակ հաշըւեն մի քանի տեղ. ամեն մի տուփ հաշելը չանձնուում էր երեք հոգու, որոնցից մէկը հաշըւում էր, միւս երկուը հետեւում էին. ամեն անդամ հարիւր ձան հաշըւիս՝ նշանակւում էր հաշւակալի վրայ Հաշըւում էին նախ սպիտակ քւէները, ապա սեերը: (1893 ին մայիսի 16-ին հաշեցին թէ սպիտակները և թէ սեերը միան առաջին տուփերի համար՝ ընդհանուր գումարը մի անդամ առմիշտ որոշելու համար. իսկ լետով հաշըւում էին միան սպիտակները, սեերի

թիւը նշանակելով այն, ինչ կը ստացւէր ընդհանուր գումարից հանելով սպիտակների թիւը: Որովհետև ալդ ձևով վարւելը կատարելապէս ճիշտ չէր՝ ուստի նահանգական ատեանը ալդ ընտրութիւնները բեկանեց, և նոր ընտրութիւններ եղան նոյն տարւալ մալիսի 30-ին):

Տուփերից ոմանց համար սպիտակ քւէները, սիալը նկատելու դէպ-քերում, նորից հաշըւեցին. և մի անգամ էլ նկատելով սիսալը սպիտակ-ների մէջ՝ (իշխ. Վ. Գ. Կիպիանու տուփում), սների թուզ ստուգւեց սպիտակների թիւը և իսացւեց, որ մի հարիւրը չէր նշանակւած հաշւակալի վրաց: Ալդ առիթ տւառ իշխ. Կիպիանուն յալտնել, որ իւր սպիտակների մասին կասկած է եղել և ստացած է ոչ թէ 557 սպիտակի, ալլ 457 սպի-տակ, հետեւապէս ընտրաւած չէ. բայց քաղաքացին վարչութեան անդամները յալսնեցին, որ քանի որ սների թիւը 457 էր և դորա մասին ոչ մի կատ-կած չի եղել, ուստի սպիտակների թիւը չէր կարող 457 լինել, ալլ 557, քանի որ քւէարկողների թիւը եղել է շուրջ 1060: Կիպիանին անուամն-նալիւ պնդեց իւր ասածի վրաց:

11) Ամեն տուփի սպիտակ ու սև քւէները վերջացնելիս՝ արդիւնքը գրւում էր քւէարկողի քարտի վրաք և ստորագրուում հաշիւ անող կամ հաշւելուն հսկող երեք հողու ձեռ քով: Ապա քարտը տրւում էր նախազա-հողին, որը արդիւնքը բարձր ձանով կարդում էր և արտազրում ընտրողա-կան ցուցակում: Ինքը նախազահողը զնդակներ հաշւելուն չէր մասնակ-ցում:

12) Քւէներ հաշւելը բոլոր 181 տուփի համար տեսից ժամ 5-ից մինչև զիշերւակ ժամ 1<sup>1/2</sup>:

(1893-ին ալդ գործը վերջացաւ երեկոյեան ժամ 9-ին):

13) Ապա կարդացեցին ընտրաւածների ազգուանունները, որի միջո-ցին իշխ. Կիպիանին արաւ վերը վիշւած իւր յատարարութիւնը իւր ընտ-րութեան մասին:

14) Միջնադէպքերից վիշելու է հետեւալը: Երբ հաշւել էին իշխ. Նիկ. Արկանաբազուկ-Արդութեանի տուփը և ներկալացրել քարտը նախա-նելիք: Արկանաբազուկ-Արդութեանի տուփը և ներկալացրել քարտը նախա-գահողին, վերջինս կարգաց թւերը ալսպէս՝ ընտրողական 794, ոչ ընտ-րողական 309: Ծողովականներից նկատեցին, որ գումարը 1103 լինելով՝ հաշւելը սիսալ է կատարւած: Քաղաքացին դումայի քարտուղար Զրելաւը նկատեց, որ սպիտակները 794 չեն, ալլ 745: Նախազահողը նիկա-տեց նրան, պ. քաղաք. քարտուղար, խնդրեմ լաւ զրեք: Զրելաւը—Գրողը ես չեմ, ալլ հաշւողները: Նախազահող—Ախնդրեմ, հսկեք, որ լաւ զրենու Զրելաւը—Անկ ես ձեզ խնդրում եմ, որ լաւ կարգաքո՞ւ: Նախազ.—Պ. քար-քարտը նեռածական: Նախազ.՝ «Նախազահողի իրաւունքով ևս ձեղ հրաւի-ներդ հեռածական»: Նախազ.—«Նախազահողի իրաւունքով ևս ձեղ հրաւի-

քում եմ հեռանալ ժողովից»։ Զրելաեւ—«Ես կ'երթամ, բայց բողոքում եմ։ Ապա քարտուղարի պաշտօնը ստանձնեց գործավար պ. Քահանեան։

## III

## Կուսակցական պայքարը

Կուսակցութիւններ, Ներկայ քաղաքացին ընտրութիւնները կուսակցական մտքով դեկավարելու համար գործում էին հետեւալ կուսակցութիւնները։

1) Դորցովը կուսակցութիւնը, այն՝ որ իշխող է եղել մինչև աւսոր, կազմած է գլխաւորապէս Սոլոյակ հարուստ թաղի ներկայացուցիչներից, ալդուեղ են հայ հարուստ վաճառականները և բանկիրները, բուրժուազիան։ Ազդ կուսակցութեան զիխաւոր զեկավարներն են եղել անցեալում նախկին քաղաքագլուխ պ. Ալեքս. Մատինեան և հանգուցեալ քաղաքագլուխ Պաւլոս Խոմալեան։ Ներկալում ազդ կուսակցութեան ամենից աչքի ընկնող պարագլուխ կարող է համարել պ. Կոստանդին Ալիխանեան, համալսարանական (իրաւագէտ), կառավարիչ «Դմեդատնալին ապրանքների բարձրագոյն հաստատած ընկերութեան», անդամ Թիֆլիսի «Առևտրական բանկի խորհրդի», դիրեկտոր «Թիֆլիսի երաժշտական դպրոցի» և իրաւասու քաղաքացին գումազի, Բնիկ Գորեցի, և իբրև ազգական հաւերէն լեզվին օտար, փողրաթներով հարստացած և Թիֆլիսում վաղուց հաստատած օջաղից վտիտ, շատ գործունեալ, մանրակրիստ, առանց լայն հայեացքների, ճիշտ իւր գործի մէջ և խստապահանջ, աշխովծ և նեղողի, ձարափիկ—միշտ աշխատելով սակայն իւր շրջանի մասսավից, որ առևտրական շրջանն է—որոշւել որոշ պրինցիպներ ձանաչելով։ Նա մէկն է քաղաքագլխութեան թեկնածուներից։

Դուրցովը կուսակցութեան մէջ կշիռ ունեցող ազ ներկայացուցիչներն են պ. պ. Դեորդ Եւանդուկեան, Արգար Յովհաննիսեան, Միքայէլ Թամամշեան, Եղ. Մ. Ակոպով և ուրիշներ։

Զորս տարի առաջ ազդ կուսակցութեան ձաները կաղմում էին ժողովականների կէսից շատ աւելի։ ալսպէս, 1893-ին մաքիսի 16-ի ընտրութիւններին, ուր Ներկայ էին 828 ձայն, դուրցովը կուսակցութեան թեկնածուներից Պ. Խոմալեան ստացաւ 622 ձայն, Թամամշեան Միք. 609, Գ. Աւալեսան 600, Ալ. Մատինեան 596, Յովհ. Ծովիանեան 574, Կոստ, Ալիխանեան 562 ձայն, և ալլն. և նոյն իսկ անպիսի չնչին ուժեր, ինչպէս աժմ հանգուցեալ Ա. Բաբանեան (526 ձայն), Բարս. Կանդուրակեան (513 ձայն) ստացան ձայների նշանաւոր տոկոս<sup>1)</sup>, Ազդ կուսակ-

<sup>1)</sup> Օգուռում ենք դէպքից, թէն շատ ուշ, Մուրճ 1893 թ. № 5, էջ 820—822 տպած ցուցակում քւէարկւողների ստացած ձայները ուղղել։

ցութեան գլխաւոր սիւներից, ի բաց առած Եազ. Մ. Ակոպովին, որը ստացել է 468 ձայն, ոչ ոք չէր ստացել 500-ից պակաս ձայներ, և կուսակցութիւնը անցկացրեց իւր թեկնածուներին՝ թէ հայրից, թէ ուուներից և թէ վրացիներից:

Ազդպէս չէր այս անգամ. ազդ կուսակցութիւնը իրօք պահպանել է իւր նախկին ձայները, բայց արդէն նա իւր դէմ ունէր այս անգամ աւելի հակառակ ձայներ, քան ունեցաւ 1893-ին. Հնորհիւ դորան՝ նա չկարողացաւ. իւր բոլոր թեկնածուներին անցկացնել. ալսպէս օրինակ Եազ. Մ. Ակոպով, այս անգամ ստանալով 523 սպիտակ, ունեցաւ 536 սե. Խահակ Բուզգանեան, որ ստացաւ 478 ձայն, ունեցաւ 577 սե. բժ. Ա. Վարդանեան, որ ստացաւ 520 սպ., ունեցաւ 543 սե, Գ. Տէր-Ասատուրով, որ ստացաւ 511 ձայն, ունեցաւ 550 սե.

Ազդ կուսակցութեան թեկնածուներից աւելի ապահով կերպով անցկացան նոքա, որոնք ընդունւել էին միւս երկու հայկական կուսակցութիւնների ցուցակներից որ և է մէկում, կամ երկուսի մէջ ևս հաւասարապէս:

Սական թէ անցնաւից աւելի պակաս, բայց և այնպէս, ներկայում ազդ կուսակցութիւնը ևղած բոլոր խմբերից ամենից զօրեղն էր. Ազդ ոչժը պէտք է մեկնել նրանով, որ նա պահպանւում է կրթւած ովերով. կուսակցութեան զլուխները, ազդ պէտք է խսոստովանել, բաւականաշափ հե. զինակութիւն ունին, որպէս զի չընկճաւն ամեն մի քայլի առաջ. նոքա աշխատում են իրենց ցուցակը կազմել այնպէս, որ կարելին չափ շատ մասնագէտ ովեր մտնէն նորա մէջ, ինժինէրներից, բժիշկներից, փաստաբաններից, երբէք ի հարկէ չմոռանալով բանկային գործիչներին և վաճառականութեան տուղերին, որոնց հետ բազմաթիւ ընտրողներ կապւած են իրենց շահերով:

---

բանից երեսում է, որ ցուցակը սկսած № 1-ից մինչև № 40 (Քիւչարեանց Գ. Վ. 507 ձայն) ուղիղ է տպւած. իտու սէտք է զար Մ. Վ. Լունկնիչի անունը 536 ձայնով. բայց այդ անունը ազդ տեղում բաց է թողւած, մինչդեռ նորա ստացած ձայները վերագրած են Յ. Նուրեանին, որը իրօք ստացել էր 332 ձայն. Հնորհիւ ազդ սխալի՝ Եակ. Մալինինի հաջները (562) վերագրած են Մամիկոնեանին, և այսպէս է շարունակ մինչև Խ. Օտտովով սկու անունը, որի ստացած ձայները (351) վերագրած են Օտտէնին. իսկ Ֆ. Օտտէնի ձայները (511) չեն նշանակւած. ապա սկսած Ա. Պաշկնիչից (519 ձ.) ձայները նորից ուղիղ են նշանակւած, բացի հետեւալ վրիպակներից. բժ. Մ. Ռոտինեանցի համար տպւած է 289, պիտի ուղղել 489. Ա. Խաչատրեանի համար տպւած է 835, պէտք է ուղղել 335. Ցովհաննէս Ծովիանեանի (Ծովիանի) համար տպւած է 551, պէտք է ուղղել 574.

Ներկաւ 1897-ի մայիսի 18-ի ընտրութիւնների արդիւնքները կատարելապէս անվրիպակ են,

Շնորհիւ իրենց համեմատապէս աւելի զօրեղ ոյժին, դուրցովքը կուսակցութիւնը թէն ամենազօր չէր, ինչպէս 1893-ին, բայց դոնէ աչնքան ուժեղ էր, որ կարողացաւ աջողեցնել նաև այն մի տասնեակ հոգու ընտրութիւնը, որոնք միան իւր ցուցակում կալին, իսկ ուրիշ կուսակցութիւնների ցուցակում չկալին, իսկ իւր ամբողջ ցուցակից, որից քէարկւեցին 74 հոգի, ընտրեցին 50 հոգի, ամենամեծ մասամբ ի հարկէ անպիսիք, որոնք թեկնածու էին նաև այլ կուսակցութիւններից մէկն ու մէկի կամ բոլորին:

2. Կովկաս հիւրանոցի խումբը. Այս խումբը նոր էր կազմւած. նա բաղկացած էր նախկին դումափի ընդդիմադրական մի խումբ անդամներից. նորա ղեկավար անդամը կարելի է համարել պ. Արշակ Բարեանին. Այդ խումբը աշխատում էր իրա հետ միացնել բոլոր ընդդիմադրական ոյժերը՝ թէ հայերից, թէ ռաներից և թէ վրացիներից. այդ պատճառով նա սկզբում կրում էր «միջազգակին խումբ (սահերազմօնալինա ցրուպա)» անունը, բայց շատ շուտով համոզւեց, որ ներկաւումն անհնարին է բոլոր ազգերի քիչ-շատ կարեսրութիւն ներկաւացնող ներկաւացուցիչներից մի կատարելապէս համերաշխ խումբ կազմել՝ մինենոյն ոգով ու ծրագրով ընտրողների մէջ պրոպագանդա անելու համար. այդ պատճառով նորա վրացի անդամները չուտով հեռացան, իրենց համար անկարելի նկատելով զուտ վրացական իւմբերից զատել, համոզւած լինելով, որ վրացի ընտրողների մէջ՝ նոքա ոչ մի հեղինակութիւն չեն ունենալ. Ռուսներից թերես մի երկու հոգի մնացին, չամենայն դէպս շատ անկարեսոր ուժեր էին նոքա. ալսպիտով այդ խումբն էլ դառա զրեթէ միան հայերից բազկացած. Այդ խումբը չառացաւ այն կարեսրութիւնը, որ կարելի էր սպասել մի լուրջ ընդդիմադրական խմբից. Պատճառը այն էր, որ նա չկարողացաւ իւր հետ միացնել բոլոր բնդդիմադրական ուժերը նոյն իսկ հայերից. հաչ երիտասարդ կուսակցութիւնը, օրինակ, առանձին գործեց. Կաւկազ հիւրանոցի խմբի ցուցակում կը գտնէք ռուս-վրացական ցուցակից խոշոր փոխառութեան կը գտնէք Հաւկաբարում պ. Վարշամեանի ղեկավարութեամբ կազմած մի տասնեակ հոգու ցուցակը. կը գտնէք նաև երիտասարդ կուսակցութեան թեկնածուներին. բայց այն աստիճան անսկզբունք մի խումբ էր զա, որ երբ տեսաւ թէ հաչ երիտասարդ կուսակցութիւնը զորա նով չշլացաւ և շողոքորթւած չզգաց՝ նա, կովկաս հիւրանոցի ալդ խումբը, իւր ցուցակից հանեց հաչ երիտասարդ կուսակցութեան ներկաւացուցիչների անունները, որ սական միմիան ժպիտա առաջացրեց հաչ երիտ. կուսակցութեան երեսին. Այդ պարզ ի պարզու ցուց է տալիս, որ ալդ խումբը ոչ մի ղեկավար միտք չունէր իսկապէս. ընդդիմադրութիւն-օպպոզիցիա-խօսքը նա միան շահագործում էր, աչ ու ձախ կոմպրոմիսներ անելով ձախներ վաստակելու համար. Այս խումբը իւր լուսերը դրած էր ահա թէ ինչ հան-

գամանքի վրայ, ոռւսները և վրացիք խմբի անդամներին սպիտակ կը տանի,  
կամենալով հակերի տիրապետող ուժը դումալում ջախչախել. հաչ երիտա-  
սարդ կուսակցութիւնը իբր թէ պիտի իրա հետ միանար, իսկ հակառակ  
դէպքում նա պէտք է իրա հնու համերաշխ գնար, որովհետեւ սա ևս ընդ-  
դիմադրական կուսակցութիւն է. Աւս բոլորը կողմնակի նպաստներ պիտի  
լինէին. Բայց հարկաւոր էր նրան նաև սեփական ձախներ, մեծ քանակու-  
թեամբ, այդ պէտք էր որոնել ամբոխի մէջ. օրտեղից գտնել այդ ձախները.  
Հաւլաբարում, ուր գործում էր մի խումբ պ. Վարշամեանի զեկավարու-  
թեամբ. Ընդունելով Հաւլաբարի խմբի թեկնածուներին, նոցա մէջ ամե-  
նից առաջ պ. Վարշամեանցին, իւր ցուցակում—ահա ուրեմն իւր կողմը  
կ'անցնէր ամբողջ Հաւլաբարը, ուր, որպէս կարծւում էր, կան 200—300  
ձախն ունեցողներ.

Աւս լուսերով այդ խումբը գնաց ընտրութիւնների ժողովը. Բայց  
չընտրւեցին ոչ պ. Արշակ Բարեան (530 ձախն ընդդէմ 530-ի). հաւասար  
ձախներ) և ոչ մանաւանդ պ. Ա. Վարշամեան (377 ձախն ընդդէմ 691-ի).  
Խմբի միւս ասդամներից՝ իշխ. Պետրոս Արզութեան (671 ձախնավ) անց-  
կացաւ. ոչ որպէս ընդդիմադրական, այլ մանաւանդ չնորդիւ իւր ազգա-  
նունի, թէս այդ գեռ չի նշանակում թէ նա կարող է միան իւր ազգա-  
նունով պարծենալ, նա արժանիքով անձնաւորութիւն է. բայց բոլոր չորս  
Արզութեանները ընտրւեցին, ինչ խմբերի և պատկանէին նորա. նոյն  
իսկ իշխ. Նիկ. Եգ. Արզութեան, որը պ. Արշակ Բարեանի խմբումն էր,  
և խմբի չամենախն դէպս շատ աւելի քիչ կարենոր անդամն էր քան  
պ. Բարեան, ստացու 633 ձախն, ալսինքն պ. Բարեանից 133 ձախնով  
աւելի. Այդ խմբի միակ չաջողութիւնը պիտի կալանար պ. Արշակ Բա-  
րեանի անձնական չաջողութեան մէջ. ուրիշ միւտք չի կարելի վերագրել  
այդ խմբին, որը եթէ իսկապէս ընդդիմադրական էր ուզում լինել—պէտք  
է աշխատէր միմիախն և եթ լօգուտ հաւ երիտասարդ կուսակցութեան,  
որը անխառը ընդդիմադրական կուսակցութիւն է, բառիս բռն խմաստով:  
Եւ եթէ պ. Բարեանը ստացաւ հաւասար ձախներ ս ընտրւեց՝ դորա պատ-  
ճառը ան է, որ նորա անունը չկար հաչ երիտասարդ կուսակցութեան մէջ:

Սական ի՞նչո՞ւ հաչ երիտասարդ կուսակցութիւնը՝ չէր ընդունել  
պ. Բարեանի անունը իւր ցուցակում. Ընթերցողներին հարկ ենք համա-  
րում ասել, որ պ. Արշակ Բարեան քսովաքալին դումակի ամենազործնն  
անդամներիցն էր անցեալ քառամեակում, կազմելով փոքրաթիւ ընդդի-  
մադրականների կենտրոն: Դատելով ախն ջերս մասնակցութիւնից, որ նա  
ունենում էր դումակի վիճաբանութիւնների մէջ, ախն անդուլ գործունէու-  
թիւնից, որ նա ցուց էր տալիս այլ և այլ մասնաժողովներում, ախն  
հարցերից, որոնց չարուցանելու և պաշտպանելու հետ կապել է նա իւր  
անունը,—պ. Բարեանը, ալսպէս ասած, կոչւած իրաւասուներից էր: Պո-

քա ալեպիսի արժանիքներ են, որ նորա վերընտրութիւնը ինքն իրեն պէտք է չանձնարարւէր հայ երիտասարդ կուսակցութեան ուշաղրութեանը։ Սակայն նա չընդունեց, որովհետեւ պակաս էր հաւատը զէպի պ. Բարեանի կուլի անկեղծութիւնը, պակաս էր հաւատը զէպի նորա սկզբունքների անխառն մաքրութիւնը։ Եւ այդ անվատահութիւնը հիմնած էր հէնց պ. Բարեանի գործունէութեան եղանակների վրա քաղաքալին դումալում։

Տեղական մամուլը ընդհանրապէս խրախուսական էր Կովկաս հիւրանոցի խմբի և նորա կազմած ցուցակի համար. ալսպիս՝ Խօսք Օօօզք-թիւ, Մշակի. Բայց դորանից մի առանձին բան դուրս չեկաւ. խմբի 7 թեկնածուներից անցան միայն 27 հոգի, որոնք կային նաև Գևորգովլը կուսակցութեան ցուցակում, բացի երկուսից, որոնց ընտրուելուն միծապէս օգնել էր նոցաւ տոհմապին ազգանունները։ Արդիւնքը փոքր է, եթէ ի հակատի ունինանք. որ խմբի ցուցակի մէջ ընտրելու հաւանականութիւն ունեցող շատ ազգանուններ կային և որ մամուլի մէջ պաշտպանութիւն էր գտնում։

Կովկաս հիւրանոցի խմբի դաշնակիցը եղաւ Հաւլաբարում գործող անասնաբուժ Վարչամեանի խումբը, որին կը նւիրենք մի քո՞նի տող։

3. Հաւլաբարի խումբը. Հաւլաբար թաղը, ուր 30—35,000 բնակին են հաշում, քաղաքալին դրւմակի կողմից ամենաչքաթող արած քաղաքամասն է. այդ թաղը, չնորհիւ իւր խեղճութեան, այլ և մանաւանդ չնորհիւ այն հանգամանքի, որ Հաւլաբարը չի արտադրել իւր մէջ բնակող դիրքաւոր անձնաւորութիւններ, նոյն իսկ ոչ վաճառ ական դասակարգից, — այդ թաղը չի ունեցել դումակի մէջ իւր նախապատիւ իրաւասուները։ Այդ հանգամանքները հող էին պատրաստել տեղական պրոպաղանդակի համար, որի համաձայն Հաւլաբարը պիտի դումակում լատկապէս հաւլաբարցի մի քանի իրաւասուներ ունենալ։ Դորանից օգտել էր պ. Վարչամեանցը այդ մտքով նախապատրաստելու Հաւլաբարի ցենզու ուր բնակիչներին, իսկ Հաւլաբարի բնակիչներից ընտրութիւններին մասնակցելու իրաւունք (ցենզ) ունեցողներ հաշում էին իրենք մինչ 250 հոգի, որոնցից, սակայն, միայն մի մասը հաւանօրէն կը գար ընտրութիւններին։ Պր. Վարչամեանցը գտել էր համախոններ Հաւլաբարում, որոնց հետ և կազմակերպել էր գործը։

Սակայն նոյն Հաւլաբարում մի փոքր աւելի ուշ պիտի գործէր նաև հայ երիտասարդ կուսակցութիւնը, որը Հաւլաբարում միշտ ունեցել է հաւատարիմ կուսակիցներ հայոց եկեղեցական-ծխական և այլ ընտրութիւնների և գործերի համար, Շնորհիւ դորան՝ Հաւլաբարի գործողների մի մասը միացաւ իրեն ծանօթ հայ երիտասարդ կուսակցութեան հետ. իսկ մի մասը գործեց ալ. Վարչամեանի հետ, որի երեան զալը՝ ընտրողական գործում և նոր էր և անսպասելի, առանց որ և է անցեալի Բայց այդ

միութիւնը մեծ մասամբ, միայն թիւրիմացութիւնների: արդիշնք էր. շուտով պիտի երեար, որ Վարչամեանց համերաշխ գործում էր մի կողմից պ. Արշակ Բարեանի (Կոմիկաս հիւրանոցի խմբի) հետ, որի հետ և ձուլւեց լետով, և միւս կողմից—դորա հակառակ—իշխ. Նապոլէօն Ամատունու հետ, որի թելաղրութեամբ կազմւած էր մի ազ ցուցակ նոյն Վարչամեանցի ձեռքով տարածելու համար. թէն առանց չաջողութեան: Ազդ, ակսպէս ասած, կեզծ ցուցակում առաջին տեղն էին բռնում, Ռէտերից յետով՝ Նազ. Ամիեանց, բժ. Կ. Քիւչարեանց և ուրիշներ, Ամատունու վազուցւայ բարեկամներից, և միայն լետով՝ Բարեան և ուրիշներ, և վերջում միայն իշխ. Արդութեաններ Պետր Միխ. և Նիկոլայ Եգորիչ:

Պր. Վարչամեանցի աչսպիսի մի անգույն գործունէութիւնը վարձատրւեց ըստ արժանուոն. Ընտրութիւններին նա ստացաւ միայն 377 ձան, ներկայանալով իր մ'կը ամենաքիչ ձան ստացածներից:

Հայ երիտասարդ կուսակցութիւնը նոյնն էր, ինչ 1893 թւականի քաղաք. Ընտրութիւններին, երբ նա առաջին անգամ մասնակցեց ալդ գործում. նորա կազմութեան և գործունէութեան մասին Մուրճ'ը խօսել է 1893-ին և խօսեց Մուրճ'ի ներկաւ տարւալ առաջին համարում. Մի հանգամանք սակայն լիշելու է առանձնապէս. Թիֆլիսի ուսացաց թերթերը, որոնք լաւ ծանօթ չեն մեր ներքին հանգամանքներին, ալդ կուսակցութիւնը անւանել էին «մշակական կուսակցութիւն» Նոքա չգիտեն կամ չգիտէին, որ հայ երիտասարդութիւնը և Մշակ կատարելապէս նոյն բաները չեն. նոքա չգիտէին, որ Մշակ'ի խմբագրութիւնը կարող է մի բան ուզիլ, հայ երիտասարդութիւնը՝ մի ուրիշ բան և հակառակը Ակսպէս էլ պատահեց այս անգամ. Մշակ'ի խմբագրութիւնը և նորա մերձաւոր բարեկամները վճռեցին «ակտիւ կերպով չմասնակցել Ընտրութիւններին. և պաշտպանւելու համար ուսւ թերթերի դէմ՝ նա չակտարարեց երկու թէ քանի անգամ, որ ալդ կուսակցութիւնը պակազմակերպւած մշակական կուսակցութիւնը չէ: Եւ չէր սխալում այն մտքով, որ հայ երիտասարդ կուսակցութիւնը իրեն չէր էլ անւանում «մշակական» ալդ կուսակցութիւնը ներկացւում գործեց այն կերպ, ինչպէս 1893-ին և այն ուժերով, որ համաձայն էին այս անգամ ևս միասին գործելու: Մշակ'ի հակացուցը ժողովրդի մէջ ոչ մի խլրտում չառաջացրեց, թէն գործող խրմրից հեռացրեց մի քանի անձեր, որոնք կարող էին օգտակար լինել:

Հայ երիտասարդ խումբը 1893 ին, երբ բոլոր ուժերը միասին էին գործում, կատարեալ պարտութիւն կրեց, չկարողանալով անցկացնել ոչ մէկին իրենց չատուկ թեկնածուներից: Այս անգամ խումբը համեմատապէս աւելի չաջողութիւն ունեցաւ. առանց պաշտպանութեան Գորդովը խմբի և ոչ էլ Կոմիկաս հիւրանոցի խմբի, երիտասարդների խումբը կարողացաւ անցկացնել իւր չատուկ ներկայացուցիչներից մէկին՝ պ. Նազա-

քեթ Տիգրանեանցին (537 ձ.), նաև խմբի ցուցակից անցկացաւ զպրոցական գործիչ պ. Ցովսէփ Մելիք-Քեղլարեան (հ56 ձան), որի անունը չկար Դւորցովլը իմբի ցուցակում, Բացի ալդ բացառիկ լաջողութիւններից, խումբը մեծապէս նպաստեց այն մի քանի անձերի ընտրութեան, որոնք թէն վակելում էին Դւորցովլը զօրեղ խմբի պաշտոպանութիւնը, բայց աչ նու ամենայնիւ կը սեանալին, եթէ զինէր հայ երիասարդ կուսակցութեան աշակցութիւնը, որի ցուցակում ևս նոքա ընդունւած էին. ալսպէս Վաս. Գ. Ղորդանեան (540 ձան), Օստրոգորսկից (552 ձան) Քալանթար (585 ձան). Շիմկեիչ (555 ձան) և Յակիմով (535 ձան):

530 ձանով թեկնածուները սեանում էին, հետեապէս, եթէ ալդ վերջիշեալներին պակասէր մէկին (Յակիմովին) 6, միւսին (Ղորդանեան) 10, միւսներին 22, 23 և Քալանթարին 53 ձան — նոքա պիտի սեանալին:

Ալդ ձաները նոքա վաստակել էին հայ երիտ. կուսակցութիւնից, որը ալսպիսով առնեալն եօթ հոգու ընտրելը լաջողեցրեց:

Անհետաքրքրական չէ հետեալ մանրամաւնութիւնը. երբ հայ երիտ. խումբը առաջարկեց գւորցովլը խմբին՝ որ վերջինս իւր ցուցակում ընդունի նորա ներկայացուցիչներից հինգ հոգի (Նազ. Տիգրանեանցին, Արշ. Տէր-Գրիգորեանցին, Դարր. Միրզղեանցին, Ատ. Լիսիցեանին և Արշ. Բարխուզարեանցին), գւորցովլը խումբը ընդունեց իւր ցուցակում միան պ. Արշ. Բարի ուղարկեանցին. բայց սա ընտրութիւններին շանցաւ, ստանալով միան 458 ձան, ալսինքն նոյնքան, որքան ստացան խմբի միւս ներկայացուցիչներից մի քանիսը, որոք ընդունւած չէին գւորցովլը խմբի ցուցակում։ Խակ երիտ. խմբի թեկնածուներից պ.պ. Ստեփան Կրսիցեան և Գետրոս Ալիքէպիան, որոնք չկաչին Դւորցովլը խմբի ցուցակում, ստացան իւրաքանչիւրը 504 ձան, ալսինքն շաս խոչոր փոքրամասնութիւն։

Երիտասարդութեան ցուցակում ընդունւած չէին գւորցովլը խմբի գլխաւորները՝ Կոնստ. Ալիխանեան, Միք. Թամամշեան, Գ. Յւանգուլեան և ուրիշներ։

Ի վերջու կարող ենք ասել, որ հայ երիտասարդութեան ցուցակից քէ-արկւոզ 57 հոգուց ընտրեցին 32 հոգի, որ կազմում է իւր ցուցակի ընտրազների 56. ս. օթ-ը. Դւորցովլը խմբի ցուցակից լետու, ուրեմն, ամենից շատ լաջողութիւն ունեցաւ հայ երիտ. խմբի ցուցակը։

Սա մի քալ առաջ էր 1893 թականի համեմատութեամբ։

Ուստի վրացական կուսակցութիւն։ Մենք չենք կարող ալնքան մանրամասն լինել այս խմբի մասին։ Նորա ընդհանուր զիծը հետեալն է. վրաց մէջ եղած կուսակցութիւններից ամենազօրեղը իշխան Խլիա ձաւճաւաձէինն է. խակ զուտ ուսւական կուսակցութիւն չկալ Թիֆլիսում. ալդպիսին նդոււմ է սաեղծել «Աւակալ» թերթի ալժմեան խմբագիր Ա. Ի. Հ. ջոն։ բայց

նորա ճիզը առաջմ դարձրած էր ոռուս-վագական միութեան վրաչ, որի հիմքը պիտի կազմի ատելութիւնը դէպի հայերը, զէպի հայութիւնը, իսկ մասնաւորապէս դէպի հայերի գերակշռութիւնը թիֆլիսի քաղաքավին դումալում. Վելիչկօն արդ մտքով սկսեց սիօսեմական հակա-հայկական պրոպագանդա, որը երեաց նոյն խակ հայկական ազգանունները ծաղրելու մէջ, Վելիչկօնի մի քանի հիմնական մտքերի հետ արդ խնդրում մեր ընթերցուները ծանօթ են Մուրճի ալս տարւաչ առաջին համարից. դորանից դէս Վելիչկօն շարունակեց իւր հակա-հայկական արշաւանքը, քրքը-բելով ամեն ինչ, ցուց տալու համար, որ մեծամասնապէս հայերից բաղկացած դուման իրը թէ հալածում է վրացիներին և ոռուսներին, պաշտօններ տալով միան հայերին. և ապա թէ՝ քաղաքի տները գնահատելիս՝ վրացոց և ոռուսների տները իրը թէ աւելի թանկ է գնահատել, իսկ հայերինը՝ աւելի պակաս, որով իրը թէ ոռուսները և վրացիք աւելի են հարկ տալիս քան հայերը, և ալն և ալն Վելիչկօնին օգնութեան հասան վրացիք, որոնց մէջ վրացոց Յնորիս-Պուրցելի լրազրի խմբագիր պ. Գունիան և ուրիշներ, որոնք տեսդենցիական թւանշաններ ներկայացրին նոյն միաքը հաստատելու համար Դոցա հակառակ՝ „Հովոյ Օօօզքնե“ թերթը զբաղեց նոյն թւերով, ցուց տաւ նոցա անճշութիւնը և բերաւ նոր թւանշաններ, ցուց տալու համար մեզադրանքների անհիմն լինելը. Վելիչկօնն կաւկազում սկսեց քարոզել իշխանութեան միջամտելու անհրաժեշտութիւնը կամ ցանկալի լինելը, և գորանով կամեցաւ ներգործել հայերի վրաչ, որ սոքա իրենք, իրենց սեփական կամքով, արսպէս ասած հեռանան ասպարէղից, իրենց գերակշռութիւնը տալով ոռուսներին և վրացիներին<sup>1)</sup>: Ապա խօսեց իշխ. Խլիս Ճաւճաւածէ իւր խմբագրած Խւերիս լրագրում, և ալդ լուսածը թարգմանաբար արտատպեց Խաւկազ լրազրիը իւր № 86-ում: Ազդ լուսածում իշխ. Ճաւճաւածէն անւանում է Թիֆլիսի հայերին կողոպսովները (ազգավին մտքով). Նա անւանում է նոցա ախիզաններ վրացոց հողի վրաչը, ալսինքն քըն և որներ, որոնք հաստատել են վրացոց հիւրընկալ երկրում, բայց որ ազդ եկուոնները (խիզանները) չափաւակում են և իրենց սեփականացնում իրենց չպատկանածը, իրբե չանողուններ —Մէջ մտաւ նաև վրաչը չալտնի հրապարակախօս, ալմմ Փոթիի քաղաքաղլուխ Եակով Նիկոլածէ, որը

<sup>1)</sup> Շատերից ահա մի քաղւածք կաւկազի մի խմբագրականից. „Ենք նիկու... не желательно было бы, чтобы пріостановлено было дѣйствіе городового положенія въ Тифлісѣ, какъ было когда то пріостановлено земское положеніе въ одной изъ внутреннихъ губерній; въдь они не обрадовались бы, если бы... было введено дѣленіе избирателей по вѣроисповѣданіямъ, съ указаніемъ максимального процента для той или другой категоріи, какъ, напримѣръ, для евреевъ въ нѣкоторыхъ мѣстностяхъ... Не слѣдуетъ доводить до нея.

Кавказъ, № 69, „Городскія дѣла“ լուսածը:

Նովս Օբողրենիե՛ի էջերում պաշտպանւելով աչդ թերթի խմբագիր իշխան Պ. Թումանովի իրեն վերագրածի դէմ, լատարարեց թէ ինքը եղել է և մնում է պաշտպան պրոցենտական ներկաչացուցչութեան Թիֆլիսի դումալում և որ նա հարկ է համարում, որ օրէնտրութեասի որոշւի իւրաքանչիւր ազգի իրաւունքը՝ պրոցենտական թւով իրաւասու ունենալ Թիֆլիսի քաղաքալին դումալում:

Մուամբէ ամսագիրը բռնել էր խիստ հալատեաց դիրք:

Այս բոլոր ձախների դէմ միան կւալի վրաց շարաթաթերթի խմբագիր Գէօրգիէ Ծերեթելին էր, որ կանգնած էր հաչ-վրացական համերաշխութեան հողի վրակ. բայց պ. Ծերեթելին իշխ. ձաւճաւածէի դէմ անգոր էր:

Վերջը չիշենք վրացի պ. Եակով Գոգեբաշվիլիի մի բրոշիւրը ռուսերէն լեզով<sup>1)</sup>). ազտեղ ուղղակի բաւոնւած է այն միտքը թէ հաչերը Թիֆլիսի դումալում պէտք է կազմեն միան մի երրորդականից մի փոքր աւելի, համաձայն Թիֆլիսի ազգարնակութեան բաժանումի:

Բայց ռուս-վրացական կուսակցութեան ձաւճաւածեան ցուցակը աւելի էլ հեռու էր զնացել ադ ցուցակում հաչերին տրւած էր 22 տեղ 80-ի մէջ! իսկ ռուսներին տրւած էր 23 տեղ, վրացիներին 28 տեղ... Այդ հանգամանքը պարզ ասպացուց է, որ ռուս-վրացական միութեան խական միտքը ոչ թէ արժանաւոր ներկաչացուցութիւնն է ռուսների և վրացիների իրենց թւական կարենորութեան համեմատ Թիֆլիս քաղաքում, այլ կատարեալ իշխանութիւն ձեռք բերելը քաղաքային դումալում և հաւերին իւտ մղելը իրենց առաջնարկ տեղից՝ դէպի երրորդակարգ տեղը... Եւ դեռ վրացիք Վելիչկովի և կոնսորտի հետ միասին պահանջում էին, որ հաւերի այդ ջախճախումը կատարւէր հէնց համերի իրենց ձեռքով... Ռուս-վրացական ցուցակից դուրս էին զցած այն վրացիք որոնք մօտիկութիւն ունեին հաւերի հետ կամ որոնք հալատեաց չէին. օրինակ, վրացի կոլուրանսկիի որ անցեալ քառամնակում միակ վրացի ձախնաւորն էր դումալում. Գէօրգիէ Ծերեթելի, որը 1893-ին համաձանւեց վրացիների կրած պարտութիւնից լետով, նորից քէտարկել լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ, թէն լետով, վրացիների ճնշող ազդեցութեան տակ՝ հրաժարւեց իրաւասուի կոչումից. չընդունւեց նաև երիտասարդ իշխ. Վասիլի Նիկոլ. Զերկեզով, (Կաւկազ լրագրի նախկին աշխատակից-պաշտօնեան), որը առան նուապէս հաճելի չէր կաւկազի խմբագիր Վելիչկո՛ին, և ուրիշներ:

Ալսպիսով կազմելոց ռուս վրացական և հրապարակապէս հակա-հաչկան մի միութիւն, որի հիման վրա և կազմեց մի ընդհանուր ռուս վրացական ցուցակ, որ քիչ առաջ վիշեցինք. Բայց ռուսների կողմից աչդ

<sup>1)</sup> Պրաւда օ լիֆլիք. յակով Գոգեաշվիլի. Թիֆլիս, 1897թ..

կողմը չէին քաղաքիս ուսու կարեսրագովն զործիչները, ինչպէս Խւանենիօ, քժ. Մալինին, Օպոչինին և ուրիշներ։ Եւ զոքա չընդունեցին ոռու-վրացական ցուցակի մէջ։

Ոռու-վրացական ցուցակում հայերից հիւրընկալած էին լաւտնապէս դւրցովը կուսակցութեան հակառակ գործողները, թէ հայ երիտասարդների ցուցակից և թէ կովկաս հիւրանոցի ցուցակից. ինչպէս, օրինակ, Նազ. Տիգրաննեան, Արշ. Քարեան և մի քանի ուրիշներ։

Ահա այն ֆակտորները, որոնք իրար խառնւցին մակիսի 18-ի ընտրութիւններին, Հետաքրքրական է խմանալ, թէ Ժողովւած չուրչ 1050 հոգին ինչ դիրք բանեցին կուսակցական և ազգանական տեսակետներից։

Տւած քւէները քննութեան առնելիս՝ երևում է հետեւալը։

1. Ոչ մի թեկնածու, ինչ ազդից և կուսակցութիւնից և լինելու նա, չստացաւ 267-ից պակաս ձայն, բայց ազդքան քիչ ձայն ստացաւ միայն մի հոգի (անգամ գործիչ ուսու Օգորողնե)։ Դորանից քիչ աւելին, 280 ձայն, բաժին ընկաւ մի ուրիշին (հայ, Աֆինոդէն Գաբր. Մելքումեան)։ Իսկ բոլոր ուրիշները ստացան 307-ից ոչ պակաս ձայն։

2. 300 ից պակաս ձայն ստացան միայն 2 իշխալ թեկնածուները. 300—400 ձայն ստացան 40 հոգի. 401—500 ձայն ստացան 55 հոգի. 501—600 ձայն ստացան 40 հոգի. 601—700 ձայն ստացան 24 հոգի. 701—800 ձայն ստացան 5 հոգի, և 800-ից աւելի (871 ձայն) ստացան 1 հոգի (Ռէլտէր)։

3. Թւանշանների աւելի մօտաւոր քննութիւնը ցուց է տալիս, որ ընտրողների մէջ 300 հայ կալին, որոնք համարեա առանց խարութեան ամեն պատահած հայի սպիտակ քւէ էին տալիս. և կալին 250 ոռու ու վրացի, որոնք ամեն պատահած ուսուի և վրացու սպիտակ քւէ էին տալիս՝ իսկ հակերին սե։

4. Գորցովը կուսակցութեան հայ թեկնածուները ընդհանրապէս անցնում էին 550—650 ձայնով, որոնցից 300-ը խարութիւն չդնող հայերից, 250—350 ձայն՝ զիստակցական կուսակցութերից կամ այլ գնահատողներից։ Գորցովը կուսակցութեան տիպական ներկայացուցիչներից՝ Տէր.Ասատուրեան ստացաւ 511 ձայն, և չընտրւեց. Ակոպով 523 ձայն և չընտրւեց, և Արտ. Ծուրինեան 567 ձայն ստացաւ և ընտրւեց։ Դոցա ձայն տւողները միմիայն գորցովը կուսակցութիւնից կարող էին լինել բացի խարութիւն չը դնողներից։ Որով զուտ գորցովը կուսակցութեան ձայներ որոշում են շուրջ 250։

5. Հայ երիտասարդ կուսակցութեան լատուկ թեկնածուները ստացան 454—504 ձայն, որից անխտիր հակերին սպիտակ քւէ տւողներին

դուրս գալով՝ մնում էին կուսակցութեան լատուկ ձաներ 154—204 ձան  
կամ կողու թւերով 150—200 ձան:

6. Կովկաս հիւրանեցի խմբի լանդուկ ձաները, նոն եղանակով որոշ-  
ում է 120—190:

7. Ռուս-վրացական միացած ձաները տալիս էին շուրջ 400 ձան  
լոգուտ ձաւմաւածեան ցուցակի. դրանից աւելի ստացածները օգտւել էին  
ամեն խմբերի հայերի ձաներից՝ մէկից աւելի, միւսից պակաւ. Ընտրւած  
ռուսները մեծ մասամբ ընտրւեցան հայերի ձաներով:

Քաէների քննութիւնը ցուց է տալիս, որ՝ հակառակ կաւկազի խըմ-  
բագիր Վելչկօ'ի և կոնսորտի ու իշխան ձաւմաւածէի լարձակողական  
դիրքին ու սպասնալիքներին, հայ ընտրողները բնաւ չէին թուլ տւել  
իրենց վախացնել, նոքա չընտրեցին լայտնապէս հակառացներին, թէն  
բոլոր հակական խմբերը իրենց ցուցակում զետեղել էին 80-ի մէջ 35—  
38 ռուս ու վրացիներ, և, պէտք է կարծել, անկեղծօրէն ցանկանում էին,  
որ գումարի կէսի չափ ոչ հայեր լինեն: Առաջմ 57 ընտրւածներից հայեր  
կան 37 հոգի, վրացիք 8 հոգի, ռուսներ 10, գերմանացի 2 հոգի: Վրա-  
ցիներից իշխ. ձաւմաւածէ, որ գուրցովք կուսակցութեան ցուցակում ևս  
կար, բայց ոչ հայ երիտասարդ խմբի ցուցակում, ստացաւ միան 504 ձ.  
ընդգէմ 559 սելի:

Եւ ոչ էլ ազդւել էին զեկավարող հայերը կաւկազիւերեան սպաս-  
նալիքներից. զեկավար հայ խորերը վարւեցին ալս դէպքում աշնպէս, որ-  
պէս կը վարւէին եթէ չը լինէր որ և սպասնալիք հայերի դէմ. հայերը,  
որպէս տեսանք, բաժանւել էին խմբերի ներքին կուսակցական դրդում-  
ներով, բնաւ չագրւելով ռուս-վրացական կոալիցիայի ուրւականով:

Ընտրւած վրացիներից արդէն երեք հոգի հրաժարական են տւել.  
նոյն բանին նոքա դիմեցին 1893 թիւն, Ընտրւածների մէջ են 8 բժիշկ,  
7 լինդիներներ և ճարտարապետներ, 3 փաստաբաններ, 5 գատարանական  
պաշտօնեաններ (հաշտարար դատաւորներ), 4 կառավարչական պաշտօնեա-  
ներ, 4 զինւորական, 3 մանկավարժներ, 3 խմբագիրներ, 7 բանկալին  
գործիչներ, 6 վաճառականներ և գործարանատէրներ, 4 հոգի լիրենց հա-  
տումով ապրողներ և 3 հոգի քաղաքաբէն վարչութեան անդամներ:

Ընտրւածներից 19 հոգի նոր մարզիկ են:

Վրացուցիչ ընտրութիւնների մասին տես լաջորդ երեսները:

## IV

## ԼՐԱՑՈՒՑԻՑԻ ՀՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յունիսի 1-ին կատարւեցին լրացուցիչ ընտրութիւնները, նոյն տեղյա ժողովարանի ամառավին ալգիում. Այս անգամ, նահանգապետի կարգադրութեամբ, ժողովը բացւեց ժամ 1-ին, եկեղեցական մեծ տօն լինելու պատճառով (Հոգեգալուստ). Նախագահում էր քաղաքագլխի պաշտօնակատար Ապ. Աֆ. Խւանենկօ: Անցեալ անգամ մեաց ընտրելու 23 իրաւասու և 16 անձնափոխանորդ, Բայց անցեալ անգամ ընտրածներից բոլոր վրացիք (Կօթ Հոգի) հրաժարեցին: Սա մի ցուց էր հայերի դէմ, և այդ կերպ էլ վարւեցին նոքա 1893 թին: Համաձայնութիւն էին չափանել Քւէարկելի քայլութեամբ—հրաժարական տարին, թէ իրը ինչու ազդ տուաշխին ժողովում միայն ալղաճ վրացի ընտրեցին: Ասպիսի խաղեր ընտրողական գործում իրենց թուլ են տալիս վրացիք: Դա պախարակելի է, և այդ հանգամանքը չի կարող առանց հետեանքի մեալ ապագանում: Վրացիք միայն ազգայնական պակքար էին մղում, և նոքա գործը տանուլ տաւծ են համարում, երբ ցանկացած թւով չեն ընտրում հայերի քւէներով: Կանգնելով այդ տեսակէտի վրաչ՝ նոքա արդարացնում են հրաժարականներ տալը նոյն իսկ ընտրելուց չետո՞յ երբ ցանկացած թւով չեն ընտրած: Առաջմա տրձանագրում ենք իրողութիւնը:

Ակսպիսով մնում էր ընտրել ոչ թէ 27, այլ 30 իրաւասու և 16 անձնափոխանորդ: Աստեղ էլ պէտք է նկատել, որ լրացուցիչ ընտրութիւններին բոլոր այն վրացիք, որոնք մայիսի 18-ին փոքրամասնութիւն սուացն, այլ ևս չկամեցան նօրից իրենց տուփը դնել, բաց առած պ. Կոլորանսկուն և պ. Սուլիսանովին: Իրենց տուփը չետ վերցրին առաջին ժողովում մեծամասնութիւն չստացած հայերից և ոռուներից շատերը, այնպէս որ Քւէարկութիւնը թիւլ մեաց 65: Քւէարկութեան մասնակցեցին 559 հոգի, որոնցից 29-ը երկու ձանով, անսպէս որ ձաների թիւն էր 588: Քւէարկութիւնը, ձաների հաշւելը և արձանագրութեան ստորագրելը տեսք մինչև երեկոեան ժամ:

Լրացուցիչ Քւէարկութիւնով ընտրեցին 29 հոգի, որոնցից 18 հայ 9 ոռու և 2 վրացի:

Ոհա Քւէարկութեան հետևանքները, նշանակում ենք միայն սպիտակ Քւէները, իսկ մեերը՝ միայն տեղ-տեղ՝ ընտրածների ազգանունները տապում ենք շաղատառերով:

|                          |            |
|--------------------------|------------|
| սպիտակ                   | սև         |
| Յակոբեան Եազ. Մ. . . . . | 225 ընտրած |

|                             | սպիտակ | մե          |
|-----------------------------|--------|-------------|
| Ավրէկնան Պետր.              | 379    | ընտրւած     |
| Ափեանց Լ. Ս.                | 258    |             |
| Ախունդով Ռաշիդ-բէկ          | 283    |             |
| Բարեան Արշ. Ս.              | 369    | ընտրւած     |
| Բարեան Ե. Ս.                | 309    | ընտրւած     |
| Բեժանբէգեան Պ. Պ.           | 199    |             |
| Բեկթաբէզեան Խշո. Գ.         | 242    |             |
| Բուղզան-Բաղդասարեան Արշ. Ս. | 297    | 291 ընտրւած |
| Բուղզանեան Յովհ.            | 338    | ընտրւած     |
| Բուղզանեան Յովհ.            | 222    |             |
| Վարձելեան Կ. Ս.             | 188    |             |
| Վարդանեան Գր. Մ.            | 248    |             |
| Վարչամեան Ա. Ա.             | 220    |             |
| Վեսելովորով Բ. Պ.           | 312    | ընտրւած     |
| Վեսելովորով Մ. Ն.           | 315    | ընտրւած     |
| Գրիգորեան Ն. Ա.             | 304    | ընտրւած     |
| Գուրգենբէգեան Յովհ. Յովհ.   | 292    | 293         |
| Դանիլով Ե. Մ.               | 276    |             |
| Դոլինսկի Ի. Դ.              | 221    |             |
| Եւանդուլեան Ա. Բ.           | 333    | ընտրւած     |
| Եղիազարեան Վ. Ս.            | 300    | ընտրւած     |
| Կալաշնիկով Ս. Մ.            | 208    |             |
| Կանդուրալեան Վաս. Գ.        | 301    | ընտրւած     |
| Կանդուրալեան Պօղ. Գ.        | 249    |             |
| Կոնդրատենկո Ֆ. Ի.           | 217    |             |
| Կոլուբանսկիյ Գ. Մ.          | 349    | ընտրւած     |
| Կուսիկեան Ն. Ս.             | 236    |             |
| Լիսիցեան Ստ. Դ.             | 342    | ընտրւած     |
| Մայէր Ի. Ի.                 | 275    |             |
| Մակարովիչ Ա. Ի.             | 170    |             |
| Մելիք Նուբարեան Ս. Գ.       | 311    | ընտրւած     |
| Մելքոնեան Վ. Գ.             | 183    |             |
| Մինէեւ Ս. Ա.                | 186    |             |
| Միրզոյեան Գաբր. Զ.          | 304    | ընտրւած     |
| Միտլեւիչ Ա. Ի.              | 307    | ընտրւած     |
| Միրիմանեան Բագր. Մ.         | 260    |             |
| Մովին Տ. Ի.                 | 308    | ընտրւած     |
| Օգորոդնեւ Ի. Ի.             | 134    |             |

| Ապիտակ                        |     |         |
|-------------------------------|-----|---------|
| Օղնոսումով Ա. Ի.. . . . .     | 346 | Ընտրւած |
| Պաճկրաստով Ե. Վ.. . . . .     | 180 | Ընտրւած |
| Պախումով Վ. Ն.. . . . . Դ.    | 335 | Ընտրւած |
| Պորֆիրեւ Ֆ. Պ.. . . . .       | 189 |         |
| Պսարեան Ի. Ե.. . . . .        | 334 | Ընտրւած |
| Ռեմիզով Ս. Ֆ.. . . . .        | 228 |         |
| Ռիդ Իւլ.. . . . .             | 202 |         |
| Ռուզենկօ Ս. Ա.. . . . .       | 169 |         |
| Սերգէեւ Ա. Գ.. . . . .        | 358 | Ընտրւած |
| Սոֆիեւ Ա. բաս-Կուլի-բէկ       | 277 |         |
| Ստեփանեանց Գ. Ա. . . . .      | 219 |         |
| Սուլխանով Ի. Ա.. . . . .      | 354 | Ընտրւած |
| Թամամշեան Ն. Ի.. . . . .      | 322 | Ընտրւած |
| Տէր-Ասատորեան Գ. Բ.. . . . .  | 352 | Ընտրւած |
| Տէր-Ղուկասեան Բ. Ե.. . . . .  | 251 |         |
| Տէր-Ղուկասեան Ն. Ա.. . . . .  | 262 |         |
| Տէր-Ղազարեան Գ. Օ.. . . . .   | 226 |         |
| Թումանեան Իշխ. Ն. Զ.. . . . . | 332 | Ընտրւած |
| Խարագեան Դ. Ֆ.. . . . .       | 258 |         |
| Խրիստոնյով Ա. Ի.. . . . .     | 264 |         |
| Խուզագեան Ի. Մ.. . . . .      | 251 |         |
| Ցիօնգլինսկի Ս. Ա.. . . . .    | 197 |         |
| Շագին Ֆ. Ի.. . . . .          | 154 |         |
| Շաղինեան Ի. Ա.. . . . .       | 384 | Ընտրւած |
| Շերշենկօ Ի. Ա.. . . . .       | 346 | Ընտրւած |
| Շետուակով Մ. Ա.. . . . .      | 324 | Ընտրւած |

Ընտրւածների մէջ են թէ դւրցովը խմբի և թէ հայ երիտասարդ կուսակցութեան ներկացուցիչներ: Ինչ վերաբերում է Կովկաս հիւրանոցի խմբին (Արշ. Բաբեան, Ն. Զ. Թումանեան, Ա. Բ. Եւանգուլեան, Բուզգանեան Բաղդասարեան), դորա անդամներն ես անցան. ալդ խումբը արդէն համաձայնութիւն էր կակացրել դւրցովը խմբի հետ, և իրք խումբ նա արդէն լուծւած էր, ինչպէս և սպասելի էր:

## ԳԱԻԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Դազախ գաւառի գիտացիների ներկայ դրութիւնը. Կոթի գիտը

### ՄԱԴԱՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

Շարունակում ենք Կոթի գիտացոց պարտքերի ցուցակը.

17) Դաւիթ Նազարով պարտ է՝

Ուհանէս Թումաննանցին 16 ռ., տոկոսի տեղ տարեկան 1 թաղար 2 խան ցորենով. Դոստլեցի Մրգարեանցին՝ 20 ռ., 30%/<sub>0</sub>. գլուխը եղել է 10 ռ. երեք տարի առաջ. Դիւզի եկեղեցուն 7 ռ., 1/2 թաղար ցորենով տարեկան. Մամմադ-Քարիմ-Ահմադ-Օղլուն 4 ռ., տոկոսի տեղ ծառացում է. Ունի կին, 6 տղաք, 1 աղջիկ, մեծը 15 տարեկան, 2 եղ, երկու կով, 2 մողի. 18) Ուհանէս Մանէսով պարտ է՝

Տիրացու Սարգսին 34 ռ., 25%/<sub>0</sub>. Ուհանէս Թումանովին 4 ռ., 8 խան ցորեն տարեկան տոկոսի տեղ. Սարգիս Ղարագողովին 14 ռ., 25%/<sub>0</sub> և տարեկան 2 մշակ. գլուխը եղել է 8 ռ.. Դիւզի եկեղեցուն 9 ռ., 15 խան ցորենով տարեկան. Մազրու Ալբութիւնովին 5 ռ., 7 1/2 խան ցորենով տարեկան տոկոսի տեղ. Խէչիկ Մանէսովին 50 ռ., 25%/<sub>0</sub>, և մի մշակ տարեկան, գլուխը եղել է 35 ռ.. Ունի 1 ձի, 2 եղ, 2 կով, 2 տղաք, 1 աղջիկ, մեծ տղան 25 տարեկան, ինքը 60 տարեկան:

19) Յարութիւն Մամանց պարտ է՝

Դիւզի եկեղեցուն 13 ռ., 20%/<sub>0</sub>. գլուխը եղել է 10 ռ.. Երեք տարի է վճարում է տոկոսը. Սումբաթ-բէգին 10 ռ., 20%/<sub>0</sub>. 4 տարի է վճարում է տոկոսը. Ունի 2 կով, 2 եղ, 1 ձի, 1 գոմէշ.

<sup>1)</sup> Տես Մուրճ 1896 թ. № 9.

- 20) Օսէփ Շահնաղալով (Շահնանց) պարտ է՝  
Աբբաս-Վալի-Օղլուն Դազմախլեցի 30 ռ., 20%/<sub>0</sub> երկու տարի է  
վճարում է տոկոսը. Ունի երկու գոմէշ, մի կով, 1 ձի.
- 21) Սերգի Սոսիով (Օսէփանց) պարտք է՝  
Ուհանէս Մխիթարեանցին 18 ռ. 60 կ., 30%/<sub>0</sub>: Խէչօ Տէր-Մկրտչեանցին 5 ռ., 1/2 թաղար ցորեն տոկոսի տեղ տարեկան. Մոլա-Եէփիդին 7 ռ.,  
տոկոսի տեղ ծառակում է. ոչ մի կարողութիւն չունի. Ունի կին, 2 տղակ,  
1 աղջիկ:
- 22) Գարսեւան Գանջալով պարտ է՝  
Հաջի-Խալիլ Էլիքին Ստամբեգլեցի 22 ռ., տոկոսի տեղ ծառակում  
է. Սարգիս Գանջալովին 10 ռ., 20%/<sub>0</sub>: Ուհանէս Թումանովին 5 ռ., 5  
խան ցորեն տոկոսի տեղ տարեկան. Գիւղի եկեղեցուն 2 թաղար ցորեն,  
մի թաղարին տարեկան 10 խան ցորենով. Ներկարարանց Վարդանին  
1 թաղար 10 խան ցորեն, թաղարին 10 խան ցորենով. Հոռոմսիմ Անդր-  
քասեանին 50 ռ., առանց տոկոսի, Գարսեւանը վերջինիս վիճան է.  
Ունի 2 կով, 2 եղ, 2 գոմէշ, կին, 2 աղջիկ, 3 տղակ. մեծը 18 տարեկան:
- 23) Սէրան Բաննահեանց պարտ է՝  
Ուկան Օնանեանցին 5 ռ. 30%/<sub>0</sub>. վերցրել է 2 տարի առաջ. Սհակ  
Օսէփեանցին 10 ռ., 20%/<sub>0</sub>, Աւետիք Մամեանցին 10 ռ., 50%/<sub>0</sub>, վերցրած է  
ներկաչ տարւաց հարկի համար. Բեգլար Բաննահեանցից 20 ռ.,  
20%/<sub>0</sub>, երեք տարի է. Գիւղի եկեղեցուն 2<sup>1</sup>/<sub>2</sub>, թաղար ցորեն, թաղարը 10  
խան ցորենով. Ունի 2 եղ, 2 կով, կին, 1 երեխալ, մակր, մօրաքուր և 1  
եղբար:
- 24) Օսէփ Վէրանով պարտ է՝  
Սարգիս Գանջալովին 20 ռ., 10 ռուբլուն տարեկան տոկոսի տեղ  
20 խան ցորեն, 3 տարի է տոկոսը վճարում է. Մէլիքսէթ Աղարեանցին  
10 ռ., 20 խան ցորենով 4 տարի է տոկոսը վճարում է. Աբովեանց Սոլո-  
մանին 15 ռ., սունպէս 20 խան ցորենով. Խաչատուր Տէր-Արութիւնեանց-  
ին 10 ռ. 30%/<sub>0</sub>, գլուխը եղել է 5 ռ., իրեն տոկոս վճարել է 7 տար-  
ւակ ընթացքում 10 ռ.: Մարդոս Մալերկեանցին 10 ռ., 20%/<sub>0</sub>: Մանու-  
շակ Օոկեանցին 10 ռ., 20 խան ցորենով. Բեգլար Բաննահեանցին 10 ռ.,  
20 խան ցորենով. Սարգիս Վարագողովին 10 ռ., 50%/<sub>0</sub>. վերցրած է ներ-  
կաչ տարւաց հարկի համար. Ունի 3 կով, 3 եղ, 2 գոմէշ, կին, մակր, 3  
աղջիկ, 2 տղակ, մեծը՝ 8 տարեկան:
- 25) Դաւիթ Վարդիկովը պարտ է՝  
Ուկան Օնանեանցին 12 ռ., տարեկան տոկոսի տեղ 10 ռուբլուն  
20 խան ցորենով. Գիւղի եկեղեցուն 3 թաղար 10 խան ցորեն, թաղա-  
րին տարեկան 1 բրե տոկոս 10 խան ցորենով. Ունի 4 կով, մակր, 4 տղակ  
մեծը 19 տարեկան:

## 26) Ուհանէս Պօղոսով (Պօղնանց) պարտ է՝

Ուհանէս Թումանովին 10 ռ., 20 խան ցորենով տարեկան։ Օսէփ  
Ղազարովին 5 ռ., տարեկան 5 ռուբլուն 15 խան ցորեն տոկոսի տեղ,  
վերցրած է ներկաչ (1895 թ.) տարաւ հարկի համար Գիւղի եկեղեցուն 1  
թաղար ցորեն, 10 խան ցորենով տարեկան։ Ունի 3 կով, 2 եղ, կին,  
4 տղակ մեծը 22 տարեկան։

## 27) Ալեքսան Հայրապետով (Սոթնանց) պարտ է՝

Բաբանց Մարտրոսին 125 ռ., 20%։ Զովրանանց Ղազարի տղին  
80 ռ., 20%։ Ունի 1 գոմէշ, կին, 2 եղբայր, 4 երեխաներ։

## 28) Օսէփ Դաւիդեանց պարտ է՝

Դարեգին Արտիեանցին 50 ռ., տարեկան 10 ռուբլուն 1 թաղար  
ցորենով, որը հաւասար է 60%-80%-ի։ Գլուխը եղել է 17 ռ., 5 տար-  
ւակ ընթացքում 30 ռ. տևած է իրեն տոկոս։ Ուհանէս Թումանովին 20  
ռուբլի, 30%։ Գլուխը եղել է 14 ռ., Բաբանց Մարգսին 30 ռ., 30%։  
Գլուխը եղել է 13 ռ.։ Սումբաթ-Բէզին 30 ռ., 30%։ Ուհանէս Թումա-  
նովին 5 թաղար ցորեն, թաղարին 20 խանով տարեկան։ Ղշովթանցի  
Խալաթին 2 թաղար ցորեն, նոյնպէս 20 խանով։ Գիւղի եկեղեցուն 15  
ռ., 15 խան ցորենով և 3 թաղար ցորեն 10 խանով։ Ունի 2 կով, 4 եղ,  
1 գոմէշ, կին, 1 աղջիկ, 4 տղակ, մեծը 21 տարեկան։

## 29) Ուհանէս Ղազարով պարտ է՝

Սումբաթ-Բէզին 10 ռ., 20%։ Ուհանէս Թումանովին 30 ռ.,  
30%։ Զալեանց Ուհանէսին 10 ռ. 30%։ Գիւղի եկեղեցուն 1 թաղար  
2 խան ցորեն, թաղարին 20 խանով։ Ունի 2 եղ, 3 կով, 1 ձի,  
50 ոչխար, կին, 2 տղակ, մեծը 22 տարեկան։

## 30) Ուհանէս Զովրանով պարտ է՝

Պետրոս Զիջնիովին 20 ռ., 25%։ Աւղի-0ղլուն Սլահլւի 5 ռ.,  
տարեկան 10 խան ցորեն է տալիս տոկոսի տեղ։ Դոստլեցուն 22 խան  
ցորեն տարեկան 15 խան ցորեն է տալիս տոկոսի տեղ։ Ունի 2 եղ, կին,  
2 աղջիկ, 3 տղակ, մեծը 10 տարեկան։

## 31) Արտէմ Արդմանեանց պարտ է՝

Մարտիշկալին՝ բազազ 400 ռ., առանց տոկոսի, խանութի հաշիւ-  
ներից մնացած։ Ունի 3 կով, 2 եղ, 1 ձի, կին, 4 երեխակ։

## 32) Զաքար Օհանով պարտ է՝

Ուհանէս Թումանովին 10 ռ., 25%։ Գլուխը եղել է 3 ռ., 5 տարի  
առաջ։ Ալիբեզանց Ամրխանին 20 ռ., 25%։ Գլուխը եղել է 15 ռուբլի։

Ալիսանանց Աղային 5 ռ., տարեկան տալիս է 1/2, թաղար ցորեն,  
վերցրել է հարկը վճարելու համար։ Գողալ-0ղլու տղից 5 ռ., 30%։  
Նոյնպէս հարկի համար Ոչինչ կարողութիւն չունի։ Ունի կին, 2 աղջիկ,  
2 տղակ, մեծը 8 տարեկան։

33) Յարութիւն Գողալեանց պարտ է՝

Պուլկանց Թամարին 15 ռ., 20%/<sub>0</sub>-ով Հոռկանց Սաքօին 11 ռ.,  
20%/<sub>0</sub>, Ունի 1 գոմէշ, 1 ձր, 2 եղ, մալր, 3 երեխաչ, մեծը 12 տարեկան,

34) Սարուխան Աղբէդանց պարտ է՝

Բեգան-թէգին 27 ռ., 30%/<sub>0</sub>, գլուխը եղել է 15 ռ., և 5 ռուբլու ել  
մշակութիւն են արել տոկոսի տեղ:

Ուկան Օնանովին 19 ռ., 20%/<sub>0</sub> խանութիւ ապառիկ: Ունին 3 կով,  
3 եղ, ձր, հալր, մալր, 3 եղբալր, կին և 4 երեխաչ:

35) Մուխավիլ Օհանով պարտ է՝

Ալբեզանց Աթնին 10 ռ., 30%/<sub>0</sub>: Գողալ-Օղլու տղին 15 ռ., 20%/<sub>0</sub>  
գլուխը եղել է 10 ռ., դարձեալ վերջինիս 4 ռ. 20 կ., 25%/<sub>0</sub>, Գիւղի եկն-  
ղեցուն 21 ռ., 20%/<sub>0</sub>: Հաջի-Օղլի Ուսուբին 10 ռ., տոկոսի տեղ ծառակուն  
են: Ունի 1 եղ, 1 գոմէշ, 1 հորթ, կին, մալր և 1 երեխաչ:

36) Ղահրաման Սարուխանով պարտ է՝

Մամանց Մուխավիլին 5 ռ., 40%/<sub>0</sub>, որը վերցրած է ներկաց տարւաց  
հարկի համար: Արզման Տէր-Մհակեանցին 5 ռ., 1/2 թաղար ցորենով:  
Մէհրաբանց Աթնին 5 ռ., 1/2, թաղար ցորենով: Թամար Դրիգորովին  
5 ռ., 20%/<sub>0</sub>-ով: Աւետիք Դալլաքովին 6 ռ. 60 կ., 20%/<sub>0</sub>-ով: Ունի 2 եղ,  
1 կով, կին, մալր, 2 եղբալր:

37) Սարգիս Ալիրէգեանց (տոհմական աղնւական) պարտ է՝

Ալէքսի Սարատիկեանցին 12 ռ., 20%/<sub>0</sub>-ով: Ունի 2 եղ, 1 գոմէշ,  
2 տղջիկ, 4 տղակ:

38) Դաւիթ Մէլիքով պարտ է՝

Յովսէկի Շահիմովի աղջկանը 19 ռ., 30%/<sub>0</sub>-ով: Գլուխը եղել է 15  
ռ., 3 ռուբլի ստացել է, և արապիես Մէլիքովին 15 ռ., 20%/<sub>0</sub>-ով: Ալէքսան  
Ներկարարովին 10 ռ., 25%/<sub>0</sub>-ով: Գիւղի եկեղեցուն 3 թաղար ցորեն,  
10 խանով թաղարը, Ունի 2 եղ, 2 կով, կին և 6 երեխաչ:

39) Ուհանէս Աբովյանց պարտ է՝

Ուկան Օնանովին 23-ռ., 10 ռուբլուն տարեկան 20 խան ցորենով:  
Խանութի ապառիկ է: Բարանց Մարտրոսին 4 ռ., 25%/<sub>0</sub>, և 1 1/2, թաղար  
ցորեն, 15 խանով: Խողալ-Օղլու տղին 1 թաղար ցորեն, 15 խանով ախն է  
50%/<sub>0</sub>: Ծերատանց Խաչիկին 16 ռ., 25%/<sub>0</sub> և մի օր հունձ: Չողակեցի  
Արութիւնին 50 ռ., 20%/<sub>0</sub>, գլուխը եղել է 40 ռ.: Ունի 2 եղ, 2 գոմէշ,  
2 կով, կին և 6 երեխաներ:

40) Վարդան Բեգանով պարտ է՝

Բեգան Բեգանովին 40 ռ., 20%/<sub>0</sub>: Ահմադ Տասպահլւեցուն 40 ռ.,  
իբրև տուգանք: Ոչ մի կարողութիւն չունի: Ունի 1 երեխաչ:

41) Դաւիթ Աղբէդանց (անդամալոյժ) պարտ է՝

Իւր քուր Շահրբանին 30 ռ., առանց տոկոսի, Զաւահիրին 20 ռ.:

առանց տոկոսի, Շահզադին 15 ռ., առանց տոկոսի, Խըր քեռուն Բղանսեցի 12 ռ., առանց տոկոսի, Ունի երկու գոմէշ, երկու եղ, կին:

42) Արով Աբովյանց պարտ է՝

Ալեքսան Տէր-Դաւթովին Աջաջբեցի 20 ռ., 20%: Ուհանէս Թումանովին 15 ռ., 1 թաղար ցորենով տարեկան, Մհակ Գանջալովին 8 ռ., 30%: Ունի 2 եղ, կին, և 1 երեխակ:

43) Ալիսան Խէչիկով պարտ է՝

Սարգիս Ղարագոզովին 5 ռ., 50%: Վերցրած է ներկաչ տարւաց հարկի համար, Ուհանէս Թումանովին 7 ռ. առանց տոկոսի, Գիւղի եկեղեցուն 1 թաղար 20 խան ցորեն, թաղարը 10 խանով, Ունի 1 կով, կին, 2 աղջիկ, 1 տղակ 7 տարեկան:

44) Խանում Խսակեանց պարտ է՝

Զանանց Մերգօին 10 ռ., տոկոսի տեղ օգտառմէ նորա 2 օրավար վարելահողից 14 տարի շարունակ, Մեջնանց Յսէֆին 17 ռ. տոկոսի տեղ օգտառմէ նորա մի այլ 3 օրավար «չահի տեղ» անւանւած հողից 9 տարի շարունակ: Ատեփան Ղազարովին 20 ռ., տոկոսի տեղ օգտառմէ նորա մի այլ 1½, օրաւար հողից, 9 տարի շարունակ: Յսէֆ Նազարովին 25 ռ., տոկոսի տեղ օգտառմէ նորա միայլ 1½, օրավար հողից, Ունի հարս և 2 թոռը, Ոչ մի կարողաւթիւն չունի:

45) Վարդան Վէրանով (Վերկանց) պարտ է՝

Ուհանէս Թումանովին 4 ռ., 8 խան ցորենով, Բեջան-Բեգին 18 ռ., 30%: Ուկան Օնանովին 10 ռ., 20 խան ցորենով, Գողալ-Օղու տղին 7 ռ., 25%: Դարբնանց Մհակին 5 ռ., 20%: Ունի 1 եղը, 1 կով, 3 խոզ, մակր և 3 եղբակ:

46) Ուհանէս Ազբէզով պարտ է՝

Գիւղի եկեղեցուն 40 ռ., 20%: Մէլիքսէթ Բալբամովին 30 ռ., 25%: Ունի 6 կով, 2 գոմէշ, 2 եղ, 4 աշառ, 1 ձի, 3 եղբակ, մակր, 3 աղջիկ և 2 տղակ:

47) Դաւիթ Միրադեղով պարտ է՝

Պետրոս Զուրաբովին 50 ռ., 20%: Մարտրոս Միրադեղովին 10 ռ., 20%: Ունի 3 կով, 2 եղ, 2 գոմէշ, կին, 3 աղջիկ, 4 տղակ մեծը 24 տարեկան:

48) Զաքար Մէլիքով պարտ է՝

Գրիգոր Պապիովի բիձու որբերին 50 ռ., 20%: Եզոր Զանւելովին 25 ռ., 20%: Ուկան Օնանովին 8 ռ., 20%: Գիւղի եկեղեցուն 16 ռ., 20%: Ունի 6 կով, 3 եղ, 3 գոմէշ, կին, 3 աղջիկ, 4 տղակ մեծը 10 տարեկան:

49) Ուհանէս Պետրոսեանց (Պետնանց) պարտ է՝

Ուհանէս Թումանովին 8 ռ., 20%: Գիւղի եկեղեցուն 18 ռ., 10

սուբլում տարեկան տոկոսի տեղ 15 խան ցորեն։ Սարգիս Գանջալովին 4 թաղար ցորեն, թաղարին տարեկան 20 խան ցորենով, այն է 60%։ զլուխը եղել է 1/3, թաղարը Բաքրամանց Սաքօին 2 թաղար ցորեն, տարեկան թաղարին 20 խան ցորենով, այն է 60%։ Գլուխը եղել է 1/3 թաղար, զուք չունի. Ունի կին, 4 աղջիկ։

50) Զաքար Բարլումով պարտ է՝

Պուճուր-աղջին 6 ռ., 25%։ Դարբնանց Սհակին 4 ռ., 20%, և 1 թաղար ցորեն 10 խանով. Գիւղի եկեղեցուն 10 ռ., 15 խան ցորեն տարեկան տոկոսի տեղ և 8 թաղար ցորեն, թաղարը 10 խանով։

51) Արութիւն Ամրխանով պարտ է՝

Զաքար Միխիթարովին 16 ռ., 30%։ Աղա Մուրաթխանովին 5 ռ., 15 խան ցորենով. Սոթնանց Մուքէլին 5 ռ., 15 խան ցորենով. Ղազնանց Օսէփին 10 ռ., 20%։ Ունի 1 կով, 1 գոմէշ, 2 շակ, մաէր և քոչր։

52) Աւետիք Շահինով (Շահնանց) պարտ է՝

Ստամբեգլեցի թուրքին 10 ռ., տոկոսի տեղ ծառակում են. Ուկան Օնանովին 10 ռ., 20 խան ցորենով. Ունի 1 կով, 2 եղ, կին և 1 երեխաց։

53) Սհակ Ղարիբով պարտ է՝

Զաւահիր Խանաղեանցին 4 ռ., 8 խան ցորենով. Գիւղի եկեղեցուն 20 ռ., 20%։ Սարգիս Ղարագողովին 10 ռ., 50%, վերցրած է ներկաց տարւաց հարկի համար. Ունի 3 եղ, 2 կով, 2 գոմէշ, կին, 5 երեխաց, մեծը 10 տարեկան։

54) Ուհանէս Մէլիքով պարտ է՝

Հաջի Անմադ-Օղուն Սլահլւեցի 12 ռ., 20%։ Արութիւն Զիգճիովին 2 թաղար ցորեն, թաղարը 15 խանով, այն է 50%։ Ունի 3 կով, 2 եղ, կին, 3 աղջիկ, 4 տղալ, մեծը 20 տարեկան։

55) Սհակ Տէր-Արութիւնով պարտ է՝

Սարգիս Գանջալովին 10 ռ., 20%։ Սեփխանանց Աթնին 20 ռ., 30%։ Միխակ Տէր-Ստեփանովին 10 ռ., 20%։ Գիւղի եկեղեցուն 5 ռ., 8 խան ցորենով և 4 թաղար ցորեն, թաղարին 10 խան ցորեն տարեկան տոկոսի տեղ. Ունի 2 եղ, 2 կով, 1 ձի, կին, 3 երեխաց մեծը 6 տարեկան։

56) Բիրչագ Ղաղարով պարտ է՝

Ուկան Օնանովին 40 ռ., 20%։ Գրիգոր Եարալովին 30 ռ., կատարման թերթով. Զիջոնց Ուհանէսին Դոսալւեցի 25 ռ., 20%։ զլուխը եղել է 10 ռ., Քեջան բէղին 16 ռ., 30%։ Զալնանց Ուհանէսին 10 ռ., 26 խան ցորենով տարեկան. Ուհանէս Թումանովին 6 ռ., 20%։ Ունի 2 եղ, 1 կով, 1 գոմէշ, կին, 2 աղջիկ և 2 տղալ. մեծը 9 տարեկան։

57) Արութիւն Մանթաշով պարտ է՝

Բաքանց Մատօին 4 ռ., 25%։ Գիւղի եկեղեցուն 6 ռ., 20%։ Մէլքանց Աւետիքի երեխաներին 10 ռ., 25%։ Ունի 3 կով, 3 եղ, կին, 3 եղբար, 4 երեխաներ։

## 58) Մուխաչիլ Վերանով պարտ է:

Խոր քոյր Թաղագուլին 20 ռ., 20%: Մարենին 20 ռ., 20%: Շահնանց Աւետիքին 10 ռ., 35%: Վերցրած է ներկայ տարւակ հարկի համար: Խաչատուր Տէր-Արութիւնովին 5 ռ., 20%: Գիւղի եկեղեցուն 2 թաղար 20 խան ցորեն, թաղարը 10 խանով: Եզրը Զանւելովին 10 խան ցորեն, 3 խանով: Ունի 2 եղ, կին, կոյր քոյր, 1 տղակ:

## 59) Օսէփ Մուրաթխանանց պարտ է:

Դարեգին Աբովեանցին 34 ռ., 10 ռուբլուն տարեկան 20 խան ցորենով: Խանութիւ ապառիկ է: Դարբնանց Սհակին 25 ռ., 25%: Գլուխը եղել է 10 ռուբլի: Գիւղի եկեղեցուն 10 ռ., 15 խան ցորենով տարեկան: Մելիքսէթ Բալբամովին Բղանսեցի 10 ռ., 1 թաղար ցորեն տարեկան տոկոսի տեղը: Աբովեանց Սերգօին 5 ռ., 40%: Սարգիս Ղարագողեանցին 10 ռ., 50%: Վերցրել է հարկի համար ներկայ տարւակ: Զավահիր Խանաղեանցին 10 ռ., 15 խան ցորենով տարեկան: Ունի 20 ռչխար, 2 կով, 2 եղ. 2 եղբակը, 4 տղակ. մեծը 10 տարեկան:

## 60) Սհակ Նաղարով պարտ է:

Ուկան Օնանովին 25 ռ., 20 խան ցորենով տարեկան: Դարբնանց Սհակին 15 ռ., 40%: Վերցրած է ներկայ տարւակ հարկի համար: Ունանէ Թումանովին 5 ռ., 10 խան ցորենով տարեկան: Ունի կին, գոյքն է 1 ձի:

## 61) Զաքար Շահվերդով պարտ է:

Դարբնանց Սհակին 10 ռ., 20%: Գլուխը եղել է 5 ռուբլի: Ունի 2 երեխակ, կին, գոյք ռչին:

## 62) Վարդան Մէլիքով պարտ է:

Սարգիս Գանջալովին 10 ռ., 25%: Զանւել Զանւելովին 10 ռ., 30%: Ալբքասան Ներկարարովին Ղշոթանցի 10 ռ., 30%: Գիւղի եկեղեցուն 10 ռ., 20%: Զաւահիր Շահնաղարովին 20 ռ., 25%: Ունի եղբակը, կին և 2 տղակ: Գոյքն է 3 կով, 2 շակ:

## 63) Խաչատուր Շահվերդեան (Ազելիանց) պարտ է:

Մոլաչ-Մէլիդին Ստանքեղլւեցի 15 ռ., տոկոսի տեղ ծառակում են: Ունանէ Թումանովին 6 ռ., 10 խան ցորենով: Սերգի Զլբնգարեանցին 8 թաղար ցորեն, գլուխը եղել է 1 թաղար 6 տարի առաջ: Տոկոսից տւած է 1 թաղար ցորեն, թաղարին 15 խան տոկոսով, այն է 50%: Գիւղի եկեղեցուն 4 թաղար ցորեն, 10 խանով: Գլուխը եղել է 1 թաղար: Ունի կին և երկու աղջիկ: Գոյքն է 2 հորթ:

## 64) Սերգի Բեղանով պարտ է:

Գիգոլ Թումանովին 23 ռ., 20%: Գէորգ Ամերգեանցին 10 ռ., 20%: Ունանէ Բեղանովին 5 ռ., 13 խան ցորենով: Ղազնանց Գաւնին 6 ռ.

50 կ., 30% Սոլլալ-Սէրդին 23 ռ., տոկոսն տեղ ծառալում են. Գիւղի եկեղեցուն 2½, թաղար ցորեն, թաղարը 10 խանով. Ղշխոթանցի 0սէփին 1 թաղար ցորեն, թաղարը 10 խանով, այն է 60%, Ունի երկու աղջիկ, 2 տղաք և կին, գուքն է 3 կով և 2 եղ.

65 Մաթոս Տէր-Սէակով (Արզմանանց) պարտ է՝

Գիւղի եկեղեցուն 24 ռ., 20% Բաբանց Մարգրոսին 20 խան ցորեն, 10 խանով, այն է 50%, Ունի կին 2 աղջիկ և երկու տղաք. մեծը 13 տարեկան. գուքն է 2 կով, 1 եղ, 1 գոմէշ և մի ձի:

66) Վասիլ Դրիգորեանց (Թառկանց) պարտ է՝

Զանւելոնց Նագորին 13 ռ., 20% Ոչինչ չունի:

67) Սարգիս Խէչիկով պարտ է՝

Առաքել Աբովիանցին 26 ռ., 30%, զլուխը եղել է 6 տարի առաջ 3 ռ., տոկոսից տւած է 9 ռ.: Սիրդի Զնսդարանց ձիճւականցուն 2 թաղար ցորեն, 10 խանով, զլուխը եղել է 15 խան ցորեն 6 տարի առաջ. տոկոսից տւած է 1 թաղար 10 խան ցորեն: Ունի կին և տղաք գուք ոչինչ:

68) Օսէփ Շահւերդով (Ագելանց) պարտ է՝

Մկրտում Աբաղեանցին 1 թաղ. ցորեն, 10 խանով. Ուհանէս Թումանովին 1 թաղար ցորեն, 10 խանով: Ունի 2 կով, 2 եղ. մակր և 3 երեխաք:

69) Մոնթմամանց Զաքարի ալրին պարտ է՝

Հաջի Ուտուրին Տասպահլւի 15 ռ., զլուխը եղել է 10 ռ., տոկոսից տւած է 7 ռ. 50 կ.: Ունի 2 տղաք, մեծը 5 տարեկան. գուքք՝ ոչինչ:

70) Արութիւն Սարուխանով պարտ է՝

Գարեգին Աբովիանցին 20 ռ., տոկոսի տեղ օգտառում է նորա 1½ օրավար վարելանողից, 15 տարուց ի վեր. Մասէս Աբովիանցին 6 ռ., տոկոսի տեղ օգտառում է նորա մի ալլ 1½ օրավար վարելանողից, 5 տարուց ի վեր. Խւրհարազստ տատին Եղամին 6 թաղար ցորեն, 15 խանով այն է 50%, զլուխը եղել է 1 թաղար ցորեն 5 տարի առաջ. տոկոսից տւած է 2 թաղար. Դիւղի եկեղեցուն 5 թաղար ցորեն, 10 խանով. զլուխը եղել է 2 թաղար. 7 տարի առաջ, տոկոսից տւած է 3 թաղար. Ուկան Օնանովին 17 ռ., 25% Բաբանց Սաքօին 70 ռ., կատարման թերթով. Ունի մակր և քուք. գուքն է 2 եղ.

Պէտք է ի նկատի ունենալ, որ ալստեղ տոկոսը հաշւում է ոչ թէ տարով և 100-ից, ալլ ամսով և 10-ից. ակսպէս 10 ռուբլու 20% ը—1 ամսում համարում է 20 կ., 30% ը—30 կ., 50% ը—50 կ. և ալլն. անպէս, որ եթէ վերլուծենք սովորական տոկոսի՝ կը ստանանք տեղական 20% ը—սովորական 24% ին, 30% ը—36% ին 50% ը—60% ին, և ալլն: Ակսպէսով 20%-ով վերցրած պարտքի 0% ը դառնում է գլխին հաւասար 3 տարի և 2 ամսից լետով, 30% -ով—26 ամսից. 50% -ովը 17 ամ-

սից և ալլն: Նոյն իսկ ապառիկներն էլ հաշում են թի, ինչպէս տեսանք ցուցակսպութեան 34 և 59 համարներում: Արութիւն Սարուխանովի (№ 70) հակը իւր կենդանութեան ժամանակ սորանից 10 տարի առաջ զնում է բարանց Սաքից 2 եղը ապառիկ, զնահատւած 60 ու աչս հաշից Աաքօն ստացել է 60 ո., 1 եղ, այժմս էլ կատարման թերթի ոժով պահանջում է էլլ 40 ո. պարտապանի վերջին երկու եղները տանուտէրը առաջարկում է, բայց Սաքօն դորանով չէ բաւականանում: Խ զէպ, պէտք է նեատել, որ աչստեղ կատարման թերթի ոլժով աճուրդ են հանում գիւղացոր ունեցածը, բայց ի տեղացորից, թէն օրէնքը աչտ չէ թուլ տալիս, գիւղացոն իւր ապրուստը հայթայթելու համար տրում է թէ ջկան և թէ աչ իրեր Ապրուստի դժւար ձեռք բերելու, հարկանաների ծեծը, կուն ու բեղարը, դորա վերալ էլ աւելացնենք վերջին տարիների անբերլութիւնը, նաև հողի պակասութիւնն ու վաշխառուների սարսափելի տոկոսները—գիւղացիներին հասցըլ են աղքատութեան դուռը, մինուն ժամանակ ահազին հարւած են տւել նրանց հոգեկան աշխարին. սրանք դարձել են միւլամազնուտ, լուսահատւող, աւելի ծովլ և թուլամորթ, նուն իսկ երեւմ են անխղճմտան քութեան նշաններ. օրինակ՝ կան անափիսի թշւառներ, որ օրերով քաղցած մնալով հազիւ են քաշ տախս իրանց գոկութիւնը և աչսափիների վերակ եարելի է առել, որ սոքա հարկի, կոսի-բիգարի համեմատաբար աւելի մեծ մատն են լատկացնում: Խնչպէս տեսանք վերը լիչւած ցանկում շատերը ոչ միայն գուք աչ նոյն իսկ վարելանող շունին: Հարց է ծագում, ապա ինչով են պահանում սոքա իրանց գոկութիւնը, եթէ կարելի է գոկութիւն համարել նրանց ապրուստը: Աւներ համագիւղացիներից օգնութիւն սպասել աւելորդ է: Նրանց մնում է ծառալութիւններ անել սրան նրան մի փոր հացի, պարտքի տոկոսի տեղ. բացի աշու, հունձը սկրւելուն պէս ամբողջ ընտանիքով ստաբորիկ, ցնցոտիների մէջ, ընկում են հանդերը մի մի պարկ առած, հաւաքում են հնձած հողերի վրա մնացած ու թափւած հասկերը: Մալքը երեխան մէջքին կապած, եղբարը մատաղահաս քրոջ ձեռքիցը բռնած արագութեամբ աշխատում են: Երեխան մօր մէջքին լալիս է այրելով արեգակի կիզիչ ճառագալթներից, բայց մազրը շարունակում է իւր աշխատանքը: Նա զիտէ, որ երեխան քաղցած էր քնատ է, որ արեզ վառում է նրա քնքուց և մատաղ մարմինը, նա ներքուստ տանձում է, երեխի իւրաքանչիւր մզկտոցը նրա սիրուը վառում է, նա լուս կերպով արտասում է, խառնելով արտասուքի կաթիլները հաւաքած հասկերի հետ: Կարծես նախախնամութիւնը խեղերի ճակատներին դրոշմած լինի: «արտասունքովդ վաստակիս քո հացը»: Մթիթ իրօք անհնարին է աչ բոլոր չարիքների առաջն առնել: Երբ պէտք է իսեղճ գիւղացիք աղատւեն վերջապէս վաշխառուների ճիրաններից, աչն վաշխառուների, որոնք հնարք են գտնում վերջներքս հրատարակած օրէնքից աղատ մնալու, որով, ինչպէս լավանի է, արդելուում է 10-ից աւելի տոկոս առնել: աչտ հնարքն այն է, որ պարտք տալու ժամանակ առաջիկայ տարւակ տոկոսը գումարում են գլխի հետ, չակնարկելով ոչ մի տոկոս պարտամուրհակում:

Թշւառ է գիւղացու զրութիւնը թէ մտաւոր, թէ կենցաղի և թէ նիւթական կողմից: Նրա մասին պէտք է հոգս քաշել:

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Խ Ե Ա Ն Ի

XIV

Թատերասէրների ներկայացումներ.—Ուրիէլ Ակոստա.—Ճանապարհորդ խմբեր՝  
1897—98 Թատերաշրջան.—«Բնմական գործիչների ընդհան. ժողովի» պարագ-  
մունքները.—Յաւալի երեսյթ.—Բագուի ապագայ խումբը.—

Ապրիլ ամսում թատերասէրների երկու ներկայացումներ տրմցին  
Թիֆլիսում, մէկը «Հայուսեաց բարեգործական ընկ» օդտին, (Քանդւած  
օջախ), միւսը չօգուտ «Բարեգործական ընկերութեան», (Արդիւնաւոր  
պաշտոն և Մկնիկը):

Առաջին ներկայացումը, որին ներկաւ էր Թիֆլիսի ամբողջ եւաս-  
տոնդը, շատ աջող անցաւ, մեծ բաւականութիւն պատճառելով հանդի  
սականներին, Մանաւանդ մասնակցողներից աչքի ընկան իրանց գեղիցիկ  
խաղով օր. օր. Խմբիրեան և Հմինեան. Ցանկալի է որ թատերասէրների  
մեծ խնամքով պատրաստած 2—3 ներկայացումներ ամեն սէղօնին տրւէին  
(թէս մենք սկզբունքով հակառակ ենք թատերասէրների խաղալուն,  
քանի որ գերասանները պաշարւած են իրանց օրապահիկի խնդրով), և  
այդպիսով գոնէ մի տեսակ կապ պահպանէիր հաւ թատրոնի և խորթա-  
ցած հասարակութեան մէջ. Գալով «Արդիւնաւոր պաշտօն»-ի ներկայացման,  
համեմատելով նախորդի հետ՝ անսամբլը թողլ էր Թատերասէրներից զըլ-  
խաւորաբար աչքի էր ընկնում պ. Լ. Մանուէլեանը. Նրա խաղը սկըզ-  
բում թէս թողլ, բայց վերջին արարուածին անքան ազդու և գրաւիչ դար-  
ձաւ, որ մեծ բաւականութիւն պատճառեց հանդիսականներին. Նրա լաջո-  
ղութեան դրաւական միջտ կարող է լինել իւր ստանձնած դերերի  
գիտակցութեամբ պատրաստելը և հնչուն, դրամատիքական ձախնը:

Հակառակ մեր ցանկութեան, ստիպւած ենք վիշել զատկից լետով պ. Օհանեանի տւած «Ուրիէլ Ակօստա»-ի ներկալացումը ևս, դա մի այնպիսի անպատութիւն էր գեղարւեստի համար, որի մասին լուծը բարւոք ենք համարում. Աւելի զարմանում ենք «Ուրիէլ Ակօստավի» մասնակցողներին, որոնցից և ոչ մէկը չէ աշխատել հասկացնելու կամ համոզնելու պ. Օհանեանին, որ «Ուրիէլ Ակօստան» պատկանում է անպիսի պիէսների շարքին, որոնց ներկալացնելու համար անհրաժեշտ է ունենալ բազմակողմանի զարգացում, նուրբ գեղագիտական ճաշակ, հոգեբանական հմտութիւն և լաւ անսամբլ:

Զատկից լետով պ. Վլույր մեկնեցաւ Բագու ներկալացումներ տալու ինչպէս և Տ. Տ. Զարէլ, Փառտնձնմ և պ. Օհանեան (ընդամէնը չորս ներկալացում), պ. պ. Արէլեան, Պետրոսիան, Յարութիւնեան Ա. Մէլիքեան Ներեան. պ. պ. Ստեփանեան, Անդրանիկ և օր. Ազնիւ՛ Ներեան, Ալէքսանդրապօլ և Կարս. Օր. օր. Վարդիթեր և Մարի Հրանոչ՝ Կարսից Ալէքսանդրապօլ:

Չի կարելի չնկատել, որ Ներեան, Ալէքսանդրապօլ և Կարս քաղաքներում ներկալացումներ տալու մտադրւող դերասանների բաժան բաժան խմբերը միմեանց չխանգարելու համար անհրաժեշտ էր որ միանալին: 5—6 դերասան և չորս դերասանուհիներ անհամեմատ աւելի կ'օգտւէին. միացած գործելով, քան բաժան բաժան. Ազդ երեք քաղաքները իրանց բազմահաւատութեամբ համարձակ կարող են մի կանոնաւոր խումբ պահել, և իրաքանչիրում առնւազն կարելի էր տալ 5—6 ներկալացումն:

Թէ Բագւում և թէ Թիֆլիսում խմբեր պահելու զրուցները դարձեալ շրջում են չամառութեամբ. Չնակելով որ ահա վերջացաւ մալիսը, խմբի կազմակերպութեան և բէպէրտուարի պատրաստութեան գործերը մնում են երեսի վրա. Գուցէ կարծում են դեռ վազ է. և կամ շատ ժամանակ կաէ մինչև օգոստոսի 15-ը. Մակիսի վերջին խումբը արդէն կազմակերպւած պատրաստ պիտի լինէր և ձեռնարկւած բէպէրտուարի պատրաստութեան, պէտք էր զիմել ձեռնարկ գրողներին գոնէ մի քանի նոր ինքնուրուն պիէսների պատրաստութեան համար. այս րոպէիս այս ըորից ոչինչ չէ կատարւած, այլ սկսւած է միակն գրագրութիւն կ. Պոլսեցի մի քանի ոլժերի հետ—որ ՚ի դէպ է ասել—շատ ուշ է մնացած. Կը գաէ առաջին ներկալացման ինսդիրը և նորից բոլորս միասին հաւաքած իրար երես կը նակենք և կը հարցնենք.

—Ե՞նչ պիտի խաղանք....

«Թեմական գործիչների Ռուսական առաջին ընդհանուր ժողովը» մեծ չաշողութիւն ունեցաւ: Ժողովը կատարելապէս իւր նպատակին հասած կարող է համարել: Պարզել թատրոնի անհրաժեշտ պէտքերը, մտածել գեղարեսաւը բարձրացնելու միջոցների մասին և ազն—աւս բոլոր խնդիրները իրանց բոլոր մանրամասնութիւններով քննւեցան ժողովում, մի քանի դերասանների և դրամատուրգների խօսած ճառերը արժէր որ հայերէն թարգմանէին: Նոքա վառ և կենդանի գոյներով նկարագրում են թատրոնի ներկայ զրութիւնը և նորա անկման գլխաւոր պատճառները: Մենք մի կողմ թողնելով ժողովի չարաւցած այն խնդիրները, որոնք վերաբերում են բացառապէս ուսւ թատրոնին և ուսւ դերասանին, օր աֆով չտալ կախերական թատրոնի արտիստներին գաւառները ճանապարհորդել և ազգափոխ նիւթապէս վնասել գաւառական դերասաններին» և այլն, այլ կանգ կ'առնենք այն մի քանի հարցերի վերաէ՝ որոնք ալսպէս թէ այնպէս մեր բեմի հետ առընչութիւն ռւնին:

«Թատրոնն զեղարւեստորէն բարձրացնել», սա մի շատ կարեոր խընդիր է որ Ն. Կ. Մ. Թագաւոր-Կայսեր հովանաւորութեան տակ զտնուղ աթուսաց թատրոնական ընկերութեան» է լանձնւած ի նկատի ունենալ թատրոնական պիեսների ցանկը և գաւառական խմբերին մատնացող անել այն պիեսների վերաէ՝ որոնք իրեւ զեղարւեստական գրւածքներ, միշտ պէտք է տեղ ունենան բնմերի վերաէ և միանգամ ընդմիշտ բնմից արտաքսեն ամեն կողմից թափւող անհամ և անբովանդակ գրւածքների հաւաքածուները: Ազգափոխ քննութեան բովից անցած որոշ պիեսներ մի տեսակ իրաւունք պիտի ունենան միշտ բնմեր՝ վրայ մնալու: Մեր խեղճ բեմը այս բոպէս անպիսի լքւած վիճակումն է գտնւում՝ որ աչպիսի խնդիրներ, որքան ցանկալի՝ այնքան անհնար է թւում կատարւած տեսնել—անշուշտ հաջ բեմի նկատմամբ:

«Ժողովրդական թատրոններ հիմնել»:

Այս խնդրի վերաէ ժողովը բաւականի ծանրացաւ և մեծ զըժւարութիւն չկաց էժան, ժողովրդի բոլոր խաւերին թէ բովանդակութեան և թէ գնի կողմից ճատչելի ներկալացումներ կազմակերպել: Բացց աչպիսի ներկալացումներ, —որոնք գների էժանութեան պատճառով թատրոնական գահինի վարձը հաղիւ թէ զուրս բերեն—կարօտ և օժանդակութեան, սուրբութիւնի: բայց մի աչպիսի բարի, ազնիւ և կրթական գործի, ինչպէս «Ժողովրդական ներկալացումներ» են, ով պիտի օժանդակէ: ով պիտի օժնէ նիւթապէս: Ամեն մի ներկալացման համար Թիֆլիսում, որտեղ անասելի կերպով թանգ են թատրոնական դահլիճները, մեր կարծիքով նպաստ հարկաւոր է առնւազն 80—100 ռ.: Մեր ժողովրդի մտաւոր կրթութեան համար մի նոր շրջան կսկսի այն օրը՝ երբ հայ ժողովրդական հանրամատչելի ներկալացման առաջին լայ-

տարարութիւնը դուրս կը գայ, Եւ ինչպէս է ժամանակ անցկացնուամ կիրակի սրերը մեր ժողովուրդը. թղթախաղով, արքեցողութիւնով և անտուակութիւնով... Բնչն է կազմում նրա խօսակցութեան նրաթը. լայր սրախօսութիւնն եր, հայուանք և բամբասանք. Մենք առիթ կ'ունենանք նորից այս խնդրին դառնալու.

«Ուցէնզէնտների համար ցէնզ նշանակիլ».

Ուցէնզէնտների կողմից շատ լաճախ կրկնուած անիրաւացի չարձան մները դէպի դերասանները, նրանց աշառութիւնները և կողմնապահութիւնները մէկի կամ միւսի նկատմամբ, այս բոլորը առիթ եղան ժողովում մի քանի դերասանների կողմից ճառիթի միջոցաւ բոլորի ուշագրութիւնը գրաւելու. Ուցէնզէնտների ապիկարութիւնների և տգիտութեան շատ փալուն օրինակներ մէջ բերւեցին, որով խնդրիրը ներթականներից մէկը դարձաւ ժողովին ներկայ եղող 1200-ից աւելի դերասանները բուռն կերպ մի ժափանարում էին և համակիր՝ ուցէնզէնտներին ցէնզ նշանակելու գաղափարին. նրանցից ամեն մէկը իւր անձի վերաէ զգացել էր մամուլի ներկալացուցիչների շատ անգամ կողմնապահ և նպատակով զրւած ուցէնզիանները. մինչդեռ աւանդութիւնը դերասանների ձեռն ուսուց կապել էր և չը թողնուած մամուլի միջոցով այդ անիրաւութիւններին պատասխանելու. Եւ ճշմարիտ, երբ միենան ներկալացման մասին վեցնում էք մի քանի լրագիրների կարծիքները և միմեանց հետ համեմատում, «թարոնի և դերասանների առաջնորդ» հանգիսացող թերթերը կուրեօնների մի ամբողջ շարք են ներկալացնուած. Աւելորդ ենք համարում օրինակներ ստաջ բերել, այլ այդ աշխատութիւնը թողնուած ենք մի ուրիշ անդամւակ, որպէս զի կարողանանք մնաք ևս մեր կողմից ապացուցանել այդ ինքնակոչ ուցէնզէնտներին թատրոնին և դերասաններին հասցրած վեսար.

«Բեմական գործիչների ժողովը» բուռն և սրտաբուղս արտաքալութիւնների և ցոլցերի մէջ փակւեց: Ցոլցերի գլխաւոր առարկան էր գլխաւորաբար ուսու զրամասուրդ Պոտենին, որ առաջին անգամ լրացել էր ժողովի գաղափարը և անչափ ջանք գործ դրել նրա լաջողութեան. Ժողովը այն աստիճանի արդիւնաւոր էր, որ ամեն կողմից ցանկութիւն լայտնեց եկող տարի նորից հաւաքւելու:

Ուստաստանի ամեն ծալերից հաւաքւած դերասանները ջերմ համբուներով բաժանեցան միմեանցից. Շատերը լուզւած լալիս էին.

---

«Նոր-Դար» լրագրին Հին-Կախջեանից հաղորդւած էր, որ դերասան Աղալեանց ապրիլի վերջերին մի ներկալացումն է տեղի, որի կէսը պիտի չառկացւէր Բարեգ. Ընկերութեան, զուտ արդիւնք եղել է 52 ուոր. բայց

բացի վշեալ պարոնին հասանելի կէսից, նրա մօտ գտնւել է և ընկերութեան պատկանելի 15 ռուբլին, որ իւրացնելով չէ վերադարձրել. Սա մի շատ տիրուք Փակտ է, և գաւառները գնացող դերասաններից մի քանիսը չեն խղճահարւել ազսպէս վարժելու չինայելով ոչ այդ հիմնարկութիւններին և ոչ իրանց անձնական պատկին. Ցանկալի էր, որ ալս տեսակ տգեղ երեսիթները հրատարակւէին բոլոր թերթերում, որպէս զի բեմը և հասարակութիւնը ժամ առաջ ազատւեն այդ ցեցերից:

---

Վերջին պահուն Մուրճ'ի խմբագրութեան մէջ Բագրից ստացւած հաւաստի տեղեկութիւններից իմանում ենք, որ աջնտեղ կազմւած Թատրոնական մասնաժողովը 40 ներկաչացման համար արդէն վարձել է թատրոնը, սկսած է բանակցել Կ. Պոլիս, Զմիւռնիա և Եղիպտոս գտնւող մի քանի դերասանների հետ. Գործի նիւթականը ևս կատարելապէս ապահոված կարելի է համարել. Մեր կարծիքով, ի նկատի ունենալով ժամանակի սղութիւնը և դերասաններ հրաւիրելու գործի կնճռոտութիւնը՝ մասնաժողովը լաւ կ'անէր, եթէ մի ձեռնհաս անձի ուղարկէր արտասահման պէտք եղած ոչտերի հետ անձամբ բանակցելու:

---

## ԼԵԶԻԱԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ

Մեծապատիւ Պարոն Խմբագիր.

Զեր «Լեզւական զրոյցները» Մուրճ'ի 2—3 համարում ոչ միայն հետաքրքրութեամբ կարդացւեցին, ալև և շահեկանութեամբ. Որովհետև տողերիս գրողն էլ հետամուտ է եղել մեր աշխարհիկ կենսունակ բաց գեռ ազգատիկ լեզւի առանձնազատկութեանց ու մեր գրականութեան մէջ երեսն եկած բնական ու անբնական շուտի և սխալ՝ կիրառութեանց, թող մեզ էլ ներւի մեր հաւաքած նիւթերից ալս մասին մերթ ընդ մերթ լրացուցիչ դիտողութիւններ անել:

Զեր առաջին «Լեզւական զրոյցները» վերաբերում էին աշխարհաբարի անցեալ կատարեալին, և համեմատելով սրանց տեսակ-տեսակ գործածութիւնները՝ հետեւեալ եղրակացութեանց էիք եկել.

Այն բայերը, որոնք կազմւած են առանց միջանիկեալ մասնիկների (սիրել, գրել), հրամայականում անխտիր ունին իր վերջաւորութիւն և նոցա անցեալը—ցի է. օրինակ՝ գրեցի, ձեւցի, ասրեցի, սիրեցի. խակ բոլոր ան բայերը, որոնց կամ հրամականն է անկանոն և կամ որոնք միջանիկներով են կազմւած (հասնել, հասցնել, հարցնել, գոհանանալ, գոհացնել, փախչել), դոքա անցեալում կամ այ կամ ի (բայց ոչ ցի) վերջաւորութիւնն են ընդունում. օրինակ՝ բերի, տւի, կորցրի, հասալ, մտալ անցաւ:

Ինձ չալտնի չէ, թէ Դուք արդեօք գրաբարից անկախ էք ձեռնամուխ եղել ալդ լեզւական երեսութիւն հետազոտութեանը, թէ նրանից դրդւած կամ առաջնորդւած: Բանն այն է, որ ալդ միննոյն երեսովթը և ապա ուրիմն կամոնը դուռըթիւն է ունեցել նաև մեր գրաբարի մէջ. տես Աշտնեանի «Համառոտ տեսութիւն հակերէն գրաբար լեզւի» 446—459 էջերը և մանաւանդ 452 էջ ն չաւելւածով բայերի մասին և 458 էջում ի շարս առ մանր զարտուղութեանց՝ խօսք կաէ նաև չ նչ և ն գիր ունեցող կրաւորակերպ չէզոքների վերաբերմամբ: Միայն թէ գրաբարի զարտուղութիւնները հին կլասիք լնդուներին առանձնակատուկ բարդութեանց ընթացքին հետեւելով աւելի դժւարանցաների լարիւրինթոսներ ունեն՝ քան աշխարհիկ լեզուներին: Մի կողմից զարմանալի է ալս երեսովթը, որ քանի բարդում է նոր քաղաքակրթութեան տէր մարդու միտքը, այնքան ևս առաւել պարզում է նրա աշխարհիկ գործածական լեզուն, մինչդեռ հին կլասիք գրականութիւն ստեղծող ազգերն աւելի զարտուղի ձևերով ու խրթին ոճերով էին արտազատելիս եղել իրանց աւելի պարզ մտքերը:

Խ՞նչափէս բացատրիլ ալս ուշակրաւ երևովթը. Լեզւագէտ չլինելով,  
իբրև մանկավարժ ալսպէո մու համբանում աղդ երևովթը. Կեանքի պահանջը,  
որ լաւագոյն մանկավարժական մղիչ ու չնդասիսիչ ուժն է հանդիսացել  
խօսող ու զրող մարդուն հարկադրել է հետղնետէ ձեռք վերցնել այն  
ծանր խրթնաբանութիւններից' համակերպւելու համար գործնական  
պահանջներին թօնուտ մոռքի պարզութեան:

Դուք իբրև խմբագիր և ես իբրև մանկավարժ՝ կը ցանկավինք,  
ի հարկէ, որ միշտ որոշ կանոններ գոյութիւն ունենաւին նաև անցեալ  
կատարեալի համար. Ամական այն էլ գիտենք, որ մեր կենդանի լեզուն  
իւր բնական զարդարման շաւզով չառաջ պիտի ընթանալ, եթէ նա բուռն  
հարւածների չենթարկւի<sup>1)</sup>. Այդ ընթացքն է, ինչպէս վերեն չրեցինք,  
ծեւերի պարզմունքը. Մեր գրաբարի վեց լծորդութիւններն աշխարհիկը վե-  
րածել է չորսի. և ով գիտէ, թէ Ձեր նկատած անցեալ կատարեալի բերե-  
ցի, տւեցի, կրցուցի... անհիմն համարւած զործածութիւնները նոյն կեն-  
սունակ զտիչ ազբէւրից չեն բղխած. Մենք կարող ենք ներկայումս Զեր  
առաջարկած կանոնն ընդունել և կարծիմ պէտք է, բայց այդ արդի «ան-  
կանոնութիւնները» թերևս մօտիկ ապագալում ընդհանուր անչաղթ կա-  
նոնի դրօշակի ներքոց գերիշխանութեան հասնեն. Բանն այն է, որ ժո-  
ղովրդի ոգու մէջ են նրանց արմատները. նա գործածում է օրինակ՝ թըղ-  
թախաղի մէջ տարեցի աւելի խորթ ձեւը «տանել» բայց, թէն ալս դէպ-  
քում զեռ սովորական տարայ ձեխից միայն զանազանելու համար. Այս-  
նեանը ի միջի ալլոց գրաբար առնեմ բայի անցեալ կատարեալի կերպա-  
րանափոխութեանց մասին իւր աթերականութիւն արդի հաւերէն լեզւի»  
71—72 էջերում հետեւեալ պատմական տեղեկութիւններն է տալիս:

Հին շրջանի ձեները. արարի, արարեր, արար, աք, էք, ըին:

Միջին » » արի, արեր, արաւ, արաք, արիք, արին:

Նոր » » ըրի, ըրիր, ըրաւ, ըրինք, ըրիք, ըրին:

Նա գաւառական է համարում նաև մեր կովկասեան գրական բարբա-  
ռում ընդունւած տրի և արեցի ձեները ըրեցի ձեխի հետ. Ի հարկէ, աղդ  
արևմտեան հայերի զրական բարբառի տիսակէտիցն է. Նախաշալի. 98  
էջում ալս մասին նկատում է նա, որ «ընդհանուր լեզւի մէջ անկանոն  
կամ սխալ ձև գաւառականի բուն կանոնաւորն ու քերականն է», և  
բերում է արեցի, զարկեց, տւեցինք, կոտրաւ... ձեները, որ մեզանում  
զրական են:

8. Տ.-Միրաքեան.

<sup>1)</sup>) Օրինակ՝ երբ պատմական ալլ և ալլ պարագաների բերմամբ մի տեղում հալը «ՍԴՎԱԼՏԵԾԱ եղալ» խառնուրդին կ'ընտելանակ, միւս տե-  
ղում՝ «բիթմիշ եղալուին, ի հարկէ անցեալ կատարեալի զարդացումը զա-  
գար առած կամ ալլասեռուած պէտք է համարել».

## ՅՈՅՆ-ՏԱՐԱՎՈՒՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Կրետէի անցքերին յոշողեց յոյն-տաճկական պատերազմը, որի սկզբնաւորութեան մասին յիշատակութիւն եղաւ ամսագրիս անցեալ համարում: Խնչպէս Կրետէի նկատմամբ վարւեցինք, այնպէս էլ յոյն-տաճկական պատերազմի նկատմամբ մենք այս անգամ ներկայացնում ենք անցքերի ընթացքը: Կարծատե եղաւ այդ պատերազմը. մեր տոմարով սկսւեց նա ապրիլի 5.-ին, և արդէն հազիւ հինգ շաբաթ անցած՝ երկու կողմերն էլ համաձայնեցին նախնական զինադադար անել, իսկ մայիսի 25.-ին ստորագրւեց զինադադարի դաշնագիրը:

Պատերազմի նախապատրաստութիւնների ժամանակ և պատերազմի սկզբում ընդհանուր կարծիքը խիստ խրախուսական էր յոյնների համար. յոյների զօրքերի փոքրաթիւ լինելը հաստատւած էր. բայց յոյսեր էին դնում ազգային ոգեռորութեան վրայ, յոյսեր էին դնում մանաւանդ այն բանի վրայ, որ պատերազմի ընթացքում տաճկական մեծ նահանգներից մէկում՝ Մակեդոնիայում՝ ապստաբութիւն կը ծագի. յոյսեր էին դնում, որ Բալկաննեան մանր պետութիւնները՝ Բոլգարիա, Սերբիա և Չեռնոգորիա, օգտւելով Թիւրքիայի նեղ դրութիւնից պատերազմի ժամանակ—կը սկսեն պահանջներ դնել սուլթանին և գործը կը հասցնեն պատերազմի Թիւրքիայի դէմ: Այդ ենթադրութիւններին ոչ էին տալիս Սերբիայի թագաւորի. ալցելութիւնը Բոլգարիայի իշխանին և բալկաննեան դաշնակցութեան մասին լուրերը:

Եւրոպական ազգերից Ֆրանսիայում, Անգլիայում և Խոտալիայում ազատամիտ կուսակցութիւնները (ոչ տէրութիւնները) ակնայտնի կերպով բռնել էին յոյների կողմը և այդ մտքով ցոյցեր էին անում և յուսադրում յոյն ազգին և կառավարութեանը:

Յունաց մինիստրութեան նախագահը՝ պատերազմի սկզբում՝ շնորհակալութեան նամակ գրեց Փրանսիական յայտնի ագիտատոր և պութլիցիս Ռոշֆորին. Անգլիայի սլարլամենտի անդամներից շատերը ուղերձ ուղարկեցին յունաց թագաւորին և կառավարութեան. Խուալիայում գարիբալդեանները կամաւորների գունդ կազմեցին և եկան Յունաստան՝ սորան օգնութեան հասնելու:

Յունաստանի իրա մէջ գործում էր Էթիկա Հետերիա զօրեղ կուսակցութիւնը, իւր գաղտնի կազմակերպութիւնով և կամաւորներով: Այդ կուսակցութիւնը եռման մէջ էր գրել ամբողջ ազգաբնակութիւնը, և կառավարութիւնը, հրապարակական մեծ ցոյցերի առաջ՝ ստիպւած եղաւ հետեւել հասարակաց կարծիքին և ցանկութեան:

Կամաւոր զօրքերը արդէն սահմանի վրայ իրենց թոյլ էին տալիս իրենց կամքով անցնել տաճկական սահմանը. սուլթանը վաղօրօք արագութեամբ զօրքեր էր ուղարկում յունական սահմանագլուխը, դնելով նոցա էդհեմ փաշացի հրամանատարութեան ներքոյ:

Եւրոպական տէրութիւնները աշխատում էին կարելիին չափ զսովել յոյների եռանգը. բայց ակնյացնի թշնամական դիրք չէին բռնում. բացառութեամբ սակայն Գերմանիայի, որի կառավարութիւնը ակնյացնի կերպով թշնամական դիրք բռնեց Յունաստանի դէմ, գտնելով սորա ինքնագլուխ քաղաքականութիւնը հակառակ իւր շահերին Թիւրքիայում և հակառակ եւրոպական մեծ պետութիւնների կոնցերտի շահերին: Գերմանական թէրթերը ամենայն սառնութեամբ և նոյն իսկ արհամարական տոնով կշռում էին յոյների և թիւրքերի ոյժերը, գտնում էին Յունաստանը շատ թոյլ թուրքերի դէմ կուելու համար և ամենաանպատ կարծիք ներ էին յացտնում յունական սպատերազմիկ ոյժերի մասին, և ոչ էլ յոյս էին տալիս թէ մեծ պետութիւնները նորան օգնութեան կը գտն:

Յոյները հաշում էին նաև, որ վատ դէպքում՝ Յունաստանը կորուստ չի ունենալ. Եւրոպան չէր թողնիլ որ Յունաստանը հողեր կորցնի: Առւսիացի արտաքին գործերի մինիստր կոմս Մուրաւեօվը, թարգման հանդիսանալով եւրոպական կօնցերատին՝ նոտա ուղարկեց թիւրք և յոյն կառավարութիւններին, որով ազգարարում էր, որ

մեծ պետութիւնները չպիտի թողնեն յաղթող կողմին՝ օգտել իւր յաղթութիւնից՝ հողեր նւաճելու համար:

Այսպիսի պարագաներում սկսեց յոյն-տաճկական պատերազմը: Յոյների յոյսերը սակայն ի պերև անցան. Բալկանեան պետութիւնները պահպանեցին ամենախիստ չեղքութիւն, որի համար և ստացան շնորհակալութիւն Ռուսիայի և Աւստրօ-Ռուսգարիայի կառավարութիւններից, և դա միաժամանակ նախազգուշացումն էր՝ այսուհետեւ ևս շարունակել խիստ չեզօք դիրք բռնել:

Յոյն կամաւոր զօրքերը, իրենց հակա-դիսցիպլինական վարքով՝ ոչ միայն օգնութիւն չեղան Յունաստանին, այլ և նոյն իսկ յաճախ վնասեցին:

Յունաց ծովային ոյժը, որի վրայ յոյները մեծ յոյսեր էին դրել, դրական գործ չկատարեց և պատերազմական յաջողութիւններ չունեցաւ. գործը կենդրոնացած էր ցամաքի վրայ:

Յունաց զօրքերի գլխաւոր հրամանատար նշանակւած էր թագաժառանգ Կոնստանտին, 29 տարեկան, որ զինւորական կրթութիւն է սահցել և համարւում էր հմտւող զինւորական: Բայց շատ շուտով երեաց, որ նորա գլխաւոր շտաբը անընդունակներից էր կազմւած:

Պատերազմի ընթացքում յոյները կրեցին շարունակ պարտութիւններ և շարունակ ետ ետ քաշւեցին, բացի Եպիրոսում, ուր նոքա մասնաւոր յաջողութիւններ ունեցան. բայց սորատեգիկական տեսակետից՝ առանձին կարեւորութիւն չունեցան Եպիրոսում բռնած յունաց դիրքերը:

Յուրքերը աւան սահմանագլխի լեռնային անցքերը, շուտով գրաւեցին Լարիսա քաղաքը, ապա անցան Վոլօ, վերցրին Ֆարսալա քաղաքը, ապա Լամիա քաղաքը և Դոմոկոս Յոյները այդ բոլոր տեղերից ետ քաշւեցին՝ երբէմն յուսահատ կռիւներ տալով զօրեղ թշնամուն: Դոմոկոսը թիւրքերից գրաւելուց յետոյ՝ պատերազմը կանգ առաւ. եւրոպական պետութիւնները միջնորդեցին՝ զինադադար անելու համար, որ և կատարեց. այս բոպէին (27 մայիսի) գործը այդ շրջանումն է:

Առաջին իսկ պարտութիւններից յետոյ՝ Դելիանիսի մինիստրութիւնը ընկաւ և նորան փոխարինեց Ռավլինի մինիստրութիւնը

որի նպաստակն եղաւ պատերազմը շարունակել միմիայն պատւառոր խաղաղութեան դաշն կոելու համար։ Պատերազմի լնթագքում փոխւեց նաև յունաց զօբքերի գլխաւոր շտաբը։

Յունաց կառավարութիւնը, այսպիսի պարագաներում, ստիպւեց իւր զօբքերը կրետէից ետ կանչել. զօբապետ Վասոս թողաւ կրետէն և մաս-մաս յունաց բոլոր զօբքերը թողին կրետէն և անցան Յունաստան։ Թիւրքիան կրետէից յունական զօբքերն ետ կանչելը պայման էր դնում զինադադարի համար։

Պատերազմի այդ ընթացքից և նորա ելքից մեծապէս վնասւեց յունաց թագաւորական տան ազդեցութիւնը. մանաւանդ խախտած է թագաժառանդի կիրքը։ Այդ հանդամանքը մեծ հոգս պատճառեց եւրոպական արքունիքներին, որոնք հարկ համարեցին նախազգուշացնել յոյներին հետու չգնալ իրենց ցոյցերի մէջ թագաւորական առհմի դէմ։

### Ահա և անցքերի կարգը.

Սահմանագծի մրաց յոյն զօբքերը, իտալական կամաւորների հետ, անցան տաճկական սահմանը, բայց ետ մզւեցին (5 ապրիլ հին տումար)։ Սահմանի արեւմտեան կողմում յոյն նաւերը ոմբակոծում են Պրեւեզայի տաճկական ամրութիւնը։ Սկսում է յուսահատական կռիւ Մելունեան անցքում. տաճիկները բռնում են ամբողջ կիրճը բացի բարձրութիւններից։ Կռիւներ են լինում Սկամբայում, Դերագոնում, Չիլիսարում։ յոյների մի զիւիզիան անցնում է սահմանը։ Սահմանի արեւմտեան կողմում յոյները պատրաստում են 800 զինւոր իջեցնել Պրեւեզայի մօտ, որի ամրութիւնը յոյները ոմբերով կործանել են։ Յոյները յարձակւեցին կրանիզի վրայ, բայց ետ մզւեցին։ Ապրիլի 8-ին ամբողջ Մելունեան անցքը իւր բարձրութիւններով տաճիկները գրաւեցին, ամենատաք կռիւներից յետոյ։ Մելունի անցքի բարձրութիւնների վրայ տաճիկները կանգնեցին. 3 բատարէա, Պերկարիի վրայ՝ 2 բատարէա։ Եղնէմ փաշան պատրաստում է Տիրնովիսի և Լարիսայի վրայ գնալ 60.000 մարդով։ Սուլթանը յայտնեց եղնէմ փաշացին շնորհակալութիւն։ Յունական զօբքերի մէջ են մտնում ժանդարմէները և ոստիկանները.

քաղաքներում քաղաքացիք իրենց վրայ են վերցնում ոստիկանաւ կան ծառայութիւնը Ապրիլի 9-ին Կ. Պոլսից ճամբաց լնիաւ յունաց դեսպանը: — Սահմանի մօտ յոյների ձեռքում ապրիլի 9-ին միայն մի առմկան դիրք էր մնացել, որի ետ խլելը սպասում էր շուտով: Յոյները քաշեցին Տիրնովիսից կարգով: Յոյները փորձ արին Մելունի անցքի մօտ թիւրքաց մի զիրքը և կուլուց բայց մեծ կարուստով ետ մզւեցին: Ապրիլի 13-ին կէսորի թիւրքերը գրաւեցին Հարիսա քաղաքը: Յոյները 12-ին թողել էին այդ քաղաքը, որը անհարին էին գտել պաշտպանել, ինկատի ունենալով՝ որ նա հարթավայրումն է և անպաշտպան Թիւրքերը վիրցրին այդտեղ 7 թնդանօթ 12 սանտիմետրանոց և 1 լեռնացին թնդանօթ: Բնակիչները այրեցին և քանդեցին աները և վախսն դէպի լեռները և կդնեմ փաշոն սանում է Խմթիազ: Հքանշանը Յունաց զօրքերի իրական գլխաւոր հրամանափար գեներալ մայոր Մակրիս հրաժարական տւառ նորա տեղ նշանակւեց գնդապետ Մաւրոմիխալիս նիշագ փաշացի դիւիզիան դրաւեց: Տիրնաւոս առանց կռւի բացի մի քանի ծերերից, բոլոր բնակիչները փախան:

(Միջանկեալ ցիշնք, որ զեռ ապրիլի 10-ին Գերմանիացի կայսր Վիլհելմ II և կառ Վիեննա, Աւստրո-Ավստրիացի կայար Ֆրանց Յովանէֆի Ա-ի մօտ իսկ մի քանի օր ցիտոց Ֆրանց-Յովանէֆի կայսրը շքախմբով ուղեորւեց Պետերբուրգ, ուր հասաւ ապրիլի 15. ին և մնաց մինչեւ ապրիլի 17-ը: Այդ տեսակցութիւնների անմիջական հետեւանքը արագայտւեց կուն Մուրաւեօթի և կուն Գոլուխովունինի նոտացի մէջ, ո զզած հալկանեան պետութիւններին, սոցա գեղօքութիւն պահպանելու մասին):

Սուլթանը հրամացեց, որ Ադրիանապոլսից 8 բատալիոն գնան յունական սահմանը (16 ապր.): Աթենքում ժողովուրդը կոտրատում է զէնքերի խանութիւնները և կողովուում է կդնեմ փաշան կոչ է անում, որ Լարիսացի յոյն բնակիչները վերադառնան, բայց յոյները հաւատ չունենալով թիւրքերին՝ չեն վերադառնում: Վոլոյի բնակիչները թողնում են քաղաքը, կանացք և երեխաները փոխագրւեցին նաւերի վրայ Աթենքում ժողովուրդը հակակառավարչական ցոյցեր է անում: Դելիանիսի մինիստրութիւնը հրաժարական է տալիս թագաւորը նոր մինիստրութեան կազմելը յանձնում է ընդդիմադ-

բական Ռալլիին, որը իւր մինիստրութիւնը կազմակերպում է ապ-  
րիլի 19-ին (հ. տ.): Թիւրքերը սկսում են հարւածել յունական  
դիրքերը Ֆարսալյում, ուր նոր մինիստրութիւնը՝ ուղարկում է  
իւր երկու անդամներին՝ դրութեան հետ մօտիկ ծանօթանալու  
համար: Թիւրքերը 5 բատալիոնվ գրաւում են Բեղրունարի կամ  
Պենդեպիգալիացի շրջակացքի բարձունքները, դուրս քշելով յոյն  
զինւորներին: Եղիեմ փաշան իւր շտաբով մտաւ Լարիսա ապրիլի  
19-ին: Թիւրքերի առաջին դիւիզիան գրաւեց Տրիկալան: Սահմանի  
արևմտեան մասում յոյն զօրքերը կենդրոնանում են Արտայում, որը  
թիւրքերը ուզում են պաշարել: 18 ապրիլի, Վելեստինոյից մի  
ժամ հեռու կոխւ եղաւ, որը նորոգւեց 19-ին ապրիլի. յոյները  
ետ նահանջեցին. Հաքքի փաշան գնում է Վելեստինոյի վրայ: Արե-  
մբտեան սահմանների վրայ, յոյները թողնում են Կարաւանսարայ  
տեղը և ետ դառնում Կումուսաղոս, որի բարձունքները գրաւած  
են թիւրքերը: Թիւրքերը սկսում են յարձակումը յունական ծով-  
եզրեայ Արտա քաղաքի վրայ: Վոլոցի շրջականերում եղան հանդի-  
պումներ յոյն ու տաճիկ զօրքերի. յոյները ետ քաշւեցին. Թիւր-  
քերը մոռան Վոլո 22 ապր. (հ. տ.): Ֆարսալյում կենդրոնացած  
է 30.000 յոյն զօրք 60 թնգանօթով. Թիւրքերը սկսում են յար-  
ձակումը ապր. 22: Եւրոպայում սկսում են եւ րոպական միջնոր-  
դութեան մասին խօսել. Պարիզից տեղեկացրին, որ յունաց դես-  
պանը գորա դէմ չէ: Յոյները սկսում են Ֆարսալան թող-  
նել—ետ նահանջելով դէպի Դոմոկոս, ուր բնական սաշտապանողա-  
կան սահման կայ, որ կազմում են լեռները: Կողոսը վերցնում են  
թիւրքերը. յոյները շտապում են թողնել Էպիրոս: Պենտեպիգա-  
գիացի մօտ եղած կուից յետոյ, այլ ես ոչ մի յոյն չկար թիւրք  
հողի վրայ: Աթենքում մինիստրների ժողովը վճռում է պատերազմը  
շարունակել: Քննութիւնը ցոյց տևաւ, որ թագաֆառանգ Կոնստան-  
տինը մեղաւոր չէ Լարիսա քաղաքից ետ քաշելու դործում, այլ  
մեղաւորը նորա զլիսաւոր շատան էր: Էպիրոսի զօրքերի հրամանա-  
տար Մանոս արձակւում է և նորա տեղ նշանակւում գնդապետ Վա-  
սոս (որ ետ է կանչւում Կրետէից). Ֆեսալիայի զօրքերի հրամա-  
նատարներ գեներալ Մակրիս և ենթագնդապետներ Մաստրապասացի  
և Ընտոնովիչի տեղ՝ նշանակւում են գնդապետներ Մետաքսաս, Վա-

սիլիադիս և Կորպաս: Կրետէյից յետ է կանչւում մայոր Կոնստանդինիդիս, որը նշանակւում է թագաժառանգ Կոնստանտինի շտաբի գլխաւոր: Թիւրքերը գրաւեցին Պոզարակի, Հասան-Թաթար, Հաճիլար, Մայմուլի, Խալիլէր, Մուսալար և Զեմերդիլի դիրքը: Յունաց գնդապետ Սմոլենից 24 ասլր. (հ. տ.) ետ մղեց թիւրքերի յարձակումը Վելեստինօցի մօտ. երկու կողմից ևս կորուստները մեծ եղան: Պաշտօնապէս ապր. 24-ին յայտնի է լինում, որ Ռուսաց ներկայացուցիչներին պատւիրւած է պետութիւններին հաղորդել կոմս Մուլավիովի հեռագիրը, որով յայտարարւում է, թէ Ռուսիան—եթէ միոյն Յունաստանը կը խնդրի—պատրաստ է, պետութիւնների համաձայնութեամբ, միջնորդութեան փորձ անելու Թիւրքիայի և Յունաստանի միջև: Պետութիւնները այդ առաջարկը ընդունեցին: Յունաց կառավարութիւնը յայտարարում է, որ այլ ևս կամաւորներ չի ընդունում: Հաքքի փաշայի դիւիզիան գրաւեց Վելեստինօցի ամրութիւնների առաջին գիծը և սկսեց յարձակումը երկրորդ գծի վրայ: Թագաժառանգի զօրքը կարգով ետ քաշւեց գէսլի Դոմոկոս: Թիւրքերը վերցրին Փարսալա քաղաքը 25 ապր., օր առաջ եղած խիստ և երկարատեւ կռիւներից յետոյ. 25-ին առաւօտը թիւրքերը յարձակւեցին քաղաքի վրայ. յոյները փախան Դոմոկոս: Գնդապետ Սմոլենից Վելեստինօցից կարգով ետ քաշւեց և մոտաւ Ալմիրօ: Սուլթանը Էդհեմ փաշային բարձրացնում է յունական սահմանների վրայ ամբողջ զործող զօրքի մարշալի աստիճանի: Յունաստանը յայտնում է պետութիւններին, որ Կրետէից յետ է կանչել 25 օֆիցէր և սապեօրների երկու ռոտա և խոստանում է իւր բոլոր զօրքերը կարճ միջոցում ետ կանչել: Յունաստանը 28 ապր. գրաւոր խնդիրքով դիմում է պետութիւններին միջնորդութեան մասին: Բայց լորդ Սալսբիւրիի յայտնածին համեմատ՝ այդ դիմումը խիստ պաշտօնական ձեռով չէր արւած: Սուլթանը իրան ցոյց է տալիս, թէ իւր սպահանջները չափաւոր են լինելու. Կրետէին ինքնավարութիւն տալու խոստումը ետ չի վերցնիլ, պատերազմական կոնտրիբուցիան չափազանց չի լինիլ, իսկ սահմանների համար յայտնում է միայն յանկութիւն սահմանագիծը ուղղել այնպէս, որ լեռնացին շղթան Թիւրքիայինը լինի: —Թիւրք գնդապետ Էնուեր իւր գնդով մտնում է Վոլօ: Արևմտեան սահմանի

Վրայ թիւրքերը շտուրմով վերցրին կամարինը, Պրեւեզացից հիւսիս. յոյները պատուպարւեցին յոյն եկեղեցում, որը շտուրմով վերցրեւեց. յոյն դօքերը ետ քաշւեցին կլարթեպէլի վրայով ձորը, ուստից յարձակումն գործեցին, բայց ևս մղւեցան։ Կրետէլից իւր դօքերը ետ կանչելու մասին յունաց կառավարութիւնը տալիս է գրաւոր խոստում. այդ հիման վրայ եւրոպական ծովապետները ապր. 28-ին թոյլ են տալիս, որ գնդապետ Վասոս 40 օֆիցիոներով և 400 զինուրով Կրետէից նաւ նստի և Յունաստան գնալ։ Յոյները պատրաստում են Դոմոկոսը պաշտպանելու։ Ապրիլի 23-ին պետութիւնները պաշտօնապէս առաջարկեցին իրենց միջնորդութիւնը, որ և Յունաստանը իսկոյն ընդունեց։ Արևմտեան սահմանում յոյները 3000 զօրք իշեցրին Պրեւեզալից հիւսիս մայիսի 3-ին. այդ իրողութիւնը վաս ազգեց Կ. Պոլսում, ուր սուլթանից սպասում էր պատասխան միջնորդութեան խնդրի մասին։ Պատասխանը ստացւեց նոյն օրւայ գիշերը. զինադադարի համար Բ. Դուռը այս պայմաններն էր զնում. նախնական հաշտութիւնը և հաշտութիւնը կը կապւի երբ Յունաստանը կը վըճառի 10 միլիոն ֆունտ ստերլինգ (մոտ 100 միլիոն ռուբլի) տուգանք. պիտի վերականգնւի նախկին սահմանը, ինչպէս կար մինչև 1884 թ., Թիւրքիայում եղող յոյն հպատակների մասին դաշնադրութիւնները (կապիտուլացիաներ) պիտի փոխւեն՝ միջազգացին իրաւունքի հիման վրայ. պիտի նոր դաշն կապւի սովորական յանցաւորներին յանձնելու մասին. ծովափնեալ Վոլո և Պրեւեզա քաղաքներում կը սահմանւի փորտո-ֆրանկօ. Երկու կողմի ներկայացուցիչները պիտի իրենց ըանակցութիւնների համար ժողովւեն Ֆարաւացում. Մայիսի 6-ին թիւրքերը 5.000 մարդով մօտեցան Դոմոկոսին. և տեղի ունեցաւ ջերմ կոււ. Թիւրքերը նախ յարձակեցն յունաց զօրքի ձախ թեկի վրայ, ետ մղւեցան և ամբողջ ուժով յարձակեցին աջ թեկի վրայ. յոյները ետ քաշւեցին դէպի Կիումիա, Կիուցելի և Կարսացոլի, ուր և կենդրոնացան։ Աթենքի ամբողջ գարնիզոնը գնդապետ Վասոսի և Ալիմբրիախիսի հետ զուրս եկան դէպի Դոմոկոս։ Կ. Պոլսի զեսպանները, քննելով Բ. Պրան պայմանները, սոցա գտան շատ չափազանց. նոքա գտնում են, որ կարելի է թոյլ տալ միայն սահմանը. սորատեգիկական տեսակէտից ուղղել յօ-

գուշ Թիւրքիայի, բայց ոչ դրաւել Թհսալիան. պատերազմական տուգանքը բաւական են համարում՝ միայն քառորդը այն գումարի, որ պահանջում է Թիւրքիան. իսկ մինչև հատուցումը թոյլ են տալիս Թեսալիան գրաւած պահել կամ մի այլ երաշխաւորութիւն ներկայացնել: — Երուսաց Թագաւոր-Կայսրը նամակով սուլթանին դիմեց սորա խաղաղսկր զգացումներին՝ թշնամական գործողութիւնները դադարեցնելու համար. սուլթանը, զգածւած Թագաւոր-Կայսեր բարեկամութեան արդպիսի նշանի համար, չնորհակալութիւն արաւ և յայտնեց, որ Էդինեմ փաշացին հրահանգներ ուղարկեց: Պետութիւնները ընդունում են չափաւոր տուգանքը Յունաստանի համար, համեմատ Թիւրքիայի արած ծախքերին. համաձայն են սահմանը ուղղել միայն սորատեղիկական տեսակետով, բայց չեն լնդունում կապիտուլացիաներ ոչնչացնելը: Զինադադարի մասին բանակցութիւններ սկսելուց առաջ՝ թիւրքերը խիստ յարձակում դորժեցին Սրուայի վրաց (արեմուեան սահման). Թիւրքերը մտան Դոմոկոս ապր. 8-ին. նոքա վերցրին նաև Ալմիրա՞ն: Յունաց թագաժառանգի գլխաւոր բանակը փոխազրւեց Թերմոպիլ, ուր գտնւում էին նաև Գարիբալդիան կամաւորները: Կրնտէից դուրս եկաւ յունաց զօրքի վերջին մնացորդը, ապրիլի 10-ին: Դուռը ողաշտօնապէս հազորդեց զեսպաններին, որ պատերազմի երկու ասպարէզներում ևս (Թեսալիայում և Էպիրոսում) թշնամական գործողութիւնները դադարեցրած են: Էդինեմ փաշացի հեռազրից պատերազմական մինիստրին երեաց, որ թիւրքերի զինւորական որսը Լարիսայում, Վոլոյում, Ֆարսալայում և Դոմոկոսում եղել է 17 թնդանօթ, 34.318 թնդանօթացին պատկանելիներ, 95 ումբացին արկղեր, 96 զինւորական սայլեր, 3.169 հրացան, 12.344 արկղեր հրացանի պատրոններով և այլ զինւորական նիւթեր:

Հ.

## ԶԱՆԱԶՈՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՒՐՃԻ ԴԱՏԸ ՄՇԱԿԻ ԴԵՄ. Մշակ լրագրի այս տարւակ № 57-ում՝  
տպւեց մի գրութիւն «Նամակ Բաքվից» խորագրով և «Ն. Դաւ-  
թեան» ստորագրութեամբ. Գրութիւնը վերաբերում ունէր Մուրճի  
խմբագիր-հրատարակչի փոխառութեան մի գործին. Ազդակի փոխա-  
ռութեանը տրամադ էր աճնափիսի լուսարանութիւն. և գրութիւնը ինքը  
պարունակում էր աճնափիսի ոճեր, որ նորա մէջ անկարելի է չնատել  
մի փորձ՝ Մուրճի խմբագրի իբրև անհատի և թէ իբր հասարակա-  
կան գործիչի պատիւը շօշափելու. Միանդամալին դուրս համարելով  
մամուլի կոչումից ալղանեսակ մի նիւթի մասին Փակտալին ընդդի-  
մախօսութեամբ ճշմարտութիւն վերականգնել. Մուրճի խմբագիրը  
վճռել է մօտ օրերս դատական պալատի դատախաղին չալտարարու-  
թիւն տալ՝ և դորանով գործը հրամարակական դատարանը անց-  
կացնել. ինկատի ունենալով, որ Ն. Դաւթեանի գրութիւնը՝ իւր  
ամբողջ տոնով և տենդենցիալով մի պատահական գրութիւն չէ Մշա-  
կում, և որ թերթի խմբագրութիւնը, տպագրելով Ն. Դաւթեանի  
գրութիւնը, գիտակցորէն և դիտմամբ կամեցել է Մուրճի խմբագրի  
պատիւը շօշափել. Մուրճի խմբագիրը իւր մեղադրանքը պիտի ուղ-  
ղի թէ Ն. Դաւթեանի և թէ Մշակի խմբագիր Ալեքսանդր Քալան-  
թարի դէմ.

ԲԱԲԿԵՆՑԻ «ՆՈՐԵԿ» ՎԵՊԸ վերջանում է ամսագրի ներկակ համարում։  
Այս վէպը, մեր կարծիքով, մի նոր և նշանաւոր երևութ է մեր վի-  
պական գրականութեան մէջ՝ իւր նիւթի ընդարձակ ծաւալովը, որ  
առնւած է մեր երկրի նահանգական, գաւառական և համանգի հա-  
կական, թրքական ու քրդական կեանքից, Երևանի նահանգում  
Բնիկ աղգերի հայեացքները, փոխադարձ չարաբերութիւնը և վերա-  
բերմունքը դէպի կուլտուրական խողիրները և նահանգական վար-  
չական պայմանները՝ կազմում հն վէպի, ալսպէս առած, նիւթական  
բովանդակութիւնը, որ հեռու հորիզոններ է բաց անում շնորհիւ աճն  
ուղղութեան և ոգուն, որ դրամած է վէպի մէջ։ Այս վէպը, որպէս  
մենք կարծում ենք, մնալու է մեր վիպական գրականութեան մնա-

լուն սեփականութիւն։ Վէպը աչս օրերս պիտի լոյս տեսնի նաև առանձին գրքով, գինը 70 կոպէկ, որի համար կարելի է դիմել Մուրօնի խմբագրութեան։ Եթէ ընթերցող հասարակութիւնը, սպառելով աչս տպագրութիւնը, տեղիք կը տալ մի երկրորդ տպագրութեան՝ ապա մեզ կը մնաչ ցանկանալ, որ հեղինակը, լեզվի կողմից, մի աւելի խիստ սրբագրութեան ենթարկէ նորան։

ՄՈՒՐԵՇԻ ՆԼԵՐՆԵՐ, Տրապիզոնի օրիորդաց դպրոցի հինգ նախկին աշակերտունիներ, Եկատերինողարից մի օրինակ Մուրճ գրւելով՝ թողել են այն խմբագրութեանս տրամադրութեան ներքոյ. աչդ օրինակը կ'ուղարկվի Գանձակի Միքայէլեան արհեստագիտական դպրոցի աշակերտներին, Յովհաննէս Արուստամեանցի հասցէով։

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ 0ԳՆԱԿԱՆ նշանակուած է իշխ. Օբոլենսկից, որը կառավարիչ էր պետական ազնւական կալածական բանկի, Պետերբուրգում։

ՖՐԱՆՍԻԱՆ ԵՒ ՌՈՒԹԻՍԻԱ. Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆելիքս Ֆոր վերջնականապէս վճռել է լուլիսին ալցելութեան գալ Ռուսիան Ռուսիակում Ֆորը մնալու է ութ օր, և ծրագիրը երկու կառավարութիւններից ևս ընդունած է։ Ֆորը ճամբւելու է Ռուսիա ծովով, Մարսէլի և Օդեսակի վրայով, ճանապարհին կանգ չառնելով ոչ մի ուրիշ պետութեան մէջ։ Նորան ուղեկցելու է արտաքին գործերի մինիստրը և զինւորական շքախումբը։

#### ՏԱ.ՃԿԱ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

Դիարբեքիրում բրիտանական փոխհՀիւպատոս Ռւտֆոմարտին ստացաւ Լոնդոնի «Հայերի բարեկամների միջազգային ընկերութիւնից» վեց հակ հագուստեղէն, որ ճանապարհ էր զցւած լունւարի 28-ին։ Վերնազգեստները սական փոխ։ Հիւպատոսը ստիպւած եղաւ ծախելու, որովհետեւ տեղական տարագով չէին կարւած։

Մարդինի գործակալը ուղարկել է Լոնդոն, Ռէկստմինիստրի դքսին այն նամակը, որ նա ստացել էր նպաստներ բաժանող Խւտափ Խւնանից (Ցովսէփ Յօնանեան), որը 250 լիրա էր ստացել թշւառներին բաժանելու, բայց որ, տեղական իշխանութիւններին (մութեսարիփ և պետական դատախազը) սոցա պահանջած 10.000 դրուշը «իբր փոխառութիւն» չտալուց մի քանի օր լիտու սպանւած գանեց։

#### ՀԱ.Ց ՓԱ.ԽՍՏԱԿԱՆՆԵՐ.

Կովկասիան կառավարչապետի դիւանում լօգուտ տաճկահակ փախըտականների, մինչև մայիսի 1-ը ամբողջ Ռուսաստանից ստացւած էր 38.000 ռուբլի։

Օգիսաւ Զիխաչն շողինաւով ապրիլի կէսին Օգիսաւ եկան 14 հոգի համբ, որոնք թուղոն էլ հարուստներից էին Կրնում:

Նդիպտոս: Նդիպտոս եկել են նոր փախտականներ, թւով 700 հոգի, Ազգ առիթով Ալիքսանդրիակի համբի նախագահ՝ Պողոս Նուրբար փաշա (որդին չաւոնի Նուրբար փաշակի) դիմեց Անգլիակի ներկայացուցչին Եղիպտոսում, լորդ Կրոմերին, որով նա խնդրում է նպաստ: Խորդ Կրոմեր ալդ նամակը ուղարկեց Լանգոն, լորդ Վալիսբիւրիին, որ ու անդլօ-հայկական նովաստող Փոնդի միջոցով օգնութեան հասնէ կարսուեալներին: Պօղոս Նուրբար փաշան չարոնում է նամակում, որ ձմեռւալ ընթացքում թատրոնական և առ բարեկործական հաճողեաների միջոցով ժողոված գումարները արդէն սպառւել են:

Կալի Փորնուայի (Հիւս. Ամերիկա) պանդուխտ համերը 353 դոլար (մօս 700 ռ.) ուղարկեցին Ա. Պոլսի հալոց պատրիարքարան՝ լօգուտ թշւառացած համերի:

Դիրմանիայի մի նախատամատոց յանձնաժողովի կողմից սկ. Ֆիշէր եկաւ Թիֆլիս՝ Կոմիկաստում ապաստանած հայ փախտականների մասին տեղեկութիւններ հաւաքելու, ապա Պարսկաստանի Ռումիա քաղաքը գնալու՝ ուր Պարսկաստան փախածների համար ապաստան պիտի բացանի:

Լիրչում ապաստաննել են փախտական երկու ընտանիք մօս 20 հոգուց բաղկացած, աղքատ դրութեան մէջ:

Սամարկանդում հաւաքուց 300 սուբլուց աւելի և լանձնւ կց նահանգաւութիւն:

Ասիստատում փախտականների թիւը 30 էր. ձմեռը անցըլին բաւարար կերպով, մայիսի առաջին կիսում նոքա, քաղաքի համերի հանգանակած փողով, ճամբւեցին դէպի էջմիածին:

Դանիայից համերին նպաստող մանաժողովից, նորից ստացել է մօս 10.000 ռ. Հալոց Բարեկ. ընկ. կենտրոնում:

Դանիայի մասնաժողովը, հիմնելով հայր Շարօքուանի հարատարակած *Ouvrage des écoles d'Orient* երկամսեաւ հրատարակութեան տեղեկութիւնների վրայ, եկել է այն եղբակացութեան, որ Փոքր-Ասիակի համերին օգնելու համար միակ միջոցն է նոցա գաղթեցնելը Թիւրքիայից: Ազգ մաքով յանձնաժողովը զիմել է Թիֆլիս, Հալոց Բարեկ. Ընկ., իմանալու համար թէ կը համաձայնի արդեօք ընկերութիւնը զանիական գումարի մի մասը ալդ նպաստակին ծառաչեցնել: Պականի, ուղ եղբակացութեան հետ չի կարելի համաձայնել այն պատճառով, որ հային կարելի է օգնել ապահով հայենիք տաղով նրան և ոչ հայրենազուրկ անելով նորան:

ՆԵՐՈՒԽՄԻ ՀԱՅ ՓԱԼԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ. Սուլթանի ներման գործը ունեցաւ մի էպիզոդ Մոսկացի հայոց եկեղեցում. Ազդ տեղի հայոց աւագ քահանայ Յարութիւն Տէր-Պուկասեանին քաղաքի տաճկաց հիւպատոսը, կարգադրութեամբ տաճկական ղետպանի Պետերբուրգում, մի զրութիւն ուղղեց, որը հայոց քահանան պարտք համարեց կարգալ եկե. զեցում, պատարագից լետով. Ազդ գրութեամբ տաճկաց հիւպատոսը հաղորդում էր սուլթանի ներումը «ի գիտութիւն Մոսկացի շրջանում գտընւող բոլոր հակերին, որ Թիւրքիան մ' թշին խառնակութիւնների մէջ մասնակից անձանց, հայոց ծագումից, որոնք Թիւրքաց կալսրութեան սահմաններից փախել են» և որ այն «ամսձինք, որոնք գասապարտած էին մահան պատժի՝ Թիւրքիա վերադառնալով ենթարկելու են ժամանակաւոր բանտարկութեան բանտավին ամրոց ներում».

ԹՈՒՍԻՍՑԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ. Ներկալ տարւակ լունւարի 28-ին կատարւած մարդահամարի արդիւնքներից լաբոնի են կացուցւած հետևեալ թերը.

Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգների

|                                             |             |      |
|---------------------------------------------|-------------|------|
| աղջաբանսկութեան թիւն է. . . . .             | 94.188.750  | հոգի |
| Հեհաստանի 10 նահանգներում . . . . .         | 9.442.500   | "    |
| Կովկասի 11 նահանգներում և օբլաստներում      | 9.723.553   | "    |
| Սիրիի 8 նահանգներում . . . . .              | 5.731.732   | "    |
| Դաշտավին 5 շրջաններում. . . . .             | 3.415.174   | "    |
| Թիւրքեստանի և Անդրկաստան երկրի 3            |             |      |
| շրջաններում . . . . .                       | 4.175. 01   | "    |
| Խիւայում և Բուխարայում ուստ հպատակ. . . . . | 6.412       | "    |
| Գումարը . . . . .                           | 126.693.312 | "    |
| Ֆինլանդիայում . . . . .                     | 2.527.801   | "    |
| Ընդամենը. . . . .                           | 129.211.413 | "    |

Կովկասի (Անդրկովկաս և Հիւսիսային Կովկաս) բնակիչներից արական են 5.129.931 և խոհական 4.593.622 հոգի. որով 100 արականի հետ կաէ 89. իշխանութեանունում:

ՊԱՐՍՎԱՍԱՆ. Թաւրիզի խառնակութիւնները (խոռվութիւնը հավերի զէմ): Անցեալ անգամ կարճ տեղեկութիւն տւինք զէպքի մասին: Պարսիկները հանգստ չէին թողել նաև հայոց զերեզմանատունը, ուր դարսպասի մի մասը, զերեզմանատան մեծ շինութեան դռները, լուսամուտները, նստարանները, սեղանները թալանւեցին. կատին զերեզմաններ քանդած, զերեզմանաքարերի մարմարեակ մասերը ջարգած, մի քանի զիակներ գետնի երես հանած:

Ասպրիլի 5-ին նոր նահանգապետ Ամիր-Նիլզամը հասաւ Թաւ-

րիդ. Հայերից ընդ առաջ էին գնացել միմիան քահանաները, հոգաբարձուները և մի քանի պատւաւոր անձեր, նոցա մէջ և ուռասահպատակ հայերի վաճառականապետը (թաջիր բաշի). Հայ քահանաներից մէկը խնդրագիր մատուցեց. մատուցեց խնդրագիր նաև մի մէտեղ, որը սական ձերբակալւեց. Երեկոցեան հայոց վաճառականապետը, ըստ պահանջման նահանգապետի, գնադ նորա մօտ. Ամիր-Նիզամը խնդրում է թաջիր բաշուն որ խնդրէ ոռուսաց հիւպատոս պ. Պետրովին իւր մօտ ապաստանած հայերին արձակել. Թաջիր բաշին հրաժարում է, ասելով որ այդ մասին ինքը նահանգապետը պիտի խօսի պ. Պետրովի հետ ձիւպատոսը տևութիւն գնաց և երկու ժամ խոսակցութիւն ունեցաւ Ամիր-Նիզամի հետ. նահանգապետը խոստացաւ ապահովացման թուղթ ուղարկել հիւպատոսին, որ հայերին արձակէ և յաջորդ օրը մունետիկի բերանով ազգարութել պարսիկներին, թէ չարագործները պիտի պատժեն և թէ ալսունետե ով հայութի կամ ծեծի որ և է հայի, հայուսդի լեզուն կը կտրի և ծեծողի՝ ձեռքը:

Ապրիլի 7-ին մունետիկը, ուղեկցութեամբ երկու ստիկանների, ազգարարեց. Ամիր-Նիզամը մի ճարտարապետ-որմնագիր նշանակեց, որը հիւպատոսարանի կողմից նշանակւած մարդկանցով և հայ թաջիր բաշու ուղեկցութեամբ՝ գնաց հայոց գերեզմանատուն, ուր եղած վասաները գնահատւեցին. Հիւպատոս պ. Պետրով, ապահովացման թուղթ ատանալուց չետու, յայտնեց խնդիրը վերջացած. Հայերը սկսեցին ցրւել իրենց տները. Պարսից կառավարութիւնը պարտաւորեց կողոպատաճներին հասցնել թալանւած ապրանքների վճարը. Այդ գումարը որոշեց 4.000 թուման (մօտ 8.200 ռուբլի), որ և ինտոլ բաժանեց վեաստաճների մէջ. Քաղաքի Ղարադաշ թաղի խանութպաններին մափսի սկզբներին կալանաւորեցին, իբր խառնակութիւնների պարագլուխների.

Խօսի եւ Սալմաստի կտռավարիչ նշանակւած է գեներալ Զմշուտ խանը, որին շահը «Մեջիզը-Սուլթանա» տիտղոսն էր շնորհել. Մամիսի 3-ին նա Ուրմիայից ճամբար ելաւ դէպի իւր պաշտօնատեղին-նա ճանաչւած է որպէս արդարադաս մարդ:

Ուրմիայի կտռավարիչ նշանակւած է Ատրպատականի նահանգապետ Ամիր-Նիզամի փեսաք Աքբար-Միրզան, որ երկար ժամանակ ծարախտանում պաշտօն է վարած. մօտ չ0 տարեկան մարդ է:

Ենկակ քրդերի դէմ, որոնք պարսկա-տաճկական սահմանագլխի լեռներում են բնակւում և խիստ աւազակաբարու են, պարսիկ կառավարութիւնը արշաւանք էր ուղարկել ներկազ գարնան, որը վերջացաւ նոցա 37 գիւղերի կործանումով և բնակիչների ցլւելով:

Յահ Մուղաֆֆար-Էշ-Դին, բժիշկների խորհրդավ, մտադիր էր Երոսպա գնալը. բայց այժմ այդ մտադրութիւնը թողնած է, զեռ ևս ոչ լավո՞ի պատճառներով.

Հակահքական շարժումներ. Ուրմիյում, ապրիլի կիսերին, մի հրէակի զրաբարտութեան պատճառով մի աչ հրէակի մասին, թէ իբր սրա տան մէջ մի թուրք երեխայ է մորթւել և թաղւել, թուրք մոլեւանդ ամբոխը ուղեց լարձակում գործել հրէաների 3—400 տնից բարկացած տների վրայ, որը չաջողւեց շեմս-իւլ-իսլամ Միրզա Հուակին Աղայի միջամտութեան չնորհիւ. Թաւրիզի նահանդապետ Ամիր-Նիկամը ամենախիստ սպաւնալիքներ տւաւ թուրք աղջաբնակութեան և տէրունական պաշտօնեաներին աչն դէպքում, եթէ նման իրողութիւն կրկնւի:

Հակահքական շարժում թէհրանում: Աւելի ահաւոր շարժում եղաւ թէհրանում, մայիսի 16-ին. պարսիկ ամրոխը լարձակւեց հրէաների թաղի վրայ, պահանջեց որ հրէաները գուսկը ածելեն և կրծքին մի կտոր կարմիր կարկասան դնեն, ի նշան անարգանքի. պտրսիկները խուժեցին տների ներսը և կատարեցին իմադութիւններ. հրաների թիւը թէհրանում մօտ 3000 է. դոցա մի մտսը կրօնափոխ եղաւ՝ մահմեդականութիւն ընդունելով՝ զարհուրելի հալածանքից ազատ մնալու համար. ժամանակաւորապէս խաղաղութիւնը վերականգնեց՝ դեսպանների միջամտութեամբ կառավարութեան առաջ. Հարժումը լառաջայիլ է մոլլաների և սէլիդների դրումով: Մուղաֆֆար-Էշ-Դին շահի չնորհքներն են որ սկսում են երեալ?...

ՌՈՒՍ ՄԱՐՈՒԼԸ ՀԱՅՈՑ ԵԿ.-ԾԽ. ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Պետերբուրգում  
իշխան Ուկասոմսկու խմբագրութեամբ հրատարակւող „Ս. Պետեր-  
բուրգուն Վճամութիւն“ օրաթերթի № 89-ում տպւեց մի խմբագրա-  
կան լոգւան՝ Օք արմանական պատութեամբ կառավարութեան մասին  
Կավազէն (Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների մասին  
Կովկասում), 1896 թւականին հայոց դպրոցների փակման առիթով. Այդ դպրոցների փակման համար լրագիրը ամբողջ պատասխանա-  
տըւութիւնը զցում է Կովկասեան ուսումնարանական կառավարու-  
թեան վրայ, Յօդւածի հեղինակը միանգաման անարդար է զսնում  
հայոց դպրոցների փակումը, որ, նորա ասելով, կատարւել է ի վեաս  
ժողովրդական լուսաւորութեան գործին, որովհետև, առում է նա,  
շատ տեղերում աչդ դպրոցները միակ էին,

Պետերբուրգի վերոբիշեալ լայտնի պահպանողական թերթի  
լոգւանի դէմ Թիֆլիսի «Կաւկազ» լրագրի № 125-ում տպւեց մի ըն-  
դարձակ լոգւան Պրաւդ օ զարկութիւնը հայոց եկեղեց-ծխական դպրոց-  
ների փակման մասին», որ ստորագրած է «R»:

## ՆԻՔԻՆԵՐ ԵՒ ԿՏԱԿՆԵՐ:

Ցովհաննես Դաւթեան Խո ղաղեան (Թիֆլիսեցի, 2-րդ կարգի փաճառական), որ վախճանւեց Թիֆլիսում, ապրիլի 26-ին թողել է իւր ամբողջ կարողութիւնը Հայոց Բարեգ. Ընկերութեան Կովկասում, մի կտակով, որ կատարւած է 1896 թ. հոկտ. 6-ին, կարողութիւնը, որ գնահատուեց մահից իւսու և որոշել է 136.629 ռուբ. և բազկայցած է անշարժ կալքերից, Թիֆլ. Առևտր. բանկի ակցիաներից, խաղարկութեան և տոկոսաբերից և առձեռն դրամագլխից: Կտակողը Բարեգ. Ընկ. պարտաւորեցնում է այլ պարտաւորութիւններից, որ չիշւած են ներքեռում, աղաս մնացած գումարներով, բանալ ապաստարաններ, դպրոցներ, աղքատանոցներ, ձրի հրանդանոցներ և այլ աղդպիսի բարեգործական հաստատութիւններ, ընկերութեան անդամների ընդհանուր ժողովի բարեհայեցողութեամբ. կտակած գումարից պիտի հասնի Ներսիսեան դպրոցին միանւագ 1.500 ռ., Կորերի խնամատար ընկերութեան միանւագ 1.500 ռուբլի, իւր թաղման և մահարձանի համար միանւագ 3.000 ռ.: Ազգականներին պիտի տրի հետեւեալը՝ ա) կտակողի կոտջ տան կահկարասին, քարեղինները (ասենք, որ դա երկրորդ կինն էր, որից անդաւակ էր) 7.000 ռուբլի. նրան իրաւունք է տրտում 7 տարի օգտական մի տան և մի ալգու եկամտից. 7 տարուց կամ կոտջ մարդու գնալուց կետու տանը (Աբասաբաղեան հրապարակում) պիտի անցնի Բարեգ. Ընկերութեան, իսկ աղին (Գորու գաւառում): իւր եղբօրորդիններին, թ) իւր մօրը պիտի հասնի ամսական 25 ռուբլի. զ) իւր եղբօրը՝ միանւագ 3.000 ռ., զ) իւր եղբօրորդուն, որ աշակերտ է, ամսական 25 ռ., իսկ երբ համալսարան կ'անցնի—ամսական 40 ռ. մինչև աւարտելը. ե) իւր քրո: ը 2.000 ռուբլի միանւագ. զ) իւր մի ազգական տիկնոջ միանւագ 500 ռ. է) իւր մի սանիկին միանւագ 500 ռ.: Աթէ Բարեգ. Ընկ. Փակւելու վնսի, կտակած զուքն ու գումարները պիտի անցնեն Ներսիսեան դպրոցին վերոիշեալ պարտաւորութիւններով: Կտակակատարներ նշանակւած են Հայոց Բարեգ. Ընկ. Խորհրդի նախագահը և փոխ նախագահը:

Թիֆլիսի Առեւտրական բանկը, ի չիշատակ իւր 25-ամսակի, բացի նույրելուց իւր ծառակողներից մի մասին 3.500 ռ. և նուամսեակոճիկները անխտիր բոլոր ծառակողներին, բաժնետէրերի ընդհանուր ժողովի վճռով նորաբերեց 5.000 ռ. լոգուտ տաճկանալ փախստականների, 2.000 ռ. Թիֆլիսի Բարեգ. Ընկերութեան (որ չպիտի շփոթել Հայոց Բարեգործ. Ընկերութեան հետ Կովկասում), 500 ռ. Սոլոլակի ձրի ճաշարանին, 5.000 ռուբլի այլ և այլ բարեգործական ընկերութիւններին Թիֆլիսում, և 500 ռուբլի ևս Թիֆլ. Հայոց Հրատ. ընկերութեան:

Պօղոս և Թաղէռոս Դհւոյեանց նւիրեցին Երեանի թեմակ. դպրոցին 200 ռուբլի.

Նոր-Նախիջևանի փոխադ. վարկի ընկերութիւնը նիրել է 100 ռ. Նիստիթա հաջոց ծխական դպրոցին,

Յարութիւն Գարբիէեան Խգբաշեան (Թիֆլիս քաղաքացի, † 30 մայիս) թողել է կտակ, որով իւր կարողութիւնից, այն է կանխիկ դրամ տուն Աբասթումանում, առաջ Թիֆլիսի, Ֆրէզինեան փողոցում և Գանձակում ունեցած քարւանսարակի մի մասը, կտակել է Հայոց Ներսէնեան դպրանոցին. վշեալ կաքերի գինը որոշում է 60.000 ռ. Այդ կաքերի եկամուտներից, ըստ կտակի, պիտի տրւի տարեկան 1.200 ռուբլի իւր կնոջ և 300 ռ. իւր եղբօրը. մի այլ եղբօրը միանագ 2.000 ռ., իւր աներորդու երկու աղջիկներին 3.000 ռ. միանագ. ապա միանագ պիտի տրւի 2.000 ռուբլի Ցինամճդուարիատ-կարեա գիւղատնտեսական դպրոցին (Դուչէթում), 500 ռ. Հայոց Բարեգ. Ընկ. Կովկասում, 500 ռ. Թիֆլ. Հայունեաց Բարեգ. Ընկերութեան, 500 ռ. Թիֆլ. Հայոց Հրատ. Ընկերութեան, 200 ռ. Թիֆլիսի ոստիկանապետին գիշերային օթեանի պէտքերի համար, 500 ռ. Թիֆլիսի հայ հոգեորականութեան գանձարանին, 200 ռ. Քոգուտ կոլիերի դպրոցին, 200 ռ. իւր ծխատէր քահանակին, 200 ռ. ևս պիտի դնուի լաբոնի ոռու հոգեորական հայոց իոհան. Կրոնչուադակուն:

Կտակակատարներ նշանակւած են սպ. Ներսէս Աթարէզեան, Սամոսոն Յարութիւնեան և Սերգէ Կաֆեան:

ԱՐՏԱՍԱՆԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍ. Արտասահմանում ուսա. նոր հայերի մէջ տարիներ առաջ միտք էր լզացել տարին մի անգամ գումարել մի տեղ, իրար հետ ընդհանուր կապ հաստատելու և մաքերի փոխանակութեան համար: Այդ առողջ միտքը իրագործեց այս տարի. արտասահմանի այլ և այլ բարձրագուն դպրոցներում ուսանող հայերը որոշել եին հաւաքել առաջին անգամ Հայդելբերգ (Գերմանիա, Բարգէնի մէծդքսութիւն): Ժողովը բացւեց ապրիլի 12-ին (նոր տոմար), Ընկերական ճաշկերութով, երեկոնեան. Գումարումը տեսեց մի շաբաթ, որի ընթացքում կարդացւեցին զանազան աշխատութիւններ (Հայերէնի նւազանութիւնը՝ Դր. Աշանցեանի, Հասարակութեան պատասխանառութիւնը՝ Հիւանդների նկատմամբ՝ բժ. Եր. Մինասեանի, և ուրիշներ),

Ժողովին եկած էին 40 հայ ուսանողներ Դմբանիակից, Ֆրանս. սիալից և Զւիցերիակից:

Ժողովում վճռեցին զալ տարի զումարւել Ցիւրիխ:

ԺԼՆԵՒԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ. Ժընկի մէջ ներկայումս

կան մինչև 70 հոգի հաւեր, որոնք սակացն ամենքը ուսանողներ չեն. բուն ուսանողները այժմ ուսանողական ընկերութիւն են հիմնել ինչպէս, օրինակ, ազգիսին կաէ Լաւաշիգում, Ընկերութեան մէջ են շուրջ 25 ուսանող:

**ՀԱՅՈՑ ԽԱՐԵԴԻ.** (ԸՆԿ. կենտրոնը մի երկրորդ ընդհանուր ժողով ունեցաւ ապրիլի 27-ին, ուր ի միջի ալպոց, քննուեց 16 անդամների խորհըրդին արւած մի թուղթը, որի առիթով խորհուրդը իւր եղակացութիւնն էր աւել. Այդ 16 անդամները լատարարում էին պ. թէ Սիմէօն Հախումեանց անդամ չէր մարտ ամսին, հետեապէս նորա մասնակցութիւնը մարտի 2 ի և 16-ի ժողովին ապօրինի էր ալդ հիմանվրաքան առաջարկում էին այդ ժողովը իւր բոլոր պարագամունքներով և ընտրութիւններով ապօրինի համարել. Ընդհանուր ժողովը համաձայնեց ալդ կարծիքին. չափազանցացրած կարևորութիւն չտալով ալդ դէսքին, և ի նկատի ունենալով այն, որ բնտրւածների սպիտակ և սև քաշների մէջ եղած տարբերութիւնները շատ էին մեծ, որպէս զի մի ապօրինի քւէ կարողանար վճռողական նշանակութիւն ունենալ ալդ դէսքում, ընդհանուր ժողովը ճանաչեց մարտի 2 և 16-ի ժողովը և կատարւած ընտրութիւնները օրինաւոր, բացառութիւն անելով պ. Սիմոն Հախումեանցի համար, որը մարտի 16-ի ժողովում ընտրւած էր ընկերութեան զբարարան-ընթերցարանի մասնաժողովի անդամ: Նորա ընտրութիւնը բեկանւեց:

**ԱԶԳԱԳԻԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ** 2-րդ գիրքը, որ այս ամիս ստացանք, պարունակում է իւր մէջ մի բազմակողմանի ուսումնասիրութիւն Վարանդակի (Շուշակ գաւառ). նորա առանձին մասերը գրել են հանդէսի հրատարակիչ պ. Եր. Լալակիան, Լեռն Աթարէգեան, և Պ. Տէր-Ղազարեան և ուրիշներ. Ուսումնասիրութեանը կցւած են 9 պատկեր տեղական կեանքից. Երկրորդ մեծ նիւթը կազմում է Զաւախքի (Ախալքալաքի գաւառի) ուսումնասիրութեան շարունակութիւնը (50 երես): Մի շարք աւելի մանր նիւթերից չետու դրւած է կանետորինի (Մարդարանութիւն) խորապրով լուսածի թարգմանութիւնը (115 երես) և մի ցուցակ ազգապրութեան և մարդարանութիւնն վերաբերեալ կարեռագուն զրքերի: Ազգապրական հանդէսի ալս երկրուրդ գիրքը անում է շատ նպաստաւոր տպառութիւն: Գիրքը, որ զարդարւած է 26 պատկերներով, բոլորն էլ նիւթերին վերաբերեալ արժէ 2 ռուրլի (կամ 5 ֆրանկ):

**ՄԱՄՈՒԼ:** Մուրճի 1896 թ. գեկտեմբերի համարում Թիֆլիսում հրատարակւող Կավկասкое сельское хозяйство թերթի մասին ասւած էր թէ Գիւղատնտուական ընկերութիւնը վճռել է թերթի խմբագրութիւնը ուրիշին լանձնել: Ստուգելով այդ լուրը՝ սկսմ կարող ենք

հայտարարել, որ թերթի խմբագրութիւնը վճռւած է թողնել նոյն անձին, բաց միան զգալսապէս կրծատւած բիւջէլով:

**ՊՈԼԻՏԻՑԵԽՆԻԿՈՒՄ:** Թողլատրած է կիւտւմ հիմնել բարձրագոյն արհեստագիտական դպրոց (բաղմարեւոտեան դպրոց, պոլիտեխնիկում): Դպրոցը բացելու է մասնաւոր նպաստներով, որոնց մէջ է նաև քաղաքային ինքնավարութիւնը. Կիւտ քաղաքը լատկացրել է այդ գործին 300.000 ռուբլի, իսկ տեղական հարուստ Նիկոլայ Տերեչենկօ տեւէլ է 100.000 ռուբլի, խոստանալով նմէրը հասցնել 150.000-ի. Ընդամենը մինչեւ այժմ հաւաքւած է մօտ մի միլիոն ռուբլի: Պոլյտեխնիկումները նպատակ ունին գործնական մարդիկ պատրաստելու գլխաւորապէս զործարանների համար՝ տեխնիկումներ, գործնական քիմիկուոններ և այլն:

**ՆԱԽԹԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՅԱՊԼԱ** Բարեւում: Ժողովի առաջին նիստաւմ կարդացւեց ժողովի խորհրդի անցեալ տարւայ գործունէութեան մասին գեկուցումը. երկրորդում վճռւեց քաղաքի խորհրդարանին լաւանել, որ Սև քաղաքի համար հղեհաշէջ խումբ է հարկաւոր. Ժողովը վճռեց Բալախնանու հիւանդանոցում աւագ բժիշկ ունենալ. ապա վճռեց տալ 24.000 ռուբլ՝ վեց նոր ճանապարհներ անցկացնելու համար Սարունչու, Բալախնանու և Ռոմանու նաւթափին հոգերում, և 4.000 ռուբլի նոյն տեղերում նաւթառեղեր չորացնելու և առուներ շինելու համար: Երրորդ նիստաւմ լսեցին ինժ. տեխնոլոգ Տէր-Դրիգորիանցի գեկուցումը զործնական արհեստագիտական կուրսեր Բալախնանում հիմնելու մասին՝ փորող վարպետների, կոչեղարների, մաշինիստների և այլոց համար, ինդիրը լանձնւեց խորհրդին, որ սա մի յանձնաժողովի տակ խնդիրը մանրամասն մշակելու և կառավարութիւնից թուլութիւն խնդրելու համար. ապա ընդունւեց խորհրդի գեկուցումը կառուցանելիք շինութիւնների մասին. Վերջը կատարւեցին ընտրութիւններ նաւթառերի պահպանման տեխնիկական մասնաժողովի անդամների: Չորրորդ նիստում լսւեցին և ընդունւեցին մուտքի և ծախսքի նախահաշիւնները 1897 թւականի համար: Մուտք սպասում է 241.000 ռուբլի: Հինգերորդ նիստում որոշվեց ծախսքերի նախահաշիւր. վերջը ընտրութիւն եղաւ Բաքւայ տեխնիկական կոմիտէի անդամների, Վեցերորդ նիստում քննւեց վագոնյառութիւնների բաշխման խնդիրը նաւթառործների մէջ և որոշվեց պահպանել ցալիմեան կարգը. ապա քննւեց այս խնդիրը թէ նաւթային արտահանուղ մեացորդների (մազուտ) համար բոնկման տեմպերատուրը որոշել 70 ասորիճան, այդ խնդիրը մեաց բաց: Եօթերորդ նիստը նւիրւեց զլխաւորապէս ալս խնդրին—զարդացումը ռուս կերոսինի վաճառման հեռու Ասիակի շուկաներում: Այս խնդիրը լառաջացել է նրանից, որ

Եւրոպակում անհարին է համարւում մրցել Ամերիկակի Ատանդարտ ընկերութեան հետ, ուրիմն պիտի մտածել հեռու Ասիայի մասին ուր սակայն, ուստաց կերոսինի վաճառման զվարացոր օգուտը միջնորդների ձեռքն է ընկնում. պէտք է անմիջական չարաքերութիւն ստեղծել գնողների հետ. այդ գործը ոչ մի նաւթագործարանական ֆիրմա միանակ չի կարող անել. պէտք է դիմել մինիստրութեան, որ սա մի մասնաժողով կազմի մեր կերոսինավին արտասահմանեան առևտուրը ուսումնասիրելու համար. Այդ առաջարկների հեղինակ պ. Պ. Ղուկասեանը դրեց քէարկութեան պինցիպիական հարցը նաւթագործների միութեան մասին, որ և ընդունւեց միաձայն.—Ութերորդ նիստում վճռեց թուլտութեան դիմել մի շաբաթաթերթ հրատարակելու համար „Հետյան ճախո“ անունով. Ժողովի վերջին նիստում, մալիսի 2-ին, քննուեց նահանգապետի թուղթը, Քալախանում ո. զգագառների համար եկեղեցի հիմնելու մասին, դորա համար հարկաւոր կը լինի 30.000 ռուբլի. Ժողովը ընդունեց դորա հետ միասին խնդրել կառավարութիւնից թուլտութիւն նաև հայոց եկեղեցի և մահմեղականների մէջիդ շինելու մասին.

**ՀԱՅ ԵՐԻՑԱՍ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ** մասնակցութեան առիթով թիֆլիսի քաղաքալին ընտրութիւններում, Մշակը (№ 49), Նովու Օբազլենին թերթին ի պատասխան, լատարարեց ի միջի աւաց հետեւելու. «Մեր (Մշակի) կուսակցութեան պատկանող մի քանի անձինք, ճշմարիտ է, մասնակցում են քաղաքալին ընտրութիւններին՝ թէ իբրև ընտրողներ և թէ իբրև ընտրողներ, բայց դա կապ չունի ամբողջ կուսակցութեան հետո».

Հարկ ենք համարում, ամեն թիւրիմացութիւնների դէմու առնելու համար, այդ առիթով հազորդել հետեւելու.

1. Ներկայ քաղաքալին ընտրութիւններին մասնակցող երիտասարդութիւնը բնաւ չի ժողովւել «մշակական կամ Մշակի կուսակցութեան» անունով, աչ միայն և եթ «հայ երիտասարդ կուսակցութեան» անունով. Այդ անունով նա ժողովւում էր նաև 1893 թւականին կատարելու համար թէ ծիսական և թէ քաղաքալին ընտրութիւններ. Այդ ժողովները ոչ մի կապ չունէին այն ժամանակ նոյն խականութիւնների մէջ գործութիւնների մասնակցում էին ժողովներին, իբրև անդամներ այդ ժողովների.

Ներկայ ընտրութիւնների համար կոչեցին նոյն ժողովների նախկին անդամները, որոնցից ոմանք չկամեցան և ետ քաշւեցին. այդ վերջիններից մի քանիսը կապւեցին կաւկազ հիւրանոցի (Արշաբեան և ընկերներ) խմբի հետ. խակ ցանկացողները մնացին և

շարունակեցին գործը մինչև վերջ, «առ երիտասարդ կուսակցութիւն» անունով, ինչպէս աղդ եղաւ 1893 թ-ին:

Նւ ալֆմ կատարւած իրողութիւնից լեսող կարող ենք վկաչել որ ներկայ տարում «հայ երիտասարդ կուսակցութիւնը» աւելի մեծ էաջողութիւն ունեցաւ, քան աղդ եղաւ 1893 թ-ին:

2. Հայ երիտասարդ կուսակցութիւնից մասնակցեցին ընտրութեան գործին ոչ միան «իբրև ընտրողներ և թէ իբրև ընտրւողներ», ազ և աճնպիսիք, որոնք ոչ ընտրողներ էին և ոչ ընտրւողներ, բայց կապւած էին գործի հետ՝ ընդհանուր կուսակցական շահերով:

3. Մշակի կրկնակի լաւտարարութիւնները «Մշակի կուսակցութեան» չմասնակցելու մասին, որպէս ալֆմ կարող ենք հաստատ վկաչել, չմոլորեցրին ընտրողներին:

ԱՄՈՒՍՆԱԿԵՆ Ա.Ո.ՈՂ.ՁԱՊԱՀՈՒԹԻՒՆ չօդւածի առթիւ մենք ստացել ենք հետեւալ գրութիւնը. «Խօսելով «ամուսնական առողջապահութեան մասին և բերելով մի քանի լոգւածներ Մխիթար Գօշի աղատաստնագրքից» ամուսնութեան օրէնքների և մասնաւորապէս դիւահաւորութեան դէպքում ամուսնութիւնը լուծելու ապահարզանի հնարաւորութեան մասին, պ. Զաքարեան աւելացնում է «Ազդ լոգւածը... ցուց է տալիս, թէ նկեղեցին սկզբունքով ոչ միան ընդունում է առողջապահական պալմանների նշանակութիւնը ամուսնական օրինաւորութեան մասին, ազ և իրաւացի է զանում աղդ պալմանների հակառակ կատարւած ամուսնութիւնները լուծանելի համարելու» (Առորձ № 2-3, 1897.):

«Որքան էլ ուրախալի լինի աղդ տեսակ մի երեսիթ մեր եկեղեցական հաւաքիրի գրածքներում հանդիպելը, որքան էլ ցանկալի լինի, որ Մխիթար Գօշի գրած «դատաստանագիրքը» որոշ դէպքերում, մանաւանդ նկեղեցական խնդիրներում, ունենալ իւր արժանի գնահատութիւնը, քանի որ նա ի միջի ազոց ի նկատի է ունեցել աճնպիսի պատկառելի աղբիւրներ, ինչպէս են «բնական օրէնք» և ապահուամենաճնիւ աղդ գրւածքի սկզբունքների և հոգու գրակ չպէտք է նաև ի իբրև նկեղեցու սկզբունքների վրաէ, քանի որ Մխիթար Գօշի աղդ պատկառելի գործը՝ դատաստանագիրքը չէ ընդունել նկեղեցուց իբրև օրինագիրք:

### Յ. Յովհաննիսեանց:

Բիգա, 97. Ապրիլի 3-ին:

ՄԵԾ ՀՐԴԵԾ ՊԱՐԻՁԱՌՈՒՄ. Ապրիլի 23 (հ. ա.) 10 րոպէում այրմեց Պարիզում բարեգործական նպատակով սարքած բազարի շինութիւնը, կրակի մէջ ալբելով մինչ 140 հոգի, ուսուց մէջ շատերը բարձր շըր-

ջաններից։ Այլուածների մէջ էր նաև Ալանսոնեան դքսի ամուսինը, Աւստրիակի կալսերական տնից, Ամբողջ շինութիւնը կառուցւած էր փալտից։ Իրեղէններ վաճառողները հասարակութեան բարձր շրջանների տիկիններն ու օրիորդներն էին։ Ազդան մեծ դժբախտութիւնը սուզով համակեց ամբողջ Պարիզը, որի համար ցաւակցութիւն լայտնեց եւրոպական արքունիքների կողմից ֆրանս։ հանրապ. նախագահ Ֆորին։

**ՄԵԾ ՀՐԴԵՀ ՆՍԱԻԹԻ:** Բաքւի մօտ, Բերի Էլբաթում, Ռոտչիլդի մի հորը փոնտան խիեց, բայց կրակւեց։ Հրդեհը ահազին բարձրութեամբ հրավին սիւն էր ներկայացնում և լուսաւորում մինչև Բաքու քաղաքը։ Ազգիսի տեսարան չէին տեսել նոյն խակ բաքւեցիք։ Հրդեհը տևեց մի մի քանի և վերջացաւ 17-ին ապրիլի։

**ՀՐԵԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍ.** Հրէաները, որոնք նպատակ ունին մի մշտական ապահով հայրենիք ունենալու խնդիրը ուսումնասիրել այն հրէաների համար, որոնք աշլ երկիրներում չեն կամենում կամ չեն կարողանում իրենց ներկա բնակատեղերում ընտանի գառնալ, Միոնեան հրէաներ (հրէաներ-ոինիոնիստներ) անունով աժմ հաւաքւում են Միւնխէն նախապատրաստական կոնգրեսի, նախաղանութեամբ լայտնի գրող Մաքս Նորդառնի Օգոստոսին նոյն Միւնխէնուում լինելու է Սիոննեան հրէաների մեծ կոնգրեսը, ուր պիտի կարդացւեն զեկուցումներ հրէական բաղմաթիւ խնդիրների մասին։

**ՍԵՐԲԻԱ և ՉԵՌՆՈԳՈՐԻԱ.** Սերբիակի թագաւոր Ալէքսանդր 22 ապրիլի եկաւ Յետինսկ' Զերնոգորիակի իշխանին այցելութեան։

**ԳԵՐՄԱՆԻԱ և ՕՐԱՆՁԵԱՆ հանրապետութիւնը** (հարաւալին Ա.Փրիկա) դաշն կուցին (17 ապր. հ. տ.), առեստրական և բարեկամութեան վիկտորիան թԱՎՈՒՀՈՒ ՅՈՒԵԼԵԱՆԸ. Անգլիան և մասնաւորապէս Լոնդոնը պատրաստում է տօնելու մեծ և փառահեղ հանդէսներով։ Տօնդում է Վիկտորիա թագուհու 60-ամեակ թաղաւորութեան չօրելեանը։ Անգլիակի գահականների մէջ Վիկտորիա թագուհու գահակալութիւնը ամենաերկարատեն է լինելու։ Անգլիակի աշխարհքում տիուած բոլոր կողմնիաններից եկել են ներկայացուցիչներ, զօրքեր և հանդիսատէսներ։ Մնթադրում են որ Լոնդոն այդ առիթով եկողների թիւը 3 միլիոն հոգի է լինելու, ամսակտ որ այդ օրերը քաղաքի աղջարնակութիւնը աճելու է մինչև 9 միլիոն։

**† ԴՈՒՔՍ Պ'ՅՈՄԱՆ, Հորրորդ որդին Ֆլանսիակի վաղեմի թագաւոր Լուի-Ֆիլիպպի,** (Օրէանեան տոհմից) վախճանեց ապրիլի վերջերքը, Սիցիլիա կղզում ունեցած իւր կալածում։ Գուշ Պ'ՅՈմալ ծնւեց 1822 ին, 40-ական թւականներին մասնակցեց ալժերեան արշաւանքներում և վերջացրեց Ալժիրի նւաճումը, զերի վերջնելով Արդ-Էլ-աղէր'ին

1847 թ., որից լետող նշանակւեց Ալժիրիավի կառավարչապետ, Երբ 1848-ին Լուի-Ֆիլիպ գահազուրկ եղաւ, նորա հետ և ամբողջ Օր-լէանեան տոհմը, Օմալեան դուքսը գնաց Անգլիա և իրեն նւիրեց զրական զբաղմունքներին, նորա կարևորագոյն գործն է „Histoire des Princes de Condé“ հինգ հատորով: Ֆրանս-գերմանական պատերազմին նա կամեցաւ մասնակցել իրեն պատերազմիկ գեներալ, բայց թէ Նապոլէօն III և թէ ժամանակաւոր կառավարութիւնը չընդունեցին նորա առաջարկը, համարելով նորան գահակնկալ (պրետենդենտ): 1871-ին ընտրեց անդամ Ազգային ժողովի, իսկ ֆրանսիական Ակադեմիան ընտրեց նորան իւր անդամ: 1873-ին հանրապետութիւնը նորան ընտրեց նախագահ այն զինւորական դատարանի, որ քննուեց մարշալ Բազէնի դործը: Ապա նա նշանակւեց 7-րդ զօրաբանակի Համանատար, 1878-ին զօրաց տեսուչ: Երբ 1886-ին օրէնք տրեց, որով Ֆրանսիակից աքսորում էին բ-լոր գահակնկալ-ները և նոցա ընտանիքների անդամները, Օմալեան դուքսը ստիպւած եղաւ թողնել հայրենիքը, բայց արդէն 1889-ին նորան թողլ տվին վերադառնալ Ֆրանսիա: Օմալեան դուքսը երբէք չկամեցաւ թագաւորականների կուսակցութեան գործիք դառնալ երկրում շփոթութիւններ լարուցանելու համար, գէմ եղաւ բուլանժենան շարժման: 1886-ին նա լայտնի կացուց իւր կտակը, որով նա իւր գղեակը, սորա բոլոր հարուստ գեղարւեստական ժողովածուներով, թողնում էր Ֆրանսիական Ակադեմիակին:

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐԱՅԻՐ

- 1) ԱԶԳԱԳԻԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, պատկերազարդ. հրատարակեց Երև. Լալաչեանցու Երկրորդ տարի, Բ. Գիրք: 1897. Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանցի. գինն է 2 ռուբլի, կամ 5 ֆրանկ:
- 2) Տէ՛ր-Մի՛րԱ. ՔԵԱՆՅՅՅ, Յովհ.՝ Ակբբենարան առանց ուսուցչի կարդալ սովորելու համար (94 պատկերով): 1897, Նոր Նախշեան. տպ. Ա. Զամինեան և Վ. Քիրեեան. գինն է 35 կոպէկ:
- 3) ԴիկւնՍ:—Դաւիդ Կոպերֆիլդ. պատանեկան հասակի համար. թարգմ Պ. Պ. Թիֆլիս. 1897 թ. Հրատ. Թիֆլ Հայ. Հրատ. Ընկեր. տպ. Մհ. Մարտիրոսեան. գինը 1 ռուբլի:
- 4) ԱՆՆԵՆՍԿԱՅԵԱ. Ա.՝ Դասընկերներ. պատանիների ընթերցանութեան համար. Ռուսերէնից թարգմանեց Կ. Դիւլնազարեանց 1897. Հրատ. Թիֆլ. Հայ. Հրատ. ընկերութ., Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանցի. գինն է 50 կոպ.
- 5) ՀԵՂԻՆԱԿ?—Միքաչէլ Նալբանդեանց (համառօտ կենսագրութիւն): Հրատ. «Արօր» տպարանի: 1896. Բաքու, տպ. Արօր. գինն է 15 կոպ.

6) ՃԱՆԻԿԵԱՆ, Յովսէփ Կ.—Դժոխք. վէպ. 1897թ. Թիֆլիս, տպարան  
Յ. Մարտիրոսեանց, դիմու է 40 կոպէկ.

**ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ:**

Մոնպելիէ: Հայ ուսանողութեան: Ձեր գրածին համեմատ՝ ստա-  
ցանք պ. Արշ. Տէր-Գրիգորեանից եօթ ոռուբլին, որով, առաջւան  
վճարածի հետ՝ լրանում է ձեր բաժանորդագինը,

Պետերբուրգ: Արաքս'ի համար ստացած ենք 2 օրինակի գին  
և ոռուբլի, որ պիտի ստանաք պոստի փոխանակագրով, հասցէների  
հետ միասին:

Թաւրիդ: Լիլաւալի հալոց ընթերցարանին: Մեզ խոստացած էր  
բաժանորդագինը ուղարկել մինչև մարտի 15-ը, բայց չստացանք, և  
այդ պատճառով չուղարկեցինք № 2—3, որ գուք այժմ նամակով  
պահանջում էք, խոստանալով բաժանորդագինը ուղարկել «առաջի-  
կայ պոստով»:

**ՎՐԻՊԱԿՆԵՐ ՄՈՒՐՃԻ № 4.**

Միք. Յովհաննիսեանի «Էւղիսցիալի դաղավարը» քողածում,  
էջ 497, տող 3 տպւած է Լաւուազէ († 1894թ.), ուղիղն է՝ Լա-  
տուազիէ († 1794թ.):

## ՏԵՂԵԿԱՏՈՒ ԵՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱԶՄԱՎԻՐՍԿԱՆ ԽՃՈՒՂՈՎ, ԹԻՖԼԻՍԻՑ ՎԼԱԴԻԿԱՎԱԶ ԳՆԱ-  
ՅՈՂ ԿԱՌԻՔԵՐ

ԹԻՖԼԻՍԻՑ—Հինգ տեղով կառքեր. ա) Դուրս է գալիս առ  
ժամը 7-ին, գիշերում է Մլէթում և միւս օրը երեկոյեան ժամը  
6-ին հասնում է Վլադիկավկազ: բ) Դուրս է գնում առաւ. ժամը  
9ին, գիշերում Պատանառուրում և միւս օրը գիշերւայ ժամը 8-ին  
հասնում է տեղ:

Վեցտեղով հանրակառքեր (օմնիբուս) զնում են երկու անգամ,  
առանց գիշերելու, առաջ 30 ր. առաւոտ և բ) 7 ժ. երեկոյեան:  
Հասնում են Վլադիկավկազ, առաջինը՝ միւս օր 12 ժ. օրւայ և  
երկրորդը՝ 8 ժ. 50 ր. երեկոյեան:

ՎԼԱԴԻԿԱՀԻԿԱԶԻՑ—Հինգ տեղով կառք. ա) Դուրս է գալիս  
առաւ. 7 ժ., գիշերում է Մլէթ, հասնում է Թիֆլիզ միւս օրը երե-  
կոյեան 6-ին. բ) Դուրս է գալիս ժամը 9-ին, գիշերում է Գու-  
դառը, հասնում է Թիֆլիզ միւս օր ժամը 7-ին երեկոյեան:

Վեցտեղով հանրակառք. երկու անգամ, առանց գիշերելու,  
առ. ժ. 10-ին և բ) երեկ. ժ. 7-ին. հասնում են Թիֆլիզ.  
առաջինը՝ միւս օրւայ ժամը 11-ին առ., երկրորդը՝ ժամը 8-ին  
երեկոյեան:

Գներն են: Կառքի ներսում իւրաքանչիւր անձի համար 19 ռ  
60 կոպէկ: Կառքի կից կաբրիօլետում՝ 13 ռ. 20 կ. կառապանի  
մօտ՝ 5 ռ. 40 կոպէկ:

Մէթի կայարանում գտնւում են ամեն կառքի համար մանուկների և կանանց համար առանձին համարներ գիշերելու՝ առանց վարձի, իսկ տղամասրդիկ կարող են գիշերել ընդհանուր սենեակում կամ վճարելով՝ մասնաւոր համարներում:

Պատիւ ունիմ՝ յայտնել յարգելի հասարակութեան, որ ես հիմնել եմ Թիֆլիսում, Միջպէլեան փողոցում, տուն № 120,

ԲՈՂՈՐԾՎԻՆ

**ՆՈՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԳՈՐԾԱՐԱՆ**

**ԱՐԻԵՍՏԱԿԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԶԲԵՐ**

**ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Գործարանս ունի խոշոր մեծութեամբ մի ապարատ ջուր թորելու համար, որը միջոց է տալիս ինձ սպատրաստել բոլոր տեսակ լիմոնազները և թէ այլ բժշկական հանքային չրերը միմիայն թորած ջրով:

Աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերում եմ դէպի գործս ամենայն ճշդութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզւել այցելելով գործարանս ամեն ժամանակ:


Մ. Միհրանեանց:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԱՐՏԱՏՊԻԱԾ , „ՄՈՒԲՃ“ ԵՄՍՍԴՐԻՑ

|                                                                                                   | Բ.   | Կ. |
|---------------------------------------------------------------------------------------------------|------|----|
| ✓ 1. ՊՌՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՑԵՑԵՐ» (վէպ). . . . .                                                     | 1    | —  |
| 2. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ.զլարցի)՝ «Մանուկների<br>մարտղութ. գործարանների հիւանդութիւնները» . . | — 05 |    |
| ✓ 3. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկ-<br>ների կեանքից . . . . .                    | 1    | —  |
| 4. ԼԵՕ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ). . . . .                                                               | — 50 |    |
| 5. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕԲԼ»:<br>(Կեանքից պատկեր). . . . .                     | — 40 |    |
| ✓ 6. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԳԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ».                                                | — 60 |    |
| ✓ 7. ՊՌՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂ.Դէ», վէպ . . . . .                                                     | 1    | 20 |
| ✓ 8. ՓԱՓԱՋԵԱՆՅ, Վ. — «ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից)                                              | — 15 |    |
| 9. ՄԱՐԻՍԵԱՆ, ՄԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը                                               | — 50 |    |
| 10. , , , , , բ. մասը                                                                             | — 75 |    |
| ✓ 11. ՂԱՐԱԳԵԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵՒ-ԼԵՌՈՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.)                                            | — 15 |    |
| 12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ».                                                          | — 03 |    |
| ✓ 13. , , , ՄԻՒՆԱՍԻ ԵԶԸ. . . . .                                                                  | — 03 |    |
| ✓ 14. , , , ԵԶԻԴ ԱՂ.ԶԻԿԸ. . . . .                                                                 | — 03 |    |
| ✓ 15. , , , ՇԱՆՐ ՔԱՐԸ. . . . .                                                                    | — 03 |    |
| ✓ 16. , , , «ՆԻԱՋԻԱՆ ԿԵՍՆՔԸ».                                                                     | — 03 |    |
| 17. , , , «ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ» . . .                                                               | — 03 |    |
| 18. ՔԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՑՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ».                                                        | — 15 |    |
| 19. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈԲՆԵՐԸ» . . . . .                                                   | — 10 |    |
| 20. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐԺԱՒԱՆՔԸ».                                                 | — 10 |    |
| 21. ՏՈՒԻՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՁԱԼԻ ՊԱՏՄԻՍՏՔՆԵՐ» . . . . .                                               | — 15 |    |

22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . . — 20
- ✓ 23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», Մասն ա . . . . . — 50
24. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» . . . . . — 50
- ✓ 25. ՇԻՐՎԱՆԶԱԴԻ. — «ԱՐՄԷՆ ԴԻՄԱԲՍԵԱՆ» . . . . . 1 50
26. ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ.—«ԱԽԱՆՅ ԴԱՒԱՆԱՆՔԻ» . . . . .
27. ԱՂԱՅԵՄՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԿՈՐ ԴԻՊՔԵՐԸ».
28. «ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջարանով  
և ընտրութեամբ ՎՐՈՅՐԻ . . . . . — 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», մասն բ . . . . . — 50
30. ՂԱՐԱՋԵԱՆ, ԳԵՈՐԳ.—«ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄԸ  
Արևմտեան Եւրոպայում և Թուսիայում» . . . . . — 50
- ✓ 31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍՍՐԴ.—«ՀԱՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱԻ.  
ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» . . . . . — 40
- ✓ 32. ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ» (պատ-  
կերներ) . . . . . — 40
33. ՇԱՆԹ.—«ԴՈՒՐՍԵՑԻՆԵՐ», վէպ . . . . . — 50
34. , «ԵՐԱԶ ՕՐԵՐ», . . . . . — 40
- ✓ 35. ՏԵՐ-ՄԻՐԱԲԵԱՆՅ, Յ. - «ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ» — 25
36. ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԵՈՍ ԲԺ.—«ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱ-  
ՊԱՀՈՒԹԻՒՆ» . . . . . — 20
37. ԲԱԲԿԵՆՅ, Գ.—«ՆՈՐԵԿ» (վէպ) . . . . . — 70



# ՄԱՐԴԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍՏԱՏԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Բ Ի Ւ

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1897 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ է

ԲԱԺԱՆՈՐԴՄԱԳԻՆԸ տարեկան **10** ռուբլի, կամ **30** ֆրանկ:  
Դիմել՝ Թիֆլիս, Վելեմինեան փողոց, տուն № 8: Այլ քաղաքներից՝ Տիֆլիս. Въ Редакцію журнала „МУРЧЪ“.  
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue  
„MOURTCH“. և կամ հետեւեալ անձերին.

ԲԱՔՈՒ—պ.ալ. Ֆրիդրիխ Մարգանեան՝ Հ. Մելիքեանի գրասենեակ:  
ԲԱԼԱԽԱՆԻ.—պ. Մկրտիչ Էհրամձեան:  
ԲԱԹՈՒՄ.—պ. Սարգիս Մակարեան և պ. Ալեքս. Խոջամիրեան:  
ԵՐԵՒԱՆ.—պ. Գէորգ Ղարաջեանց:  
ԿԱՐՍ.—պ. Աբել Ապրեսեան:  
ԱԽԱԼՔԱԼԱՔ.—պ. Զաւադ Տէր-Գրիգորեան:  
ՆՈՒԹԻՒ—պ. Աբրահամ Բունիաժեան:  
ՂՋԱՐ.—պ. Ստեփ. Սողոմոնեան:  
ՆՈՐ-ՆԱԽԵԶԵՒԱՆ.—պ. Յովհ. Տէր-Միրաքեան:  
ՄՈՍԿԻԱ.—պ. Ալեքսանդր Շատուրեան:  
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—պ. Քրիստ. Բաշինջաղեան:  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—պ. Ալեքս. Յովսէփեան, Խէշտ, անդլիսկան բանկում: